

**ՍԵՐԳԵՅ ՍԵՎԱՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ**

**ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ  
ԻՐԱՎԱՅԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ա. Գ. Վաղարշյան*

ԵՊՀ հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ - 2008

**ՀՏԴ 340  
ԳՄԴ 67  
Ք 822**

*Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետի խորհուրդի կողմից*

**Քոչարյան Ս.Ս.  
Ք 822 Իրավաբանական իրավահասկացությունը և օրինական հիմնախնդիր-  
ները: - Եր.: ԵՊՀ հրատ., 2008թ., 160 էջ:**

Աշխատության մեջ սկզբունքային նոր դիրքերից իմաստավորվել են օրինականության տեսության մի շարք վիճելի հիմնախնդիրներ: Ձևակերպվել են օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման մի շարք մեթոդաբանական ուղղություններ, կառուցվել են իրավական օրինականության համակարգային հայեցակարգի հիմնադրույթները, ինչը զարգացնում է իրավական կարգավորման համակարգում իրավական օրինականության սկզբունքի մասին տեսական պատկերացումները:

Աշխատանքում ձևակերպված տեսական եզրակացությունները զարգացնում և լրացնում են իրավունքի տեսության մի շարք հիմնահարցեր՝ իրավահասկացության և օրինականության միջև կապը, իրավական օրինականության տեղն ու դերն իրավական կարգավորման կառուցակարգում, իրավաօրինականության պահանջների ու երաշխիքների համակարգը:

**ԳՄԴ 67**

**ISBN- 978-5-8084-0978-1**

**© Ս. Քոչարյան, 2008**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 11

§ 1. Օրինականության հասկացության տեսական բնորոշումների բազմազանությունը ..... 11

§ 2. Օրինականության հայեցակարգերը և դրանց տիպաբանությունը ..... 19

    2.1. Օրինականության հայեցակարգերի դասակարգումը (տիպաբանությունը) ..... 19

    2.2. Օրինականության նորմատիվային հայեցակարգերը ..... 23

    2.3. Օրինականության բովանդակային հայեցակարգերը ..... 31

    2.4. Օրինականության գործառույթային (ֆունկցիոնալ) հայեցակարգերը ..... 40

    2.6. Օրինականության համակարգային հայեցակարգերը ..... 58

    2.7. Օրինականության օրիգինալ (ոչ ավանդական) հայեցակարգերը ..... 67

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ..... 72

§ 1. Օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման մեթոդաբանական բացթողումներն ու թերությունները ..... 72

§ 2. Օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման ուղիները ..... 79

§ 3. Համակարգային մոտեցումը որպես օրինականության հիմնախնդիրների լուծման մեթոդաբանական հիմք ..... 87

§ 4. Օրինականության տեղն ու դերն իրավական երևույթների և իրավագիտական հասկացությունների համակարգում ..... 91

§ 5. Օրինականությունը որպես իրավունքի կազմակերպական գործառույթային սկզբունք ..... 106

§ 6. Իրավաբանական իրավահասկացությունը և օրինականության փոխակերպումն իրավական օրինականության ..... 111

    6.1. Իրավահասկացության մեթոդական նշանակությունը օրինականության տեսության համար ..... 111

6.2. Իրավական օրինականության հայեցակարգն արևմտաեվրոպական իրավագիտության մեջ ..... 116

6.3. Իրավական օրինականության հայեցակարգը հետխորհրդային իրավագիտության մեջ ..... 119

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ..... 131

§ 1. Իրավական օրինականությունը որպես իրավական մետահամակարգերի բաղադրատարր ..... 131

§ 2. Իրավական օրինականության սկզբունքի գործողությունն իրավական կարգավորման փուլային համակարգում ..... 148

§ 3. Իրավական օրինականության որպես համակարգի կառուցվածքը և բաղադրատարրերը ..... 155

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 180

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 187

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օրինականությունն իրավագիտության և իրավաբանական գործունեության հիմնարար հասկացություններից է, որի տեսական հիմնահարցերի լավագույն լուծումները ծառայում են գործնական նպատակներին, քանի որ հենց օրինականության մակարդակը և վիճակն են այն գլխավոր չափանիշները, որոնց օգնությամբ գնահատվում է հասարակության իրավական կյանքը, հաստատվում կամ մերժվում է ամեն մի երկրի իրավական համակարգի արդյունավետությունը: Օրինականության վիճակն անխուսափելիորեն համարվում է անհատների կյանքի որակի բաղադրիչներից մեկը: Այդպիսի կարևորությունից ելնելով՝ շատ հրատապ է նորովի քննարկել և հետազոտել օրինականության տեսության հիմնախնդիրները, ժամանակակից իրավագիտության և իրավահասկացողության դիրքերից ելնելով՝ փորձել կառուցել արդի պահանջներին համապատասխանող օրինականության հասկացություն և դրա վրա կառուցված հայեցակարգ:

Օրինականության տեսությունն ունի իր ձևավորման և զարգացման պատմությունը, որն իր հերթին հետևել է իրավունքի (պետության) տեսության զարգացման պատմությանը: Խորհրդային իրավագետներից շատերն են անդրադարձել այդ հիմնախնդրին:

Հետևելով օրինականության ընդհանուր տեսական մտքի զարգացման պատմությանը՝ ի դեմս այդ հիմնախնդրին նվիրված մշակակալի աշխատությունների՝ մենք նկատում ենք, որ չնայած զարգացմանը՝ օրինականության տեսության մեջ մնացել են բազմաթիվ վիճելի հիմնահարցեր, այդ թվում օրինականության հասկացության բնորոշումը: Արդի ժամանակաշրջանում օրինականության հայեցակարգերի միջև տեսական բանավեճերը չի կարելի համարել լուծված: Օրինականության տեսության մեջ նորություն է «իրավական օրինականության» հասկացությունը կամ օրինականության հիմնախնդիրների քննարկումն իրավաբանական իրավամտաժողովության ու իրավահասկացողության դիրքերից: Եթե արևմտյան իրավա-

բանների աշխատություններում իրավաօրինականությունը հիմնավորապես մշակվել է դեռևս անցյալ դարի սկզբին, ապա հետխորհրդային իրավագիտությունը միայն վերջին ժամանակներս է սկսել մշակել այդ հիմնախնդիրները:

«Իրավական օրինականության» վերածնված գաղափարը սկզբնապես արտացոլվեց Վ.Ս. Ներսեսյանցի, Ս.Ս. Ալեքսեևի, Դ.Ն. Բախրախի, Ն.Վ. Վիտրուկի, Յ.Ս. Գուցիրևի, Վ.Մ. Չետվերնինի աշխատություններում: Ս.Ս. Ալեքսեևի մոտ այդ հիմնախնդիրը ստացավ «իրավաօրինականության փիլիսոփայություն կամ հումանիստական իրավունքի փիլիսոփայություն» ձևակերպումը: Նշված հեղինակները տվել են իրավական օրինականության ընդհանուր գաղափարը, որն անհրաժեշտաբար բխում է նրանց իրավաբանական իրավահասկացողությունից:

Հայաստանի իրավական համակարգի արմատական արդիականացումն ու իրավական լայնահուն բարեփոխումները պահանջում են օրինականության վերաբերյալ տեսական պատկերացումների վերախմաստավորում: Ներկա պայմաններում, երբ սահմանադրական ամրագրում է ձեռք բերել իրավական պետության հայեցակարգը, օրինականության վերաբերյալ նորմատիվային, ձևական պատկերացումներն անհարիր են իրավական պետությունում իրավունքի և իրավական օրենքի գերակայության հայեցակարգերի հետ:

Բացի այդ, ինչքան էլ խորը մշակված լինեն օրինականության տեսության հիմնախնդիրները, ինչքան էլ որ ուժեղ լինեն դրանց մեթոդաբանական հիմքերը, այնուամենայնիվ, հասարակության զարգացման նոր փուլը գիտության, այդ թվում և օրինականության տեսության առջև դնում է նորանոր խնդիրներ:

Հետազոտությունն արդիական է նաև այն պատճառով, որ տեսական գրականության մեջ չկա միասնական մոտեցում օրինականության հիմնախնդիրների լուծման հարցում: Ստեղծված իրավիճակը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. ինչքան հեղինակ, այնքան տեսակետ:

Օրինականության տեսության հիմնախնդիրների հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև գործնական տեսանկյունից: Իրավական ռոմանտիզմը, որ ապրում էր մեր հասարակությունը 20-րդ դարի վերջին տասնամյակում, չարդարացրեց իր հույսերը: Ներկայումս մեր հասարակության մեջ տիրող իրավիճակը կարելի է բնութագրել որպես «օրինականության ճգնաժամ», ինչը հաստատում է մեր առօրյա կյանքը: Այդ են վկայում նաև մեր կողմից շուրջ 800 անձանց շրջանակում անցկացված սոցիոլոգիական հարցումները: Հարցման ենթարկվածների 90 տոկոսին անհանգստացնում է օրինականության վիճակը Հայաստանում, ինչը ցույց է տալիս, որ հանրապետության բնակչությունը գոհ չէ օրինականության խախտումների դեմ պայքարի արդյունքներից:

Օրինականության զանգվածային խախտումների պատճառները հարցման ենթարկվածների 23,5 տոկոսը համարում է քաղաքացիների հակաօրինական դիրքորոշումը, 63,5 տոկոսը՝ պետական մարմինների անարդյունավետ գործունեությունը, 13 տոկոսը՝ օրենքների որակական թերությունները:

«Վստահում եք դուք պետական մարմիններին օրինականության պահպանման գործում» հարցադրմանը, հարցման ենթակվածների 86 տոկոսը տվել է բացասական պատասխան:

Այսպիսով՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյուններից և՛ օրինականության, և՛ իրավաօրինականության հիմնախնդիրը հրատապ է և ունի մեծ արդիականություն:

Հետազոտության առարկա են հանդիսանում օրինականության տեսության շրջանակներում շրջանառվող օրինականության հայեցակարգերը, դրանցից ամեն մեկին բնորոշ մեթոդաբանական առավելություններն ու թերությունները, իրավական օրինականության համակարգային հայեցակարգն իրավաբանական իրավահասկացողության դիրքերից, իրավական օրինականության տեղն ու դերն իրավական կարգավորման կառուցակարգում:

Հետազոտության նպատակն է բազմակողմանի-համալիր հետազոտման ենթարկել օրինականության տեսության հիմնահարցերը, մշակել «իրավական օրինականություն» կատեգորիայի գոյության տեսական ու գործնական հիմքերը, ցույց տալ նրա առավելություններն «օրինականություն» հասկացությունից, ինչպես նաև իրավական օրինականությունը դիտարկել որպես իրավական կարգավորման ամբողջական համակարգի բաղադրատարր:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտական հետևյալ խնդիրները՝ վեր հանել իրավունքի տեսության մեջ առկա օրինականության հասկացության տեսական բազմազան վարկածները և կատարել օրինականության հայեցակարգերի դասակարգում-տիպաբանություն, քննարկել դասակարգման ամեն մի խումբը՝ մատնանշելու համար դրան բնորոշ առավելություններն ու թերությունները, ամփոփել օրինականության հայեցակարգերին բնորոշ թերություններն ու բացթողումները, և դրա հիման վրա որոշել օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման ուղիներն ու միջոցները՝ հատկապես հիմնախնդիրների հետազոտման տեսականորեն ճիշտ և գործնականում անհրաժեշտ մեթոդների համակցությունը, կիրառելով համակարգավերլուծության մեթոդաբանական ուղեցույցներն օրինականության հիմնախնդիրների նկատմամբ՝ օրինականությունը դիտարկել համակարգ, պարզել թե այն ո՞ր համակարգերի շարքին է դասվում մեկ հարթության վրա և ո՞ր մետահամակարգի ենթահամակարգն է (բաղադրատարրը), քննարկել իրավական երևույթների և իրավագիտական հասկացությունների համակարգը և որոշել օրինականություն երևույթի ու հասկացության տեղը դրանցում, քննարկել իրավունքի սկզբունքների հասկացությունը, դրանց դասակարգման հիմնախնդիրը և փորձել իմաստավորել օրինականության և իրավաօրինականության տեղն իրավունքի սկզբունքների համակցության մեջ, վեր հանել իրավահասկացության մեթոդաբանական նշանակությունն օրինականության տեսության համար, օրինականության հիմնախնդիրը դիտար-

կել իրավահասկացողության իրավաբանական տիպի տեսանկյունից և իմաստավորել «իրավական օրինականություն» հասկացությունը, վեր հանել իրավական օրինականության հայեցակարգերի առանձնահատկություններն արևմտաեվրոպական և հետխորհրդային իրավագիտության մեջ, համարելով իրավական օրինականությունն իրավունքի հատկանիշներով պայմանավորված, իրավունքի և նրա բոլոր համակարգային դրսևորումներին, դրանց բաղադրատարրերին բնորոշ հիմնարար և համընդհանուր սկզբունք՝ այն դիտարկել իրավական մետահամակարգերում, հատկապես իրավական կարգավորման համակարգում (կառուցակարգում), դիտարկելով իրավական օրինականությունը որպես իրավական կարգավորման կառուցակարգի հիմնարար կազմակերպագործառնության սկզբունք՝ վեր հանել այդ սկզբունքի գործողության առանձնահատկություններն իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում, հիմք ընդունելով համակարգային վերլուծությունը որպես օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման մեթոդական հիմք՝ իրավական օրինականությունը դիտարկել որպես համակարգային կազմավորում, տալ դրա կառուցվածքային բնութագիրը և վեր հանել բաղադրատարրերը:

Նշված խնդիրների արդյունավետ լուծման և իրավական օրինականության սկզբունքի՝ որպես հասկացության և իրավական կառույցի տեսական ու գործնական գոյության հիմնավորման համար օգտագործվել են դասակարգման, համեմատական-իրավական վերլուծության, համակարգային վերլուծության մեթոդները, ինչպես նաև իրավաբանական կամ մետաֆիզիկական իրավահասկացությունը: Այդ և այլ մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել իրավական օրինականությունը դիտարկել որպես համակարգ, որը չի բացառում, այլ ենթադրում է օրինականությունը ձևական իմաստով, և որը գործում է իրավական մետահամակարգերում:

Աշխատության աղբյուրագիտական հիմքն են կազմում «օրինականություն» և «իրավական օրինականություն» հասկացությունների գիտական իմաստավորմանը նվիրված արևմտյան, ռուսական և հայրենական հեղինակների աշխատությունները, համակարգերի տեսությանը, իրավահասկացողության հիմնախնդիրներին նվիրված տեսական հետազոտությունները, ինչպես նաև իրավական կարգավորման կառուցակարգի տեսական և գործնական հիմնախնդիրներին նվիրված գիտական մշակումները, իրավական նյութը, ի դեմս միջազգային պայմանագրերի և ներպետական նորմատիվ ակտերի, որոնք առնչվում են հետազոտության օբյեկտի և առարկայի հետ, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերը:

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**  
**ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
**ԵՎ ԴՐԱՆՑ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**§ 1. Օրինականության հասկացության տեսական բնորոշումների բազմազանությունը**

Արդի իրավագիտության բաղադրիչներից է «օրինականության տեսությունը»:<sup>1</sup> Այդ տեսությունն ունի իր ձևավորման և զարգացման պատմությունը, որն իր հերթին հետևել է իրավունքի (պետության) տեսության զարգացման պատմությանը: Խորհրդային իրավունքի տեսությունը և իրավաբանական պրակտիկան միանգամից չեն հասել օրինականության անհրաժեշտության գիտակցմանը և դրա տեսական հիմնախնդիրների մշակմանը: Օրինականության տեսությունը ձևավորվել է սուր գիտական բանավեճերի ընթացքում, ընդ որում, պրակտիկայի պահանջների ներգործության ու ազդեցության տակ:

Օրինականության տեսության ձևավորումը սկսվեց նեպի ժամանակներից, երբ մշակվեց հեղափոխական օրինականության դոկտրինան: «Եթե ռազմական կոմունիզմի փուլում իրավունքի հիմնական աղբյուր էր դիտարկվում հեղափոխական իրավագիտակցությունը, ապա նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով՝ ծագեց նոր մոտեցում օրինականության նկատմամբ: Իրավունքի տեսաբանները հեղափոխական օրինականության տակ սկսեցին հասկանալ այն իրավակարգը, որը պրոլետարական դիկտատուրայի գերագույն մարմինների կողմից ճանաչվում էր նպատակահարմար և համապարտադիր: Այս պայմաններում արդեն իրավագիտակցությունը դիտարկվում էր իրավաստեղծագործության

հիմք, որի միջոցով այն դրվում էր օրենսդրության հիմքում, դրսևորվում էր ընդունված օրենսգրքերի բովանդակության մեջ: Այդպիսի տեսական մոտեցման դեպքում հեղափոխական իրավագիտակցությունը ձեռք էր բերում նոր՝ օրենքում առկա բացերի լրացման մեթոդի նշանակություն: Պատահական չէր, որ այն ժամանակվա համարյա բոլոր օրենսգրքերով թույլատրված էր անալոգիան»:<sup>1</sup>

Եթե փորձենք հետևել օրինականության ընդհանուր տեսական մտքի զարգացման պատմությանը՝ ի դեմս այդ հիմնախնդիրն նվիրված նշանակալի աշխատությունների, ապա կտեսնենք, որ օրինականության հասկացությունը ժամանակին զուգնթաց հարստացել է:<sup>2</sup> Չնայած այդ զարգացմանը՝ օրինականության տեսության մեջ

<sup>1</sup> Տե՛ս *Исаев И.А.* История государства и права России. М., 1996, էջ 438:  
<sup>2</sup> Տե՛ս *Крыленко Н.В.* О революционной законности. М., 1932; *Лунев А.Е., Студенкин С.С., Ямпольская И.А.*, Социалистическая законность в советском государственном управлении. М., 1948; *Александров Н.Г.*, Законность и правоотношение в советском обществе. М., 1955; *Керимов Д.А.*, Обеспечение законности в СССР. М., 1956; *Строгович М.С.*, Теоретические вопросы советской социалистической законности. // Советское государство и право, 1956, №4; *Лукашева Е.А.* Правосознание и укрепление законности в СССР. М., 1957; *Лесной В.М.* Советская социалистическая законность. М., 1959; *Сомощенко И.С.* Охрана законности Советским государством. М., 1960; *Чхиквадзе В.М.* Вопросы социалистического права и законности в трудах В.И. Ленина. М., 1960; *Общая теория советского права.* М., 1966, էջ 346-360; *Строгович М.С.* Основные вопросы советской социалистической законности. М., 1966; *Основы незыблемости советской законности.* М., 1967; *Чхиквадзе В.М.* Государство, демократия, законность. М., 1967; *Социалистическая законность и способы ее обеспечения.* М., 1968; *Денисов А.И.* В.И. Ленин о социалистической законности. М., 1968; *Строгович М.С.* Социалистическая законность – незыблемый принцип нашей общественной жизни. М., 1969; *Теория государства и права.* М., 1970, էջ 491-499; *Основы теории государства и права.* М., 1971, էջ 297-303; *Теория государства и права.* М., 1972, էջ 468-475; *Марксистско-ленинская общая теория государства и права.* Социалистическое право. М., 1973; *Теория государства и права.* М., 1974, էջ 405-411; *Общая теория государства и права.* Т. 2. *Общая теория права.* Л., 1974, էջ 364-393; *Рабинович П.М.* Упрочение законности – закономерность социализма. Львов, 1975; *Братусь С.Н.* Юридическая ответственность и законность (Очерк теории). М., 1976; *Жилинский С.Э.* Роль КПСС в укреплении законности на современном этапе, М., 1977; *Дедков Л.Л.* Обеспечение

<sup>1</sup> Տե՛ս *Правовая система социализма: понятие, структура, социальные связи.* Кн. 1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 202; *Лазарев В.В., Липень С.В.*, Теория государства и права. – 3-е изд., испр. и доп. М., Спарк, 2004, էջ 439-445:

մնացել են բազմաթիվ վիճելի հիմնահարցեր, այդ թվում օրինականության հասկացության բնորոշումը: Որպեսզի կարողանանք հասկանալ այդ բանավեճի իմաստը և տարածայնությունների բնույթը, փորձենք ամփոփ կերպով վեր հանել և թվարկել իրավունքի ընդհանուր տեսական գրականության մեջ օրինականության հասկացության բնորոշման հիմնական վարկածները: Այդ թվարկումը մեզ հնարավորություն կտա կատարելու օրինականության հասկացության բնորոշման վարկածների և հայեցակարգերի տիպաբանությունը:

Առաջին, օրինականությունը գաղափար (իդեա) է, պարտքի կատեգորիա, այսինքն՝ գիտակցության բարոյաիրավական որակ:

Օրինականության գաղափարի տակ հասկացվում է իրավագիտակցության (ամենից առաջ առաջավոր սոցիալական ուժերի) մեջ ձևավորված այնպիսի գաղափար իրավական հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավաչափ վարքագծի իրական նպատակահարմարության և անհրաժեշտության մասին, որի պայմաններում տեղ չի մնալու կամայականությանը. փաստորեն կնվաճվի իրավունքի համընդհանրությունը, սուբյեկտիվ իրավունքների իրական կենսագործումը:<sup>1</sup>

---

законности в общенародном государстве. Минск, 1980; **Еременко Ю.П.** Советская Конституция и законность. Саратов, 1982; **Волленко Н.И.** Социалистическая законность и применение права. Саратов, 1983; **Гранат Н.Л.** Социалистическая законность в деятельности органов внутренних дел. М., 1985; **Боннер А.Т.** Законность и справедливость в правоприменительной деятельности. М., 1992; **Безденежных В.М.** Обеспечение законности в деятельности органов внутренних дел. М., 1998; **Ефремов А.Ф.** Принципы законности и проблемы их реализации. Тольятти, 2000; **Головко А.А.** Законность - универсальное явление в жизни человека // Право и демократия: Сб. науч. тр., Вып. 11. Минск, 2001, էջ 17-29; **Берекашвили Л.Ш.** Обеспечение прав человека и законности в деятельности правоохранительных органов: Учеб. пособие. М., 2001; **Ефремов А.Ф.** О проблемах соблюдения единства законности // Право и политика. 2002, ном. 2, էջ 126-134; **Жишкевич В.И., Кучинский В.А.** Обеспечение конституционной законности... // Вестник Конституционного Суда Республики Беларусь. 2002, ном. 1, էջ 94-100:

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М., 1981, т. 1, էջ 217-219:

Այս մոտեցման կողմնակիցները, օրինականությանը վերագրելով սոցիալ-բարոյական բնույթ, գտնում են, որ օրինականության բովանդակության բարոյական հիմքերից մեկն էլ «պարտք» կատեգորիան է՝ որպես գիտակցության որոշակի մակարդակի դրսևորման հետևանք: Պարտքն ունի ինչպես պայմանական, այնպես էլ պարտադիր նշանակություն: Վերջին դեպքում այն որպես կանոն ամրագրված է իրավունքի նորմում իրավաբանական պարտականության տեսքով:<sup>1</sup>

Այս բնույթի մեկ այլ մոտեցման համաձայն՝ օրինականությունը բարոյական կատեգորիա է, որը նշանակում է՝ օրինականության, բարոյականության և մարդասիրության պահանջները միասնական են, հակաբարոյական և հակամարդասիրական գործունեությունն ու վարքագիծն անհամատեղելի են օրինականության հետ: Օրինականությունը բարոյական արժեք է, որը ներառում է համաշխարհային մշակույթի և համամարդկային բարոյական արժեքներն ու գաղափարները:<sup>2</sup>

Երկրորդ, օրինականությունը իրավունքի համապարտադիրության պահանջն է, դրա դրսևորումը:

Օրինականության նման հասկացության կողմնակիցները գտնում են, որ այն անօտարելի է իրավունքի համապարտադիրությունից: Օրինականության նման հասկացությունը պահանջում է հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի համապատասխանություն իրավունքի նորմերի կարգադրագրերին: Օրինականության տվյալ կողմը բխում է իրավունքի՝ որպես համապարտադիր կանոնների ամբողջության գոյության փաստից:<sup>3</sup>

---

<sup>1</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и порядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристъ, 1999, էջ 512-513:

<sup>2</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 325-328:

<sup>3</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и порядок. В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Первалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 438:

Երրորդ, օրինականությունը սկզբունք է ինչպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության, այնպես էլ իրավունքի կամ իրավական կարգավորման:<sup>1</sup>

Օրինականության՝ որպես սկզբունքի հասկացությունն այն համարում է պետական իշխանության ժողովրդավարական սահմանադրական սկզբունք, որը դրսևորվում է նրանում, որ հասարակական կյանքի բոլոր սուբյեկտներին ներկայացվում է պահանջ՝ խստագույնս կատարելու օրենքը. հռչակվում են քաղաքացիների և նրանց կազմակերպությունների իրավունքները և ազատությունները, քաղաքացիների օրինական շահերը երաշխավորվում են, և ապահովվում է նրանց վրա դրված պարտականությունների կատարումը, իրացվում է պատասխանատվությունը, նորմատիվ ակտերի և իրավունքի իրացման ակտերի հստակ և անշեղ կատարումն ապահովվում է պետական և հասարակական միջոցներով:<sup>2</sup>

Չորրորդ, օրինականությունն իրավական որակ է, այսինքն՝ այն իրավական գործունեության հատկություն է, որը պահանջում է որպեսզի այդ գործունեությունը համապատասխանի իրավունքի նորմերին:

Համաձայն այս մոտեցման՝ օրինականությունը մեթոդ, սկզբունք կամ էլ ժողովրդավարության բաղադրատարր չէ: Օրինականությունը մեթոդի, սկզբունքի, ժողովրդավարության որակն է: Խոսքը ոչ թե քանակական, այլ որակական բնութագրերի մասին է: Որակն ինքը որոշակի հատկությունների ամբողջություն է: Հետևաբար միայն որոշակի հատկությունների համակցության առկայության դեպքում է դրսևորվում օրինականության որակը նորմաստեղծ,

<sup>1</sup> Տե՛ս Մարքսիստո-լենինյան ընդհանուր տեսությունը և իրավունքի տեսությունը (Սոցիալիստիկական իրավունք)։ Մ., 1973, էջ 54:

<sup>2</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 332): Մեկ այլ մոտեցման համաձայն օրինականությունը համընդհանուր իրավական սահմանադրական սկզբունք է (տե՛ս Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн.1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 201-210):

իրավաիրացնող գործունեությունում, օրենքների իրացման ճշտության նկատմամբ վերահսկողությունում:<sup>1</sup>

Հինգերորդ, օրինականությունը հասարակության պետական կառավարման (ղեկավարման) մեթոդ է:

Օրինականության այսպիսի բնորոշումը հետևողականորեն մշակել է Ե.Ա. Լուկաշևան, ըստ որի, պետությունը հասարակության կառավարումն իրականացնում է բազմազան նորմատիվ իրավական ակտերի ընդունման ճանապարհով՝ ապահովելով այդ ակտերում պարունակվող նորմերի իրացումը:<sup>2</sup> Եթե օրինականության՝ որպես պետական ղեկավարման մեթոդի բնութագրի դեպքում ելակետային դրույթ է պետական իշխանությունը, ապա օրինականությունը որպես գործունեության սկզբունք դիտարկելիս՝ ելակետային պահ է օրենքը:

Վեցերորդ, օրինականությունը հասարակական կյանքի ռեժիմ է կամ քաղաքական իրավական ռեժիմ<sup>3</sup> կամ էլ ժողովրդավարության բաղադրատարր:

Օրինականության ռեժիմի կողմնակիցների հիմնական եզրակացությունն այն է, որ միայն ռեժիմ հասկացության միջոցով է հնարավոր բացահայտել օրինականության բոլոր հատկությունները:

<sup>1</sup> Տե՛ս **Денисов А.И.** В.И. Ленин о социалистической законности. М., 1968, էջ 59; **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 345:

<sup>2</sup> Տե՛ս **Лукашева Е.А.** Социалистическое правосознание и законность. М., Юридическая литература, 1973, էջ 27:

<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. **В.П. Малахова, В.Н. Казакова.** М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 443; **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 438, Общая теория права. Под общ. ред. А.С. Пиголкина. М., Изд-во МГТУ им. Н.Э. Баумана, 1996, էջ 254; **Борисов В.В.** Социалистическая законность и правопорядок советского общества. Саратов, 1962, էջ 6; **Керимов Д.А.** Обеспечение законности в СССР. М., 1956, էջ 15; **Самощенко И.С.** Ленинское учение о демократии и законности. // Советское государство и право, 1971, №4, էջ 6:



Դրան համապատասխան սխալ է այն մոտեցումը, որն օրինականությունը դիտարկում է միայն մեթոդ կամ սկզբունք:<sup>1</sup>

Օրինականության հասկացությունը ժողովրդավարության հասկացության միջոցով բնորոշելու տարբերակներից մեկը հետևյալն է. օրինականությունը ժողովրդավարության ռեժիմում իրացված և բոլոր քաղաքացիներին, պաշտոնատար անձանց, պետական մարմիններին ու հասարակական կազմակերպություններին ներկայացված գաղափարական, հոգեբանական, իրավաբանական պահանջների համակարգ է: Օրինականությունը՝ որպես քաղաքական ռեժիմի իրականացման մեթոդ, արտահայտում է ժողովրդավարության զարգացման և ամրակայման ներքին օրինաչափությունը: Ժողովրդավարության համակարգն ստեղծում է անհրաժեշտ նախադրյալներ օրինականության պահանջների իրավական ամրագրման և կենսագործման համար:<sup>2</sup>

Յոթերորդ, օրինականությունը համալիր քաղաքական իրավական երևույթ է, որի բովանդակության մեջ առկա են վերը թվարկված մի շարք իմաստները:<sup>3</sup>

Օրինականության հասկացության բնորոշումների թվարկումը կարելի է շարունակել: Մասնավորապես Ն.Ա. Ստրուկովի կարծիքով «սոցիալիստական օրինականությունը ոչ թե իրավունքի սկզբունք է, այլ նրա ոգին, նրա գաղափարը»:<sup>4</sup> Մեկ այլ հեղինակ՝

<sup>1</sup> Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 370):

<sup>2</sup> Տե՛ս Социалистическая законность и применение права. Под ред. проф. М.И. Байтина. Саратов, 1983, էջ 48-49:

<sup>3</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 435-438, **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 318-322; Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн. 1. / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 203; **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, էջ 775-779:

<sup>4</sup> Տե՛ս **Стручков М.А.** Советская исправительно-трудовая политика и ее роль в борьбе с преступностью. Саратов, 1970, էջ 31:

Պ.Ս. Ռաբինովիչը, գտնում է, որ օրինականությունը նշանակում է «հասարակական հարաբերությունների որոշակի վիճակ, կացություն»: Այդ կացությունը պետք է համապատասխանի օրենքին և ենթաօրենսդրական ակտերին:<sup>1</sup> Ֆրանսիացի իրավաբան Ժ. Վեդելը գտնում է, որ «օրինականությունն օրենքին համապատասխանությունն է»: Օրինականությունն արտահայտում է «համապատասխանությունն իրավունքին և համարվում է իրավաբանական իրավաչափության հոմանիշ»:<sup>2</sup>

Այսպիսով՝ իրավունքի ընդհանուր տեսության բաղադրիչներից մեկն օրինականության տեսությունն է, որի գիտական հետաքրքրությունների առարկան են համարվում օրինականության հասկացությունը, իրավական երևույթներում դրա տեղն ու դերը, սկզբունքներն ու պահանջները, երաշխիքները և օրինականության հետ կապված այլ հիմնախնդիրներ: Օրինականության տեսությունն ինքը ներքուստ միասնական և անհակասական չէ, քանի որ տեսաբանները տարբեր կերպ են բնորոշում օրինականության հասկացությունը և այդ հիմքի վրա կառուցում օրինականության տեսության հիմնահարցերի իրենց մեկնաբանությունները և մոտեցումները: Ընդ որում, երբեմն տարածայնությունները վերածվել են անհաշտ բանավեճի: «Բանավեճի անհաշտությունը հանգեցրել է նրան, որ օրինականության բազմակողմ երևույթի ինչ-որ կողմը ոչ միայն հետևում է թողել մյուսներին, այլև բերել է այն հայացքների մերժմանը, որոնք մեր ուշադրությունը սևեռել են այդ հասկացության էության այլ կողմերի ու դրսևորումների վրա»:<sup>3</sup>

Այսպիսով՝ օրինականության տեսության մեջ, պայմանավորված մեթոդաբանական մոտեցումների տարբերություններով, չկա

<sup>1</sup> Տե՛ս **Рабинович П.М.** Упрочение законности – закономерность социализма. Львов, 1975, էջ 121-125:

<sup>2</sup> Տե՛ս **Ведель Ж.** Административное право Франции (перевод с французского). М., 1973, էջ 185:

<sup>3</sup> Տե՛ս Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн.1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 203:

միասնականություն: Արդյունքում մենք ունենք առանձին հայեցակարգեր, որոնք կառուցված են օրինականության յուրօրինակ հասկացության հիման վրա և օրինականության տեսության առարկայական մնացած հիմնախնդիրների մեկնաբանությունը կատարում են օրինականության կառույցի իրենց յուրօրինակ մոդելի միջոցով: Հայեցակարգային բազմազանությունը պահանջում է իրականացնել օրինականության տեսության շրջանակներում առկա հայեցակարգերի դասակարգում:

## **§ 2. Օրինականության հայեցակարգերը և դրանց տիպաբանությունը**

### **2.1. Օրինականության հայեցակարգերի դասակարգումը (տիպաբանությունը)**

Նախորդ հետազոտությունը ցույց տվեց, որ օրինականության հասկացության բնորոշման վարկածները բազմաթիվ են: Հասկացության այդ վարկածներն իրենք արդյունք են գիտական հետազոտության, որն ամրագրվել է օրինականության տեսության մեջ: Իրավունքի ընդհանուր տեսության մեջ օրինականությունն իմաստավորվել է տարբեր տեսական ու մեթոդաբանական դիրքերից, և արդյունքում առկա է օրինականության հայեցակարգերի բազմազանություն: Այդ բազմազանության մեջ կողմնորոշվելու համար աշխատանքի այս մասում խնդիր դրվեց կատարելու օրինականության հայեցակարգերի դասակարգում-տիպաբանություն, ինչը հնարավորություն կտա առանձին-առանձին կանգ առնելու դասակարգման ամեն մի տիպի վրա, վեր հանելու դրա առավելություններն ու թերությունները: Այս մասնավոր խնդրի լուծումը թույլ կտա կողմնորոշվել օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման ուղիների ու միջոցների հիմնահարցում, հատկապես ճիշտ որոշել հիմնախնդիրների հետազոտման տեսականորեն ճիշտ և գործնա-

կանում անհրաժեշտ մեթոդների համակցությունը, իսկ այնուհետև կառուցել իրավական օրինականության հայեցակարգի հիմնարկությունները:

Գիտական ճանաչողության զարգացման հիմքը փորձն է, որի վրա հենվելով՝ հետազոտողը նկարագրում, համակարգում, դասակարգում և մեկնաբանում է փաստերն ու տվյալներն առանձին երևույթների մասին: Այդպիսով՝ գիտական հետազոտության մեթոդներից մեկն էլ դասակարգումն է: Վերջինս կարող է կիրառվել ոչ միայն երևույթների, իրերի, առարկաների, այլև տեսական հայեցակարգերի նկատմամբ: Օրինականության տեսության շրջանակներում առկա հայեցակարգերի դասակարգումը և կամ տիպաբանությունը նպատակահարմար է կատարել մի շարք պատճառներով՝

նախ, այդ դասակարգումը կկրճատի քննարկման (հետազոտության) ծավալները, քանի որ շատ տեսաբանների մոտեցումներ խմբավորվում են մեկ տիպում կամ խմբում, ինչի արդյունքում հետազոտությունն իրականացնելիս մենք կծեռբազատվենք օրինականության ամեն մի հասկացության վարկածի մանրամասների քննարկման անհրաժեշտությունից,

երկրորդ, դասակարգումը հնարավորություն կտա կանգ առնելու ամեն մի հայեցակարգային խմբի հանգուցային, էական պահերի վրա, ինչը կհեշտացնի դրանց իմաստի հասկացումը, առավելությունների ու թերությունների մատնանշումը:

Օրինականության հայեցակարգերի դասակարգման փորձ կատարել է իրավունքի տեսաբան Ռ.Տ. Մուխաևը՝ առանձնացնելով օրինականության տեսության մեկնաբանման երկու մոտեցում կամ տիպ՝ գործառույթային (ֆունկցիոնալ) և նորմատիվ:<sup>1</sup> Օրինականության հասկացության նկատմամբ զանազան տեսական մոտեցումների դասակարգում կատարել է նաև Ա.Վ. Պոլյակովը: Օրինականության առկա հայեցակարգերը նա դասակարգել է ձևականի (է-

<sup>1</sup> Տե՛ս *Myxaev P.T.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 437:

տատիստականի) և բովանդակային<sup>1</sup>։ Սկզբունքորեն համամիտ լինելով այդ դասակարգումների հետ՝ մենք կփորձենք այն լրացնել՝ կիրառելով դասակարգման այլ, ինչպես նաև առավել ընդգրկուն չափանիշներ, քանի որ վերը բերված դասակարգումներն ամբողջական և ավարտուն չեն։ Օրինակ՝ Ա.Վ. Պոլյակովի կողմից օրինականության հայեցակարգերի դասակարգումը ձևականի (էտատիստականի) և բովանդակայինի թերի է, որովհետև օրինականության հայեցակարգը կարող է լինել ձևական, սակայն բովանդակային, բայց ոչ իրավաբանական, այսինքն՝ իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի վրա չխարսխված։

Ամեն մի դասակարգման հիմքում ընկած է որոշակի չափանիշ։ Միևնույն երևույթի կամ հասկացության դասակարգումը կարելի է կատարել՝ հիմք ընդունելով զանազան չափանիշներ։ Օրինակ՝ Ա.Վ. Պոլյակովի մոտ օրինականության հայեցակարգերի դասակարգումը կատարված է ըստ իրավահասկացողության չափանիշի։

Օրինականության տեսությանը նվիրված գրականության ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս, ըստ որոշակի դասակարգման չափանիշների, առաջ քաշելու օրինականության հայեցակարգերի հետևյալ տիպերը։

Առաջին, օրինականության նորմատիվային կամ ձևական (էտատիստական) և բովանդակային, այդ թվում իրավաբանական հայեցակարգեր։ Այս դասակարգումը կառուցված է իրավունքի և օրենքի նույնացման կամ տարբերակման մոտեցումների վրա։ Այս առումով օրինականության տեսությունը, որը խարսխված է իրավունքի և օրենքի նույնացման մոտեցման վրա, իրենից ներկայացնում է օրինականության ձևական հայեցակարգ, որովհետև անտեսում է օրենսդրության՝ որպես օրինականության հիմքի բովանդակային կողմը, շեշտադրելով միայն դրա՝ օրենսդրության իրացումը։ Իրավագիտության այն հայեցակարգը, որը կառուցված է իրավունքի

և օրենքի նույնացման վրա, իրենից ներկայացնում է պոզիտիվականություն, նորմատիվականություն։ Յետևաբար, օրինականության այդ հիմքով կառուցված հայեցակարգերը կարող ենք անվանել ոչ միայն ձևական, էտատիստական, այլև պոզիտիվային, նորմատիվային։ Դրան հակառակ՝ օրինականության այն հայեցակարգերը, որոնք կառուցված են իրավունքի և օրենքի տարանջատման մոտեցման վրա, կարող ենք անվանել բովանդակային (սուբստանցիոնալ) կամ իրավաբանական հայեցակարգեր։

Երկրորդ, օրինականության միակողմ և բազմակողմ հայեցակարգեր։ Նման դասակարգման չափանիշն օրինականությանը վերագրվող կողմերի, հատկությունների քանակն է։ Օրինականության հասկացության կառույցը միակողմ է, եթե շեշտադրում է օրինականության մեկ կողմը, հատկության դրսևորումը։ Բազմակողմ են օրինականության այն հայեցակարգերը, որոնք օրինականության հասկացության մեջ սինթեզում են մի քանի կողմեր, դրսևորումներ, հատկություններ։ Օրինականության բազմակողմ հայեցակարգերն իրենց հերթին կարելի է բաժանել բազմակողմ-հավասարաթեք և բազմակողմ-աստիճանակարգային հայեցակարգերի։

Երրորդ, օրինականության համակարգային հայեցակարգեր։ Օրինականության հայեցակարգերի մեջ համակարգայինների առանձնացման չափանիշն օգտագործված մեթոդն է։ Օրինականության տեսության մեջ շատ հեղինակներ օրինականությունը դիտարկում են համակարգային կազմավորում իրեն բնորոշ կառուցվածքային բաղադրատարրերով։ Օրինականության համակարգային հայեցակարգերը միասնական չեն, որովհետև համակարգային մեթոդն օրինականության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս ամեն մի հետազոտող կիրառել է յուրօրինակ ուղղվածությամբ։ Տարածվածը դրանց մեջ այն մոտեցումն է, որը բուն օրինականությունը՝ որպես կատեգորիա, դիտարկում և հասկանում է որպես համակարգ։

Չորրորդ, օրինականության գործառույթային (\$ունկցիոնալ) հայեցակարգեր։ Այսպիսին են համարվում այն հայեցակարգերը, ո-

<sup>1</sup> См. *Поляков А.В.* Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петербург. гос. ун-та, 2004, էջ 844-845:

րոնք օրինականությունը դիտարկում են որպես որոշակի սուբյեկտների գործառույթ, նրանց գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Հինգերորդ, օրինականության օրիգինալ (ոչ ավանդական) հայեցակարգեր: Այս հայեցակարգերն օրինականության տեսության հիմնախնդիրների մեկնաբանման այն վարկածներն են, որոնք չեն տեղավորվում մինչ այժմ քննարկված հայեցակարգային խմբերում: Դասակարգման հիմքն օրինականության հասկացության և հայեցակարգային դրույթների ինքնատիպությունն է, ինչի արդյունքում իրենց պարադիգմալ մոտեցմամբ այդ հայեցակարգերը նման չեն մնացածներին, չեն տեղավորվում մինչ այժմ վերն առանձնացված դասակարգման չափանիշների շրջանակներում:

Մինչև օրինականության հայեցակարգերի՝ վերն առանցնացված տիպերի քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը՝ օրինականության հայեցակարգերի տիպերի առանձնացումը որոշակիորեն պայմանական է: Օրինակ՝ օրինականության համակարգային որևէ հայեցակարգ իր բնույթով կարող է լինել նորմատիվ, իսկ մյուսը՝ իրավաբանական: Դա նշանակում է, որ մեկ տիպում խմբավորված հայեցակարգերն իրենց բովանդակությամբ միասնական չեն, օրինակ՝ կարող է լինել օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված նորմատիվականության վրա և օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի վրա: Այս երկու մոտեցումների միջև չկա ընդհանրություն, այլ, ընդհակառակը՝ դրանք իրար հակասող մոտեցումներ են: Ընդհանրությունը միայն օգտագործված մեթոդում է՝ օրինականությունը դիտարկել համակարգային երևույթ:

## **2.2. Օրինականության նորմատիվային հայեցակարգերը**

Օրինականության նորմատիվային հայեցակարգեր են օրինականության հիմնախնդիրների լուծման այն մոդելները, որոնք

խարսխված են իրավահասկացողության պոզիտիվ տիպի կամ նորմատիվականության վրա և այն մեկնաբանում են որպես իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրավունքի նորմերի ճշգրիտ պահպանում, օգտագործում, կատարում և կիրառում:<sup>1</sup>

Օրինականության նորմատիվային հայեցակարգի կողմնակիցներից է, օրինակ՝ Վ.Ս. Աֆանասևը, որն օրինականությունը բնորոշում է որպես հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի խստագույնս և անշեղ պահպանման, կատարման սկզբունք, մեթոդ և ռեժիմ:<sup>2</sup> Այս հեղինակն օրինականության բովանդակությունը և էությունը կոնկրետացնում է օրինականության սկզբունքներ և օրինականության պահանջներ հասկացությունների միջոցով: Ըստ նրա՝ «օրինականության սկզբունքներն այն հիմնական գաղափարներն ու հիմունքներն են, որոնք արտահայտում են օրինականության բովանդակությունը, իսկ պահանջներն այն, ինչ «պահանջում է» օրինականությունը, այսինքն՝ ընդհանուր կերպով ձևակերպված իրավական պահանջները, որոնց պահպանումը և կատարումը երևույթը (վարքագիծը, ակտը և այլն) դարձնում է օրինական»:<sup>3</sup> Վ.Ս. Աֆանասևն օրինականության սկզբունքներ է համարում օրենքի գերակայությունը, օրինականության միասնականությունը, օրինականության նպատակահարմարությունը, օրինականության իրական լինելը:

Օրինականության նորմատիվային հայեցակարգի կողմնակիցներից է նաև Ս.Ա. Կոնարովը: Ըստ նրա՝ «օրինականությունը պետության և հասարակության պահանջն է՝ ուղղված ամենին՝ ամենուր ճշգրիտ և անշեղ իրացնելու իրավունքի նորմերը: Այդ պահանջի էությունը հանգում է իրավունքի նորմերի բարեխիղճ և պատաս-

<sup>1</sup> Տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 437:

<sup>2</sup> Տե՛ս *Афанасьев В.С.* Законность и правопорядок.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 310:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 314-315:

խանատու պահպանմանը, կատարմանը, օգտագործմանը և կիրառմանը»:<sup>1</sup> Այս հեղինակն օրինականության բնույթի հասկացման համար օգտագործում է նաև «օրինականության հիմնական գաղափարներ» (հատկություններ, գծեր) հասկացությունը՝ մասնավորապես որպես այդպիսին համարելով օրինականության համընդհանրությունը և միասնությունը, օրենքների գերակայությունը, օրինականության իրացման անխուսափելիությունը, օրինականության ու նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը, օրինականության և մշակութայնության անխզելի կապը:<sup>2</sup>

Նորմատիվային հայեցակարգերի տարբերակներից մեկն օրինականությունը դիտարկում է որպես հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի ճիշտ և անշեղ կատարման ու պահպանման ռեժիմ: Նման կերպով հասկացված օրինականության սկզբունքներն են օրենքի գերակայությունը, անհատի իրավունքների ու ազատությունների պահպանումը, պաշտպանությունը և դրանց երաշխավորվածությունը, օրենքի և դատարանի առջև բոլոր քաղաքացիների իրավահավասարության ապահովումը, իրավունքի նորմերը կատարելու պահանջի համընդհանրությունը, օրինականության միասնությունը, վճռական և անհաշտ պայքարն իրավունքի նորմերի խախտումների դեմ, արդյունավետ և չթուլացող վերահսկողությունն ու հսկողությունն օրենքների կատարման նկատմամբ:<sup>3</sup>

Այսպիսով՝ օրինականության նորմատիվային հայեցակարգերն օրինականությունը դիտարկում են որպես պոզիտիվ իրավական երևույթ և կատեգորիա: Այս հայեցակարգերում առկա ռացիոնալ հատիկն օրինականության էության հասկացումն է՝ որպես իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի նորմերի խստա-

<sup>1</sup> Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 365-366:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 367-370:

<sup>3</sup> Տե՛ս **Головистикова А.Н., Дмитриев Ю.А.** Проблемы теории государства и права. М., Изд-во Эксмо, 2005, էջ 585-586:

գույնս և անշեղ պահպանման ու կատարման պահանջ: Սակայն այդպիսի հասկացումը չի սպառում օրինականության հասկացության ողջ բովանդակությունը, տառապում է միակողմանիությամբ: Այդ իսկ պատճառով այն արժանացել է իրավունքի մի շարք տեսաբանների քննադատությանն իր թերությունների պատճառով: Որպես այդպիսի թերություններ՝ մասնավորապես մատնանշվում են՝ «առաջին՝ օրինականության կատեգորիայի բովանդակությունը չի արտացոլում այն երևույթների ողջ բազմազանությունը, որոնք ձևավորում են պատկերացում դրանց մասին, երկրորդ՝ այն թույլ չի տալիս որոշել նրա բարոյական բնույթը, երրորդ՝ նրանում գերակշռում է քաղաքական-իրավաբանական առումը, չորրորդ՝ զուտ նորմատիվիստական հայացքը, կապված օրինականության առարկայական-ֆունկցիոնալ բնութագրի հետ, հաճախ տանում է իրավական ֆետիշիզմի, խամրեցնում է հիմնախնդրի գործնական կողմը, հինգերորդ՝ այդ հիմքով կառուցված բնորոշումները նպաստում են հակասությունների առաջացմանն առանձին իրավական կատեգորիաների միջև, օրինակ՝ օրինականության և իրավունքի իրականացման»:<sup>1</sup>

Այսպիսով՝ օրինականության նորմատիվային հայեցակարգերի վերլուծությունը և համադրումը հիմք է տալիս կառուցելու հետևյալ եզրակացությունները՝

առաջին, օրինականության նորմատիվային հայեցակարգերը գրեթե նույն կերպ են բնորոշում օրինականության հասկացությունը, այն է՝ իրավունքի նորմերի պահպանման, կատարման, կիրառման պահանջ: Տարբեր վարկածների միջև առկա տարբերությունը միայն օրինականության կառույցի բաղադրատարրերի (օրինականության սկզբունքներ, պահանջներ, հատկություններ) ավել կամ պակաս լինելու մեջ է, ինչպես նաև դրանց շրջանակի մեջ: Այսպես՝

<sup>1</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристы, 1999, էջ 511:

հեղինակներից մեկն օրենքի գերակայությունը համարում է օրինականության սկզբունք, մյուսը՝ օրինականության պահանջ,<sup>1</sup>

երկրորդ, օրինականության նորմատիվ հայեցակարգերը խորհրդային պոզիտիվականության կամ պոզիտիվ-լեգիստական իրավագիտության ավանդույթների շարունակությունն են արդի պայմաններում:<sup>2</sup> Կառուցված լինելով պոզիտիվական-նորմատիվային մեթոդոլոգիայի վրա՝ օրինականության հայեցակարգերի այս տիպի վարկածները չեն ընկալել իրավունքի և օրենքի տարբերակման գաղափարը, չունեն «իրավաօրինականության» հասկացությունը՝ որպես օրինականության ենթահամակարգային բաղադրատարր, կողմ,

երրորդ, օրինականության նորմատիվային հայեցակարգերի մյուս թերությունն այն է, որ դրանք նույնացնում են իրավահարցնող ու իրավակիրառող գործունեությունն օրինականության հետ: Այնինչ, ինչպես ճիշտ նկատում են մի շարք հեղինակներ, օրինականությունը և իրավունքի իրացումը նույնական երևույթներ և հասկացություններ չեն: Այսպես՝ ըստ Ա.Ս. Շաբուրովի՝ «օրինականությունը նույնական չէ իրավունքի իրացման հետ, նրա բովանդակությունը նույնական չէ իրավունքի նորմերը կյանքում կենսագործելուն:

<sup>1</sup> Այսպես՝ օրենքի գերակայությունը Վ.Ս. Աֆանասևը համարում է օրինականության սկզբունք (տե՛ս **Афанасьев В.С.** Законность и правопорядок.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристы, 2005, էջ 314), Ա.Ս. Կոմարովը՝ օրինականության գաղափար, հատկություն (տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 368), իսկ, օրինակ՝ Պ.Տ. Վասկովը և Ա.Ս. Շաբուրովը՝ օրինականության պահանջներից մեկը (տե՛ս Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 409):

<sup>2</sup> Եթե համեմատենք օրինականության՝ վերը թվարկված նորմատիվային հայեցակարգերը խորհրդային իրավունքի տեսության ծաղկման շրջանի օրինականության հայեցակարգերի հետ, ապա կտեսնենք, որ միակ տարբերությունը սոցիալիստական բացահայտիչի բացառումն է օրինականության հասկացությունը բնորոշելիս (տե՛ս, օրինակ՝ Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 400-409 և **Афанасьев В.С.** Законность и правопорядок.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристы, 2005, էջ 310-316):

իրավական կարգավորման այդ կողմն ընդգրկվում է այնպիսի իրավաբանական կատեգորիաներով, ինչպիսիք են «իրավունքի իրականացումը», «իրավունքի կիրառումը», «իրավաչափ վարքագիծը», «իրավահարաբերությունը», «իրավունքի արդյունավետությունը»: Դրանք բոլորը, իհարկե, անմիջականորեն կապված են իրավունքի գործողության հետ, սակայն նկարագրում են այն միայն ինչ-որ մեկ կողմից ... Այնինչ օրինականությունը համալիր կատեգորիա է, որն ընդգրկում է իրավական կյանքի բոլոր կողմերը, նրա գործողությունը, հասարակական կյանքի կարգավորվածությունն ամբողջությամբ»: <sup>1</sup> Իրավակիրառ և իրավահարցնող գործունեությունը նույնական չեն օրինականության հետ նաև այն պատճառով, որ «օրինականությունը հասարակության իրավական կյանքի մակարդակի արտացոլումն է, այդ թվում և պետության մարմինների ու քաղաքացիների իրավական գործունեության կացությունը: Բուն գործունեությունը համարվում է օրինականության նյութականացման միջոց»,<sup>2</sup>

չորրորդ, օրինականության նորմատիվային հայեցակարգերը, շեշտադրելով օրինականության ձևական-իրավաբանական կողմերը, անտեսում են իրավունքի նորմերի բովանդակային կողմը: Այս թերության հետ համաձայն են բազմաթիվ հեղինակներ, մասնավորապես, Ռ.Տ. Մուխաևի կարծիքով, օրինականության նորմատիվային հասկացությունը, իր ուշադրությունը սևեռելով իրավունքի նորմերի կատարման վրա, մի կողմ է թողնում իրավական նորմերի բովանդակության հարցը: Այդ կապակցությամբ ցանկացած ակտ, որը ելնում է պետությունից և ըստ էության կարող է համարվել և ոչ իրավական, հակամարդասիրական, պահանջում է անշեղ իրացում: Տվյալ դեպքում օրինականությունը կարող է օգտագործվել որպես

<sup>1</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 436:

<sup>2</sup> Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 438:

կառավարող էլիտայի ներխմբակային ջանքի իրացման գործիք, այլակարծության և քաղաքացիական ազատությունների ճնշման միջոց, ինչպես դա եղել է ամբողջատիրական ռեժիմների օրոք:<sup>1</sup>

Օրինականության նորմատիվային հայեցակարգերի կողմնակիցների կարծիքով օրինականության բովանդակային-իրավաբանական հայեցակարգերը տանում են դեպի իրավական քաոս, կոչ են անում չկատարել օրենքները:<sup>2</sup> Բայց իրավական օրինականության գաղափարի կողմնակիցներն անենաթողության ջատագովներ չեն, այլ ընդամենը գտնում են, որ օրինականությունը պահանջում է նախ՝ իրավունքի կենսագործում իրավական ձևերում՝ օրենքներում, իսկ այնուհետև՝ վերջինիս կենսագործում: Եթե օրենքն իրավական չէ, ապա իրավունքի սուբյեկտները պետք է ունենան հնարավորություն պատշաճ ընթացակարգերով հաղթահարելու ոչ իրավական օրենքը: Օրինականությունն ունի սոցիալական արժեք, երբ այն ծառայում է իրավական, հումանիստական, ազատական և արդար արժեքների հաստատմանն ու պահպանությանը: Հետևաբար օրինականությունն առանց բովանդակության կարգավորվածություն, ինչ որ կայուն կարգ ներկայացնելը պետք է մերժվի: Օրինականության նորմատիվային հայեցակարգերի թերությունը հենց այն է, որ չեն մերժում դա:

Մեկ այլ հեղինակի կարծիքով օրինականության նեղ, նորմատիվային մեկնաբանումն «արդյունք է իրավունքի և օրենքի նույնացման, երբ պետությունից ելնող ցանկացած նորմատիվ ակտ (նույնիսկ հակամարդասիրական, հետադիմական) համարվում է «իրավունք» և համապատասխանաբար պահանջում է անշեղ իրացում: Սակայն այդ ակտերը չեն ապահովում իրավական կարգա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 437:

<sup>2</sup> Տե՛ս **Кудрявцев В.Н.** О правовопонимании и законности. // Государство и право. 1994, №3, էջ 5: Նման հայացքներ զարգացնում են նաև Օ.Է. Լեյստը, Վ.Ն. Պրոտասովը (տե՛ս **О.Э. Лейст**, Сущность права. Проблемы теории и философии права. М., ИКД „Зерцало-М“, 2002, էջ 244-264; **Протасов В.Н.** Теория государства и права. Проблемы теории государства и права. М., Юрайт-М, 2001, էջ 118-120):

վորման նպատակները, օրինականությունը: Ընդհակառակը, դրանք ծնուն են սոցիալական լարվածություն, սահմանափակում են քաղաքացիների ազատությունը, նրանց բնական իրավունքները, թույլ են տալիս ապօրինություն և կամայականություն պաշտոնատար անձանց գործունեության մեջ: Բացի այդ, դժվար չէ նկատել, որ օրինականության հասկացության ուշադրությունը տվյալ դեպքում կենտրոնացված է միայն իրավունքի նորմերի կատարման վրա, իսկ այդ նորմերի բովանդակությունը, որը, ինչպես հայտնի է, շատ բանով կրում է կամային բնույթ, շրջանցվում է»:<sup>1</sup>

Օրինականության նորմատիվիստական հայեցակարգերի որոշ կողմնակիցներ նույնիսկ իրավաստեղծագործությունը չեն ներառում օրինականության առարկայական ոլորտի շրջանակներում: Այսպես՝ Ս.Ա. Կոմարովը վիճելի է համարում օրինականության հասկացության մեջ իրավաստեղծ գործընթացի ներառումը:<sup>2</sup> Նրա կարծիքով իրավաստեղծագործությունը, լինելով պետական գործունեության տեսակ, չի տարբերվում այլ տեսակներից, հետևաբար կարիք չկա այն ներառել օրինականության հասկացության մեջ: «Զե՞ որ, եթե նորմը փոփոխվում է, ապա հետևելով տրամաբանությանը՝ չի կարելի ասել, որ օրինականությունը մշտական մեծություն է. այն փոխվում է ամեն անգամ, երբ տեղի է ունենում օրենսդրության փոփոխություն»:<sup>3</sup> Կարծում ենք, որ Ս.Ա. Կոմարովը ճիշտ չի հասկացել իրավաստեղծագործությունն օրինականության ոլորտ համարելու անհրաժեշտ պահանջը: Խնդիրը ոչ թե այն է, որ օրենսդրությունը փոփոխական է, ինչն անխուսափելի է, այլ այն, որ իրավաստեղծագործության արդյունքում ստեղծված օրենսդրությունը պետք է լինի իրավական: Հետևաբար, օրինականությունն այս

<sup>1</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и порядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 437):

<sup>2</sup> Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 364:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

ոլորտում արտահայտվում է «իրավաօրինականություն» հասկացությանը և պետք է ունենա իր սկզբունքները, պահանջները, երաշխիքները, ինչպես բուն օրինականությունը: Չէ՞ որ իրավաստեղծագործության արդյունքում ստեղծված օրենքներն ունեն լեգիտիմության երկու կողմեր՝ ձևական և բովանդակային:<sup>1</sup> Ս.Ա. Կոմարովը և այլ նորմատիվիստներ ընդունում են միայն դրա ձևական կողմը՝ բացառելով օրենքի բովանդակային լեգիտիմությունը:

Օրինականության նորմատիվիստական հայեցակարգերի նշված թերությունների հաղթահարման ճանապարհն օրինականության հասկացության կառուցումն է իրավաբանական իրավահասկացության (իրավունքի և օրենքի տարբերակման) մեթոդաբանական հիմքերի վրա և իրավական օրինականության (ներառյալ իրավաօրինականության և օրինականության) հասկացության ճանաչումը:

### **2.3. Օրինականության բովանդակային հայեցակարգերը**

Օրինականության առկա հայեցակարգերը կարելի է դասակարգել նաև ձևականի և բովանդակայինի: Այս դասակարգումն ինքը նորույթ չէ իրավաբանական գրականության մեջ: Օրինականության հասկացության նկատմամբ զանազան տեսական մոտեցումների նման դասակարգում կատարել է Ա.Վ. Պոլյակովը:<sup>2</sup> Ըստ նրա՝ օրինականության հասկացության կողմնակիցներին կարելի է բաժանել էտատիստական կամ ձևական մոտեցման և ազատական կամ բնական-իրավական մոտեցման կողմնակիցների: Էտատիստական մոտեցման համաձայն՝ «օրինականությունն իրավունքին խիստ և

անշեղ հետևելն է կամ, որ նույնն է, օրենքին հետևելն է (իրավունքը և օրենքն այս դեպքում նույնացվում են)»:<sup>1</sup>

Օրինականության ձևական հայեցակարգերի հակառակորդները հիմնավորում են օրինականության հիմնախնդիրների մեկնաբանման ազատական, բնական-իրավական մոտեցումը՝ քննադատելով ձևական-նորմատիվային մոտեցումը: Այս հեղինակները, կանգնած լինելով ազատականության, բնական իրավունքի դիրքերում, ունենալով հակաէտատիստական կողմնորոշում, ոչ միայն «տարբերում էին իրավունքը և օրենքը, այլև գնահատում էին օրենքը նրանում իրավունքի ապրիորի հատկանիշների (անհատի ազատություն, արդարություն, հավասարություն, մարդու իրավունքների հարգանք և այլն) առկայության կամ բացակայության տեսանկյունից: Օրենքում այդպիսի իրավական հատկանիշների հնարավոր բացակայությունը, ըստ բնական-իրավական տեսության կողմնակիցների, օրինականության ձևական հայեցակարգին զրկում է գիտական և գործնական նշանակությունից: Իսկապես, երբ օրենքը հակաիրավական է, իրենում չի պարունակում իրավունք, ապա ի՞նչ իմաստ ունի դրա անպայման կատարումը»:<sup>2</sup>

Ա.Վ. Պոլյակովի այս դասակարգումը կարիք ունի որոշակի կատարելագործման: Ակնհայտ է, որ այն կառուցված է իրավունքի և օրենքի նույնացման կամ տարբերակման մոտեցումների վրա: Այս առումով օրինականության տեսությունը, որը խարսխված է իրավունքի և օրենքի նույնացման մոտեցման վրա, իրենից ներկայացնում է օրինականության ձևական հայեցակարգ, որովհետև անտեսում է օրենսդրության՝ որպես օրինականության հիմքի բովանդակային կողմը՝ շեշտադրելով միայն դրա՝ օրենսդրության իրականացումը: Իրավագիտության այն հայեցակարգը, որը կառուցված է իրավունքի և օրենքի նույնացման վրա, իրենից ներկայացնում է պոզիտիվականություն, նորմատիվականություն: Յետևաբար՝ օրինա-

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես *Ք.Յ. Լիվշից* О легитимности закона.- В брошюре: Теория права: новые идеи. М., 1995, вып. 4-ий, էջ 18-26:

<sup>2</sup> Տես *Պոլյակով Ա.Վ.* Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петербург. гос. ун-та, 2004, էջ 844 -845:

<sup>1</sup> Տես նույն տեղում, էջ 844:

<sup>2</sup> Տես նույն տեղում:



կանության այդ հիմքով կառուցված հայեցակարգերը կարող ենք անվանել ոչ միայն ձևական, էտատիստական, այլև՝ պոզիտիվային, նորմատիվային: Դրան հակառակ՝ օրինականության այն հայեցակարգերը, որոնք կառուցված են իրավական օրենքի գաղափարի վրա, կարող ենք անվանել բովանդակային (սուբստանցիոնալ) կամ իրավաբանական:

Այսպիսով՝ օրինականության իրավաբանական հայեցակարգ է օրինականության հասկացության մեկնաբանման այն տարբերակը, որը կառուցված է իրավունքի և օրենքի տարանջատման գաղափարի վրա և դրանով իսկ, բացի օրենքների իրականացման պահանջից, շեշտադրում է նաև դրանց բովանդակային հատկությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ օրենքների (օրենսդրության) բովանդակային կողմը շեշտող օրինականության ոչ բոլոր հայեցակարգերն են հետևողականորեն ու ամբողջապես կառուցված իրավունքի և օրենքի տարանջատման մոտեցման վրա: Կան հայեցակարգեր, որոնք շեշտադրում են օրենսդրության բովանդակային կողմը, սակայն ինքնին դրանք նորմատիվային արձատներ և հիմքեր ունեն: Այսպես՝ խորհրդային իրավագիտությունն ըստ էության նորմատիվականություն էր կամ պոզիտիվ իրավագիտություն: Սակայն խորհրդային մի շարք տեսաբաններ օրինականության տեսության մեջ ներմուծել են նաև օրենքների բովանդակությանը վերաբերող սկզբունքներ, պահանջներ, տարածել են օրինականության առարկայական ոլորտը նաև իրավաստեղծագործության վրա: Օրինականության տեսության այդպիսի տարբերակները կարելի է անվանել բովանդակային հայեցակարգ, սակայն ոչ իրավաբանական:

Եթե ժամանակագրական առումով դիտարկենք խորհրդային իրավագիտության մեջ օրինականության տեսության զարգացման միտումները նորմատիվային և բովանդակային (կամ «լայն մոտեցման») դիրքորոշումների հակադրության տեսանկյունից, ապա կարող ենք փաստել, որ ակնհայտորեն նկատվում է անցում օրինակա-

նության ավելի լայն հասկացության, որը ներառում է ինչպես իրավաստեղծագործության, այնպես էլ իրավական ակտերի կենսագործման ոլորտները:<sup>1</sup>

Օրինականության տեսության նման որակական զարգացման ժամանակագրական սահմանը համընկնում է 20-րդ դարի 50-ական թթ. վերջին, որը պայմանավորված էր անհատի պաշտամունքի և նրա հետևանքների հաղթահարման հետ: Այդ զարգացումն ի վերջո հանգեցրեց օրինականության տեսության բովանդակային հայեցակարգերի ձևավորմանը, հայեցակարգեր, որոնք օրինականության հասկացության կամ հատկանիշների կամ կողմերի մեջ շեշտադրում էին նաև օրինականության նորմատիվային հիմքերի (իրավունքի ձևական աղբյուրների կամ որ նույնն է՝ իրավունքի նորմերի) բովանդակությունը:<sup>2</sup>

Օրինականության բովանդակային հայեցակարգերի կողմնակիցներն օրինականության բնորոշման կառուցման գործընթացում անհրաժեշտ էին համարում օրինականության բոլոր տարրերի ներառումը կամ արտացոլումը: Որպես այդպիսի բաղադրատարրեր ճանաչվում էին՝ «առաջին, իրավական նորմերի համակարգի հրապարակումը, որոնք ճիշտ են արտացոլում հասարակական զարգացման օրինաչափությունները և ժողովրդի կամքը, երկրորդ, այդ նորմերի անշեղ և խստագույն կենսագործումը կյանքում: Միայն այդ բաղադրատարրերի միասնությունն է ճիշտ արտացոլում իսկա-

<sup>1</sup> Ст'ю Социалистическая законность в советском государственном управлении. М., Юриздат, 1948, էջ 19-20; **Павлов И.**, К вопросу о теории общенародной социалистической законности. // Социалистическая законность, 1962, թիվ 6, էջ 14-15; **Имре Сабо** Социалистическое право. М., «Прогресс», 1964, էջ 95 և այլն:

<sup>2</sup> Ст'ю **Керимов Д.А.** Обеспечение законности в СССР. М., Госюридиздат, 1956, էջ 10; **Строгович М.С.** Основные вопросы советской социалистической законности. М., 1966, էջ 11-25; **Самощенко И.С.** Охрана режима законности Советским государством, М., 1960, էջ 10; **Александров Н.Г.** Право и законность в период развернутого строительства коммунизма. М., Госюридиздат, 1961, էջ 120; Лунев А.Е., Обеспечение законности в советском государственном управлении. М., Юридическая литература, 1963, էջ 7-8 և այլն:

կան օրինականությունը հասարակության մեջ: Գիտականորեն հիմնավորված, հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները ճիշտ արտացոլող օրենսդրության առկայությունը չի կարող ապահովել խորհրդային հասարակության առջև դրված նպատակների իրականացումը, եթե օրենսդրության նորմերը չեն կենսագործվում կյանքում, եթե դրա կարգադրագրերը խախտվում են: Մյուս կողմից հասարակական զարգացման օրենքներին, ժողովրդի կամքին հակասող իրավական ակտերի իրականացումը ևս վնասում է խորհրդային հասարակության շահերը: Գիտականորեն հիմնավորված օրենսդրությունը, դրա անշեղ և խստագույնս իրականացումը կյանքում կազմում են սոցիալիստական օրինականության ռեժիմի երկու կողմերը»:<sup>1</sup>

Օրինականության հասկացության մեջ արտացոլելով օրինականության՝ վերը նշված երկու տարրերը՝ խորհրդային իրավագետ Ե.Ա. Լուկաշևան իր «Социалистическое правосознание и законность» աշխատության մեջ տվել է օրինականության հետևյալ բնորոշումը. «սոցիալիստական օրինականությունը հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջումներին հետագոտման վրա հիմնված հասարակության պետական ղեկավարման մեթոդ է, որը հանգում է խորհրդային ժողովրդի կամքն արտահայտող և կոնունիստական շինարարության նպատակների կատարմանն ուղղված օրենքների ու այլ իրավական ակտերի հրապարակմանը և դրանց անշեղ իրականացմանը»:<sup>2</sup>

Ինչպես տեսնում ենք, բնորոշման մեջ օրինականության հասկացությունը տրոհված է երկու տարրերի՝

առաջին, օրինականությունը ենթադրում է գիտականորեն հիմնավորված, հասարակական օրինաչափություններն ու ժողովրդի կամքն արտացոլող օրենքներ և այլ իրավական ակտեր,

<sup>1</sup> Տե՛ս *Лукашева Е.А.* Социалистическое правосознание и законность. М., Юридическая литература, 1973, էջ 25:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 27:

երկրորդ, օրինականությունը ենթադրում է օրենքների և այլ ակտերի անշեղ ու խստագույնս իրականացում:

Նման մոտեցումը ձևական չէ, որովհետև կարևորվում է ոչ միայն օրենքների և մնացած նորմատիվ ակտերի կենսագործումը, այլև դրանց բովանդակությունը: Սա, իհարկե, դեռ իդեալական վիճակը չէ և չի խարսխված իրավունքի և օրենքի տարանջատման գաղափարի վրա, բայց, այնուամենայնիվ, առաջադիմական է՝ զուտ ձևական, նորմատիվային հայեցակարգերի հետ համեմատած:

Օրինականության բովանդակային հայեցակարգ կարելի է համարել նաև խորհրդային իրավագետ Ի.Վ. Բորիսովի մոտեցումը. «ամեն մի օրենք չէ, որ կարող է դառնալ օրինականության մեկնակետ: Սոցիալիստական օրինականությունը՝ որպես խորհրդային իշխանության սկզբունք, իր հիմքում ունի ձևով ժողովրդավարական և բովանդակությամբ սոցիալիստական օրենսդրություն: Օրինականության ելակետային հիմքում ընկած է արդարացի, հումանիստական, բարձր բարոյական օրենքը, որը տալիս է հարցի ճիշտ և ամենից նպատակահարմար լուծումը»:<sup>1</sup> Այդ պահանջներին չհամապատասխանող օրենքները չեն կարող լինել օրինականության հիմք:<sup>2</sup>

Ի վերջո խորհրդային իրավագիտությունը հանգեց օրինականության նկատմամբ տարամակարդակ մոտեցման, ըստ որի, օրինականությունը դիտարկվում էր երկու հարթություններում՝ իրավաստեղծագործության և իրավաիրացման:<sup>3</sup> Դրան համապատաս-

<sup>1</sup> Տե՛ս *Борисов В.В.* Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 333:

<sup>2</sup> Եթե մի կողմ թողնենք Վ.Վ. Բորիսովի օրինականության հայեցակարգի մարքսիստական, սոցիալիստական հիմքերը, ապա զուտ իրավական-ձևական տեսանկյունից դատողությունների՝ վերը բերված շղթան ընդունելի է նաև մեր օրերի համար:

<sup>3</sup> Տե՛ս Социалистическая законность в советском государственном управлении. Юриздат, 1948, էջ 19-20; *Павлов И.* К вопросу о теории общенародной социалистической законности. // Социалистическая законность, 1962, թիվ 6, էջ 14-15; *Имре Сабо* Социалистическое право. М., «Прогресс», 1964, էջ 95 և այլն:

խան՝ տարբերում էին իրավաստեղծ օրինականությունը և իրավաիրացնող օրինականությունը: Իրավաստեղծ օրինականությունը, ըստ այս մոտեցման, ենթադրում է սահմանադրության լեգիտիմություն և բարձր որակ, մնացած բոլոր նորմատիվ իրավական ակտերի ընդունումն սահմանադրությանը խիստ համապատասխան:<sup>1</sup>

Խորհրդային իրավունքի տեսության մեջ մշակված օրինականության տեսության վարկածներից մեկն էլ, այսպես կոչված, արժեքային հայեցակարգն էր, որն օրինականությունը դիտարկում էր իրավունքում դրված արժեքների կենսագործման միջոց: Համաձայն այդ մոտեցման՝ «օրինականությունն արժեքային իմաստով չեզոք գործիք չէ: Այն չեզոք չէ ամենից առաջ այն պատճառով, որ խոսքը գնում է ժողովրդավարական բովանդակությամբ, համաժողովրդական կամքն արտահայտող, հունանիզմի գաղափարներով ներծծված օրենքների՝ կյանքում կենսագործելու մասին: Օրինականությունը միայն այն ժամանակ է ձեռք բերում սոցիալական արժեք, երբ ծառայում է իրավունքում արտահայտված արժեքների հաստատմանը և պահպանմանը»:<sup>2</sup> Վերակառուցման տարիներին մշակված այս մոտեցումը, լինելով օրինականության բովանդակային հայեցակարգ, մոտենում էր իրավաբանական իրավահասկացողության դիրքերից օրինականության հասկացության մշակմանը: Սակայն խորհրդային պետության փլուզումը կասեցրեց օրինականության մասն տեսության հետագա զարգացումը:

Հետխորհրդային տարածքում արդի ժամանակաշրջանում օրինականության հայեցակարգերի միջև տեսական բանավեճերը չի կարելի համարել լուծված: Իրավունքի ընդհանուր տեսության մեջ մենք հանդիպում ենք օրինականության հայեցակարգերի և՛ նորմատիվային, և՛ բովանդակային (այդ թվում իրավաբանական) վար-

<sup>1</sup> Տե՛ս **Лазарев В.В., Липень С.В.** Теория государства и права. 3-е изд., испр. и доп. М., Спарк, 2004, էջ 443:

<sup>2</sup> Տե՛ս Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн. 1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 221-222:

կածների:<sup>1</sup> Բայց ակնհայտորեն առկա է բովանդակային մոտեցման հաղթարշավը՝ որպես օրինականության տեսության զարգացման միտում: Այդ հաղթարշավը դրսևորվում է նախ նրանում, որ մուլտիսկ օրինականության նորմատիվային հայեցակարգերը որդեգրել են բովանդակային մոտեցման տարրեր: Այսպես՝ օրինականության ձևական-գործառնության հայեցակարգի կողմնակից Ա.Վ. Պոլյակովը, օրինականությունը բնորոշելով որպես «պետական ապարատի (պետական իշխանության) գործառնաբանական սկզբունք», դրա իրավական երաշխիքների շարքում մատնանշում է գործող օրենսդրության մշտական կատարելագործումը, սահմանադրական դատական վերահսկողությունը, իշխանությունների տարանջատումը:<sup>2</sup> Ա.Բ. Լիսյուտկինն օրինականության հասկացության բնորոշումը կառուցում է սոցիալական արդարության գաղափարի իրացման հանգամանքի վրա և որպես օրինականության սկզբունք՝ ճանաչում է քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը,<sup>3</sup> իսկ օրինականության երաշխիքների շարքում դնում է իրավական նորմերի լրիվությունն ու արդյունավետությունը, որոնք ադեկվատ կերպով արտացոլում են հասարակական օրինաչափությունները և միտումները:

Այսպիսով՝ օրինականության բովանդակային հայեցակարգերի շարքում կարելի է դասել նաև արդի պայմաններում առկա նորմատիվիստական հայեցակարգերը, որոնք մարդու իրավունքների ու

<sup>1</sup> Օրինականության հետևողական նորմատիվային հայեցակարգեր մշակել և զարգացնում են մի շարք տեսաբաններ, ինչպես օրինակ՝ Օ.Է. Լեյստը, Վ.Ն. Պրոտասովը (տե՛ս **О.Э. Лейст.** Сущность права. Проблемы теории и философии права. М., ИКД „Зерцало-М“, 2002, էջ 244-264; **Протасов В.Н.** Теория государств и права. Проблемы теории государства и права. М., Юрайт-М, 2001, էջ 118-120):

<sup>2</sup> Տե՛ս **Поляков А.В.** Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петербург. гос. ун-та, 2004, էջ 851:

<sup>3</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристъ, 1999, էջ 515-516, 520:

ազատությունների իրական երաշխավորվածությունը դիտարկում են որպես օրինականության երաշխիք կամ էլ, որոնք սերտ կապ են տեսնում օրինականության և ժողովրդավարության միջև: Օրինականության նման բովանդակային հայեցակարգերը ոչ միայն հետևողական չեն, այլև կառուցված չեն համակարգային մոտեցման վրա: Դրանցում չկա օրինականության երևույթի ներհամակարգային հավասարակշռություն՝ սկսած հասկացությունից, ավարտած օրինականության սկզբունքներով, պահանջներով, երաշխիքներով և այլն:

Հայեցակարգերը, որոնք օրինականության ոլորտ են ճանաչում նաև իրավաստեղծագործությունը, զերծ չեն թերություններից: Օրենքների լեգիտիմությունն ունի և՛ ձևական, և՛ բովանդակային առում: Եթե իրավաստեղծագործությունը ճանաչվում է օրինականության պահանջի գործողության ոլորտ, և շեշտադրվում են օրենքների ձևական հատկությունները կամ լեգիտիմությունը, սակայն անտեսվում են դրա բովանդակային կողմերը, ապա օրինականության նման հայեցակարգը թերի է, որովհետև օրենքների բովանդակային լեգիտիմությունն ավելի կարևոր է, քան ձևականը: Այսպիսի էական բացթողման տեսագործական հաղթահարման ուղին օրինականության բովանդակային հայեցակարգի իրավաբանական վարկածին նախապատվություն տալն է:

Օրինականության բովանդակային հայեցակարգերի հաղթարշավի մյուս ապացույցն իրավունքի և օրենքի տարանջատման մոտեցման (կամ իրավաբանական իրավահասկացության) վրա կառուցված հայեցակարգերի վերածնունդը և որակական աճն է: Այդ հայեցակարգերը հատուկ կքննարկենք աշխատանքի հաջորդ գլխում: Այստեղ միայն փաստենք, որ օրինականության իրավաբանական հայեցակարգերի հետագա մշակման ուղղությունը դրանց՝ իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգով պայմանավորված տեսագործական առավելությունների լրացումն է համակարգային վերլուծության մեթոդի կիրառմամբ: Արդյունքում իրա-

վական օրինականությունը կդիտարկվի ու կքննարկվի որպես համակարգ և միաժամանակ որպես իրավական մետահամակարգերի ենթահամակարգ կամ բաղադրատարր, ու վեր կհանվեն դրա ամբողջական բնութագրերը:

#### **2.4. Օրինականության գործառնության (ֆունկցիոնալ) հայեցակարգերը**

Գործառնության են համարվում օրինականության այն հայեցակարգերը, որոնք օրինականությունը դիտարկում են որոշակի սուբյեկտների գործառնությամբ կամ գործառնավորման սկզբունք: Հասարակական կյանքի այդ սուբյեկտները (պետությունը կամ իրավունքի բոլոր սուբյեկտները) գործում են կամ կրում են օրինականությանը համապատասխան գործելու պարտականություն, այսինքն՝ այդ սուբյեկտների համար օրինականությունը նրանց գործունեության հիմնական ուղղություններից մեկն է:

Օրինականության գործառնության միասնական հայեցակարգ գոյություն չունի: Այն տրոհվում է տարբեր մոտեցումների կամ այսպես կոչված լայն և նեղ իմաստով օրինականության գործառնության հայեցակարգերի՝<sup>1</sup> կախված նրանից, թե որ սուբյեկտին է վերագրվում օրինականության գործառնությունը: Օրինականության նեղ մոտեցմամբ գործառնության հայեցակարգն օրինականությունը դիտարկում է որպես հասարակության պետական ղեկավարման (կառավարման) մեթոդ:<sup>2</sup> Այս մոտեցման հեղինակներն օրինականությունը դիտարկում են նեղ իմաստով՝ համարելով այն միայն պետական իշխանության իրականացման մեթոդ կամ պետական մարմինների գործունեության սկզբունք: Դա նշանակում է, որ պետությունն իր հասարակական գործառնությունները կատարում է միայն իրավական միջոցներով՝ նորմատիվ ակտ ընդունելով և դրանց անշեղ ի-

<sup>1</sup> Այս դասակարգման մասին տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 437:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. М.М. Рассолова, В.О. Лучина, Б.С. Эбзеева. М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000, էջ 348:

րականացումն ապահովելով: Միևնույն ժամանակ պետությունը և նրա բոլոր մարմիններն ու հիմնարկությունները կապված, սահմանափակված են իրավունքի նորմերով և գործում են դրանց շրջանակում: Այսպես, օրինակ՝ խորհրդային իրավունքի տեսաբան Ե.Ա. Լուկաշևան, լինելով օրինականության գործառնության հայեցակարգի կողմնակից, օրինականությունը բնորոշում է հետևյալ կերպ. «այն հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջմունքների հետազոտման վրա հիմնված պետական ղեկավարման մեթոդ է, որը հանգում է սոցիալիստական հասարակական հարաբերությունների կազմակերպմանն այնպիսի օրենքների և այլ իրավական ակտերի հրապարակման և անշեղ կատարման միջոցով, որոնք արտահայտում են խորհրդային ժողովրդի կամքը և ուղղված են կոմունիստական շինարարության նպատակների կատարմանը»:<sup>1</sup>

Օրինականության գործառնության հայեցակարգի լայն վարկածը կամ մոտեցումն օրինականությունը դիտարկում է որպես իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից գործող օրենսդրությունն անշեղ պահպանելու և կատարելու սկզբունք կամ պահանջ:<sup>2</sup>

Օրինականության լայն իմաստով գործառնության հայեցակարգի կողմնակից կարելի է համարել Ա.Ն. Գոլովիստիկովային, որն օրինականությունը բնորոշում է «իրավական նորմերի անշեղ գործողության ռեժիմ: Այն ենթադրում է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից օրենքների և այլ նորմատիվ ակտերի ճշգրիտ կատարում, ցանկացած ապօրինության վճռական կանխում և մեղավորների պատժում, իրավաբանական կարգադրագրերի պահպանման նկատմամբ խստագույնս վերահսկողություն: Օրինականությունը պետական ապարատի գործունեության սկզբունք է»:<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս *Лукашева Е.А.* Социалистическое правосознание и законность. М., Юридическая литература, 1973, էջ 27:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. М.М. Рассолова, В.О. Лучина, Б.С. Эбзеева. М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000, էջ 348:

<sup>3</sup> Տե՛ս *Головистикова А.Н.* Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. А.С. Пиголкина. М., Юрайт-Издат, 2006, էջ 518:

Օրինականության գործառնության հայեցակարգերը բնորոշ են ոչ միայն անցյալին, այլև արդի ժամանակաշրջանին: Այսպես՝ իրավունքի կոմունիկատիվ տեսության կողմնակիցներից մեկը՝ Ա.Վ. Պոլյակովը, օրինականությունը դիտարկում է որպես իշխանությունը սանձելու, այն կոմունիկատիվ-իրավական հիմքերին ենթարկելու միջոց: Դրան համապատասխան՝ օրինականությունը բնորոշվում է որպես «պետության ապարատի (հանրային իշխանության) գործառնավորման սկզբունք, որի դեպքում պաշտոնատար անձանց կողմից իրավունքի կիրառումն իրականացվում է օրենքի պահանջներին խստագույնս համապատասխանությամբ: Օրինականությունն այդ իմաստով ունի կոմունիկատիվ ուղղվածություն: Այն կոչված է ապահովելու հանրային իշխանության և հասարակության մնացած անդամների միջև իրավական հաղորդակցության անընդհատությունը»:<sup>1</sup> Ըստ Ա.Վ. Պոլյակովի՝ օրինականությունն իրավունքի նորմալ գործողության մեխանիզմի անհրաժեշտ պայմանն է, բայց միայն իրավունքի այն մասի, որը կապված է պետության իրավակիրառ գործունեության հետ: Ուրեմն, օրինականության ռեժիմը, որն իրացվում է պետության մեջ, իրենից ներկայացնում է պետական իշխանության ինքնապարտադրում սեփական օրենսդրական սահմանումներով, որը բացառում է կամայականությունը նրա գործողություններում:<sup>2</sup>

Եթե վերանանք օրինականության գործառնության հայեցակարգերի վարկածների տարբերություններից, ապա կտեսնենք, որ դրանց էությունը նույնն է: Այս հայեցակարգերը բոլորն անխտիր օրինականությունը հանգեցնում են օրենսդրության խստագույնս և անշեղ պահպանման, կատարման և կիրառման անհրաժեշտությանը: Սակայն օրինականության նկատմամբ այդպիսի մոտեցումը

<sup>1</sup> Տե՛ս *Поляков А.В.* Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петербург. гос. ун-та, 2004, էջ 848:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

միակողմանի է, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Պետք է նկատի ունենալ, որ օրինականությունը նախ իրավական երևույթ և կատեգորիա է: Հայեցակարգերը, որոնք օրինականությունը դիտարկում են պետական կառավարման մեթոդ և սկզբունք, նեղացնում, աղքատացնում են օրինականության էությունը և բովանդակությունը: Այս առումով տեղին է իրավունքի տեսաբանների հետևյալ դիտողությունը. «մեզ համար շատ կարևոր է օրինականության վերաբերյալ՝ որպես գիտական կատեգորիա և իրական իրավական երևույթ, հստակ ընդհանուր պատկերացման մշակումը: Սկզբունքային նշանակություն ունի օրինականության իրավաբանական առումի վերլուծությունը, որովհետև օրինականությունը գոյություն ունի միայն այն պատճառով, քանի որ առկա է իրավունքը՝ որպես հիմնադիր կազմավորում, քանի որ հենց իրավաբանական առումն է օրինականությանը հաղորդում ձևական-պարտադիր բնույթ, բարձրացնում այն իրավական կատեգորիայի աստիճանի»:<sup>1</sup>

Բացի այդ, օրինականությունը համարելով պետության կազմակերպման սկզբունք և գործունեության մեթոդ՝ օրինականության գործառնությանը հայեցակարգի կողմնակիցները տուրք են տալիս քաղաքականության՝ իրավունքի և օրենքի նկատմամբ առաջնայնությանը, ինչը որպես տեսական մոտեցում հղի է վտանգավոր գործնական հետևանքներով, քանի որ տեղ է թողնում պետության կողմից «օրինական» կամայականության գործադրման հնարավորության համար:

Այսպիսով՝ օրինականության գործառնությանը հայեցակարգն օրինականությունն իրավական կատեգորիայից վերածում է պետաքաղաքականի: Օրինականության գործառնությանը հայեցակարգերին բնորոշ է պետության դերի ֆետիշացումն օրինականության

<sup>1</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 342:

հաստատման և կենսագործման գործընթացում: Իր միակողմանիության հետևանքով այս հայեցակարգը պետությունը դարձնում է օրինականության «Աստված», ինչը միանշանակ ընդունել չի կարելի:

«Պետության կողմից հասարակության կյանքի տարբեր կողմերի իրավական կարգավորումը մարդկանց փոխգործողության կարգավորվածության ապահովման պայմաններից մեկն է: Անկասկած է, որ հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի խստագույնս, անշեղ պահպանման և կատարման շնորհիվ մարդկանց գիտակցության մեջ հաստատվում են ազատության, արդարության, հումանիզմի արժեքները... Սակայն պրակտիկ գործունեության մեջ և ամենօրյա կյանքում ձևավորել դրական վերաբերմունք օրենքների նկատմամբ միայն պետական ներգործության միջոցներով, անհնարին է: Անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության հասուն իրավական մշակույթ և ինստիտուտները, որպեսզի ձևավորվեն անհատների արժեքային-իրավական կողմնորոշումները և դիրքորոշումները, որոնք նրանց գործունեության անմիջական շարժառիթներն են»:<sup>1</sup> Գործառնության մոտեցումը գերազնահատելով պետության դերն օրինականության ապահովման և իրավակարգի հաստատման գործում, անտեսում է օրինականության և հասարակության, նրա անդամների իրավական մշակույթի կապն ու փոխգործակցությունը:<sup>2</sup>

Այսպիսով՝ օրինականության գործառնությանը հայեցակարգերն օրնականության ձևական-էտատիստական հայեցակարգերի

<sup>1</sup> Տե՛ս *Мухаев P.T.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 437:

<sup>2</sup> Բնակչության իրավական մշակույթի և օրինականության վիճակի փոխգործողության օրինաչափությունն արտահայտել է նաև Վ.Ի. Լենինն իր «Երկակի ենթարկման և օրինականության մասին» հոդվածում, որը նվիրված էր խորհրդային պետությունում օրինականության ամրապնդմանը և զարգացմանը: Օրինականության հաստատումը տանում է մշակութային-գործունեության կայացմանը: Բնակչության իրավական մշակույթի մակարդակի բարձրացումն իր հերթին նպաստում է օրինականության էլ ավելի ամրապնդմանը, իրավակարգի կայացմանը (տե՛ս *Ленин В.И.* Полн. собр. соч., Т. 45, էջ 197-201):

տարատեսակներից մեկն են, ուստի «տառապում են» նույն թերութ-  
յուններով ու հայեցակարգային բացթողումներով, մասնավորապես  
կառուցված են պոզիտիվային-նորմատիվային մեթոդաբանության  
վրա, չունեն «իրավաօրինականություն» հասկացությունը, նույնաց-  
նում են իրավաիրականացնող ու իրավակիրառող գործունեութ-  
յունն օրինականության հետ, շեշտադրելով օրինականության գոր-  
ծառութավորումը՝ անտեսում են իրավունքի նորմերի բովանդակա-  
յին կողմը:

### **2.5. Օրինականության միակողմ և բազմակողմ հայեցակարգերը**

Օրինականության տեսության մեջ առկա բազմազան մոտե-  
ցումներն օրինականության հիմնախնդիրների և հատկապես հաս-  
կացության բնորոշման հարցում կարելի է դասակարգել ևս մեկ  
հատկանիշով՝ օրինականությանը վերագրվող կողմերի, հատկութ-  
յունների քանակով: Ինչպես տեսանք, օրինականությունն իրավուն-  
քի ընդհանուր տեսության մեջ բնորոշել են տարբեր կերպ: Այդ բնո-  
րոշումներից մի քանիսը շեշտադրում են օրինականության միայն  
մեկ կողմի դրսևորումը: Օրինակ՝ Ե.Ա. Լուկաշևան օրինականությու-  
նը բնորոշում է որպես հասարակության պետական կառավարման  
մեթոդ:<sup>1</sup> Օրինականության հասկացության այսպիսի կառույցը, ըստ  
էության, մոնիստական է, որովհետև շեշտադրում է օրինականութ-  
յան մեկ դրսևորումը, կողմը, առարկայական և սուբյեկտային մեկ ո-  
լորտը՝ պետություն և պետական մարմիններ: Սակայն օրինակա-  
նության հայեցակարգերի մեջ կան այնպիսիք, որոնք կառուցված  
են բազմակողմ մոտեցման հիման վրա, որովհետև օրինականութ-  
յան հասկացության մեջ սինթեզում են օրինականության մի քանի  
կողմեր, դրսևորումներ, առումներ: Այսպես՝ Վ.Ս. Աֆանասևն օրինա-  
կանությունը բնորոշում է որպես հասարակական հարաբերություն-

<sup>1</sup> Տե՛ս **Лукашева Е.А.** Социалистическое правосознание и законность. М., Юридическая литература, 1973, էջ 27:

ների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի խիստ և  
անշեղ պահպանման, կատարման սկզբունք, մեթոդ, ռեժիմ:<sup>1</sup> Այստե-  
ղից կարելի է հետևություն անել, որ օրինականության նկատմամբ  
բազմակողմ (համալիր) մոտեցումներն այն հայեցակարգերն են, ո-  
րոնք «օրինականությունը» դիտարկում են հասարակական կյանքի  
բարդ, բազմազան հասարակական կապեր և դրսևորման ձևեր ու-  
նեցող երևույթ: Չետևաբար՝ օրինականությունը չունի ինչ-որ առան-  
ձին և մեկ կողմ կամ հատկություն, այլ մի քանիսը: Ուրեմն, օրինա-  
կանություն կատեգորիան իր հերթին վերածվում է համալիր կատե-  
գորիայի, որին բնորոշ են մի քանի կողմեր և հատկություններ:

Բազմակողմ մոտեցումներն օրինականության նկատմամբ ի-  
րենց հերթին ունեն վարկածներ: Վերը բերված Վ.Ս. Աֆանասևի օ-  
րինակում օրինականությունը բնորոշվում է և՛ որպես սկզբունք, և՛  
որպես մեթոդ, և՛ որպես ռեժիմ: Օրինականության այդ երեք դրսևո-  
րումների մեջ չկա աստիճանակարգություն և կախվածություն: Օ-  
րինականության հատկություններն այստեղ հավասարաթեք են, ի-  
հարկե, փոխկապված և փոխապայմանավորված: Սակայն օրինակա-  
նության համալիր մոտեցումների վարկածներից մի քանիսը, օրի-  
նականությունը նորից դիտարկելով բազմառումային երևույթ և կա-  
տեգորիա, այն բնորոշում են առավել ընդհանրացված որևէ առումի  
միջոցով, որը սակայն չի բացառում մնացածները, այլ ենթադրում է  
դրանք: Այսպիսի հայեցակարգերը կարելի է անվանել օրինակա-  
նության բազմակողմ մոտեցման աստիճանակարգային վարկած-  
ներ, տարբերակներ:

Օրինականությունը որպես բազմակողմ կատեգորիա դիտար-  
կելու ավանդույթը ձևավորվել է դեռևս խորհրդային իրավագիտութ-  
յան մեջ: Եթե ժամանակագրական առումով դիտարկենք օրինակա-  
նության նկատմամբ խորհրդային իրավագիտության մոտեցումնե-  
րը, ապա կնկատենք զարգացման որոշակի միտում, որը գնում է

<sup>1</sup> Տե՛ս **Афанасьев В.С.** Законность и правопорядок.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юрист, 2005, էջ 310:

մասնավորից դեպի ընդհանուրը, կոնկրետից դեպի վերացականը: Խորհրդային իրավագիտության մեջ օրինականության նկատմամբ տեսական մոտեցումների զարգացման տրամաբանությունը հետևյալն է՝

1) օրինականությունը՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի և համաժողովրդական խորհրդային պետության գործունեության մեթոդ, որպես իշխանության իրականացման միջոց,

2) օրինականությունը՝ որպես խորհրդային պետության մարմինների, հասարակական կազմակերպությունների գործունեության և քաղաքացիների վարքագծի հիմնադրույթ, սահմանադրական սկզբունք,

3) օրինականությունը՝ որպես սոցիալիստական ժողովրդավարության բաղկացուցիչ մաս,

4) օրինականությունը որպես հասարակական-քաղաքական կարգ, ռեժիմ և այլն:<sup>1</sup>

«Բանավեճի անհաշտությունը հանգեցնում էր նրան, որ օրինականության բազմակողմ հասկացության որևէ մեկ կողմը երբեմն ոչ միայն հետևում էր թողնում մյուսներին, այլև բացառում էր այն հայացքները, որոնք մեր ուշադրությունը կենտրոնացնում էին այդ հասկացության այլ նրբերանգների և դրսևորումների վրա: Այսպես՝ իրավունքի տեսության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում որոշ հետազոտողներ ձգտում էին ապացուցել, որ սոցիալիստական օրինականությունը միայն հասարակության պետական դեկավարման միջոց է, մյուսները՝ միայն սկզբունք: Սոցիալիստական հասարակությունում օրինականության գերիշխանության կացության բնութագրման համար այնպիսի հաջողված հասկացության ներմուծումը, ինչպիսին է «օրինականության ռեժիմը» (Ն.Գ. Ալեքսանդրով, այնուհետև Ի.Ս. Սամոչչենկո), առաջ բերեց դիմադրութ-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ **Александров Н.Г.** Законность и правоотношение в советском обществе. М., 1955; **Александров Н.Г.** Право и законность в период развернутого строительства коммунизма. М., 1961; **Алексеев С.С.** Проблемы теории права. Курс лекций. Т. 1, Свердловск, 1972, էջ 113-124:

յուն նրանց կողմից, ովքեր պնդում էին մոնիստական մոտեցումը՝ կա՛մ որպես մեթոդ, կա՛մ որպես եղանակ, կա՛մ որպես սկզբունք»:<sup>1</sup>

Ի վերջո օրինականության նկատմամբ տեսական մոտեցումների բազմազանությունը հանգեցրեց համալիր մոտեցման ձևավորմանը, որը, հիմք ընդունելով իրավագիտության կողմից մշակված նախորդ մոտեցումները, փաստեց՝

առաջին, որ օրինականությունը բարդ և բազմակողմ հասարակական երևույթ է, հետևաբար այն չի կարելի հանգեցնել ինչ-որ մի բնութագրական գծի, մի հատկության,

երկրորդ, առաջին հանգամանքի ուժով օրինականությունը պետք է դիտարկվի զանազան կողմերից և բնորոշվի և՛ որպես հասարակության պետական կառավարման մեթոդ, և՛ որպես պետական ապարատի գործունեության սկզբունք, և՛ որպես իրավունքի սկզբունք, և՛ որպես իրավունքի նորմերը կատարելու, պահպանելու պահանջ, և՛ որպես հասարակական կյանքի ռեժիմ:<sup>2</sup>

Օրինականության բազմակողմ, համալիր մոտեցման կողմնակիցների կարծիքով օրինականության առանձին կողմերը և հատկությունները չեն հակասում միմյանց, այլ արտահայտում են օրինականության տարբեր նրբերանգները: Այդուհանդերձ, թվարկված որակներից ամենաընդհանրացվածն այն է, որ օրինականությունը հասարակական-քաղաքական կյանքի յուրահատուկ ռեժիմ է, որը միասնության մեջ ներառում է օրինականության բոլոր կողմերը, նրբերանգները: Ի վերջո հասարակական կյանքի բոլոր կողմերը, ուղորտները, բոլոր մարմինների և կազմակերպությունների գործունեությունը կարգավորված են իրավունքի նորմերով, ընդ որում, այդ նորմերն անշեղորեն պետք է պահպանվեն հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից:<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн. 1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 203:

<sup>2</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 319-325; Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 402:

<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 403:



Համալիր մոտեցման կողմնակիցներից մեկը՝ Վ.Վ. Բորիսովը, գտնում էր, որ օրինականությունը պետական, դասակարգային, քաղաքական, իրավական, ժողովրդավարական, էթիկական երևույթ և կատեգորիա է, որը միաժամանակ և՛ հասարակության պետական ղեկավարման մեթոդ է, և՛ սահմանադրական սկզբունք, և՛ ժողովրդավարության բաղադրատարր:<sup>1</sup>

Այսպիսով՝ խորհրդային իրավունքի տեսության զարգացմանը զուգընթաց օրինականության ընդհանուր-տեսական հիմնախնդիրների հետազոտությունը և իմաստավորումը հանգեցրին օրինականության մոնիստական (միակողմանի) հասկացողության հաղթահարմանը և օրինականության բազմակողմ (պոլիստական) հասկացողության ձևավորմանը: ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրության մեջ օրինականության սկզբունքի ամրագրումը օրինականության տեսական հետազոտությունները բարձրացրեց նոր աստիճանի: ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրությունը 4-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրում էր սոցիալիստական օրինականության սկզբունքը հետևյալ ձևակերպմամբ. «Սովետական պետությունը, նրա բոլոր մարմինները գործում են սոցիալիստական օրինականության հիման վրա, ապահովում են իրավակարգի, հասարակության շահերի և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Պետական հիմնարկները, հասարակական կազմակերպությունները և պաշտոնատար անձինք պարտավոր են պահպանել ԽՍՀՄ Սահմանադրությունը և սովետական օրենքները»:<sup>2</sup> Օրինականության սկզբունքի սահմանադրական ամրագրումը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես պետական շինարարության, իրավական համակարգի զարգացման, այնպես էլ իրավագիտության համար: Օրինականության առաջնային և կարևոր սահմանադրական սկզբունքի կարգավիճակի «շնորհումը» նախադրյալներ ստեղծեց օրինականության

<sup>1</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 318-347:

<sup>2</sup> Տե՛ս ՍՄԽ Սահմանադրություն (հիմնական օրենք), Հայաստանի հրատարակչություն, Երևան, 1977թ, հոդվ. 4:

տեսության հետագա զարգացման համար, օրինականությունը որպես խորհրդային իրավական համակարգի համընդհանուր և առաջնային սկզբունք դիտարկելու հայեցակարգի ձևավորման համար:

Ձևավորվեց օրինականության՝ որպես համընդհանուր միասնական և առաջնային սահմանադրական սկզբունքի հայեցակարգը՝ որպես բազմակողմանի և համալիր մոտեցումներից մեկը:<sup>1</sup> Ընդ որում, օրինականության համընդհանրությունը դիտարկվում էր և՛ սուբյեկտային, և՛ կիրառման ոլորտների առումով: Այս հայեցակարգը, օրինականության սկզբունքին համընդհանրության որակ վերագրելով, միաժամանակ ճանաչում էր նրա միասնականությունը: Ընդունելով օրինականության բազմակողմ և համալիր բնույթը՝ այն մերժում էր տեսակետները, համաձայն որոնց՝ օրինականությունը համարվում է և՛ «հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների վարքագծի սկզբունք», և՛ «իշխանական պետական գործառույթների իրականացման սկզբունք», և՛ «բոլոր քաղաքացիներից պահանջվող վարքագծի սկզբունք», և՛ «պետական ապարատի գործունեության սկզբունք», և՛ «օրենքի կատարման համընդհանրության սկզբունք»:<sup>2</sup> Կարծես թե միասնական սկզբունքի փոխարեն գործում են բազմաթիվ սկզբունքներ:

Օրինականության բազմակողմ հայեցակարգերը տարածված են նաև արդի իրավագիտության մեջ:<sup>3</sup> Այսպես՝ ռուս ժամանակակից իրավագետներից շատերը գտնում են, որ օրինականության

<sup>1</sup> Տե՛ս Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн. 1 / Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, էջ 201-225:

<sup>2</sup> Տե՛ս Марксистско-ленинская общая теория государства и права. Социалистическое право. М., 1973, էջ 108-110):

<sup>3</sup> Տե՛ս Общая теория права. Под общ. ред. А.С. Пиголкина. М., Изд-во МГТУ им. Баумана, 1996, էջ 252-254; **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 437-438; Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 443-444:

գաղափարը բազմակողմանի է:<sup>1</sup> «Օրինականությունը կարելի է դիտարկել որպես պետաիրավական կյանքի սկզբունք: Օրինականությունը կարելի է դիտարկել նաև որպես կարգավորվող հարաբերությունների մասնակիցների վարքագծի մեթոդ, որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ: Օրինականությունը դրսևորվում է նաև որպես հասարակական կյանքի հատուկ ռեժիմ: Այս իմաստով օրինականությունը կոչված է արտացոլելու օրենքի իրական գերիշխանությունը հասարակական կյանքում, օրենքի գերիշխանությունը իշխանության և անհատի միջև հարաբերություններում... Չետևաբար, օրինականությունը կյանքի ապահովման ռեժիմ է, որը բնութագրվում է դրանում օրենքների գերակայությամբ, քաղաքացիների և պաշտոնատար անձանց կողմից օրենքների պահանջների անպայման կատարմամբ, անհատի անվտանգությունը և պաշտպանությունը կամայականությունից, քաղաքացիական իրավունքների ու ազատությունների անարգել իրականացումը երաշխավորող հատուկ կառուցակարգերի առկայությամբ»:<sup>2</sup>

Վերը նշված հեղինակների կուլեկտիվ մոտեցումը կարելի է դիտարկել որպես օրինականության նկատմամբ բազմակողմանի մոտեցման այնպիսի տարատեսակ, որն օրինականության բոլոր առումները դիտարկում է որպես հավասարաժեշտ որակներ: Որևէ որակ այդ համակցության մեջ չի գերակշռում մնացածների մեջ, աստիճանակարգային կախվածության մեջ չի դնում մնացածներին: Այդ որակները միավորող հասկացությունը «հասարակական կյանքի ապահովման ռեժիմն» է, որի միջոցով բնորոշվում է օրինականություն հասկացությունը:

<sup>1</sup> Այդ հեղինակներից են Վ.Ն. Կազակովը, Վ.Պ. Մալախովը, Ա.Գ. Գոլուբիցկայան, Ա.Ա. Իվանովը, Տ.Ն. Ռադկոն և այլոք (տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 343):

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 343:

Մեկ այլ հեղինակ՝ Ա.Ս. Շաբուրովը, օրինականությունը դիտարկելով բավականին լայն դիրքերից, այն համարում է համալիր քաղաքական-իրավական երևույթ, որն արտացոլում է հասարակական-քաղաքական կյանքի իրավական բնույթը, իրավունքի և իշխանության, իրավունքի և պետության օրգանական կապը:<sup>1</sup> Այդպիսի մոտեցման հիման վրա վերը նշված տեսաբանն օրինականության բովանդակության մեջ առանձնացնում է «իրավականի, իրավաբանականի, պետաքաղաքականի դիալեկտիկայի մի շարք ինքնուրույն պահեր», մասնավորապես օրինականությունն անբաժանելի է իրավունքի համապարտադիրությունից, օրինականությունը գաղափար, իրավագիտակցության մեջ արտացոլված իդեա է, օրինականությունը հասարակության պետական ղեկավարման մեթոդ է, օրինականությունը պետության գործունեության սկզբունք է, օրինականությունը հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ է:<sup>2</sup> Այսպիսով՝ այս հեղինակը լայն սոցիալ-քաղաքական իմաստով օրինականությունը դիտարկում է որպես «հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ»:<sup>3</sup> Դա ռեժիմ է, որի դեպքում բոլոր սուբյեկտների գործունեությունը հիմնվում է օրենքի վրա, իսկ իրավունքի, հումանիզմի, արդարության, ազատության և պատասխանատվության գաղափարները գերիշխում են անհատական, խմբային, դասակարգային շահերի վրա: Օրինականության ռեժիմն այնպիսի բարոյաքաղաքական մթնոլորտ է, որի դեպքում հասարակական կյանքում գերիշխում են իրավունքի, հումանիզմի, արդարության գաղափարները, երբ օրենքների հստակ և անշեղ պահպանումը, քաղաքացիների իրավունքների իրական լինելը և անխախտելիությունը համարվում են հասարակության, նրա քաղաքացիների կյանքի հիմքը»:<sup>3</sup> Այսպիսի մոտեցման արդյունքում օրինականությունը բնորոշ-

<sup>1</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 437:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 438-439:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 437-440:

վում է որպես «հասարակական-քաղաքական ռեժիմ, որը բաղկացած է հասարակական կյանքում իրավունքի և օրենքի գերիշխանությունից, հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավական նորմերի կարգադրագրերի անշեղ կատարումից, իրավախախտումների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ կամայականության դեմ հետևողական պայքարից, հասարակության մեջ կարգուկանոնի և կազմակերպվածության ապահովումից»:<sup>1</sup>

Օրինականության բազմակողմանի բնորոշումներից մեկի հեղինակը Մ.Ի. Բայտինն է, ըստ որի՝ «օրինականությունը դա իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորման և գործառնաբանական սկզբունք, մեթոդ և ռեժիմ է, որոնց հիմքում ընկած է բոլոր պետական և մունիցիպալ մարմինների, հասարակական միավորումների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից օրենքների հստակ պահպանումը և կատարումը»:<sup>2</sup> Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ օրինականությունը որպես սկզբունք, մեթոդ և ռեժիմ դիտարկելն անցանկալի և ոչ նպատակահարմար է, կամ էլ դիտարկման դեպքում պետք է հանգամանորեն բացատրվի թե ինչու է այդպես, ինչը չի արվում՝ պետք է նկատի ունենալ, որ այս բնորոշումն աչքի է ընկնում նաև որոշակի այլ թերություններով: Այդ հանգամանքի վրա ուշադրություն են դարձրել Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Վ. Տալյանին: Ըստ նրանց՝ «օրինականությունը գործառնաբանապես (ըստ բնորոշման) կապվում է միայն «իրավական պետության և քաղաքացիական հասարակության» հետ: Ստացվում է, որ օրինականությունը կարող է գոյություն ունենալ միայն նշված սոցիալ-քաղաքական ձևերում, ինչը հակասում է նորմատիվ իրավահասակացողությանը, համաձայն որի՝ օրինականությունը բնութագրական է ցանկացած պետությանը, անկախ նրանից

այն հանդիսանում է իրավական, թե ոչ: Վերջապես, այս բնորոշումն օրինականությունը դիտարկում է միայն իրավահարաբերությունների ոլորտ ընդգրկված սուբյեկտների օրինաչափ վարքագծի ապահովման տեսակետից, բայց չէ՞ որ օրինականությունը, բացի դրանից, նախորոշում է լայն իմաստով օրենքի և պետության կողմից հրապարակված նորմատիվ ակտերի անհակասականությունը (այդ թվում ակտ-օրենքների)»:<sup>1</sup>

Օրինականության բազմակողմ-համալիր հայեցակարգերից աչքի է ընկնում Օ.Ֆ. Սկակունի դիրքորոշումը: Նա օրինականությունը համարում է համալիր սոցիալ-իրավական երևույթ, որն արտացոլում է հասարակության կազմակերպումը և գործառնաբանությունը իրավական հիմքերով, անհատի, իշխանության, իրավունքի և օրենքի ներդաշնակ կապը կոնկրետ պետության մեջ:<sup>2</sup> Լինելով բազմակողմ երևույթ՝ օրինականությունը կարող է հանդես գալ որպես սկզբունք, մեթոդ, ռեժիմ: Ըստ Օ.Ֆ. Սկակունի՝ ամեն ինչ կախված է տեսանկյունից: Օրինականությունը որպես սկզբունք իմպերատիվ բնույթի հիմնարար, համընդհանուր ճանաչում գտած նորմ է, որն արտահայտվում է իրավաչափ գործունեության և իրավաչափ վարքագծի պահանջում՝ ներկայացված իրավունքի սուբյեկտների գործունեությանը: Օրինականությունը որպես մեթոդ հասարակության պետական կառավարման լեգալացված եղանակ է, որն իրականացվում է բացառապես իրավական միջոցներով: Օրինականությունը որպես ռեժիմ իրապես գործող իրավունքի կացություն է, հասարակական հարաբերությունների մթնոլորտի համապատասխանությունն իրավունքի աղբյուրներին (ձևերին), որոնք իրենց հերթին արտացոլում են իրավունքում դրված ազատության, արդարության սկզբունքները: Արդյունքում Օ.Ֆ. Սկակունը կարծում է, որ օրինա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 443:

<sup>2</sup> Տե՛ս *Байтин М.И.* Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001, էջ 246:

<sup>1</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 405:

<sup>2</sup> Տե՛ս *Скакун О.Ф.* Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, էջ 713:

կանությունը որպես մեթոդ և օրինականությունը որպես սկզբունք ձևավորում են օրինականությունը որպես ռեժիմ:<sup>1</sup>

Օ.Ֆ. Սկակունի օրինականության հայեցակարգը բացի բազմակողմանի լինելուց, հետևողական իրավաբանական հայեցակարգ է, քանի որ այն ընդունում է ոչ միայն «իրավաօրինականության» գաղափարը, այլև այն դիտարկում է որպես օրինականության հատկանիշ, որը դրսևորվում է նրա սկզբունքներում, պահանջներում, երաշխիքներում: Սակայն այս տեսաբանի մոտ չկա այն հանգամանքի բացատրությունը, թե որո՞նք են օրինականության բազմակողմանիության պատճառները, ինչու՞ է այն մի դեպքում սկզբունք, մյուս դեպքում մեթոդ, մեկ այլ պարագայում ռեժիմ: Կարծում ենք, որ նման բացթողման հաղթահարման ուղին համակարգային վերլուծության մեթոդի ամբողջական կիրառումն է օրինականության հիմնախնդիրների լուծման նկատմամբ, օրինականությունն իրավունքի հատկանիշների դրսևորման կազմակերպագործառության սկզբունք դիտարկելն է, այն իրավական կարգավորման կառուցակարգի համակարգային կապերում քննարկելը:

Օրինականությունը և՛ սկզբունք, և՛ մեթոդ, և՛ ռեժիմ դիտարկելը նպատակահարմար չեն համարում նաև Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Վ. Տալյանինը, որոնք օրինականությունը բնորոշում են որպես բարդ համակարգային կազմավորում, որն իրենից ներկայացնում է իրավունքի կարգավորիչ և պահպանական գործունեության պրակտիկային հարմարեցված վարքագծի մոդել կարգավորված օրենքների միջոցով՝ ուղղված իրական կյանքում օրենսդրորեն ամրագրված իշխանական կարգադրագրերի կենսագործմանը:<sup>2</sup>

Այսպիսով՝ օրինականության համալիր, պոլիստական հայեցակարգերը ընդունելով օրինականություն կատեգորիայի բազմակողմ, բազմապլան կամ ունիվերսալ բնույթն ու բովանդակությունը

և միավորելով այդ կողմերը՝ որպես օրինականության բազմազան դրսևորումներ, ըստ էության, ճիշտ և ադեկվատ մոտեցումներ են օրինականության երևույթին: Սակայն, ինչպես տեսանք, նրանցում գերակշռում է օրինականությունը որպես ռեժիմ դիտարկելու միտումը, որպես ամենից ընդհանրացված հատկություն, որն իր մեջ միավորում է օրինականության մնացած բոլոր իմաստները, հատկությունները, կողմերը: Այսպիսի հանգուցալուծումը տրամաբանական է, սակայն մեթոդաբանորեն առաջացնում է նոր տեսական բարդություններ, որովհետև այն հակասության մեջ է մտնում պետաիրավական վարչաձևի հասկացության հետ կամ որոշակիորեն համընկնում է նրա հետ: Բացի այդ առաջանում է նոր հիմնախնդիր՝ ի դեմս օրինականության ռեժիմի և իրավական կարգավորման ռեժիմների հարաբերակցության: Այս պնդումը հիմնավորելու համար փորձենք համեմատել պետաիրավական ռեժիմի (վարչաձևի) և օրինականության՝ որպես ռեժիմի բնորոշումները:

Պետական ռեժիմի ամենից տարածված բնորոշումը ներկայումս համարվում է հետևյալը՝ պետական ռեժիմը պետական իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների և կամ հնարքների համակցությունն է:<sup>1</sup> Նույնանման է նաև Ռ.Տ. Մուխակի բնորոշումը. «պետական ռեժիմն իրենից ներկայացնում է պետական կառուցակարգի միջոցով հանրային իշխանության իրականացման ձևերի, մեթոդների և հնարքների համակցությունը»:<sup>2</sup>

Պետական ռեժիմի ավանդական բնորոշումների և դրանց հարող նույնանակարգակ բնորոշումների կողքին առանձնանում են պետական (քաղաքական) ռեժիմի, այսպես կոչված, իրավականացված (կամ իրավաբանականացված) բնորոշումները: Այս բնույթի բնորոշումներից աչքի է ընկնում Վ.Ս. Ներսեսյանցի բնորոշումը: Նա պետական իշխանության իրականացման ձևերի, եղանակների հիմնա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 715:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 406:

<sup>1</sup> Տե՛ս *Марченко М.Н.* Теории государства и права в вопросах и ответах. М., 2005, էջ 76:

<sup>2</sup> Տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., 2001, էջ 165:

հարցերի տեսական արտացոլումն ամրագրում է «պետական (քաղաքական) վարչակարգ» (ռեժիմ) հասկացության մեջ՝ բնորոշելով այն որպես պետական իշխանության իրականացման իրավական կարգի բնույթ, հատկություն, որակ: Այս բնորոշմամբ հեղինակը պետական (քաղաքական) ռեժիմն իր էությանը համարում է «պետական-իրավական վարչակարգ, պետության գործունեության որոշակի իրավական կարգ, պետության իշխանության իրականացման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները, եղանակները և մեթոդները»:<sup>1</sup>

Ա.Ս. Շաբուրովն օրինականության ռեժիմը բնութագրում է որպես այնպիսի «բարոյաքաղաքական մթնոլորտ, որի դեպքում հասարակական կյանքում գերիշխում են իրավունքի, հումանիզմի, արդարության գաղափարները, երբ օրենքների հստակ և անշեղ պահպանումը, քաղաքացիների իրավունքների իրական լինելը և անխախտելիությունը համարվում են հասարակության, նրա քաղաքացիների կյանքի հիմքը»: Մեկ այլ տեղում նա գտնում է, որ օրինականությունը «հասարակական-քաղաքական ռեժիմ է, որը բաղկացած է հասարակական կյանքում իրավունքի և օրենքի գերիշխանությունից, հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավական նորմերի կարգադրագրերի անշեղ կատարումից, իրավախախտումների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ կանայականության դեմ հետևողական պայքարից, հասարակության մեջ կարգուկանոնի և կազմակերպվածության ապահովումից»:<sup>2</sup>

Պետաիրավական ռեժիմի (վարչաձևի) և օրինականության՝ որպես ռեժիմի բնորոշումների բերված օրինակների համեմատությունը վկայում է, որ դրանց միջև անանցանելի անդունդներ չկան, և դրանք շատ կողմերով համընկնում են:

<sup>1</sup> Տե՛ս *Ներսեսյանց Վ.Ս.* Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 84:

<sup>2</sup> Տե՛ս *Шабуров А.С.* Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 437-443:

Իրավունքի և նրա գործողության բնույթին առավել ադեկվատ է օրինականության բազմակողմանի-համալիր մոտեցումների այն վարկածը, որն օրինականությունը համարում է համընդհանուր, միասնական իրավական սկզբունք: Սկզբունք, որը համատարած է և՛ սուբյեկտային, և՛ առարկայական տեսանկյունից, գործում է իրավական կարգավորման համակարգի բոլոր բաղադրատարրերում: Օրինականության համալիր մոտեցումները չեն կարողանում բացատրել, թե ինչու՞ է օրինականությունը բազմակողմ երևույթ, որո՞նք են այն գործոնները, որոնք այն վերածում են համալիր սոցիալ-քաղաքական ինստիտուտի:

## **2.6. Օրինականության համակարգային հայեցակարգերը**

Օրինականության հայեցակարգերի մեջ համակարգային մեր կողմից անվանվում են օրինականության տեսության այն տարբերակները, որոնք օրինականությունը դիտարկում են համակարգային կազմավորում իրեն բնորոշ բաղադրատարրերով: Օրինականության համակարգային հայեցակարգերը քննարկման առարկա դարձնելով՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ հայեցակարգերը միասնական չեն իրենց բովանդակությամբ, որովհետև կարող է լինել օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված նորմատիվականության վրա և օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի վրա: Այս երկու մոտեցումներն իրար հակասող մոտեցումներ են: Ընդհանրությունը միայն օգտագործված մեթոդում է՝ օրինականությունը դիտարկել համակարգային երևույթ:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ օրինականության համակարգային հայեցակարգերի առանձնացումը և քննարկումը սույն աշխատանքում կարող էինք նաև չանել: Սակայն դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ համակարգային մեթոդի կամ մոտեցման կիրառումը դառնալու է օրինականության հիմնախնդիրների քննարկման հենասյուններից մեկը, սակայն լրիվ

այլ առումով: Որպեսզի երևա մեր մոտեցման տարբերությունը և նորությամբ, ակնհայտ է, որ պետք է քննարկման առարկա դարձվեն այդ հայեցակարգերը:

Օրինականության հիմնախնդիրները հետազոտելիս համակարգային մեթոդն ամեն մի հեղինակ կիրառել է յուրօրինակ ուղղվածությամբ: Տարածվածը դրանց մեջ այն մոտեցումն է, որը բուն օրինականությունը՝ որպես կատեգորիա, դիտարկում և հասկանում է որպես համակարգ: Կան հետազոտողներ, որոնց մոտեցումն օրինականության տեսությանը կարելի է համարել սինթետիկ: Խոսքը գնում է համալիր և համակարգային մոտեցումների միաժամանակյա կիրառման մասին:<sup>1</sup>

Հայ իրականության մեջ օրինականության տեսության հիմնախնդիրների հետազոտությանը համակարգային մոտեցման հիման վրա անդրադարձել է Գ.Ս. Ղազինյանը: Իր «Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում» աշխատության մեջ նա օրինականությունը՝ որպես բարդ և բազմակողմանի երևույթ, դիտարկում է համակարգային կազմավորում, որը ենթադրում է երեք բաղադրատարրեր՝

ա) օրենսդրության իրավական բնույթը (իրավաօրինականություն),

բ) իրավաիրացման ընթացքում օրենքների պարտադիր և լրիվ կենսագործում (օգտագործում, կատարում, պահպանում և կիրառում),

գ) օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը:

Օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը միջոցների, հնարքների և պայմանների համակարգ է, որը կոչված է իրականում կենսագործելու օրինականության գաղափարներն ու հիմունքները և ներառում է ինչպես վերահսկողությունը և հսկողությունը քրեադատավարական իրավունքի աղբյուրների բովանդա-

<sup>1</sup> Այսդպիսին է, օրինակ՝ Ռ.Տ. Մուխակի մոտեցումը, որը կքննարկենք ստորև:

կության նկատմամբ իդեալական իրավունքին համապատասխանելու տեսանկյունից, այնպես էլ օրենքների գործողության նկատմամբ վերահսկողության և հսկողության, այսինքն՝ իրավակիրառ գործունեության ոլորտում օրինականության պահպանության համակարգը: Օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը՝ որպես օրինականության բովանդակության երրորդ տարր, ինչպես ամբողջ իրավական համակարգում, այնպես էլ քրեական դատավարությունում կոչված է ապահովելու իրավաստեղծ և իրավաիրացնող գործունեության մեջ իրավունքի և օրենքի խախտումների բացահայտումը, դրանց անհապաղ կանխումը և վերացումը:<sup>1</sup>

Օրինականության համակարգային հայեցակարգերի օրիգինալ վարկած կարելի է համարել Ա.Բ. Լիսյուտկինի մոտեցումը:<sup>2</sup> Նա օրինականության հասկացությունը փորձում է կառուցել՝ ելնելով օրինականության եռության, բովանդակության և պրակտիկ գործառնության հարաբերակցությունից: Օրինականության եռությունը, ըստ Ա.Բ. Լիսյուտկինի, ոչ թե կողմից չվիճարկվող մոտեցում է, այսինքն՝ օրինականությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից գործող օրենքների անշեղ կատարումն ու պահպանումն է: Այդ եռությունը չպետք է մեկնաբանել բառացիորեն, այլ պետք է դիտարկել որպես հասարակական զարգացման նպատակային դիրքորոշում, որը հանգում է մեկ բանի՝ հասնել հասարակության անդամների օրինահպատակության: Այդ պատճառով օրինականությունը բնութագրում է իրավական պետության ձևավորման և սոցիալական արդարության կենսագործման գործընթացը: Օրինականության այդպիսի հասկացությունը թույլ է տալիս այն դիտարկել որպես համակարգային կազմավորում և նախորոշում է նրա բաղադրատար-

<sup>1</sup> Տե՛ս *Ղազինյան Գ.Ս.* Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. իրատ., 2001, էջ 213-214:

<sup>2</sup> Տե՛ս *Лисюткин А.Б.* Законность и порядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристы, 1999, էջ 419-425:

րային կառուցվածքը: Վերջինիս օգնությամբ այդ կատեգորիայի մեջ ընդհանրացվում են կոնկրետ առարկաներ՝ հատկանիշների կրողներ: Դրանք կազմում են օրինակության ծավալը:<sup>1</sup> Օրինականության նկատմամբ համակարգային նման մոտեցման հիման վրա այս հեղինակն օրինականության կառուցվածքային բաղադրատարրեր է համարում՝

1) օրինականության նպատակը՝ հասնել հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի անշեղ և խստագույն պահպանմանը և կատարմանը,

2) օրինականության սկզբունքները (հայացքները), այսինքն՝ օրինականության բովանդակությունը և տեսաաշխարհայացքային հիմքերը: Այս բաղադրատարրի միջոցով տեղի է ունենում նպատակի կոնկրետացում,<sup>2</sup>

3) օրինականության սկզբունքների և պահանջների իրացման կառուցակարգը (կամ երաշխիքները), որն իրենից ներկայացնում է օրինականության սկզբունքների ու պահանջների իրականացման միջոցների, հնարքների և պայմանների ամբողջություն,

4) մարդու շարժառիթավորված գործունեությունը, որի միջոցով տեղի է ունենում օրինականության հայեցակարգի փաստական նյութականացումն անենօրյա իրականության մեջ: Այս բաղադրատարրն օրինականության կապող օղակն է, որը ներկայացված է

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 514:

<sup>2</sup> Օրինականության սկզբունքները, ըստ Ա.Բ. Լիսյուտկինի, հասարակական զարգացման օրինաչափություններով պայմանավորված, գաղափարների ու հայացքների համակարգ են օրենսդրության պահպանման ամիրաժեշտության վերաբերյալ, որոնք ձեռք են բերում ելակետային դրույթի որակ՝ իրավաչափ վարքագծի և ներքին համոզմունքի շարժառիթների ձևավորման մեջ: Որպես այդպիսիք հանդես են գալիս օրինականության միասնությունը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորվածությունը, պատասխանատվության անխուսափելիությունը, օրինականության և նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը, օրինականության և մշակութային կրթության փոխկապվածությունը (տե՛ս նույն տեղում, էջ 515-517):

նրա ամբողջ կառուցվածքում և որոշում է օրինականության սոցիալական բնույթը,

5) հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի գնահատման չափանիշը՝ գործող օրենսդրությունը,

6) օրինականության իրավաբանական հիմքերը՝ իրավունքը և հարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագիծը:

Թվարկված բաղադրատարրերը, ըստ Ա.Բ. Լիսյուտկինի, պայմանավորում են օրինականության հիմնական հատկությունները՝

առաջին, օրինականությունը պատճառահետևանքային կախվածության մեջ է գտնվում սոցիալ-բարոյական և պետաիրավական գործընթացներից,

երկրորդ, օրինականության պահանջների համապարտադիրությունն իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտների համար,

երրորդ, բարձր աստիճանի վերացարկվածությունը և համակարգայնությունը, ինչը բացատրվում է այդ կատեգորիայով ընդհանրացված քաղաքական-իրավական երևույթների համակցությամբ,

չորրորդ, օբյեկտիվությունը՝ որպես օրինականության՝ վերը թվարկված գծերի հետևանք:

Արդյունքում Ա.Բ. Լիսյուտկինը ձևակերպում է օրինականության հետևյալ ընդհանուր բնորոշումը. այն քաղաքական-իրավական երևույթ է, որը բնութագրում է հասարակության պետաիրավական ձևի կազմակերպման կատարելագործման գործընթացը և սոցիալական արդարության գաղափարի կենսագործումը գործող օրենսդրության խստագույն և անշեղ պահպանման և կատարման ճանապարհով:<sup>1</sup>

<sup>1</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** К понятию законности // Правоведение, 1993, № 5, էջ 108-112; **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристъ, 1999, էջ 514:

Ա.Բ. Լիսյուտկինի կողմից մշակված օրինականության հայեցակարգը աչքի է ընկնում նաև իր մի շարք տեսամեթոդաբանական և դրանից բխող գործնական առավելություններով՝ համեմատած օրինականության տեսության այլ վարկածների հետ: Որպես այդպիսիք կարող ենք համարել օրինականությունը համակարգային երևույթ դիտարկելը և նրանում կառուցվածքային բաղադրատարրերի առանձնացումը, վերջիններիս միջև առկա ներհամակարգային կապերի և փոխապայմանավորվածության բացահայտումը: Այս մոտեցումը բավականին հետաքրքիր մեթոդաբանական մոտեցում է և կարող է հիմք, բանալի, ուղենիշ հանդիսանալ օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման համար: Օրինականությունը համակարգային կատեգորիա դիտարկելը, ինքնին լինելով առավելություն, պայմանավորում է այս հայեցակարգի թերությունը: Դա այն է, որ ինքը՝ օրինականությունն է դիտարկվում որպես համակարգ և անտեսվում է այնպիսի ուղենիշային մոտեցումը, թե օրինականությունը՝ որպես համակարգ որ համակարգում գոյություն ունի և ինչպես է գործում, այդ արտաքին համակարգի ամեն մի բաղադրատարրում ինչպես է դրսևորվում: Ա.Բ. Լիսյուտկինի մոտեցման մյուս առավելությունն օրինակության համակարգում օրինականության սկզբունքների և պահանջների իրացման կառուցակարգի՝ որպես կարևորագույն բաղադրատարրի առանձնացումն է: Օրինականության բոլոր բաղադրատարրերը՝ սկսած նպատակից մինչև իրավաբանական հիմքերը, շատ կարևոր համակարգային դեր են խաղում, սակայն բավարար չեն օրինականությունը կենսագործելու համար: Օրենքներն առանց իրացման կառուցակարգի, օրինականությունն առանց երաշխիքների, ըստ Ա.Բ. Լիսյուտկինի, նման են հռչակագրային կարգախոսի, դատարկ հնչյունի: Ուրեմն, օրինականության համակարգը և տեսական կառույցն անպայմանորեն պետք է ներառեն այդ միջոցների, հնարքների և պայմանների ամբողջությունը, իսկ օրինականության ամեն մի տեսություն պետք է մշակի այդ հիմնախնդիրը:

Ա.Բ. Լիսյուտկինի օրինականության համակարգային հայեցակարգը համապատասխանում է արդի իրավաբանական իրավամտածողության պահանջներին և մերժում է նորմատիվիստական-պոզիտիվիստական մոտեցումներն օրինականության հիմնախնդիրների մեկնաբանման գործում: Սակայն օրինականության այս հայեցակարգի այդ հատկությունը հասցված չէ մինչև վերջ և քննարկված չէ իր համակարգային մոտեցման շրջանակներում, սակայն, այնուամենայնիվ, բնորոշ է նրան: Այսպիսի եզրակացության համար հիմք է հանդիսանում «սոցիալական արդարության գաղափարի կենսագործումը» որպես օրենսդրության պահպանման և կատարման նպատակ դիտարկելը:<sup>1</sup> Բացի այդ, նա օրինականության սկզբունք է համարում մարդու և քաղաքացու իրավունքների երաշխավորվածությունը: Այս երկու հանգամանքն անուղղակիորեն հիմք են տալիս պնդելու, որ օրենքները պետք է լինեն իրավական, իսկ արդյունքում օրինականությունը ձեռք կբերի նաև իրավական բնույթ: Վերջապես, օրինականության այս հայեցակարգի առավելությունն օրինականության բաղադրատարրերի շարքում մարդու շարժառիթավորված գործունեության շեշտադրումն է, ինչն ակնհայտորեն կապում է օրինականությունը և իրավագիտակցությունը՝ օրինականությունը վերածելով իրավագիտակցության կատեգորիայի:

Ա.Բ. Լիսյուտկինի օրինականության համակարգային հայեցակարգը, օրինականությունը դիտարկելով որպես համակարգային կազմավորում իր բաղադրիչներով հանդերձ, համակարգակառուցվածքային մեթոդը տարածում է միայն օրինականության, այսպես կոչված, ներքին ոլորտի վրա՝ դուրս չգալով դրա շրջանակներից, չդիտարկելով օրինականությունը որպես ենթահամակարգ ավելի խոշոր համակարգային կապերում կամ կազմավորումներում:

<sup>1</sup> См. *Лисюткин А.Б.* К понятию законности // Правоведение, 1993, № 5, с. 108-112; *Лисюткин А.Б.* Законность и порядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристъ, 1999, с. 515:



Համակարգային և համալիր մոտեցումների վրա սինթեզված օրինականության հայեցակարգ է Ռ.Տ. Մուխակի մոտեցումը, որը փորձ է արել համակարգա-կառուցվածքային մեթոդը տարածելու օրինականության արտաքին ոլորտի վրա, սակայն չի զարգացրել դա: Նրա մոտեցումը, լինելով յուրահատուկ սինթեզ, «օրինականություն» հասկացությունը դիտարկել է նախ՝ որպես համալիր կատեգորիա, իսկ այնուհետև՝ համակարգային կազմավորում: Որպես համալիր կատեգորիա, ըստ Ռ.Տ. Մուխակի, օրինականության հասկացությունը պետք է իր մեջ ներառի օրինականության նախորդ բնորոշումները:<sup>1</sup> Համակարգային վերլուծության համատեքստում այս հետազոտողն օրինականությունը դիտարկում է երկակիորեն՝ օրինականությունը որպես համակարգ և օրինականությունը որպես «հասարակության մեջ իրավունքի բոլոր դրսևորումների բնութագրիչ»:

Առաջին իմաստով, այսինքն՝ օրինականությունը որպես համակարգ մոտեցման դեպքում Ռ.Տ. Մուխակն օրինականությունը բնորոշում է որպես «հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ, հասարակական հարաբերությունների իրավաչափության կացություն՝ հիմնված իրավունքի և սոցիալական արդարության գերիշխանության վրա, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի անշեղ պահպանմամբ, օգտագործմամբ և կիրառմամբ»: Այս կերպ հասկացված օրինականությունն ունի դրսևորման երեք ձև՝ օրինականությունը որպես սոցիալական սուբյեկտների գործունեության սկզբունք, օրինականությունը որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ, օրինականությունը որպես հասարակության և պետության պահանջ՝ ճշգրիտ իրացնելու գործող օրենսդրությունը: Օրինականության բովանդակությունն արտահայտում են նրա սկզբունքները, որոնք իրենց հերթին արտահայտվում են իրա-

<sup>1</sup> Տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 438:

վունքի բոլոր սուբյեկտներին ներկայացվող պահանջների համակարգում: Օրինականության իրացման գրավականը դրա երաշխիքներն են:<sup>1</sup>

Երկրորդ իմաստով, այսինքն՝ օրինականությունը որպես «հասարակության մեջ իրավունքի բոլոր դրսևորումների բնութագրիչ» դիտարկելիս Ռ.Տ. Մուխակն օրինականությունը համարում է համալիր կատեգորիա, որի «բացահայտումը հնարավոր է համակարգային մոտեցման շրջանակներում, որն իր մեջ ներառում է օրինականության նախորդ բնորոշումները: Համակարգային վերլուծության համատեքստում օրինականությունը բնութագրում է հասարակության մեջ իրավունքի բոլոր դրսևորումները, որոնց հետևանքը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն է ամբողջությամբ սոցիալական արդարության և մարդու իրավունքների գերակայության հիման վրա: Հասարակական հարաբերությունների կարգավորվածությունը նշանակում է դրանց՝ իրավունքի համապատասխանության կացություն, այլ խոսքով՝ դրանց իրավաչափություն... Օրինականության էությունը գործող օրենքների իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից բարեխիղճ և անշեղ պահպանման և կատարման մեջ է, որն էլ հենց ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափության կացությունը: Այն կարող է ծագել միայն իրավունքի համապարտադիրության հիման վրա, որը նշանակում է իրավունքի սուբյեկտների վարքագծի համապատասխանություն իրավունքի նորմերի պահանջներին»:<sup>2</sup>

Այսպիսով՝ Ռ.Տ. Մուխակը փորձ է անում, չնայած ոչ հստակ և մինչև վերջ, օրինականությունը դիտարկել առավել ընդհանրացված համակարգային կապերում՝ համարելով այն իրավունքի համապարտադիրության դրսևորում: Սակայն այս մոտեցումը հետևողական և մինչև վերջ չէ, որովհետև չի նշվում, թե որ համակարգի ենթահամակարգ է օրինականությունը: Արդյունքում անհասկանալի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 434-440:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 438-439:

է մնում, թե ինչու՞ է օրինականությունը ռեժիմ, այլ ոչ թե սկզբունք, ինչու՞ է այն դրսևորվում երեք տարաբնույթ ձևերով: Կարծում ենք՝ այս հարցականների պատասխանները համակարգային մոտեցման հետևողական և մինչև վերջ կիրառումն է օրինականությունն կատեգորիայի հիմնահարցերը հետազոտելիս:

## **2.7. Օրինականության օրիգինալ (ոչ ավանդական) հայեցակարգերը**

Օրինականության օրիգինալ հայեցակարգեր կարելի է համարել օրինականության տեսության հիմնախնդիրների մեկնաբանման այն վարկածները, որոնք չեն տեղավորվում մինչ այժմ քննարկված հայեցակարգերի ոչ մի տիպում: Դրանք իրենց բովանդակությամբ էականորեն տարբերվում են և՛ գործառնության, և՛ նորմատիվային, և՛ բովանդակային-իրավաբանական հայեցակարգերից: Այս առումով օրինականության նկատմամբ նման մոտեցումները յուրահատուկ են և էականորեն տարբերվում են օրինականության նկատմամբ ավանդական մոտեցումներից: Այդ իսկ պատճառով նման հայեցակարգերն անվանեցինք օրիգինալ և դրանք քննարկում ենք մնացած հայեցակարգերից առանձին:

Օրինականության հայեցակարգերից օրիգինալ-համակարգային հայեցակարգ կարելի է համարել Ա.Բ. Լիսյուտկինի մոտեցումը, որը քննարկեցինք վերևում: Նա օրինականության հասկացությունը փորձում է կառուցել՝ ելնելով օրինականության էության, բովանդակության և պրակտիկ գործառնավարման հարաբերակցությունից: Այս հայեցակարգի օրիգինալությունը դրսևորվում է օրինականության բավականին մեծ թվով բաղադրատարրերի առանձնացմամբ, վերջինների միջև առկա ներհամակարգային կապերի և փոխադանավորվածության բացահայտմամբ:

Օրինականության հասկացության օրիգինալ տարբերակներից մեկն առաջարկվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում Ի.Մ. Ջայցևի կողմից:<sup>1</sup> Նա, քննարկելով օրինականության ավանդական

կամ նորմատիվիստական բնորոշումները, գալիս է եզրակացության, որ դրանք, ըստ էության, հավասարազոր են իրավական կարգադրագրերի պարտադիրության ճանաչմանը: Բայց քանի որ այդ դրույթը, այսինքն՝ իրավունքի նորմերի համապարտադիրությունն աքսիոմա է, ապա նույն պահանջը, ի դեմս օրինականության, նորից հռչակել իրավունքի սկզբունք, ավելորդ է: Ուստի, ըստ Ի.Մ. Ջայցևի, օրինականության հասկացությունն իր մեջ պետք է ներառի մեկ կողմ՝ հասարակության վերաբերմունքն իրավունքին: Յետևաբար՝ «օրինականության սկզբունքն իրենից ներկայացնում է միջոցների համակցություն, որոնք ապահովում են հասարակության ճիշտ վերաբերմունքը գործող օրենսդրությանը, հարգանքն իրավունքի նկատմամբ: Այդ միջոցները բազմազան են՝ իրավունքի նորմերի ոչ ճիշտ կիրառման համար սանկցիաների համակարգը, նյութական, իրավական նորմերի իրացումը երաշխավորող վարույթային և դատավարական կանոնները, պետական մարմինների ձևավորման կադրային քաղաքականությունը, իրավական քարոզչությունը և այլն:<sup>1</sup> Յետևաբար, ըստ Ի.Մ. Ջայցևի, օրինականության սկզբունքների բովանդակությունը միասեռ չէ, դրանում «ներառված են նյութաիրավական, դատավարական բաղադրատարրեր և կազմակերպչական միջոցառումներ: Օրինականությունն իրենից ներկայացնում է ոչ զուտ իրավական, այլ սոցիալ-իրավական հիմունք խորհրդային հասարակական կյանքում»:<sup>2</sup>

Օրիգինալ է նաև օրինականության վարույթային հայեցակարգը, որն իր բնույթով նորմատիվային, ինչպես նաև համակարգային հայեցակարգ է: Այդ հայեցակարգի հեղինակ Վ.Վ. Գլուշչենկոն, լինելով պետության և իրավունքի տեխնոլոգիական տեսության կողմնակից, գտնում է, որ «իրավունքը կենսագործունեության զանգվածային տեխնոլոգիաների տիպային կառավարման յուրահատուկ գործիք է»: Այդպիսի մոտեցումն իրավունքի նկատմամբ նա համարում է «իրավունքի տեխնոլոգիական տեսություն», որի վրա կա-

<sup>1</sup> Տե՛ս **Зайцев И.М.** Сущность хозяйственных споров. Саратов, 1974, էջ 150:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

ռուցված օրինականության հայեցակարգը դիտարկվում է որպես «օրինականության վարութային (անընդհատ) կամ համակարգային-կառավարչական մոտեցում»:<sup>1</sup> Ըստ Վ.Վ. Գլուշչենկոյի՝ պետության արտաքին և ներքին միջավայրն աչքի է ընկնում բարձր շարժունությամբ և դինամիկ փոփոխություններով: Արդի աշխարհի ֆինանսատնտեսական և կենցաղային գործունեության պայմանները ևս փոփոխության են ենթարկվում: Հետևաբար՝ օրինականությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ստատիկ վիճակում, այլև՝ գործողության մեջ: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել մոնիտորինգ և գնահատել գործերի իրական վիճակի համապատասխանությունը ցանկալի կացությանը: Այդպիսով՝ ծագում է օրինականության նկատմամբ վարութային մոտեցման անհրաժեշտությունը:<sup>2</sup>

Վարութային մոտեցման դեպքում օրինականությունը վերածվում է անընդհատ գործընթացի՝ կազմված նորմատիվ, իրավամեկնաբանող, իրավակիրառող և այլ որոշումների, պետության զանազան ոլորտներում գործողությունների միասնական համակարգային շղթայից: Օրինականության վարութային հայեցակարգի հեղինակը հատկապես կարևորում է երեք հանգամանք՝

1) համակարգայնությունը, որը ենթադրում է օրինականության բոլոր բաղադրատարրերի հաշվառումն իրենց համակարգային կապերում և արդյունավետության փոխադարձ ազդեցության մեջ, ռեսուրսների ծախսերը, ռիսկերն օրինականությունն իրականացնելիս,

2) օրինականության անընդհատությունը ժամանակի և տարածության մեջ, որում գործում է պետության ինքնիշխանությունը,

3) օրինականության վարութային կառավարման պետական տեխնոլոգիաների գոյությունը և հուսալիությունը:

<sup>1</sup> Տե՛ս *Глуценко В.В.* Теория государства и права: системно-управленческий подход. г. Железно-дорожный, Моск. обл., Крилья, 2000, էջ 7:

<sup>2</sup> Այդ մոտեցման մեթոդոլոգիական հիմքը, ըստ Վ.Վ. Գլուշչենկոյի, համարվում է վարութային մոտեցումը մենեջմենթում (տես նույն տեղում, էջ 338):

Օրինականության վարութային հայեցակարգում առավել հետաքրքիր և ռացիոնալ են ժողովրդավարական պետությունում օրինականության պահանջները: Այդ պահանջներն են՝

- պետության տարբեր ոլորտներում կենսագործունեության կառավարման տեխնոլոգիաների և իրավական ապահովման կարիքների ընդգրկում և ժամանակին բացահայտումը,

- ըստ բացահայտված իրավական կարիքների՝ (հասարակական կյանքի զանազան ոլորտներում) օրինականության լրիվ և ժամանակին նորացումը,

- ըստ աստիճանակարգության՝ վերին ակտերի առաջնայնությունը ստորին ակտերի նկատմամբ,

- իրավաստեղծագործության արդյունքում միայն լիազորված մարմինների կողմից այդ մարմինների իրավասության շրջանակներում օրենքներին չհակասող նորմատիվ ակտերի հրապարակումը,

- պետության և հասարակության զարգացման ապահովումը մարդու և քաղաքացու միջազգայնորեն ճանաչված իրավունքների պահպանմամբ,

- օրենքների հուսալի և ճշգրիտ կատարումը պետական իշխանության բոլոր մակարդակներում,

- ցանկացած սուբյեկտի կողմից թույլ տրված օրինականության ամեն մի խախտման ժամանակին, լրիվ և հուսալի կանխումն օրենքի հիման վրա,

- ժողովրդավարական (ներկայացուցչական իշխանություն, մամուլ, հասարակայնություն) և պետական հրապարակային վերահսկողություն օրենքների անշեղ, հստակ, ժամանակին պահպանման վրա:<sup>1</sup>

Օրինականության թվարկված պահանջների կատարմանն են ուղղված օրինականության սկզբունքները, որոնք, ըստ Վ.Վ. Գլուշչենկոյի, հետևյալներն են՝ օրինականության համակարգային միասնականությունն ամբողջ պետության մասշտաբով, նպատակահար-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 338-339:

մարության և օրինականության կապը, օրինականության կապը բնակչության ընդհանուր և իրավական մշակույթի հետ, իրավունքի հրապարակայնությունը, բոլոր սուբյեկտներին ներկայացվող պահանջների միասնությունը, օրինականության գիտական նախագծումը, օրինականության իրականացումն օրինականության համակարգային անընդհատ տեխնոլոգիաների հիման վրա՝ պետական իշխանության տարբեր մարմինների միջև գործառույթների տարանջատմամբ, անընդհատ վարութային հասարակական վերահսկողությունն օրինականության վիճակի նկատմամբ:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ  
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

***§ 1. Օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման մեթոդաբանական բացթողումներն ու թերությունները***

Աշխատանքի երկրորդ գլխի հետազոտական խնդիրների համար նախադրյալ է համարվում մինչ այժմ մեր կողմից կատարված ուսումնասիրությունը: Օրինականության տեսության հիմնահարցերի քննարկումը ցույց տվեց, որ այդ տեսության մեջ առկա են բազմաթիվ բանավեճային հիմնախնդիրներ, որոնցից ամենավիճելին երևի օրինականություն հասկացության բնորոշումն է: Օրինականության՝ մեր կողմից առանձնացված գրեթե բոլոր հայեցակարգերին բնորոշ են որոշակի թերություններ ու բացթողումներ: Եթե ամփոփենք օրինականություն հասկացության բնորոշման շուրջ բանավեճերը, ապա կարող ենք փաստել, որ գոյություն ունեն օրինականություն հասկացության տասնյակից ավելի բնորոշումներ: Այդ բնորոշումների ու դրանց վրա կառուցված օրինականության հիմնախնդիրների տեսական մեկնաբանման վարկածների դասակարգումն օրինականության առանձին հայեցակարգերի և օրինականության տեսության հիմնախնդիրների քննարկումն օրինականության հայեցակարգերի տիպաբանության տեսանկյունից մեզ հնարավորություն տվեցին վեր հանելու դասակարգման ամեն մի խմբին բնորոշ առավելությունները, թերություններն ու բացթողումները:

Որպեսզի կարողանանք ճիշտ որոշել օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման մեթոդաբանական ուղիները, փորձենք ամփոփել և խմբավորել այդ թերություններն ու բացթողումները: Այս հարցում միանշանակ կարելի է համաձայնվել Ա.Բ. Լիսյուտկինի այն կարծիքի հետ, որ «տվյալ թեմային նվիրված հրա-

տարակուսությունների մեծ մասն ունեն տարիների վաղեմություն: Այդ ընթացքում հասարակության և գիտության մեջ տեղի են ունեցել նշանակալի տեղաշարժեր:<sup>1</sup> Այդ փոփոխությունների լույսի ներքո գրականության մեջ առկա օրինականության մեկնաբանությունները, ըստ Ա.Բ. Լիսյուտկինի, աչքի են ընկնում մի շարք սկզբունքային թերություններով՝

1) այդ կատեգորիայի բովանդակությունը չի արտացոլում իր իսկ մասին պատկերացում ձևավորող երևույթների բազմազանությունը,

2) այն թույլ չի տալիս որոշել դրա բարոյական բնույթը,

3) նրանում գերակշռում է քաղաքական-իրավաբանական կողմը,

4) զուտ նորմատիվային հայացքը՝ կապված օրինականության առարկայական-գործառնության բնութագրի հետ, հաճախ տանում է իրավական ֆետիշիզմի, քողարկում է հիմնախնդրի գործնական կողմը,

5) այդ հիմքով կառուցված բնորոշումները նպաստում են առանձին իրավական կատեգորիաների միջև հակասության առաջացմանը, օրինակ՝ օրինականության և իրավունքի իրականացման»:<sup>2</sup>

Օրինականության հիմնախնդիրների քննարկումն օրինականության հայեցակարգերի դասակարգման տեսանկյունից մեզ ևս հնարավորություն է տալիս վեր հանելու օրինականության տեսության հիմնախնդիրներին տրված լուծումների թերություններն ու բացթողումները:

<sup>1</sup> Այս կապակցությամբ պետք է նշել այն հանգամանքը, որ վերջին տասնամյակում օրինականության տեսության հիմնախնդիրների քննարկումը մենագրական աշխատությունների ոլորտից տեղափոխվել է ուսումնական գրականության ոլորտ:

<sup>2</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристы, 1999, էջ 511:

Դրանց մեծագույն մասը պայմանավորված է հետազոտողի մեթոդաբանական զինվածությամբ, օգտագործած մեթոդների համալիրով: Օրինականությունը՝ որպես երևույթ, օբյեկտիվ է, սակայն ենթարկվում է սուբյեկտիվ հետազոտման ու մեկնաբանման:<sup>1</sup> Այստեղից էլ առաջանում է հիմնախնդիր, որը կարող ենք ձևակերպել հետևյալ կերպ՝ օբյեկտիվի և սուբյեկտիվի հարաբերակցությունն օրինականության տեսության մեջ: Օրինականությունն օբյեկտիվ բնույթի երևույթ է: «Այն որպես հասարակական երևույթ արդյունք է զանազան գործոնների փոխգործակցության, որոնք և որոշում են նրա բնույթը: Հետևաբար, օրինականության տեսական հայեցակարգը պետք է լինի որոշակի էմպիրիկ ընդհանրացում, որը չի հակասում մարդկային փորձին»:<sup>2</sup> Այս դիրքորոշումից, մեր կարծիքով, Ա.Բ. Լիսյուտկինը կատարում է սխալ եզրակացություն: Ըստ նրա՝ քանի որ օրինականությունն օբյեկտիվ բնույթի երևույթ է, «բացառվում է դրա սուբյեկտիվ-իդեալիստական մեկնաբանման հնարավորությունը»: Ակնհայտ է, որ օրինականությունն օբյեկտիվ երևույթ և իրողություն է: Սակայն առկա է նաև այն հանգամանքը, որ տեսական մոտեցումներն օրինականության նկատմամբ միասնական չեն, այլ բազմազան: Այդ բազմազանությունը պայմանավորված է օրինականության՝ որպես օբյեկտիվ երևույթի բարդ ու բազմակողմանի բնույթով, ինչի արդյունքը տեսական արտացոլումների բարդությունն ու վերացականությունն է: Այս դեպքում բազմազանությունն ունի օբյեկտիվ բնույթի պատճառներ: Այդուհանդերձ, այդ բազմա-

<sup>1</sup> Նոր ժամանակաշրջանի դասական գիտության մեջ ընդունված էր այն տեսակետը, որ գիտական ճանաչողության մեթոդը պետք է համապատասխանի առարկային: Ուստի առարկայի յուրահատկությունը նախորոշում է դրա ճանաչման համար ամենից արդյունավետ մեթոդը: Սակայն այսօր հետդասական գիտության մեջ գերակշռող է այն մոտեցումը, որ մեթոդն առաջնային է առարկայից կամ զոնե դրանք փոխկապված են (տե՛ս **Честнов И.Л.** Актуальные проблемы теории государства и права: Эпистемология государства и права. СПб., ИБЭСЭП, Знание, 2004, էջ 28):

<sup>2</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристы, 1999, 512:

զանությունն իր հիմքում ունի նաև սուբյեկտիվ բնույթի պատճառներ, որովհետև գիտական հասկացությունների կառուցումը և տեսական հետաքրքրություն ներկայացնող եզրակացությունները մեծապես պայմանավորված են հետազոտողի կամքով, նրա հատկապես մեթոդաբանական զինվածությամբ հիմնախնդիրը բացահայտելու, հետազոտելու, նոր գիտելիք ստանալու համար նրա կիրառած մեթոդներով: «Այս կամ այն գիտության մեջ օգտագործվող ճանաչողության մեթոդները, ինչպես նաև դրա առարկան, ունեն բարդ օբյեկտիվ-սուբյեկտիվ հիմքեր և բնույթ: Դրանք օբյեկտիվ են, քանի որ ամենից առաջ կախված են հետազոտության առարկայից, կուտակված գիտելիքների մակարդակից, հասարակության աշխարհայացքից: Սակայն դրանք նաև սուբյեկտիվ են, քանի որ շատ դեպքերում ընտրվում են ճանաչողության սուբյեկտի կողմից՝ ելնելով անձնական նախասիրություններից»:<sup>1</sup> Այսպիսով՝ օրինականությունն ինքն իդեալական երևույթ է այն իմաստով, որ մենք չենք կարող այդ բարդ և բազմակողմանի օբյեկտն անմիջականորեն շոշափել և նկարագրել, ուրեմն, դրա բացատրության, մեկնության (էքսպլիկացիայի) եղանակը որոշում է մեր պատկերացումը, մտացածին մոդելն օրինականության մասին: Հետևաբար, օրինականության վերաբերյալ մեր պատկերացումները որոշվում են այն մեթոդներով, որոնց օգնությամբ մենք փորձում ենք այն նկարագրել, բնորոշել, մեկնաբանել և այլն: Այլ կերպ ասած օրինականության հիմնախնդրի տեսական քննարկումներում և հետազոտություններում հեղինակների մեծագույն մասի մոտեցումներն աչքի են ընկնում որոշակի թերություններով, միակողմանի մոտեցումներով՝ պայմանավորված մեթոդաբանական զինվածությամբ, օգտագործած մեթոդների համալիրով: Հետևաբար թերությունների հաղթահարման ճանապարհը մեթոդական ճիշտ համալիրի ընտրությունն է:

<sup>1</sup> Տե՛ս **Честнов И.Л.** Актуальные проблемы теории государства и права: Эпистемология государства и права. СПб., ИБЭСЭП, Знание, 2004, էջ 28:

Օրինականության տեսության հիմնահարցերի մեկնաբանության տարբերակների մեջ գերակշռում են նորմատիվ-ձևական մոտեցումները, որոնք իրենց հիմքում ունեն պոզիտիվային իրավահասկացությունը: Իհարկե, հնարավոր է համակերպվել նորմատիվականության կամ պոզիտիվականության դիրքերից օրինականության հասկացության և տեսության մեկնաբանման վարկածի հետ, սակայն օրինականության դիտարկումը՝ որպես գործող օրենքների (օրենսդրության) խստագույն և անշեղ պահպանում ու կատարում իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից, չի սպառում նրա բովանդակությունը, այլ, ընդհակառակը, աղքատացնում է այն: Պետք է նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք: Նորմատիվականության կամ պոզիտիվականության դիրքերից կառուցված օրինականության հայեցակարգերն ապացուցել են իրենց սնանկությունը նաև պատմականորեն:<sup>1</sup> Միևնույն ժամանակ նորմատիվ-ձևական մոտեցումն առաջ է բերում տեսական ու գործնական նոր թերություններ

<sup>1</sup> Իրավահասկացողության տիպի և օրինականության միջև կապը հաստատում է 20-րդ դարի ամբողջատիրական ռեժիմների փորձը: Չանգվածային բռնությունների ու դատաստանների պրակտիկան («ռազմական կոմունիզմի» ժամանակաշրջանի հեղափոխական բռնություններից, 30-50-ական թթ. ստալինյան «մաքրագերծումներից» ու բռնություններից մինչև պայքարն այլախոհների, դիսիդենտների և իրավապաշտպանների դեմ 60-80-ական թթ.) համոզիչ կերպով ցուցադրել է նաև ինչպես սոցիալիզմի, այնպես էլ ցանկացած ամբողջատիրական վարչաձևի օրոք անհատի իրավունքների և ազատությունների ձևականությունը, այդ կարգերի հակաիրավական բնույթը (տե՛ս **Нерсесянц В.С.** Юриспруденция. Введение в курс общей теории права и государства. М., Издательская группа НОРМА-ИНФРА.М, 1998, էջ 157): Վիճակը նույնն է, նույնիսկ եթե այդ հասարակարգերում տիրում է ձևական օրինականության խստագույն ռեժիմ: Միանշանակ պետք է համաձայնվել Ս.Ա. Կոմարովի հետ, որ իրավաօրինականության կացությունը «հատուկ է զարգացած քաղաքացիական և ժողովրդավարական ինստիտուտներով հասարակությանը, որ իրավաօրինականության մեծագույն սկզբունքների պահպանումը բացահայտորեն վկայում է ազատ երկրներում կյանքի առանձնահատկությունների մասին: Իրավական օրինականության հայեցակարգը գիտականորեն մշակվել է միայն ազատական դարաշրջանում և դարձել է ոչ միայն ազատության վահան, այլև դրա իրականացման իրավաբանական մշակված կառուցակարգ» (տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 367):

ու բացթողումներ՝ խոցելի դարձնելով օրինականության նման հիմքով կառուցված հայեցակարգը:<sup>1</sup> Նշանակում է՝ օրինականության տեսության հիմնահարցերի քննարկումը պետք է դուրս բերվի նորմատիվային-պոզիտիվային իրավաաշխարհայացքի շրջանակներից և դիտարկվի ու իմաստավորվի ավելի լայն իրավափիլիսոփայական հայեցակարգերի համակարգում: Այսինքն՝ օրինականության հիմնախնդիրների հետազոտումը, հետևելով իրավունքի հետազոտության մեթոդաբանությանը, անհրաժեշտաբար պետք է օգտագործի տրանսցենդենտալ փիլիսոփայության (մետաֆիզիկայի) մեթոդը՝ երկրորդական տեղում թողնելով ձևական-տրամաբանական վերլուծության մեթոդին:

Օրինականության տեսության հիմնախնդիրների քննարկումը կատարվում է համակարգակառուցվածքային մեթոդի ոչ ամբողջական, ոչ ավարտուն և ոչ լայնամասշտաբ կիրառմամբ: Այդ մեթոդի ճիշտ, ամբողջական և լրիվ կիրառման դեպքում օրինականության տեսության մի շարք հիմնախնդիրներ ստանում են «մեխանիկական» լուծում: Համակարգային մեթոդի միջոցով բացահայտվում են հետազոտվող օբյեկտի բաղադրատարրերը, դրանց միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կապերը, գործառույթները, ստորակարգությունը: Համակարգային մեթոդին բնութագրական է ձգտում - հասնելու պատշաճ ընդհանրության, ինչը թույլ է տալիս հաղթահարել երբեմն հանդիպող անհիմն մասնատումը, ջլատումը կամ, ընդհակառակը՝ փաստերի և երևույթների կամայական միավորումը:<sup>2</sup> Օրինականությունն ամենից առաջ իրավական երևույթ է, դրսևորվում է իրավական ոլորտում: Ուրեմն այն իրավական կատեգորիա և կառույց է: Հետևաբար, օրինականությունը տեսականորեն պետք է քննարկվի իր «սեփական» համակարգային դաշտում, դրա բոլոր դրսևորումներում: Համակարգային մեթոդի կիրառումն օրինակա-

<sup>1</sup> Այդ թերությունների մասին տես ստորև:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 12:

նության հիմնախնդիրների բացահայտման համար մեզ բերում է այն հանդգնան, որ օրինականությունը՝ որպես իրավական երևույթ, անհրաժեշտ է դիտարկել իրավունքի համակարգային դրսևորումների համատեքստում, մասնավորապես իրավական համակարգ (մերառյալ իրավունքի համակարգ), իրավական կարգավորման համակարգ (կառուցակարգ), իրավական օբյեկտիվ իրողությունների և դրանց տեսական արտացոլումների համահարթության վրա, դրանց հետ կապերում և դրանց բաղադրատարրերից ամեն մեկում իր դրսևորումներով: Այլ խոսքով ասած, օրինականությունը՝ որպես երևույթ, գործում է և գոյություն ունի հասարակության իրավական ոլորտի բոլոր ենթահամակարգերում և դրանց բաղադրատարրերում, հետևաբար, օրինականության հիմնախնդիրները պետք է քննարկվեն դրանց գոյության ու գործողության հետ համակցված:

Օրինականության տեսության հիմնախնդիրները հետազոտելիս բազմակողմանի-համալիր ճանաչողության սկզբունքը<sup>1</sup> կիրառվում է ոչ ճիշտ ուղղվածությամբ կամ մեքենայաբար: Օրինականության հիմնախնդիրների բազմակողմ հետազոտման դեպքում վճռորոշ են համարվում օրինականության դրսևորման և գործողության ոլորտները, որոնցում իրացվում են օրինականության պահանջները: Օրինականության բազմակողմ հայեցակարգերը, ընդու-

<sup>1</sup> Իրավունքի տեսության մեթոդաբանական զինանոցում կարևոր դեր են խաղում ճանաչողության սկզբունքները: Դրանցից են նաև համալիր և բազմակողմանի հետազոտման սկզբունքները (տես *Марченко М.Н.* Теория государства и права. М., ТК Велби, Издательство Проспект, 2005, էջ 19-20): Օրինականության տեսության հիմնախնդիրները հետազոտելիս ևս օգտագործվում են այդ երկու սկզբունքները, ինչի արդյունքում տեսության մեջ առկա են օրինականության բազմակողմ կամ համալիր հայեցակարգերը: Օրինականության հետազոտման բազմակողմանիության սկզբունքը ենթադրում է, որ օրինականությունը՝ որպես երևույթ, և դրա հիմնախնդիրները պետք է ուսումնասիրվեն նրա հետ հարաբերվող այլ երևույթների հետ փոխկապվածության և փոխգործողության մեջ: Օրինականության հետազոտման բազմակողմանիության սկզբունքը պահանջում է նաև այն քննարկել և հետազոտել ոչ միայն ինչ-որ մեկ կողմից, այլ բազմակողմանիորեն, ինչը հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմելու օրինականության վերաբերյալ:

նելով օրինականության բազմակողմ, բազմապլան կամ ունիվերսալ բնույթը, միավորում են օրինականությանը վերագրվող կողմերը՝ որպես օրինականության բազմազան դրսևորումներ, ինչը ճիշտ մոտեցում է օրինականության երևույթին: Սակայն օրինականության բազմակողմ կոչված հայեցակարգերը, մատնանշելով օրինականության բազում հատկություններն ու դրսևորման կողմերը, չեն կարողանում բացատրել, թե ինչու<sup>1</sup> է այն բազմակողմ երևույթ, որոնք են այն գործոնները, որոնք օրինականությունը վերածում են համալիր սոցիալ-քաղաքական ինստիտուտի: Կարծում ենք, որ նման բացթողման հաղթահարման ուղին համակարգային վերլուծության մեթոդի և բազմակողմանի-համալիր հետազոտման սկզբունքի համակցված կիրառումն է օրինականության հիմնախնդիրների լուծման նկատմամբ,<sup>1</sup> ինչի արդյունքում օրինականությունը վերածվում է իրավունքի հատկանիշների դրսևորման կազմակերպագործառնության սկզբունքի և դիտարկվում ու քննարկվում է իրավական կարգավորման կառուցակարգի համակարգային կապերում: Նման տեսական մոդելի դեպքում օրինականությունն իրավական կարգավորման համակարգի ամեն մի բաղադրատարրում յուրահատուկ տրանսֆորմացիա է ապրում, ձեռք է բերում կոնկրետ գործառնություններ և պահանջներ, գործում է յուրօրինակ:

**§ 2. Օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման ուղիները**

Օրինականության հասկացության նկատմամբ զանազան տեսական մոտեցումների վերլուծությունը և օրինականության տեսության մեջ առկա տարբեր հայեցակարգերի տիպաբանությունն ու դրանց քննարկումը հաստատեց, որ օրինականության տեսութ-

<sup>1</sup> Համակարգային և բազմակողմանի-համալիր հետազոտման մեթոդները երբեմն տարրալուծվում են և միմյանցից անբաժան են, սակայն ուշադիր դիտարկման դեպքում նրանց մոտեցումներում առկա են տարբերություններ:

յունը՝ որպես իրավունքի ընդհանուր տեսության բաղկացուցիչ մաս, դեռևս սպասում է իր մի շարք հիմնախնդիրների լուծմանը, շատ հարցերում բանավեճերի հաղթահարմանը: Նախորդ պարագրաֆում մենք փորձեցինք վեր հանել օրինականության տեսության մեջ առկա մեթոդաբանական բացթողումներն ու թերությունները: Աշխատանքի այս մասում, որպես հենակետ ունենալով մինչ այժմ կատարված հետազոտությունը, կփորձենք նախանշել այն ուղիները, ճանապարհները, որոնցով շարժվելու դեպքում հնարավոր կդառնա այդ բացթողումների ու թերությունների հաղթահարումը:

Գիտակցելով հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ իրավունքի մի շարք տեսաբաններ առաջ են քաշում օրինականության տեսական և գործնական հիմնախնդիրների հետազոտման հրատապ, արդիական ուղղությունները:

Այսպես՝ Վ.Վ. Լազարևը և Ս.Վ. Լիպենը, փաստելով, որ օրինականության հիմնախնդիրների գիտական որակումներն ու իմաստավորումները շարունակվում են, և այդ ընթացքում առաջարկվում են նոր մոտեցումներ օրինականության հասկացության բնորոշման հարցում, օրինականության տեսության հետագա զարգացումը տեսնում են երկու կարևոր պահերում՝ ուղեմիջերում. «առաջին՝ անհրաժեշտ է քննարկվող կառույցը համաձայնեցնել իրավական պետության տեսության հետ, հնարավոր է օրինականության հասկացության և սկզբունքների ճշգրտում՝ ավելի համամիասնական (զլոբալ) հայեցակարգերի ճանաչման հետ կապված: Այստեղ կան բազմաթիվ պրոբլեմներ, որոնք պետք է լուծվեն, երկրորդ՝ օրինականության տեսության շրջանակներում հետագա հետազոտությունների համար հիմք պետք է հանդիսանա ոչ միայն իրավունքի համապարտադիրության պահանջը՝ որպես գերակա, ինքնիշխան պետական իշխանության պատվիրան, այլև իրավունքի գործողության իրական գործընթացի հետազոտումը: Այստեղ նպատակահարմար է օգտագործել տարբեր տեսակի սոցիոլոգիական և հոգեբանա-



կան-իրավաբանական հայեցակարգերի, իրավունքի սոցիոլոգիայի նվաճումները»:<sup>1</sup>

Ս.Ա. Կոմարովն իրավական պետության ձևավորման, հասարակության իրավագիտակցության վերակառուցման արդի պայմաններում օրինականության տեսության մշակման հիմնական միտումներ է ճանաչում հետևյալ ուղղությունները՝

1) հստակ սահմանազատել օրինականությունը որպես ռեժիմ և նրա իրացման ձևերը (որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ, որպես սոցիալական սուբյեկտների գործունեության սկզբունք),

2) օրինականության հետազոտումն այլ սոցիալ-քաղաքական երևույթների (իրավաստեղծագործություն, ժողովրդավարություն, իրավագիտակցություն) հետ կապերում,

3) օրինականության վերլուծությունն իրավական կարգավորման կառուցակարգում, այն դրան մոտ կանգնած այլ պետաիրավական երևույթներից հստակ տարանջատելու համար:<sup>2</sup>

Օրինականության տեսության հիմնախնդիրների հետագա հետազոտության ուղղությունների առանձնացման՝ վերը բերված երկու մոտեցումներն էլ ունեն ռացիոնալ հատիկներ: Ակնհայտ է, որ օրինականության տեսության հիմնախնդիրները պետք է վերաիմաստավորվեն իրավական պետության և, իհարկե, իրավական օրենքի տեսությունների շրջանակներում կամ համատեքստում: Դա շատ կարևոր պահ է օրինականության տեսության կառուցման համար, քանի որ ինչպես տեսանք, ձևական պոզիտիվանորմատիվային մոտեցումն օրինականության նկատմամբ շատ աղքատիկ մոտեցում է: Օրինականության տեսությունն իրավականության, իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի շրջանակների մեջ դնելու

<sup>1</sup> Տե՛ս *Лазарев В.В., Липень С.В.* Теория государства и права. 3-е изд., испр. и доп, М., Спарк, 2004, էջ 445:

<sup>2</sup> Տե՛ս *Комаров С.А.* Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 371:

անհրաժեշտությունը բխում է նաև մեր կողմից մինչ այժմ հետազոտված նյութի ուսումնասիրությունից և արդյունքներից:

Օրինականության տեսության զարգացման երկրորդ ուղղությունը, ըստ Վ.Վ. Լազարևի և Ս.Վ. Լիպենի, հիմնախնդիրն իրավունքի սոցիոլոգիայի և իրավական հոգեբանության նվաճումների լույսի ներքո դիտարկելն է, «իրավունքի իրական գործողության գործընթացի» շրջանակներում այն հետազոտելը: Կարծում ենք, որ սա սկզբունքորեն ճիշտ մոտեցում է, սակայն ուղղության մատնանշումն արված է շատ ընդհանուր և վերացական:

Ակնհայտ է, որ արդի իրավագիտությունը շատ աղքատիկ կլինի առանց սոցիոլոգիայի և հոգեբանության, և հետևաբար իրավասոցիոլոգիական մոտեցումները գրեթե պարտադիր են ցանկացած հետազոտության համար: Սակայն միայն դա չի կարող լուծել օրինականության տեսության հիմնախնդիրները, որոնք, ինչպես տեսանք արդեն քննարկված նյութից, բազմաթիվ են: Ուրեմն, անհրաժեշտ է փնտրել հիմնախնդրի լուծման նոր մոտեցումներ, մեթոդաբանական ուղիներ, որոնք հնարավորություն կտան իրականացնելու օրինականության տեսության հիմնախնդիրների հստակ և տրամաբանական լուծումներ:

Ս.Ա. Կոմարովի նախանշած ուղղությունները ևս բավականին հետաքրքիր են: Ակնհայտ է, որ առկա է հիմնախնդիր այն դեպքում, երբ օրինականությունը դիտարկվում է որպես ռեժիմ: Ըստ էության, մնում է անհասկանալի, թե ինչո՞ւ է այդ ռեժիմը մի դեպքում վերածվում մեթոդի, մեկ այլ դեպքում՝ սկզբունքի և այլն: Իրապես առկա է օրինականության՝ որպես ռեժիմի և դրա իրացման ձևերի հստակ տարանջատման, սահմանազատման և մոդիֆիկացիայի տեսական հիմնավորման անհրաժեշտություն: Այսինքն՝ Ս.Ա. Կոմարովը բարձրացնում է հիմնախնդիրը, սակայն չի նշում դրա լուծման ուղիները և մոտեցումները, իսկ որ հիմնախնդիրն առկա է, անվիճելի է: Նշանակում է՝ անհրաժեշտ է գտնել այնպիսի մեթոդաբանական լուծում, որ բարձրացված հիմնախնդիրը մեկ միասնական հայեցա-

կարգի շրջանակներում ստանա հետևողական, տրամաբանական և անհակասական լուծում:

Ինքը՝ Ս.Ա. Կոմարովը, չի համաձայնվում այն պնդման հետ, որ սկզբում ծագում է օրինականության սկզբունքը (գաղափարը), այնուհետև՝ օրինականության կացությունը (ռեժիմը), որը շահագործվում է պետության կողմից՝ որպես նրա առջև կանգնած խնդիրների լուծման մեթոդ, կամ այլ ժամանակային հերթականություն՝ սկզբում ծագում է օրինականության ռեժիմը, իսկ այնուհետև՝ ավելի ուշ ձևավորվում է օրինականության սկզբունքը: Ելնելով ասվածից՝ լրիվ սխալ է օրինականությունը հանգեցնել միայն մեթոդի կամ սկզբունքի, գտնելով, որ այն պետք է բնորոշել որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ՝ հիմնված հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջումըների հետազոտման վրա: Օրինականությունը՝ որպես պետությունից և նրա մարմիններից ելնող պահանջ, արտահայտված է կազմակերպական և դաստիարակչական գործունեության մեջ, և հանդես է գալիս որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ:<sup>1</sup>

Օրինականությունն այլ սոցիալ-քաղաքական երևույթների հետ կապերում (իրավաստեղծագործություն, ժողովրդավարություն, իրավագիտակցություն) հետազոտելը ևս բավականին հետաքրքիր ուղղություն է: Սակայն ասել, որ այդ ուղղությամբ հետազոտություններ չկան, չի կարելի, քանի որ դեռևս խորհրդային իրավագիտությունը և իրավունքի տեսությունը փաստել են այդ կապերը և որոշակիորեն տեսական իմաստավորում են տվել դրանց: Օրինակ՝ Վ.Վ. Բորիսովը գտնում է, որ օրինականությունը պետական, դասակարգային, քաղաքական, իրավական, ժողովրդավարական, էթիկաբարոյական երևույթ և կատեգորիա է, որը միաժամանակ և՛ հասարակության պետական ղեկավարման մեթոդ է, և՛ սահմանադր-

<sup>1</sup> Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 370:

րական սկզբունք, և՛ ժողովրդավարության բաղադրատարր:<sup>1</sup> Հիմնախնդիրը ոչ թե օրինականության և թվարկված երևույթների կապերի անտեսումն է կամ մերժումն օրինականության տեսության կողմից, այլ այդ կապերն ամբողջական հայեցակարգի մեջ միավորելը և հիմնավորելը: Այս դեպքում ևս Ս.Ա. Կոմարովի կողմից շեշտադրվում է առկա պրոբլեմը, բայց ոչ դրա լուծման ուղիները:

Օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման թվարկված ուղղություններում առավել հետաքրքրական է օրինականությունն իրավական կարգավորման կառուցակարգում վերլուծելու անհրաժեշտության նախանշումը: Ահա այս ուղղության հետ լիովին համաձայն ենք և կարծում ենք, որ այն օրինականության հիմնախնդիրների լուծման առավել արդյունավետ ուղին է, ուստի կարելի է որդեգրել:

Այսպիսով՝ օրինականության տեսությունն ունի բարդ և բազմակողմանի բնույթ: Արդյունքում դրա մեջ կան բազմաթիվ վիճելի և չլուծված հիմնահարցեր, որոնք սպասում են իրենց տեսական

<sup>1</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 318-347: Մեկ այլ հեղինակ՝ Ա.Ս. Շաբուրովը, օրինականությունը դիտարկելով բավականին լայն դիրքերից, այն համարում է համալիր քաղաքական-իրավական երևույթ, որն արտացոլում է հասարակական-քաղաքական կյանքի իրավական բնույթը, իրավունքի և իշխանության, իրավունքի և պետության օրգանական կապը: Այդպիսի մոտեցման հիման վրա վերը նշված տեսաբանն օրինականության բովանդակության մեջ առանձնացնում է «իրավականի, իրավաբանականի, պետաքաղաքականի դիալեկտիկայի մի շարք ինքնուրույն պահեր», մասնավորապես՝ օրինականությունն անբաժանելի է իրավունքի համապարտադիրությունից, օրինականությունը գաղափար, իրավագիտակցության մեջ արտացոլված իդեա է, օրինականությունը հասարակության պետական ղեկավարման մեթոդ է, օրինականությունը պետության գործունեության սկզբունք է, օրինականությունը հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ է (տե՛ս **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 437; **Байтин М.И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001, էջ 246; **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 713):

մշակմանը, լուծմանը: Այդ հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ են նոր մեթոդաբանական մոտեցումներ, որոնք թույլ կտան նոր մակարդակի վրա բարձրացնել օրինականության տեսությունը՝ այն դարձնելով առավել ամբողջական ու հետևողական, արդի իրողություններին համահունչ:

Անվերապահորեն կարելի է համաձայնվել Ա.Բ. Լիսյուտկինի այն դիրքորոշման հետ, որ «արդի իրողությունները պահանջում են որոշել օրինականության աշխարհայացքային-մեթոդաբանական հիմքերը: Իմացաբանական պլանով դա արտահայտվում է նրանում, որ եղած տեսաէմպիրիկ նյութը պետք է օգտագործել որպես «գիտական հենակետ (պլացդարմ)» ընդհանրացման ավելի բարձր մակարդակի վրա դուրս գալու համար. հետազոտության առարկա պետք է դառնան ոչ միայն ներքին առումները, այլև արտաքին՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական-իրավաբանական, պատմական, տրամաբանական-սեմանտիկ կողմերը: Այլ խոսքով, պահանջվում է համալիր մոտեցում, որը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես մաքուր տեսական, այնպես էլ նրա բովանդակության վրա ազդող պրակտիկ գործոնները, պահպանել հաջորդայնությունը, նպաստել տեսության ու պրակտիկայի, ինչպես նաև առանձին կատեգորիաների միջև հակասությունների հաղթահարմանը, պայմաններ ստեղծել և՛ գիտական մտքի, և՛ ամբողջ հասարակության զարգացման համար»:<sup>1</sup>

Այդ մեթոդաբանական մոտեցումների, սկզբունքների շրջանակի որոշման համար հիմք պետք է ծառայի մինչ այժմ կատարված հետազոտությունը՝ ի դեմս սույն աշխատանքի առաջին գլխի: Այդ գլխի գլխավոր եզրակացությունները նախորոշում են օրինականության տեսության հիմնախնդիրների հետազոտման մեթոդաբանական մոտեցումները և ուղղությունները:

<sup>1</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристь, 1999, էջ 512:

Առաջին, օրինականության տեսության հիմնահարցերի լուծման համար անպայմանորեն անհրաժեշտ է բովանդակային՝ մասնավորապես իրավաբանական մոտեցում կամ մեթոդ: Իրավաբանական մեթոդին հատուկ է իրավական աշխարհայացքը:<sup>1</sup> Այդ աշխարհայացքի գլխավոր պահերից մեկն իրավունքի և օրենքի տարանջատման հիմքով կառուցված իրավագիտությունն է, որում իրավունքի գաղափարը ներթափանցում է բոլոր իրավական հասկացությունների մեջ՝ հանդես գալով հասկացողական ապարատի, բուրգի գագաթ: Նման պայմաններում ինչպես իրավունքի ողջ տեսությունը, այնպես էլ օրինականության տեսությունն իրենից ներկայացնում են իրավունքի ելակետային հասկացության կոնկրետացումներ:<sup>2</sup>

Երկրորդ, օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման տեսականորեն արդյունավետ ուղիներից մեկն էլ համակարգային մեթոդի հետևողական ու լրիվ կիրառումն է ինչպես օրինականության որպես երևույթի ներքին, այնպես էլ արտաքին կողմերի, կապերի օրինաչափությունների բացահայտման համար:

Երրորդ, համակարգային վերլուծության մեթոդի և բազմակողմանի-համալիր հետազոտման սկզբունքի համակցված կիրառման արդյունքում օրինականությունը պետք է դիտարկվի իրավունքի հատկանիշների դրսևորման կազմակերպագործառնության սկզբունք և քննարկվի իրավական կարգավորման կառուցակարգի համակարգային կապերում: Այս մոտեցումը հնարավորություն կտա վեր հանելու իրավական օրինականության՝ որպես համակարգի

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ **Нерсесянц В.С.** Юриспруденция. введение в курс общей теории права и государ-ства. М., 1998:

<sup>2</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Гойман В.И.** Действие права (методологический анализ). М., 1992; **Жеребкин В.Е.** Логический анализ понятий права. Киев, 1976; **Нерсесянц В.С.** Юриспруденция. введение в курс общей теории права и государства. М., 1998; **Васильев А.М.** Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М., 1976):

գործողության կառուցակարգն ավելի խոշոր համակարգում, այն է՝ իրավական կարգավորման կառուցակարգում:

Չորրորդ, գործառնության և կառուցվածքային մեթոդների կիրառմամբ օրինականությունը պետք է դիտարկվի որպես դիմամիկ համակարգ իրեն բնորոշ կառուցվածքային բաղադրատարրերով, որոնք գոյություն ունեն և գործում են իրավական օրինականության ամբողջական համակարգում:

### **§ 3. Համակարգային մոտեցումը որպես օրինականության հիմնախնդիրների լուծման մեթոդաբանական հիմք**

Համակարգային մոտեցումն արդի գիտության, ներառյալ իրավագիտության, ամենից ընդհանրացված մեթոդն է:<sup>1</sup> Այդպիսի սկզբունքային մոտեցումն արդարացված է ոչ միայն արդի գիտության նվաճումներով, այլև մեր կողմից օրինականության հիմնախնդիրների մինչ այժմ կատարված հետազոտության արդյունքներով, հատկապես, որ օրինականության մի շարք հայեցակարգեր օրինականությունը դիտարկում են համակարգ կամ օրինականության հիմնախնդիրները լուծում են համակարգային մոտեցման հիման վրա: Սակայն, ինչպես արդեն հիմնավորեցինք, օրինականության հիմնախնդիրների նկատմամբ համակարգային մոտեցումները հիմնականում թերի են: Որպեսզի կարողանանք հաղթահարել այդ թերությունները և ստանալ օրինականության հիմնախնդիրների օպտիմալ լուծումներ, անհրաժեշտ է դրանց նկատմամբ կիրառել համակարգային մոտեցում: Այդ անհրաժեշտության իրագործման համար պետք է դիմենք ավելի ընդհանրացված գիտական ոլորտի մեթոդաբանական օգնությանը: Այդպիսին է համարվում համակարգավերլուծությունը: Վերջինին արդի հետազոտական գիտության մեջ

<sup>1</sup> Փիլիսոփայական պլանով համակարգային մոտեցումը դիալեկտիկայի հիմնական սկզբունքների կոնկրետացումն է (այդ մասին մանրամասն տե՛ս **Պտյուշենկո Ա.Վ.** Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004, էջ 24-25):

համարում են գիտության մետահամակարգ, գիտության փիլիսոփայատրամաբանական բազիս:

Մինչև օրինականությունը համակարգային վերլուծության ենթարկելը, փորձենք անդրադառնալ համակարգավերլուծության՝ որպես գիտական ոլորտի հիմունքներին,<sup>1</sup> մասնավորապես «համակարգ» հասկացությանը, համակարգային մոտեցմանը՝ որպես մեթոդ, համակարգային վերլուծության հիմնական սկզբունքին: Այդ անդրադարձն անհրաժեշտ է, որպեսզի նախ խուսափենք այլ հեղինակների կողմից թույլ տրված սխալներից ու մեթոդաբանական բացթողումներից, իսկ այնուհետև այդ հիմունքները տեղայնացնենք օրինականության նկատմամբ:

«Համակարգավերլուծությունը (երբեմն անվանում են նաև համակարգային վերլուծություն կամ բարդ համակարգերի վերլուծություն) միանշանակ քանակական գնահատականի չենթարկվող գործոնների առկայությամբ պայմանավորված անորոշության պայմաններում բարդ տնտեսաքաղաքական, սոցիալական, ռազմական, գիտատեխնիկական, էկոլոգիական և իրավական հիմնախնդիրներով լուծումների հիմնավորման մեթոդաբանական սկզբունքները, հայեցակարգերը, գործնական մեթոդները հետազոտող գիտության ոլորտ է: Համակարգավերլուծության անցկացման գործընթացում ձևավորվում են լուծումների տարբերակներ, որոնց հիման վրա կարելի է որոշակի, նախապես հաստատված չափանիշներով իրականացնել օպտիմալ լուծման վերջնական տարբերակի ընտրություն»:<sup>2</sup>

<sup>1</sup> Համակարգային վերլուծության մասին ավելի մանրամասն տե՛ս Системные исследования (ежегодник). НАУКА. М., 1978; **Р. Джонсон, Ф. Каст, Д. Розенцвейр** Системы и руководство. Сос. радио. М., 1971; **Պտյուշենկո Ա.Վ.** Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004; Философский словарь. Под ред. И.Т. Фролова. – 5-ое изд., М., Политиздат, 1987, էջ 428-429:

<sup>2</sup> Տե՛ս **Պտյուշենկո Ա.Վ.** Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004, էջ 18:

Համակարգերի տեսության մեջ համակարգի բնորոշումները բազմաթիվ են: Այդ բնորոշումների մեջ ընդհանուրն այն է, որ համակարգը համարվում է բազմազանություն, որի բաղադրատարրերի մեջ առկա են կապեր: Ա.Վ. Պտուշենկոն համակարգը բնորոշում է հետևյալ կերպ. «այն ընդհանուր նպատակին հասնելու համար ուղղակի և հակադարձ կապերով ամբողջական կառուցվածքում միավորված բաղադրատարրերի համակցություն է»:<sup>1</sup> Ըստ փիլիսոփայական բառարանի՝ համակարգը միմյանց միջև հարաբերությունների և կապերի մեջ գտնվող և որոշակի ամբողջություն ու միասնություն կազմող բաղադրատարրերի համակցություն է: Համակարգ հասկացությունը սերտորեն կապված է ամբողջություն, բաղադրատարր, ենթահամակարգ, կապեր, հարաբերություններ, կառուցվածք և այլ հասկացությունների հետ: Համակարգին բնորոշ է ոչ միայն որոշակի կազմակերպվածությունը, այլև անխզելի միասնությունը միջավայրի հետ, որի հետ փոխհարաբերություններում համակարգը դրսևորում է իր ամբողջությունը:<sup>2</sup>

Համակարգը բաղադրատարրերի ամբողջություն է: Բաղադրատարրերը համակարգի ներքին ենթահամակարգերն են: Սակայն համակարգն իր հերթին բաղադրատարր է մեկ այլ համակարգում՝ մետահամակարգում: «Դեկոմպոզիցիան, այսինքն՝ համակարգի տրոհումը ենթահամակարգերի, հիմնվում է այն խնդիրների էության հասկացման վրա, որոնց լուծման համար կոչված է տվյալ համակարգը... Համակարգի հատկությունները հավասար չեն նրա բաղադրատարրերի հատկությունների գումարին... ենթահամակարգի նպատակները չեն կարող հակասել համակարգի նպատակներին... ցանկացած համակարգ մի կողմից բնութագրվում է արդյունավետությամբ, իսկ մյուս կողմից՝ խնայողականությամբ»:<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22:

<sup>2</sup> Տե՛ս *Философский словарь*. Под ред. И.Т. Фролова. 5-ое изд., М., Политиздат, 1987, էջ 428:

<sup>3</sup> Տե՛ս *Птушенко А.В.* Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004, էջ 26:

Համակարգի այս բնորոշումից և կառուցվածքային դրսևորումից բխում է, որ օրինականությունը՝ որպես վերացական (այսինքն՝ ոչ առարկայական, նյութական) համակարգ,<sup>1</sup> գոյություն ունի ավելի լայն կամ մետահամակարգերում՝ որպես դրանց բաղադրատարր կամ ենթահամակարգ: Իր հերթին ինքը որպես համակարգ բաղկացած է ընդհանուր նպատակների համար միավորված ուղղակի և հակադարձ կապերի մեջ գտնվող բաղադրատարրերից:

Համակարգային վերլուծության՝ որպես գիտության ոլորտի հիմնական մեթոդը համակարգային մոտեցումն է: «Համակարգային մոտեցումը համագիտական մեթոդաբանական սկզբունք է, որը հիմնված է հետազոտվող օբյեկտը որպես համակարգ պատկերացնելու վրա: Այդ մոտեցումը կողմնորոշված է օբյեկտի ամբողջականության բացահայտմանը, նրա ներքին և արտաքին կապերի հաշվառմանը, որոնվող որոշման վրա ազդող բոլոր գործոնների համալիր հաշվառմանը»:<sup>2</sup> Համակարգային մոտեցումը նպաստում է հիմնախնդիրների պատշաճ ձևակերպմանը և խնդրի ճիշտ որոշմանը, ինչպես նաև դրանց լուծման արդյունավետ մեթոդի մշակմանը: Համակարգային մեթոդը և վերլուծությունը շատ արդյունավետ են որոշումներ ընդունելիս, երբ այլընտրանքը պահանջում է բարդ, բազմազան, տարաբնույթ տեղեկության, երևույթի վերլուծություն:

Այսպիսով՝ որպեսզի կարողանանք հասկանալ օրինականության՝ որպես հետազոտության օբյեկտի էությունը, անհրաժեշտ է դիմել համակարգային վերլուծության օգնությանը: Համակարգային վերլուծությունը պահանջում է՝

<sup>1</sup> Համակարգերը ենթարկվում են որոշակի դասակարգման (տե՛ս *Философский словарь*. Под ред. И.Т. Фролова. 5-ое изд., М., Политиздат, 1987, էջ 428-429): Եթե օրինականությունը դիտարկում ենք համակարգ, ապա այն նպատակամղված (այսինքն՝ որոշակի նպատակին հասնելուն ենթարկված), վերացական-իդեալական (այսինքն՝ մարդկային մտածողության արդյունք համարվող) համակարգ է:

<sup>2</sup> Տե՛ս *Птушенко А.В.* Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004, էջ 24; *Философский словарь*. Под ред. И.Т. Фролова. 5-ое изд., М., Политиздат, 1987, էջ 429:

- 1) օրինականությունը դիտարկել համակարգ,
- 2) պարզել, թե այն որպես համակարգ ի՞նչ բաղադրատարրերից (ենթահամակարգերից) է կազմված,
- 3) օրինականությունը որպես համակարգ ո՞ր համակարգերի շարքին է դասվում մեկ հարթության վրա,
- 4) օրինականությունը ո՞ր մետահամակարգի ենթահամակարգն է (բաղադրատարրը):

Նման համակարգային վերլուծությունը հնարավորություն կտա նորովի և համալիր մոտեցում դրսևորել օրինականության հիմնախնդիրների լուծմանը և մշակել ներքնապես անհակասական օրինականության համակարգային հայեցակարգ (նաև հասկացության բնորոշում), որն անհրաժեշտ է արդի քաղաքացիական և իրավական հասարակության մեջ նրա տեղի և դերի ամենից ընդհանուր և ամենից կարևոր հարցերի լուծման համար:

**§ 4. Օրինականության տեղն ու դերն իրավական երևույթների և իրավագիտական հասկացությունների համակարգում**

Մինչ օրինականությունն իրավական մետահամակարգերի բաղադրատարր դիտարկելը և դրանց ուղղակի ու հետադարձ կապերի պարզաբանումը, անհրաժեշտ է ճշգրտել այդ հասկացության վերաբերյալ մեր տեսական ընդհանուր պատկերացումը: Օրինականության հասկացությունը՝ որպես օրինականության երևույթի, իրավական իրողության արտացոլում, ի վերջո, մեկնակետ է այդ տեսության հիմնախնդիրները լուծելու համար: Առանց այդ մեկնակետի անհնարին է ճիշտ հիմքերի վրա դրված հետագա տեսական հետազոտությունը: Խոսքը, իհարկե, օրինականության հասկացության վերջնական բնորոշման մասին չէ, այլ օրինականության վերաբերյալ ընդհանուր պատկերացման, որը կարող է հիմք հանդիսանալ օրինականության տեսության հիմնահարցերի լուծման համար և նախադրյալ լինել օրինականությունն իրավունքի համակարգային դրսևորումներում քննարկելու համար: Յետևաբար, աշխատանքի այս մասում հետազոտական խնդիրներն են՝

ա) մշակել օրինականության հասկացության վերաբերյալ ընդհանուր պատկերացումը՝ օրինականությունը դիտարկելով և քննարկելով իրավական հիմնական երևույթների և հասկացությունների համակարգում,

բ) կառուցել իրավական հասկացությունների աստիճանակարգային համակարգը և որոշել օրինականության տեղը դրանում,

գ) մշակել օրինականության հատկանիշները՝ որպես օրինականության գիտական հասկացության բնորոշման նախադրյալներ:

Ինչպես տեսանք սույն աշխատանքի առաջին գլխում, օրինականության հանընդհանուր ճանաչում գտած հասկացողություն գոյություն չունի: Այն տեսականորեն դիտարկվում է և՛ որպես գաղափար (իդեա), պարտքի կատեգորիա, այսինքն՝ գիտակցության բարոյաիրավական որակ, և՛ որպես իրավունքի համապարտադիրության պահանջ, դրա դրսևորում, և՛ որպես սկզբունք, և՛ որպես հասարակության պետական կառավարման (ղեկավարման) մեթոդ, և՛ որպես հասարակական կյանքի ռեժիմ կամ քաղաքական իրավական ռեժիմ, և՛ որպես համալիր քաղաքական իրավական երևույթ և այլն:<sup>1</sup>

Այս մոտեցումներից տեսական առումով ոչ բոլորն են ընդունելի և ճշմարիտ: Որպեսզի կարողանանք մշակել օրինականության ընդունելի և հիմնավորված հասկացությունը, փաստենք, որ դրանցից օրինականությունը որպես հասարակության պետական կառավարման մեթոդ, օրինականությունը որպես իրավունքի ոգի, գաղափար կամ պարտքի կատեգորիա դիտարկող մոտեցումները միանշանակորեն անընդունելի են, որովհետև դրանք նախ՝ նեղացնում են օրինականության բովանդակությունը, կառուցված չեն իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի վրա և, հետևաբար, ըստ էության առաջնայնությունը տալիս են պետությանը, քաղաքականությանը՝ զրկելով օրինականությունն երևույթին իրավական որակներից: Օրինականությունը նախ և առաջ իրավական երևույթ է և իրավաբանական հասկացություն: «Օրինականության իրավաբանական կողմի վերլուծությունն ունի սկզբունքային նշանակութ-

<sup>1</sup> Տե՛ս սույն աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆը:

յուն, քանի որ կա իրավունքը՝ որպես հիմնադիր կազմավորում. հենց իրավաբանական կողմն է օրինականությանը հաղորդում ձևային պարտադիրություն, բարձրացնում իրավական կատեգորիայի աստիճանի»:<sup>1</sup>

Անընդունելի են նաև օրինականությունը հասարակական կյանքի ռեժիմ, ժողովրդավարության բաղադրատարր դիտարկող մոտեցումները, որովհետև այն նախևառաջ իրավական երևույթ է, իսկ նրա արտացոլումն իրավական հասկացություն է: Իհարկե, օրինականության և ժողովրդավարության միջև առկա են փոխկապվածություն և կապեր, բայց դիտարկել օրինականությունը որպես ժողովրդավարության բաղադրատարր, ինքնին ճիշտ չէ, որովհետև այն նախ և առաջ իրավական հասկացություն է՝ իրավունքի գոյությամբ և գործողությամբ պայմանավորված որակ: Ինչ վերաբերում է օրինականությունը որպես ռեժիմ դիտարկող մոտեցումներին, ապա դրանք ևս չեն տեղավորվում իրավական կատեգորիաների և հասկացությունների համակարգում, վերջինին բնորոշ աստիճանակարգության մեջ: Այդ պատկերացման արդյունքում ստեղծվել է նոր իրավաբանական հասկացություն՝ «օրինականության ռեժիմ», որը խախտում է իրավական հասկացությունների համակարգային շղթան:

Այսպիսով՝ օրինականության՝ վերը բերված բոլոր հնարավոր հասկացություններից ամենառացիոնալն այն մոտեցումն է, որն օրինականությունը դիտարկում է որպես իրավունքի կամ իրավական նորմերի կարգադրագրերի համապարտադիրությունից բխող պահանջ՝ ներկայացված հասարակական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին՝ խստորեն և անշեղ կատարելու այդ կարգադրագրերը:<sup>2</sup> Իհարկե, այս մոտեցումն իրավաբանական իրավահասկացության դիրքերից թերի է, բայց այն ընդունելի է օրինականության

<sup>1</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 342:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 439; **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 438:

տեսության հիմնահարցերին անդրադարձ կատարած հեղինակների մեծամասնության կողմից:

Այս մոտեցման ռացիոնալությունն է հաստատում նաև իրավական հիմնարար կատեգորիաների և հասկացությունների աստիճանակարգային համակարգը:<sup>1</sup> Դրանցից առաջին տեղում են կանգնած «իրավունք» և «իրավական համակարգ», ներառյալ «իրավունքի համակարգ» հասկացությունները, «իրավունքի հատկանիշներ» հասկացությունը, այնուհետև «իրավունքի սկզբունք», «իրավունքի գործառույթ» հասկացությունները, «իրավական կարգավորման համակարգ կամ կառուցակարգ» հասկացությունները: Այսպիսով՝ իրավական հասկացությունների աստիճանական այս համակարգում տեղավորվում է միայն օրինականության՝ որպես իրավունքի համընդհանուր և համատարած սկզբունքի հասկացությունը: Օրինականություն հասկացության մնացած իմաստներից մի մասը չի տեղավորվում այդ շարքում, իսկ մյուսներն ընդհանրապես իրավական բովանդակություն և բնույթ չունեն: Այսպես՝ խորհրդային իրավունքի տեսաբան, օրինականության և իրավակարգի տեսական հիմնախնդիրների հետազոտողներից Վ.Վ Բորիսովը, ընդունելով օրինականության բարդ բնույթը և դրսևորման մի շարք կողմերը, գտնում է, որ օրինականությունը չի կարելի հանգեցնել ինչ-որ մեկ բնութագրական գծի, մեկ հատկության:<sup>2</sup> Հետևաբար նա օրինականությունը բնութագրում է հետևյալ տեսանկյուններից՝

<sup>1</sup> Իրավագիտության հասկացությունների ապարատը կառուցված է աստիճանակարգության վրա: Իրավունքի գաղափարը ներթափանցում է բոլոր իրավական հասկացությունների մեջ՝ հանդես գալով որպես հասկացողական «բուրգի» գագաթ: Իրավունքի ողջ տեսությունը, ըստ էության, իրավունքի էլակետային հասկացության կոնկրետացումն է մասնավոր-իրավական հասկացությունների ձևական-տրամաբանական համակարգի միջոցով (տե՛ս, օրինակ՝ **Гойман В.И.** Действие права (методологический анализ). М., 1992; **Жеребкин В.Е.** Логический анализ понятий права. Киев, 1976; **Нерсесянц В.С.** Юриспруденция. введение в курс общей теории права и государства. М., 1998; **Васильев А.М.** Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М., 1976):

<sup>2</sup> Տե՛ս **Борисов В.В.** Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, 1977, էջ 318-328:

- 1) օրինականությունը պետական երևույթ է,
- 2) օրինականությունը դասակարգային երևույթ է,
- 3) օրինականությունը քաղաքական երևույթ է,
- 4) օրինականությունն իրավական երևույթ է,
- 5) օրինականությունը ժողովրդավարության բաղադրատարր է,
- 6) օրինականությունն էթիկաբարոյական կատեգորիա է:<sup>1</sup>

Չետաքրքիր է, որ Վ.Վ. Բորիսովի մոտ «օրինականությունը որպես իրավական երևույթ» հատկությունը դրված է չորրորդ տեղում և մեկնաբանված է շատ ընդհանուր, այն է՝ «խորհրդային հասարակության իրավական վերնաշենքում առկա են բազմազան բաղադրատարրեր՝ իրավական իդեաներ, հիմնարկներ, ինստիտուտներ և այլն: Իրավական ինստիտուտներից մեկն էլ սոցիալիստական օրինականությունն է: Այն օժտված է իրավական երևույթներին բնորոշ բոլոր հատկանիշներով»: Ըստ էության, Վ.Վ. Բորիսովի մոտեցումը հակասական է, որովհետև նա օրինականությունը դիտարկում է նաև որպես իրավական ինստիտուտ: Մեկ երևույթին այդքան քանակով որակներ վերագրելն առանց դրանք մեթոդաբանական հստակ կապերի մեջ դնելու, կարծում ենք ճիշտ չէ: Բացի այդ, թվարկված որակները նույն հաջողությամբ կարող են վերագրվել նաև իրավունքին: Վ.Վ. Բորիսովի մոտ առկա է իրավունքի դրսևորման կողմերի և օրինականության հատկությունների շփոթ:

Իրավունքի տեսաբաններից ոմանք օրինականությունը դիտարկում են որպես համալիր սոցիալ-իրավական երևույթ (սկզբունք, մեթոդ, ռեժիմ), որն արտացոլում է հասարակության իրավական հիմքերով կազմակերպումն ու գործառնութավորումը, կոնկրետ պետության մեջ անհատի, իշխանության, իրավունքի և օրենքի ներդաշնակ կապը: Օրինականության վերաբերյալ նման պատկերացումները մենք քննարկել ենք նաև մինչ այժմ: Ինչպես քննարկվածները, այնպես էլ Օ.Ֆ. Սկակունի մոտեցումը հակասական են: Վերջինս, օրինականությունը համարելով բազմակողմանի

երևույթ, գտնում է, որ այն «կարող է հանդես գալ որպես սկզբունք, մեթոդ, ռեժիմ: Ամեն ինչ կախված է տեսանկյունից: Օրինականությունը՝ որպես մեթոդ, և օրինականությունը՝ որպես սկզբունք, կազմում են օրինականությունը՝ որպես ռեժիմ»<sup>1</sup>:

Համաձայնվելով այս տեսաբանի այն մոտեցման հետ, որ օրինականությունը բազմակողմ երևույթ է՝ մեզ համար անհասկանալի է մնում՝ առաջին, ինչու՞ է այն մի դեպքում «սկզբունք», մի դեպքում «մեթոդ», այնուհետև այդ երկուսը միասին ինչու՞ են վերածվում «օրինականության ռեժիմի», երկրորդ՝ «օրինականությունը որպես ռեժիմ» համալիր հասկացությունն ի՞նչ տեղ է գրավում իրավունքի որակական կողմերն ու հատկություններն արտացոլող հասկացությունների ապարատում: Չէ՞ որ այդ հասկացությունների համակարգում մենք չգտանք ո՛չ «մեթոդ» և ո՛չ էլ «ռեժիմ» հասկացություններ:

Այսպիսով՝ մենք կարող ենք փաստել, որ օրինականությունը նույնիսկ իրավական օրինականության դիրքերից դիտարկող հեղինակները, այնուամենայնիվ, չեն կարողանում մեթոդաբանական դիրքերից պարզ կերպով բացատրել օրինականության բազմակողմանիության պատճառները, այլ միայն փաստում են երևույթի դրսևորման առումները, նաև կապերը ոչ իրավական, սոցիալ-քաղաքական երևույթների հետ, օրինակ՝ ժողովրդավարության, իրավագիտակցության, իրավական մշակույթի և այլն: Օրինակ՝ նույն ինքը՝ Օ.Ֆ. Սկակունը, օրինականությունը որպես ռեժիմ համարում է ժողովրդավարության անպայման և անփոփոխ բաղադրատարր: Օրինականությունը, ըստ նրա, համարվում է ժողովրդավարության կայացման և զարգացման իրավական հիմք, իսկ ժողովրդավարությունը՝ օրինականության ամրապնդման հիմնական գործոն:<sup>2</sup> Այսպիսի մոտեցումը չունի մեթոդաբանական հետևողականություն

<sup>1</sup> Տե՛ս **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 714-715:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 716-717:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:



և հստակություն: Օրինականությունը, լինելով սկզբունք, վերածվում է մեթոդի, վերջին երկուսը կազմում են «օրինականության ռեժիմը», սա էլ իր հերթին ժողովրդավարության բաղադրատարրերից է:

Իրավունքի՝ որպես հասարակական օբյեկտիվ իրողության տեսական արտացոլման հիմնարար կատեգորիան իրավունքի հասկացողությունն է: Իրավահասկացության բոլոր հնարավոր տարբերակներից արդի իրողությունների տեսանկյունից ամենաընդունելի իրավաբանական կամ մետաֆիզիկական կամ բովանդակային կոչված իրավահասկացությունն է: Մեր հետազոտության առարկայի համար մեթոդաբանական նշանակություն ունի իրավաբանական կամ մետաֆիզիկական կամ բովանդակային մոտեցումն իրավունքին, որը հանգեցնելու է մեզ ոչ թե օրինականության նորմատիվային հասկացությանը, այլ նրա բովանդակային, իրավաբանական հասկացությանը, այսինքն՝ իրավական օրինականության:

Իրավունքը՝ որպես երևույթ, օժտված է որոշակի հատկանիշներով:<sup>1</sup> Հեղինակների նշանակալի մասն իրավունքի հատկանիշներ են համարում՝

- 1) նորմատիվականությունը,
- 2) համապարտադիրությունը,

<sup>1</sup> Իրավունքի տեսության մեջ ընդունված է տարբերել իրավունքի հատկանիշը և իրավունքի յուրահատկությունը: Հատկանիշները բնութագրում են իրավունքը որպես հասկացություն, յուրահատկությունները բնութագրում են իրավունքը որպես իրական երևույթ: Հատկանիշները և յուրահատկությունները գտնվում են համապատասխանության մեջ, այսինքն՝ յուրահատկություններն արտացոլվում են և արտահայտվում են իրավունքի հասկացության մեջ՝ որպես նրա հատկանիշներ: Փիլիսոփաները պնդում են, որ ամեն մի երևույթ իրականում օժտված է անթիվ բազմազանությամբ յուրահատկություններով: Այդ իսկ պատճառով հասկացության մեջ ներառվում են հատկանիշները, որոնք արտացոլում են ամենից էական յուրահատկությունները: Իհարկե, էական համարվող յուրահատկությունների շրջանակի որոշումը պայմանավորված է նաև կոնկրետ հետազոտողի դիրքորոշումներով և մեթոդաբանական մոտեցումներով (տես **Լեյստ Օ.Յ., Լեյստ Օ.Յ.** Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 225):

- 3) համակարգայնությունը,
- 4) կամասահմանվածությունը (կամ գիտակցական կամային բնույթը),
- 5) ձևային որոշակիությունը,
- 6) պետական երաշխավորվածությունը,
- 7) ազատության արդարացի և հավասար չափ լինելը:<sup>1</sup>

Գրականության մեջ կան նաև իրավունքին վերագրվող հատկանիշների շրջանակի վերաբերյալ այլ կարծիքներ, որոնցում համապարտադիրությունն ուղղակիորեն չի նշված որպես իրավունքի հատկանիշ: Օրինակ՝ Օ.Է. Լեյստն իրավունքի հատկանիշներ է համարում նորմատիվայնությունը, պետության կողմից պաշտոնապես սահմանվելը և պահպանվելը, համակարգայնությունը, ձևային որոշակիությունը, արդարադատությունը, հեղինակավորությունը:<sup>2</sup> Սակայն ուշադիր և բովանդակային հետազոտությունից երևում է, որ այս հեղինակը չի մերժում համապարտադիրությունը՝ որպես իրավունքին բնորոշ հատկություն, գիծ: Ընդհակառակը, իրավունքի համապարտադիրությունը նրան բնորոշ հատկանիշներից ամեն մեկում դրսևորվում է յուրօրինակ կերպով: Նույն Օ.Է. Լեյստն իր կողմից թվարկված զրեթե բոլոր հատկանիշների մեկնաբանման մեջ տեսնում է իրավունքի համապարտադիրության դրսևորում: Մասնավորապես նա, իրավունքին բնորոշ հատկանիշ համարելով հեղինակավորությունը, այն բնութագրում է հետևյալ կերպ. «իրավունքի

<sup>1</sup> Ст'я **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 276-278; **Լեյստ Օ.Յ., Լեյստ Օ.Յ.** Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 217-232; **Գոյման Վ.Ի.** Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристы, 2005, էջ 133-134; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 16:

<sup>2</sup> Ст'я **Օ.Յ. Լեյստ** Сущность права. Проблемы теории и философии права. М., ИКД “Зерцало М”, 2002, էջ 51-102:

հեղինակավորության տակ հասկացվում է նրա հանրաճանաչությունը և հասարակական գիտակցության մեջ արմատավորվածությունը, ընդհանուր ճանաչում գտած պարտադիրությունը, որը հենվում է վախի, անհրաժեշտության գիտակցության, սովորույթի, կրոնական զգացմունքների, կոնֆորմիզմի, մանակաման, նորմի հետ համաձայնության վրա»:<sup>1</sup>

Իրավունքի տեսաբանների զգալի զանգված իրավունքի համապարտադիրությունը կամ համապարտադիր նորմատիվայնությունը՝ որպես իրավունքին բնորոշ հատկություն, իրավունքի հատկանիշների շարքում ղնում են առաջին տեղում: Այդպիսիներից են, օրինակ՝ Ս.Ս. Ալեքսեևը, որը համապարտադիր նորմատիվայնությունը դիտարկում է որպես իրավունքի առաջատար հատկանիշ և մեկնաբանում է հետևյալ կերպ. «համապարտադիր նորմատիվայնությունը հանգում է նրան, որ իրավունքի նորմերն իրենց գործողությունը տարածում են երկրի ողջ տարածքի և բնակչության վրա... Իրավաբանական նորմերն ի սկզբանե նախատեսված են համընդհանուր գործողության համար, բոլորի համար պարտադիր գործողության համար... Հենց իր համապարտադիրության միջոցով է իրավունքը ընդունակ հասարակական կյանքում ներդնել միասնական, ընդ որում, ամուր, մշտական, կայուն հիմքեր»<sup>2</sup>: Այսպիսով՝ իրավունքի համապարտադիրությունը կամ համապարտադիր նորմատիվայնությունը նշանակում է, որ հասարակության բոլոր անդամները, իրավունքի բոլոր սուբյեկտները պետք է կատարեն կամ կատարում են իրավունքում և նրա նորմերում պարունակվող պահանջները: Իրավունքի էական հատկանիշի՝ իրավունքի համապարտադիրության մեկնաբանումը՝ որպես իրավական պահանջների և կարգադրագրերի պահպանման ու կատարման պարտադիրություն իրավունքի բոլոր սուբյեկտների (այդ թվում պետության և նրա մարմինների) համար, «չի ենթարկվել կասկածի ականավոր իրա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 91:

<sup>2</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Государство и право. М., ТК Велби, Издательство Проспект, 2006, էջ 43:

վաբանների կողմից ո՛չ անցյալում և ո՛չ էլ ներկայումս: Թեզիսը, համաձայն որի՝ իրավունքի նորմը վարքագծի բոլորի համար պարտադիր կանոն է, ունի համընդհանուր ճանաչում»:<sup>1</sup> Այլ կերպ ասած, իրավունքի այս հատկանիշն ընդունվում է բոլոր ժամանակներում, իրավական բոլոր հայեցակարգերի և իրավահասկացության բոլոր տիպերի հնարավոր վարկածների կողմից: Հետևաբար, այն՝ որպես իրավունքի որակական հատկություն, անվիճելի է, անօտարելի և էական: Համապարտադիրության՝ որպես իրավունքի հատկանիշի նման հասկացողությունն անվիճելի է դարձնում նաև իրավունքի համապարտադիր նորմատիվականության ու օրինականության կապի ու հարաբերակցության թեզիսը: Այդ թեզիսը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. արդի հասարակության մեջ իրավունքի համապարտադիրության դրսևորման իրավական ձևն օրինականությունն է: Հարց է ծագում, թե ինչու՞ և ինչպե՞ս է իրավունքի համապարտադիրությունը դրսևորվում օրինականություն կոչված իրավական ձևով:

Ակնհայտ և անվիճելի է, որ իրավունքի էությունը և կամ նորմերն արտահայտվում են օրենքներում, պետության կողմից ճանաչված այլ պաշտոնական աղբյուրներում, որոնց համակարգում օրենքն օժտված է գերակայությամբ և համարվում է իրավունքի առաջնային ձևն ու աղբյուրը:

ՀՀ օրենքներն ունեն գերակայություն ՀՀ պոզիտիվ իրավունքի այլ աղբյուրների, մյուս նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ: Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Իրավունքի աղբյուրների համակարգի այս սկզբունքը նշանակում է՝

<sup>1</sup> Տե՛ս *Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 17:*

ա) օրենքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ: Մնացած իրավական ակտերը պետք է բխեն օրենքներից, չհակասեն օրենքներին,

բ) բացի օրենսդիր մարմնից՝ խորհրդարանից, օրենքները չեն կարող ընդունվել, փոփոխվել, վերացվել այլ պետական մարմնի կողմից,

գ) այլ իրավական ակտերն ընդունվում են օրենքների հիման վրա և պետք է համապատասխանեն օրենքներին: ՀՀ Սահմանադրության այս դրույթը կոնկրետացված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում, համաձայն որի 2-րդ մասի՝ «օրենքները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, գործող օրենքներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին: Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:

Օրենքներն իրենցից ներկայացնում են պետության ողջ իրավական համակարգի միջուկը, նրանք պայմանավորում են նորմատիվ-իրավական ակտերի ամբողջական կառուցվածքը, նրանցից յուրաքանչյուրի իրավաբանական ուժը, նորմատիվ-իրավական ակտերի ենթակարգությունը միմյանց նկատմամբ:<sup>1</sup>

Արդի իրավունքը պոզիտիվ-օրենսդրական իրավունք է:<sup>2</sup> Իսկ դա նշանակում է, որ նրա նորմերն արտահայտվում են օրենքներում

<sup>1</sup> Տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ե.** Պետության և իրավունքի տեսություն: Երևան, 1997, էջ 290:

<sup>2</sup> Իրավունքի զարգացման պատմությունը դրա ձևերի տեսանկյունից բաժանվում է երկու փուլերի՝ սովորության իրավունքի դարաշրջան, ներառյալ գրի առնված իրավունք, և օրենսդրական իրավունքի դարաշրջան: Նոր իրավական ձևերի առաջացումը կապված էր գրի առաջացման հետ, սակայն դա իրավունքի պատմության նոր փուլ չէր, քանի որ այն մնում էր դեռևս սովորության իրավունք: Փուլի կամ դարաշրջանի փոփոխությունը կապված է ոչ թե գրի, այլ օրենքի՝ որպես իրավունքի աղբյուրի (ձևի) առաջ գալու հետ, երբ հասարակության մեջ հաստատվեց պետական իրավաստեղծագործության և «պետական իրավունքի» գերակշռող դիրքը: Օրենսդրական կարգավորումը դարձավ պետության քաղաքական մե-

և այլ պաշտոնապես ճանաչված աղբյուրներում: Իրավունքը, հատկապես պոզիտիվ, չունի վերացական կեցություն և գոյություն: Իրավական նորմերն ինչ-որ անորոշ մտքեր և գաղափարներ չեն, այլ խիստ արտաքին, օբյեկտիվացված իրողություն են: Եթե նրանք լի-նեին արքայազն, ապա կախված կմնային առանձին անձանց հայեցողությունից: Որպես հայեցողության հաղթահարման միջոց՝ համարվում է իրավունքի նորմերի ամրագրումը, ինչի արդյունքում իրավունքը վերածվում է գրի առնված իրավունքի:

Այսպիսով՝ իրավունքին՝ որպես սոցիալական կարգավորչի, և իրավունքի նորմերին՝ որպես սոցիալական նորմերի տարատեսակի, բնորոշ է նաև մեկ այլ հատկանիշ՝ ձևային որոշակիությունը:<sup>1</sup> Իր այդ հատկանիշով իրավունքն ընդունակ է բավականին հստակ, մանրամասն, մասնավորություններով արձանագրել իրավունքի սուբյեկտներին ներկայացվող պահանջները, շրջանակները և պայմանները, մանրագնին նկարագրել վարքագծի հնարավոր կամ պահանջվող տարբերակները, օրինական պահանջների չպահպանման հետևանքները և այլն: Այսպիսով՝ իրավունքի ձևային աղբյուրներում արտահայտման միջոցով և օգնությամբ հնարավոր է դառնում հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծային տարբերակներից դուրս մղել և արգելել նրանք, որոնք ունեն քառասյին և ավերիչ բնույթ, հաղթահարել կամայականությունը և բռնությունը, իսկ արդյունքում հասարակական կյանքը դարձնել կայուն, կարգավորված, հուսալի, անվտանգ և այլն: Այսպիսով՝ ստացվում է, որ օրինականությունը նաև իրավունքի մեկ այլ հատ-

նաշնորի (տե՛ս Проблемы общей теории права и государства. Под ред. В.С. Нерсисянца. М., Изд. группа НОРМА-ИНФРА.М, 1999, էջ 125-136):

<sup>1</sup> Տե՛ս **Տյակун Օ.Փ.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 276-278; **Леушин В.И., Перевалов В.Д.** Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 217-232; **Общая теория государства и права. Академический курс в 2-х томах.** Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 16:

կանիչի՝ ձևային որոշակիության դրսևորման իրավական ձևն է: Եվ քանի որ իրավունքի ձևերի ստորակարգային համակարգում առաջին տեղում կանգնած է օրենքը և օժտված է գերակայությամբ, ապա իրավունքի համապարտադիրությունը վերածվում է օրինականության պահանջի՝ որպես իրավունքի կազմավորման և գործողության ամենահամընդհանուր, համատարած, համակարգակազմիչ սկզբունք կամ սկզբունքների սկզբունք:<sup>1</sup>

Օրինականությունը ծագում է և կարող է ծագել միայն իրավունքի հատկանիշների, հատկապես համապարտադիրության հիման վրա: Յետևաբար, «օրինականության էությունն» իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի և նրա պաշտոնական ձևերի (օրենքների և այլն) բարեխիղճ, անշեղ, խստագույնս իրականացումը, պահպանումը և կատարումն է, որը և ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափությունը:

Այսպիսի մոտեցման հետ համաձայն են նաև որոշ տեսաբաններ: Օրինակ՝ Ռ.Տ. Մուխակի կարծիքով «օրինականության էությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից գործող օրենքների բարեխիղճ և անշեղ պահպանումն ու կատարումն է, որը և ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափության կացությունը: Այն կարող է ծագել միայն իրավունքի համապարտադիրության հիման վրա, որը հանգեցնում է իրավունքի սուբյեկտների վարքագծի համապատասխանությանն իրավական նորմերի կարգադրագրերին»:<sup>2</sup> Մեկ այլ տեսաբանի՝ Ա.Ս. Շաբուրովի տեսակետի համաձայն՝ «օրինականությունն անբաժանելի է իրավունքի

<sup>1</sup> Օրինակ՝ քրեական դատավարությունում օրինականության համաիրավական սկզբունքը համարվում է համընդհանուր, համընդգրկուն սկզբունք, որն իր արտահայտությունն է ստանում դատավարական իրավունքի բոլոր ինստիտուտներում ու նորմերում: «Օրինականությունը քրեական դատավարության սկզբունքների սկզբունքն է: Բուն դատավարական (մասնագիտացված) սկզբունքները քրեական դատավարությունում օրինականության իրացման սկզբունքներն են» (տե՛ս Уголовно-процессуальное право Российской Федерации. Под ред. П.А. Лупинской. М., 1999, էջ 121):

<sup>2</sup> Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 439 :

համապարտադիրությունից: Յենց այս պահին է ամենից շատ արտացոլվել գիտության մեջ՝ օրինականության բնորոշումների մեծամասնության մեջ: Այդ դեպքում օրինականությունը բնութագրում է իրավունքը վերցված նրա իրականացման տեսանկյունից: Գլխավորն այստեղ օրենքների և դրանց վրա հենվող այլ նորմատիվ ակտերի՝ կյանքում անշեղ կենսագործման պահանջն է: Այլ խոսքերով, օրինականությունը նման հասկացողության դեպքում պահանջում է հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի համապատասխանություն իրավական նորմերի կարգադրագրերին, այսինքն՝ նրա բոլոր մասնակիցների վարքագծի իրավաչափության իրական ապահովում: Օրինականության այդ կողմը բխում է իրավունքի՝ որպես համապարտադիր կանոնների համակարգի գոյության բուն փաստից: Այս դիրքերից օրինականության մասին կարելի է խոսել որպես պետականորեն կազմակերպված հասարակության կյանքի պայման»<sup>1</sup>:

Վերը բերված երկու տեսաբանների սկզբունքորեն ճիշտ մոտեցումն այն հարցին, որ օրինականությունն իրավունքի այնպիսի հատկանիշի դրսևորումն է, ինչպիսին է համապարտադիրությունը, համակարգային մեթոդաբանական հետևողական զարգացում չի ստանում: Յետևաբար, այդ մոտեցումները կարելի է համարել թերի հետևյալ պատճառներով:

Առաջին, ինչպես արդեն նկատեցինք, նրանք օրինականությունը կապում են իրավունքի միայն մեկ հատկանիշի՝ համապարտադիրության հետ: Սակայն օրինականության՝ որպես իրական իրավական երևույթի գոյությունը պայմանավորված է նաև իրավունքի այլ հատկանիշներով, մասնավորապես ձևային որոշակիությամբ, պետական երաշխավորվածությամբ և այլնով:

Երկրորդ, այս տեսաբաններից Ա.Ս. Շաբուրովը լայն իմաստով օրինականության վերլուծության արդյունքում նրա բովանդակությամբ

<sup>1</sup> Տե՛ս **Шабуров А.С.** Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 438:

յան մեջ տեսնում է «իրավականի, իրավագիտականի և պետաքաղաքականի դիալեկտիկայի ինքնուրույն պահեր»<sup>1</sup> ի դեմս օրինականության կողմերի: Օգտագործելով դիալեկտիկան որպես վերլուծության մեթոդ՝ Ա.Ս. Շաբուրովն օրինականության բովանդակության այդ պահերը համարում է «ինքնուրույն»՝ չդիտարկելով դա համակարգային կապերում, միևնույն երևույթի դրսևորում տարբեր իրավական հարթություններում: Չէ՞ որ դիալեկտիկան անպայմանորեն ենթադրում է համակարգային վերլուծություն:<sup>2</sup>

Երրորդ, երկու տեսաբաններն էլ, ի վերջո, օրինականությունը բնութագրում են որպես հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ: Սակայն ինչպես տեսանք, այդ հասկացությունը չի տեղավորվում վերը քվարկված իրավական հասկացությունների համակարգում:

Եզրակացություն. օրինականությունն իրավունքի մի շարք հատկանիշներով, հատկապես համապարտադիր նորմատիվայնությամբ և ձևային որոշակիությամբ պայմանավորված և իրավունքին ու նրա բոլոր համակարգային դրսևորումներին, դրանց բաղադրատարրերին բնորոշ հիմնարար իրավական սկզբունք է: Իրավունքի հատկանիշների այդպիսի տրանսֆորմացիան օրինականության իրավական սկզբունքի պայմանավորված է նրանով, որ իրավունքի ձևերի ստորակարգային համակարգում առաջին տեղում կանգնած է գերակայությամբ օժտված օրենքը, ինչի ուժով իրավունքի համապարտադիրությունը վերածվում է օրինականության պահանջի: Այդ պահանջի էությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի և նրա պաշտոնական ձևերի (օրենքների և այլն) բարեխիղճ, անշեղ, խստագույնս իրականացումը, պահպանումն ու

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Խոսքը գնում է օրինականության և իրավունքի համապարտադիրության կապի, օրինականության գաղափարի, պետական ղեկավարման մեթոդի, պետության գործունեության սկզբունքի, հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմի՝ որպես օրինականության ինքնուրույն պահերի մասին (տե՛ս նույն տեղում, էջ 438-440):

կատարումն է, որը և ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափությունը:

### **§ 5. Օրինականությունը որպես իրավունքի կազմակերպական գործառութային սկզբունք**

Օրինականությունը որպես իրավունքի սկզբունք դիտարկելը պահանջում է կողմնորոշվել ևս մեկ հարցում՝ ի՞նչ են իրավունքի սկզբունքները և ի՞նչ տեղ է գրավում օրինականությունն իրավունքի սկզբունքների համակցության մեջ: Այս հիմնախնդիրը լուծելու համար փորձենք անդրադառնալ իրավունքի սկզբունքների ընդհանուր տեսական բնորոշումներին, ինչպես նաև իրավունքի սկզբունքների դասակարգմանը:

Իրավունքի տեսության մեջ «իրավունքի սկզբունք» հասկացությունը բնորոշվում է տարբեր կերպ: Իրավունքի սկզբունքներին նվիրված հսկայական ինչպես համատեսական, այնպես էլ ճյուղային գրականության մեջ ամենատարածվածն այն բնորոշումն է, որը սկզբունքների տակ հասկանում է «իրավունքի բովանդակությունը, նրա էությունը և նշանակությունը հասարակության մեջ բնութագրող ղեկավար գաղափարներ»<sup>1</sup> Այս ամենատարածված բնորոշումից բացի իրավաբանական գրականության մեջ կան նաև իրավունքի սկզբունքների այլ՝ առավել բովանդակալից բնորոշումներ: Դրանցից մեկն իրավունքի սկզբունքները համարում է «իրավունքի ձևավորման, զարգացման և գործառութավորման գործընթացի հիմնական գաղափարներ, ելակետային դրույթներ կամ առաջատար հիմունքներ»<sup>2</sup> Այս բնորոշման մեջ մեզ հետաքրքրում է այն

<sup>1</sup> Տե՛ս *Леушин В.И., Перевалов В.Д.* Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М, 1997, էջ 237; *Ромашов Р.А., Шукшина Е.Г.* Право как социальный регулятор.- В кн. Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2005, էջ 189 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս *Общая теория государства и права. Академический курс в 2-х томах.* Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство «Зерцало», 1998, էջ 22:

միտքը, որ իրավունքի սկզբունքները ելակետային դրույթներ են իրավունքի ձևավորման, զարգացման և գործառնութափոխման ոլորտների համար: Այսինքն՝ պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ «իրավունքի սկզբունքները ներթափանցում են հասարակության իրավական ողջ համակարգը: Դրանք բնութագրում են ոչ միայն իրավունքի էությունը, այլև բովանդակությունը, արտացոլում են ոչ միայն նրա ներքին կառուցվածքը, ստատիկան, այլև նրա կիրառման ողջ գործընթացը, դինամիկան»:<sup>1</sup>

Ասվածը վերաբերում է նաև օրինականությանը՝ որպես համաիրավական սկզբունքի: Յետևաբար, օրինականությանը՝ որպես իրավունքի սկզբունքի հատկանիշն այն է, որ այն ելակետային դրույթ է ինչպես իրավունքի ձևավորման, զարգացման, այնպես էլ գործառնութափոխման գործընթացներում:

Իրավունքի սկզբունքների հասկացության մեզ հետաքրքրող երկրորդ բնորոշումը հետևյալն է. «իրավունքի սկզբունքները համապարտադիր ելակետային նորմատիվ իրավական դրույթներ են, որոնք աչքի են ընկնում համընդհանրությամբ, ընդհանուր նշանակությամբ, բարձրագույն իմպերատիվությամբ, որոշում են իրավական կարգավորման բովանդակությունը և չափանիշ են իրավունքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների վարքագծի և գործունեության իրավաչափության համար»:<sup>2</sup> Կիրառելով համանմանության մեթոդը՝ կարող ենք փաստել, որ օրինականությունը՝ որպես իրավունքի սկզբունք, համապարտադիր ելակետային նորմատիվ իրավական դրույթ է, որն օժտված է համընդհանրությամբ, ընդհանուր նշանակությամբ, բարձրագույն իմպերատիվությամբ:

Օրինականության՝ որպես իրավունքի համընդհանուր սկզբունքի հասկացողությունն անհրաժեշտորեն պահանջում է որոշել նրա՝ որպես սկզբունքի տեղը և դերն իրավունքի սկզբունքների

համակարգում: Այս հիմնահարցի լուծման համար անհրաժեշտ է քննարկել իրավունքի սկզբունքների դասակարգման հարցը:

Իրավաբանական գրականության մեջ առկա են իրավունքի սկզբունքների բազմաթիվ դասակարգումներ:

Կախված գործառնութային նշանակությունից և արտացոլման օբյեկտից՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են սոցիալ-իրավականի և հատուկ-իրավականի: Հատուկ-իրավական սկզբունքներն իրենց հերթին տրոհվում են համաիրավականի, միջճուղայինի, ճուղայինի և առանձին իրավական ինստիտուտների: Այս դասակարգման կողմնակիցները համաիրավական սկզբունքներ են համարում մարդասիրությունը, օրենքի առջև քաղաքացիների հավասարությունը, ժողովրդավարությունը, արդարությունը և, իհարկե, իրավաօրինականությունը:<sup>1</sup>

Մեկ այլ դասակարգում առանձնացնում է իրավունքի սկզբունքների երեք տեսակ՝ իրավունքի և օրենքի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը բնութագրող սկզբունքներ, մարդու՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ վերաբերմունքը բնութագրող սկզբունքներ, վեճերի ընթացքում ճշմարտության բացահայտման հետ կապված սկզբունքներ:<sup>2</sup>

Օ.Ֆ. Սկակունն իրավունքի սկզբունքները, կախված կարգավորվող հասարակական հարաբերությունների մակարդակից, բաժանում է երեք տեսակի՝

- 1) համամարդկային (միջազգային, համաքաղաքակրթական), որոնց շարքում նա դնում է նաև օրինականությունը,
- 2) տարածաշրջանային-մայրցամաքային,
- 3) ազգային-ներպետական: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են համաիրավական, միջճուղային, ճուղային, ենթաճուղային և ինստիտուտային սկզբունքների:<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 135-136:

<sup>2</sup> Տե՛ս **Лившиц Р.З.** Теория права. М., Изда-тельство БЕК, 1994, էջ 197-198:

<sup>3</sup> Տե՛ս **Скакун О.Ф.** Теория государства и права. (Энциклопедический курс). Харьков, Эспада, 2005, էջ 283-285:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>2</sup> Տե՛ս **Гойман В.И.** Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристы, 2005, էջ 134-135:

Իրավունքի սկզբունքները դասակարգվում են նաև ըստ իրավունքի պատմական տիպերի և բնույթի: Ըստ բնույթի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են սոցիալ-տնտեսականի, քաղաքականի, գաղափարախոսականի, էթիկականի, կրոնականի և հատուկ-իրավաբանականի: Օրինականությունն այս դասակարգման մեջ համարվում է հատուկ-իրավաբանական սկզբունք:<sup>1</sup>

Դասակարգման բոլոր հնարավոր վարկածներից մեր կողմից հետազոտվող հիմնախնդրի համար կարևոր և հատուկ նշանակություն ունի Մ.Ի. Բայտինի դասակարգումը: Նա համաիրավական սկզբունքները բաժանում է բարոյաէթիկականի և կազմակերպականի: Բարոյաէթիկական սկզբունքները կազմում են իրավունքի բարոյական, հոգևոր հիմքերը և անմիջականորեն ներազդում են իրավունքի նորմատիվ բովանդակության վրա: Դրանք կազմում են բնական օրենքներ և խորհրդանշում են մարդու հիմնական և հիմնարար իրավունքները: Որպես այդպիսիք Մ.Ի. Բայտինը դիտարկում է ազատությունը, հավասարությունը, կյանքի իրավունքը, մասնավոր և այլ ձևերի սեփականության իրավունքը, անվտանգությունը, արժանապատվությունը, արդարությունը, ընտանիքը, ժողովրդավարությունը, մարդը որպես բարձրագույն արժեք, մարդու իրավունքների պաշտպանությունը որպես պետության նպատակ և պարտականություն: Իրավունքի սկզբունքների երկրորդ խումբը համաիրավական կազմակերպական սկզբունքներն են, որոնք սերտորեն կապված են առաջինի հետ և «կազմում են իրավունքի կազմակերպական-ընթացակարգային հիմքը, կողմնորոշված են իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչի դերի, իրավունքի կողմից իր յուրահատուկ իրավաբանական գործառույթների կատարման ապահովմանը»:<sup>2</sup>

<sup>1</sup> Стѣи *Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 24-25:*

<sup>2</sup> Стѣи *Байтин М.И.* Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, СГАП, 2001, էջ 125-133:

Որպես համաիրավական կազմակերպական սկզբունքներ՝ Մ.Ի. Բայտինը համարում է ֆեդերալիզմը, օրինականությունը, իրավունքում համոզմունքի և հարկադրանքի, խթանման և սահմանափակման զուգակցումը: Այսպիսով՝ օրինականությունն իրավունքի համընդհանուր կազմակերպական սկզբունք է: Որպես այդպիսին այն իրավունքի կազմակերպաընթացակարգային հիմքերից մեկն է և կոչված է ապահովելու իրավունքի յուրահատուկ, զուտ իրավական գործառույթների կատարումը:

Օրինականությունը, լինելով իրավունքի ընդհանուր սկզբունք, կողմնորոշիչ նշանակություն ունի դրա ձևավորման համար: Եթե իրավունքի զարգացումը գնում է իդեալից դեպի նորմ, այնուհետև նորմերի իրականացման միջոցով՝ գործողություն, հասարակական պրակտիկա, ապա օրինականությունը՝ որպես սկզբունք, ունի համընդհանուր և համատարած բնույթ: Օրինականությունը, ինչպես և իրավունքի բոլոր համաիրավական սկզբունքները, «ընդգրկում են ողջ իրավական մատերիան՝ և՛ իդեան, և՛ նորմերը, և՛ հարաբերությունները, ու նրանց հաղորդում են տրամաբանականություն, հետևողականություն, հավասարակշռվածություն... Սկզբունքները, կարծես թե, հարուստ իրավական մատերիայի «չոր նստվածքն» են, նրա կմախքը, էությունը՝ ազատագրված կոնկրետիկայից և մասնավորություններից»:<sup>1</sup>

Եզրակացություն. եթե փորձենք սինթեզել օրինականության՝ որպես սկզբունքի վերը քննարկված հատկանիշները, ապա կարող ենք ասել, որ այն իրավունքի համընդհանուր կազմակերպական սկզբունք է, որն ունի համապարտադիրություն, բարձրագույն իմպերատիվություն, որոշում է իրավունքի ձևավորման, զարգացման և գործողության գործընթացը: Լինելով համընդհանուր իրավական կազմակերպագործառութային սկզբունք՝ այն ունի ոչ միայն համաիրավական, այլև համատարած նշանակություն: Օրինականության համընդհանրությունը տարածվում է իրավունքի բոլոր սուբ-

<sup>1</sup> Стѣи *Лившиц Р.З.* Теория права. М., Издательство БЕК, 1994, էջ 195:

յեկտների և իրավական կյանքի ու գործունեության բոլոր ոլորտների վրա, որոշում է իրավունքի և՛ ձևավորումը, և՛ զարգացումը, և՛ գործողությունը: Չկա իրավական գործունեության ոլորտ և իրավունքի սուբյեկտ՝ այդ թվում պետությունը և նրա մարմինները, որոնց վրա չի տարածվում օրինականության սկզբունքը: Օրինականության համընդհանուր սկզբունքի գլխավոր խնդիրներից մեկն իրավական բոլոր կարգադրագրերի բոլոր սուբյեկտների կողմից անենուր կենսագործումն է: Հենց դա է օրինականության սկզբունքի սոցիալական առաքելությունը:

**§ 6. Իրավաբանական իրավահասկացությունը և օրինականության փոխակերպումն իրավական օրինականության**

**6.1. Իրավահասկացության մեթոդական նշանակությունն օրինականության տեսության համար**

Աշխատանքի երկրորդ գլխում կատարված հետազոտությունը հիմք է տալիս պնդելու, որ օրինականությունը, իրավունքի հատկանիշներով պայմանավորված, հիմնարար և համընդհանուր կազմակերպական իրավական սկզբունք է, որն ունի համապարտադիրություն, բարձրագույն իմպերատիվություն և որոշում է պոզիտիվ իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության գործընթացը: Այդ սկզբունքի էությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի և նրա պաշտոնական ձևերի բարեխիղճ, անշեղ և խստագույնս կենսագործման (իրականացման, պահպանման, կատարման, կիրառման) պահանջն է, ինչը և ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափությունը: Այս եզրակացությունը ձեռք է բերում լրիվ այլ իմաստ, կախված նրանից, թե ինչ ենք հասկանում իրավունքի տակ: Այլ կերպ ասած, ինչպես իրավագիտության բազմաթիվ հիմնախնդիրների, այնպես էլ օրինականության հիմնախնդրի համար տեսամեթոդական և գործնական-կիրառական նշանակություն ունի իրավահասկացությունը: Ամեն մի հետևողական իրավական դոկտրինայի կամ փիլիսոփայության հիմքում ըն-

կած է կոնկրետ իրավահասկացություն: Կամ կարող ենք ասել, որ յուրաքանչյուր իրավական փիլիսոփայություն կամ դոկտրինա հանգում է իր իրավահասկացությանը: «Իրավունք» հասկացության նման նշանակությունը շատ պատկերավոր կերպով արտահայտել է Վ.Ս. Ներսեսյանցը. «Կարելի է ասել, որ ինչպես սերմի մեջ է տրված բույսի որոշակի ապագան, այնպես էլ իրավունքի հասկացության մեջ գիտական տեսքով պարունակվում է իրավաբանական որոշակի տեսություն, հայեցակարգ»: Իսկ ամեն մի տեսությունից անխուսափելիորեն բխում են գործնական-կիրառական եզրակացություններ և հետևություններ: Իրավաբանական դոգմատիկան և պրակտիկան անպայմանորեն հետևում են իրավունքի ընդհանուր տեսության մեթոդաբանական մասին, որի հիմնահարցը կամ հարցերի հարցն «իրավունք» հասկացության բնորոշումն է:

Օրինականության տեսության հիմնախնդիրների հետազոտման համար ևս էական նշանակություն ունի, թե որպես մեթոդաբանական հիմք իրավահասկացության որ տիպն է օգտագործված:

Իրավահասկացողության տիպաբանության վարկածները մի քանիսն են՝

1) իրավահասկացողության սուբստանցիոնալ (բովանդակային), ձևական և խառը տիպերը: Իրավունքի հասկացությունների այս բաժանումն առաջարկել է պրոֆեսոր Գ. Մանովը:<sup>1</sup> Իրավահասկացության խառը տիպը, ըստ նրա, իրավունքին տրված բնորոշումներն են, որոնք միավորում են սուբստանցիոնալ և ձևական բնորոշումները,

2) իրավահասկացողության պոզիտիվիստական (լեգիստական և սոցիոլոգիական) և ոչ պոզիտիվիստական (էթիկական և ազատական-իրավաբանական) տիպեր: Այս տիպաբանությունն առաջարկում է Վ. Չետվերնինը,<sup>2</sup>

<sup>1</sup> Ст'ю Теория государства и права. Под ред. Г.Н. Манова. М., 1995, էջ 34, 37:

<sup>2</sup> Ст'ю Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997:



3) իրավաբանական մտածողության իդեալիստական (մետաֆիզիկական) և պոզիտիվիստական (ոչ մետաֆիզիկական) տիպեր: Բաժանման հեղինակը ֆրանսիացի իրավագետ Ժան-Լուի Բերթելն է: Նա, կախված այն հանգամանքից, թե ով ինչ «պոզիտիվ իրավաբանություն» է տեսնում կամ դնում իր դոկտրինայում կամ ինչի վրա է կառուցում իր դոկտրինան, առանձնացնում է պոզիտիվականության հետևյալ տեսակները՝ իրավական (իրավաբանական) և սոցիոլոգիական,<sup>1</sup>

4) բովանդակային և ձևական իրավահասկացություն: Բաժանումն առաջարկել է ռուս իրավագետ Ռ. Լիվշիցը: Իրավունքի ձևին հանգող իրավահասկացության տեսակները սույն հեղինակը բխեցնում է այն հանգամանքից, որ իրավական իրականությունը դրսևորվում է երեք ձևերով՝ իրավագիտակցության, իրավական նորմերի, հասարակական հարաբերությունների: Հետևաբար, իրավահասկացության տեսությունների ողջ բազմերանգությունը կարելի է ներկայացնել երեք խոշոր տիպերով (դպրոցներով)՝ արժեքային (կամ արսիլոգիական), նորմատիվ, սոցիոլոգիական,<sup>2</sup>

5) իրավահասկացողության պրակտիկ և տեսական տիպեր: Ըստ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ա.Վ. Պոլյակովի՝ իրավահասկացության տիպն իրավունքի որոշակի կերպար է, որը բնութագրվում է իրավունքի ամենից ընդհանուր տեսական հատկանիշների համակցությամբ և դրա նկատմամբ գործնական (արժեքային) վերաբերմունքի ամենից ընդհանուր հատկանիշներով: Իրավահասկացության տիպի նման բնորոշումից ելնելով՝ այս մտածողն առանձնացնում է իրավահասկացության դասակարգման երկու հիմքեր՝ պրակտիկ և տեսական: Ըստ Պոլյակովի՝ տեսական զարգացման ընթացքում դասական արևմտյան իրավական միտքը ձևավորել է իրավահասկացության երեք տիպ՝

- ա) բնական իրավական,
- բ) էտատիստական,
- գ) սոցիոլոգիական,<sup>1</sup>

6) իրավահասկացության «իրավաբանական» և «լեգիստական» տիպեր: Ըստ Վ.Ս. Ներսեսյանցի՝ իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը վկայում են իրավահասկացության երկու հակադիր տիպերի գոյության մասին՝ իրավաբանական և լեգիստական:<sup>2</sup> Դասակարգման հեղինակն իրավաբանական իրավահասկացության շրջանակներում տարբերում է երկու մոտեցումներ՝ բնական-իրավական և ազատական-իրավաբանական:

Եթե իրավահասկացության տիպերը դասակարգենք ըստ իրավունքի և օրենսդրության (պոզիտիվ իրավունքի) տարբերակման կամ նույնացման պահի, արդյունքում մենք կունենանք երկու սկզբունքորեն հակադիր իրավահասկացություն, որոնք Վ.Ս. Ներսեսյանցը համապատասխանաբար անվանում է իրավաբանական և լեգիստական:

Իրավաբանական իրավահասկացությունն իրավունքը տարբերում է պոզիտիվ իրավունքից (կամ սահմանված իրավունքից, պաշտոնական իրավունքից, օրենսդրությունից): «Իրավաբանական իրավահասկացողության համար իրավունքը հասարակ կամայական և սուբյեկտիվ իշխանական կարգադրագիր չէ, այլ օբյեկտիվ և ինքնուրույն, իր սեփական բնույթով (օրենսդրի կամքից չկախված), իր էությանը և յուրահատկությանը, մի խոսքով իր սկզբունքով ինչ որ բան»:<sup>3</sup> Լեգիստական մոտեցման համար «ի՞նչ է իրավունքը» հարցը, ըստ էության, գոյություն չունի, քանի որ նրա համար «իրա-

<sup>1</sup> Տե՛ս **Бержель Ж.** Общая теория права. М., 2000, էջ 40-41:

<sup>2</sup> Տե՛ս **Лившиц Р.З.** Теория права. Учебник для студентов юридических высших учебных заведений. М., 1994, էջ 11-15:

<sup>1</sup> Տե՛ս **Поляков А.В.** Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. С.-Петербург., 2004, էջ 81:

<sup>2</sup> Տե՛ս **Нерсисянц В.С.** Общая теория права и государства. М., 1999, էջ 75:

<sup>3</sup> Տե՛ս **Нерсисянц В.С.** Философия права. М., Издательская группа ИНФРА.М-Норма, 1997, էջ 34-35:

վունքն արդեն պաշտոնապես տրված, գործող, պոզիտիվ իրավունքն է: Լեգիզմն այստեղ չունի հիմնախնդիր, նա ունի միայն դժվարություններ բնորոշելու (սահմանելու) այն, ինչն արդեն կա»:<sup>1</sup>

Այսպիսով՝ լեգիստական կամ իրավաբանական պոզիտիվիզմի դպրոցը նույնացնում է իրավունքը և օրենքը (օրենսդրությունը): Այս դեպքում օրինականության սկզբունքի պահանջը ձեռք է բերում միայն պոզիտիվ իրավական դրույթների կենսագործման բովանդակություն: Լեգիստական պոզիտիվիզմի համար օրինականությունն օրենքի (պոզիտիվ իրավունքի) համապարտադիրության դրսևորումն է: Դրան հակառակ՝ իրավունքի իրավաբանական հասկացությունները, տարանջատելով իրավունքը և օրենքը, հասարակության և պետության առջև դնում են խնդիր՝ պոզիտիվացնել, այսինքն՝ օրենքի ձևով արտահայտել իրավունքը և նրա պահանջները: Իրավունքի պոզիտիվացման արդյունքում ստացված օրենքը կարող է ինչպես համապատասխանել, այնպես էլ հակասել իրավունքին: Օրենքն իրավական երևույթ է միայն, երբ իրենից ներկայացնում է իրավունքի արտահայտման ձև: Իրավական անվանվող այդպիսի օրենքում իրավունքի էությունը, սկզբունքները, պահանջները ձեռք են բերում պետական-իշխանական, համապարտադիր ճանաչում և պաշտպանություն, օրինական ուժ: Ըստ Վ.Ս. Ներսեսյանցի բնորոշման՝ իրավական օրենքն իրավունքի ադեկվատ արտահայտությունն է իր պաշտոնական ճանաչվածությամբ, համապարտադիրությամբ, որոշակիությամբ և կոնկրետությամբ, որոնք անհրաժեշտ են գործող պոզիտիվ իրավունքի համար:<sup>2</sup>

Այսպիսի մեթոդական մոտեցումն առաջ է բերում երկմիասնական խնդիր. առաջին՝ միայն իրավունքին հաղորդել օրինական (պաշտոնական-իշխանական, համապարտադիր) ուժ, և միաժամանակ, որպեսզի օրենքը միշտ և բոլոր դեպքերում ու բոլոր իրավական տարածություններում լինի իրավական: Այդ խնդրի կենսա-

գործման արդյունքում առաջ է գալիս նոր հասկացություն՝ «իրավական օրինականություն»: Ամենապարզ մեկնաբանմամբ այդ հասկացությունը նշանակում է, որ իրավունքի պոզիտիվացման գործընթացում առաջին պահանջն իրավունքի արտացոլումն է օրենքում, իսկ այնուհետև՝ նոր իրավական որակներով օժտված օրենքի համապարտադիրությունից բխող ընդհանուր պահանջ՝ ուղղված յուրաքանչյուրին և բոլորին անշեղ կենսագործելու այդ օրենքը (օրինականությունն ենդ իմաստով): Առաջին պահանջն ուղղված է պետությանը և նրա իշխանության ճյուղերին, երկրորդը՝ յուրաքանչյուրին և բոլորին: Այդպիսով՝ իրավական օրինականությունը ենթադրում է օրինականություն հասկացությունը՝ որպես նրա մի մաս, սակայն սովորական իմաստով օրինականության պահանջին ավելացնում է նոր պահանջ՝ պոզիտիվացնելու, համապարտադիր դարձնելու միայն իրավական օրենքը:

## **6.2. Իրավական օրինականության հայեցակարգն արևմտաեվրոպական իրավագիտության մեջ**

Իրավական օրինականություն կամ իրավաօրինականություն հասկացությունը նորություն չէ իրավագիտության մեջ: Պոզիտիվիզմի, օրինականության ձևական, էտատիստական հասկացության հաղթահարման ճանապարհին իրավաբանական իրավահասկացության դիրքերում կանգնած իրավագետները դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին մշակել են իրավական օրինականության հայեցակարգը: Իհարկե, առաջամարտիկներն այս հարցում արևմտյան ազատական իրավագետներն էին՝ ի դեմս Ա. Դայսիի,<sup>1</sup> Մ. Օուկշոթի,<sup>2</sup> Ֆ. Հայեկի<sup>3</sup> և այլոց:

<sup>1</sup> Տե՛ս *Дайси А.В.* Основы государственного права Англии. СПб., 1907:  
<sup>2</sup> Տե՛ս *Ademi G.* Legal intimations - Michael Oakeshott and the rule of law // Wisconsin Law Review. -1993. թիվ 3, էջ 839-896; Coats W. J. Michael Oakeshott as liberal theorist // Canadian Journal of Political Science - Revue Canadienne de Science Politique. - 1985. - Vol.18. թիվ 4, էջ 773-787:  
<sup>3</sup> Տե՛ս *Хайек Ф.* Дорога к рабству // Вопросы философии, 1990, թիվ 11:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 32:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 36:

Առաջին անգամ անգլիացի իրավաբան Ալբերտ Դենն Դայսին (1835-1922) շրջանառության մեջ դրեց իրավաօրինականություն կատեգորիան: Իր «Սահմանադրական իրավունք» մենագրության մեջ նա իրավաօրինականությունը բնորոշում է որպես «բացարձակ հեղինակություն և գործող օրենսդրության գերակայություն՝ հակադրված իշխանությունների կամայական կարգադրություններին, որը բացառում է ոչ միայն կառավարության կամայականությունը, այլև հնարավորությունն ինչ որ իրադրություններում գործել իր հայեցողությամբ»:<sup>1</sup>

Զնայած ընդհանրությանը՝ իրավական օրինականության գաղափարն անգլոսաքսոնական և ռոմանոգերմանական իրավական համակարգերում ունեն իրենց որոշակի առանձնահատկությունները: Անգլոսաքսոնական իրավագիտության մեջ իրավական օրինականության գաղափարը դիտարկվում է որպես «իրավունքի գերակայության» («rule of law») հոմանիշ: Օրինակ՝ Ա. Դայսիի իրավական օրինականության հասկացությունը կառուցված էր իրավունքի ոչ ձևական հասկացության վրա, ըստ որի՝ «իրավունքը մարդու իրավունքների արտահայտությունն է՝ սահմանված դատարանների կողմից և կյանքում կենսագործվող»: Իր հերթին մարդու իրավունքներն օբյեկտիվ կատեգորիա են, «դրանք դուրս են օրենքների շրջանակներից այն իմաստով, որ գոյություն ունեն մինչև օրենքների ի հայտ գալը»:<sup>2</sup> Այսպիսի իրավահասկացության դիրքերից ելնելով՝ մարդու իրավունքների արտահայտումն օրենքում և վերջինիս կենսագործումը վերածվում են իրավական օրինականության առաջին և հիմնական պահանջի: Որպես այդ պահանջի կենսագործման պայմաններ՝ Ա. Դայսին առաջ է քաշում հետևյալ սկզբունքները՝

1) իշխանությունների հայեցողական (դիսկրեցիոն) լիազորությունների սահմանափակում,

<sup>1</sup> Տե՛ս *Дайси А.В.* Основы государственного права Англии. СПб., 1907, էջ 194:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 195:

- 2) դատական իշխանության անկախություն,
- 3) դատական նախադեպի դոկտրինա,
- 4) գործադիր իշխանության իրավաստեղծ գործունեության սահմանափակում:

Ռոմանոգերմանական իրավագիտության մեջ ևս ձևավորվել է իրավական օրինականության հասկացությունը: Առաջինը մայրցամաքային Եվրոպայում այդ հասկացությունը մշակեցին իրավական պետության գերմանացի տեսաբանները, որոնցից աչքի է ընկնում հատկապես Ֆրիդրիխ Ավգուստ Ֆոն Յայեկը (1899-1992): Յայեկն իրավական օրինականությունը կապում է իրավահասկացության ձևական և բովանդակային (սուբստանցիոնալ) վարկածների տարբերակման հետ: Յայեկի մոտեցումն իրավական օրինականության ելությանը կարելի է բնութագրել որպես «իրավունքի և օրենքի ներդաշնակություն»: Իրավական պետության մեջ անպայմանորեն իրավահասկացությունը պետք է լինի իրավաբանական, որից և բխում է իրավական օրենքի գերակայությունը: Այդ երկու հայեցակարգային, ելակետային հիմնասյուներին համապատասխանում է իրավական օրինականությունը, որը հակադրվում է օրինականության ձևական, նորմատիվային հասկացողությանը: Վերջինիս դեպքում այն պահանջում է բառացիորեն հետևել ցանկացած օրենքին, եթե նույնիսկ այդ օրենքն «իրավախախտող» կամ «հակաիրավական», «ոչ իրավական» օրենք է: Ոչ իրավական օրենքի համապարտադիրության վերածումն օրինականության խստագույն պահանջի բնութագրական է հակաժողովրդավարական ռեժիմներին: Իրավական օրինականությունը՝ որպես կառույց, հենց ինքը երաշխիք է պետական իշխանության իրավաստեղծ ամենաթողության, իշխանության կամայականության սանձման համար, իրավական օրենքի գերակայության երաշխավորման համար: Ինքը՝ Յայեկը, իրավունքի գերակայությունը համարում է լավ պոզիտիվ օրենքի մետաիրավաբանական սկզբունք: «Իրավական օրինականության սկզբունքները, որոնք սահմանափակում են պետական իշխանությունը, գո-

յություն ունեն որպես ղեկավար դրույթներ, լավ օրենքի հատկություններ»:<sup>1</sup>

Իրավական օրինականությունն ամենահարմար կատեգորիան և կառույցն է, որն ընդունակ է իր մեջ արտահայտելու օրենքի և՛ ձևական, և՛ բովանդակային լեզվատիմությունը: Այսպիսով՝ իրավական օրինականությունն իրավական պետության անխզելի կառույցներից է և նրա հիմնական սկզբունքներից մեկի՝ իրավական օրենքների գերակայության արտահայտությունը, որը պահանջում է ոչ միայն օրենքի անշեղ և խստագույն գերիշխանություն, այլև այն, որ օրենքը չպետք է լինի իշխանության կամայականության արդյունք, այլ իրավունքի (բնական կամ այլ կերպ հասկացված) արտահայտություն: Ուստի, իրավական օրինականության հայեցակարգը, ըստ Ֆ. Չայեկի, համարվում է ոչ միայն ազատության վահան, այլև ազատության կենսագործման մշակված կառուցակարգ:<sup>2</sup>

### **6.3. Իրավական օրինականության հայեցակարգը հետխորհրդային իրավագիտության մեջ**

Ռուսական իրավագիտության մեջ իրավական օրինականության հասկացության կողմնակիցներից են Վ.Ս. Ներսեսյանցը, Վ.Ա. Չետվերնինը,<sup>3</sup> Յ.Ս. Գուցիրևը,<sup>4</sup> Ս.Ս. Ալեքսեևը, Ն.Վ. Վիտրուկը,

<sup>1</sup> Տե՛ս **Хайек Ф.** Дорога к рабству // Вопросы философии, 1990, №11: 11:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 124:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ՝ **Нерсесянц В.С.** Философия права. М., Юристъ, 2003; Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под общ. ред. В.С. Нерсесянца. М., Издательская группа НОРМА-ИНФРА, М., 1999; **Нерсесянц В.С.** Право - математика свободы. М., 1996; **В.С. Нерсесянц, В.А. Четвернин.** Основные концепции права и государства в современной России (По материалам «круглого стола» в Центре теории и истории права и государства ИГП РАН) / Под ред. В.Г. Графского // Государство и право, 2003, №5, էջ 5-33:

<sup>4</sup> Ըստ Յ. Գուցիրևի՝ իրավական պետությունում օրինականությունը միասնություն է ձեռք բերում իրավունքի հետ: Իրավունքի և օրինականության միասնությունն արտահայտվում է «իրավաօրինականություն» հասկացության մեջ (տե՛ս **Гуцирев Х.С.** Законность профилактика правонарушении (теоретико-правовой анализ). Дисс. док. юрид. наук, Санкт-Петербург, 1998, էջ 3):

Ա.Ս. Շաբուրովը, Ռ.Տ. Մուխանը և այլք:<sup>1</sup>

Վ.Ս. Ներսեսյանցը, Վ.Ա. Չետվերնինը, Ս.Ս. Ալեքսեևը տվել են իրավական օրինականության գաղափարը, որն անհրաժեշտաբար բխում է նրանց իրավական հայեցակարգի հիմքում դրված իրավաբանական իրավահասկացությունից: Ս.Ս. Ալեքսեևը մեզ հետաքրքրող հիմնախնդիրը ձևակերպել է «իրավաօրինականության փիլիսոփայություն կամ հումանիստական իրավունքի փիլիսոփայություն»:<sup>2</sup>

Համաձայն Վ.Ս. Ներսեսյանցի ազատական-իրավաբանական տեսության՝ «իրավական կարգը կարող է լինել միայն իրավական օրինականության արդյունք, որն ազատ մարդկանց հանրային իշխանության համապատասխան պայմաններում (այսինքն՝ իրականում գոյություն ունեցող պետության իրավական զարգացվածության պատմականորեն ձեռք բերված աստիճանի պայմաններում) իրավական օրենքի պահանջների համընդհանուր, ճշգրիտ և անշեղ պահպանումն ու կիրառումն է»: Հետևաբար իրավական օրինականությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավական օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ պահպանումն ու կատարումն է:<sup>3</sup> Վ.Ս. Ներսեսյանցի մոտեցումն ակնհայտորեն իրավաբանական է իր ազատական-իրավական հիմքով: Վ.Ս. Ներսեսյանցը մշակել և առավել շեշտադրել է իրավական օրինականության հասկացությունը, իսկ օրինականության տեսության մնացած հիմնախնդիրները,

<sup>1</sup> «Իրավաօրինականություն» կատեգորիան քննարկման առարկա է դարձրել նաև Ս.Ա. Կոմարովը, սակայն նրա մոտեցումն օրինականության տեսության հիմնախնդիրների լուծման նկատմամբ կառուցված է հետևողական նորմատիվիստական հայեցակարգի վրա (տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 363-371):

<sup>2</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования. М., Издательская группа НОРМА-ИНФРА\*, 1998, էջ 511:

<sup>3</sup> Ընդ որում իրավական օրենք ասելով՝ Վ.Ս. Ներսեսյանցը նկատի ունի ձևական հավասարության սկզբունքին համապատասխանող օբյեկտիվ իրավունքը (տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.** Իրավունքի և պետության տեսություն, եր., Նաիրի, 2001, էջ 295):

մասնավորապես ինչ է օրինականությունը՝ ռեժիմ, թե սկզբունք, որոնք են դրա սկզբունքները, պահանջները և այլն, չեն իմաստավորված: Սակայն օրինականության իրավաբանական հայեցակարգը նրա մոտ առավել հետևողական է և հասցված է «իրավական օրինականություն» հասկացության մակարդակի:

Ռ.Տ. Մուխանև օրինականությունը բնորոշում է որպես հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ, հասարակական հարաբերությունների իրավաչափության կացություն, որը հիմնված է իրավունքի գերակայության և սոցիալական արդարության վրա, արտահայտվում է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի պահպանմամբ և օգտագործմամբ:<sup>1</sup> Այս մոտեցումը որոշակիորեն հաղթահարում է օրինականության նորմատիվային հայեցակարգերին բնորոշ միակողմանիությունը, որ դրսևորվում է օրինականության ձևական-իրավաբանական հատկանիշների բացարձակացմամբ, օրինականության բովանդակային կողմի անտեսմամբ: Շեշտադրելով օրինականության նաև բովանդակային կողմը՝ որպես այդ բովանդակականության ապահովման երաշխիք՝ Ռ.Տ. Մուխանև օրինականության հենասյուներ է համարում իրավունքի գերակայությունը և սոցիալական արդարությունը: Այսպիսով՝ նշված հեղինակի մոտեցումը կարելի է համարել իրավագիտության իրավաբանական հայեցակարգով պայմանավորած մոտեցում: Սակայն Ռ.Տ. Մուխանևը հետևողականորեն չի զարգացնում իրավաբանական մոտեցումն օրինականության տեսության մնացած հիմնախնդիրների մշակման հարցում՝ կանգ առնելով միայն հասկացության վրա: Արդյունքում նրա կողմից մշակված օրինականության սկզբունքների, պահանջների, երաշխիքների շրջանակում մենք չենք տեսնում իրավաբանական մոտեցումը: Մասնավորապես՝ օրինականության սկզբունք է համարվում օրենքի գերակայությունը, այնինչ կարելի էր այդպիսին համարել ի-

րավական օրենքի գերակայությունը:<sup>1</sup> Այս հեղինակը մյուսներից տարբերվում է նրանով, որ մշակել է «օրինականության գործառույթներ» հասկացությունը: Օրինականության գործառույթներում արտահայտվում են օրինականության դերն ու նշանակությունը հասարակական կյանքում: Ռ.Տ. Մուխանև օրինականության գործառույթներից մեկն է համարում հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմության նպատակներին, ազատության, մարդասիրության և արդարության գաղափարներին համապատասխանող օրենսդրության պայմանների ձևավորումը: Սա, անշուշտ, ընդունելի մոտեցում է, սակայն այդ ընդհանուր գործառույթը պետք է արտացոլվի օրինականության սկզբունքներում, պահանջներում, վերածվի կոնկրետ իրավական ինստիտուտների և կառուցակարգերի, որոնք երաշխիք են օրինականության համար: Իզուր չէ, որ այդ հեղինակն օրինականության իրավաբանական երաշխիքների շարքում չի մատնանշում որևէ կառուցակարգ կամ միջոց, որն ուղղված կլիներ օրենքների իրավականության ապահովմանը կամ հակաիրավական օրենքների և այլ ակտերի հաղթահարմանը կամ վերացմանը:<sup>2</sup> Ակնհայտ է, որ Ռ.Տ. Մուխանևը հետևողականորեն չի զարգացնում օրինականության իր իսկ իրավաբանական հասկացությունը, իրավաբանական մոտեցումը չի տարածում օրինականության տեսության մյուս հիմնախնդիրների վրա:

Ի տարբերություն Ռ.Տ. Մուխանևի՝ Ա.Ս. Շաբուրովի մոտեցումն ավելի հետևողական է, որովհետև նա իրավաբանական մոտեցումը տարածում է ոչ միայն օրինականության հասկացության բնորոշման վրա, այլև օրինականության տեսության մնացած հիմնախնդիրների վրա: Նա մասնավորապես նշում է, որ օրինականության իր հայեցակարգը խարսխված է իրավունքի և օրենքի տարբերակման վրա, ինչը հնարավորություն է տալիս օրինականության հասկաց-

<sup>1</sup> Տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 439:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 439-442:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ նույն տեղում, էջ 442:

ման գործընթացում ուշադրությունը հրավիրել ոչ միայն իրավունքի նորմերի իրականացման, այլև իրավունքի նորմերի բովանդակության վրա, քանի որ բուն նորմերի բովանդակությունը մեծամասամբ կրում է կամային բնույթ:<sup>1</sup> Այսպիսի մեթոդոլոգիական մոտեցումներից ելնելով՝ Ա.Ս. Շաբուրովն օրինականության իրավաբանական հասկացությունից բխող հետևանքները տարածում է նաև օրինականության պահանջների վրա: Մասնավորապես նա օրինականության պահանջների շարքում օրենքի գերակայության, օրենքի առջև բոլորի հավասարության, իրավախախտումների դեմ հետևողական պայքարի և այլնի հետ միասին մատնանշում է «իրավունքի գերակայության գաղափարի կենսագործումը հասարակության, պետության կյանքում»: Օրինականության այդ պահանջից բխում է, որ «...օրենքների, ենթաօրենսդրական ակտերի բովանդակությունը պետք է համապատասխանի իրավունքի գաղափարին, իրերի իրավական բնույթին: Օրենսդրության մեջ պետք է ամրագրվի մարդասիրական, արդարացի, հենց «իրավական» որոշումը»:<sup>2</sup> Միայն նման օրենսդրության առկայությունն է ապահովում օրինականության ռեժիմը: Այսպիսով՝ Ա.Ս. Շաբուրովի օրինականության հայեցակարգը բովանդակային, մասնավորապես իրավաբանական հայեցակարգ է՝ կառուցված իրավունքի և օրենքի տարբերակման մոտեցման վրա: Ի տարբերություն Ռ.Տ. Մուխակի՝ այս հեղինակի մոտեցումն ավելի հետևողական է, քանի որ իր իրավաբանական մոտեցումներով դուրս է գալիս օրինականության հասկացության շրջանակներից՝ ներառելով իրավաբանական իրավահասկացողության տիրույթի ներազդեցության տակ նաև օրինականության պահանջները: Ա.Ս. Շաբուրովի մոտեցումը թերի է նրանով, որ նա իրավաբանական իրավահասկացողությունից բխող մոտեցումը չի տարածում օրինականության երաշխիքների, մասնավորապես օրի-

նականության իրավաբանական երաշխիքների վրա, չի մատնանշում իրավունքի և օրենքի համապատասխանությունն ապահովող կառուցակարգերն ու ինստիտուտները՝ որպես օրինականության երաշխիքներ:<sup>1</sup> Այսպիսով՝ Ա.Ս. Շաբուրովի օրինականության իրավաբանական հայեցակարգն աչքի է ընկնում մինչ այժմ քննարկված բովանդակային հայեցակարգերից իր հետևողականությամբ և համալիրությամբ: Սակայն այն թերի է մնացած առումներով, մասնավորապես ճիշտ չեն կիրառված համակարգային-կառուցվածքային մեթոդները: Նրա մոտ և՛ օրենքի՝ իրավունքին համապատասխանության պահանջը, և՛ պոզիտիվ իրավունքի նորմերի անշեղ կենսագործման պահանջն անվանակոչված են «օրինականություն» եզրույթով:

Հայրենական իրավագիտության մեջ օրինականության իրավաբանական հայեցակարգի ջատագովներից և «իրավաօրինականություն» հասկացության կողմնակից է Գ.Ս. Ղազինյանը, որի կարծիքով օրինականության մեկնաբանումը՝ որպես իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի նորմերի անշեղ պահպանման պահանջ, հիմնականում ճիշտ մոտեցում է, սակայն այն միակողմանիորեն է արտահայտում օրինականության՝ որպես համալիր քաղաքական-իրավական երևույթի բովանդակությունը և էությունը: Այս դեպքում օրինականության պահանջը, ինչպես և խորհրդային շրջանում, տարածվում է միայն իրավաիրացման (իրավակիրառման) վրա: Օրինականության նման հասկացումը, որը բավարարում էր ամբողջատիրական վարչաձևի պահանջումները, չի բավարարում ժողովրդավարության պահանջներին, ավելին, չի նպաստում իրավական պետության ձևավորմանը և ամրապնդմանը:<sup>2</sup> «Օրինականության մեկնաբանումը միայն իրավաիրացման առումով իրավունքի և օրենքի նույնացման արդյունք է, երբ պետությունից ելնող

<sup>1</sup> Տե՛ս *Շաբուրով Ա.Ս.* Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 437:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 440-443:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 449-456:

<sup>2</sup> Տե՛ս *Ղազինյան Գ.Ս.* Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 209:

ցանկացած նորմատիվ ակտ (նույնիսկ հակամարդասիրական, հետադիմական) համարվում է «իրավունք» և համապատասխանաբար պահանջում է անշեղ իրացում: Բայց չէ՞ որ այդ ակտերը, որոնք չեն համապատասխանում իրենց գործողության պայմաններին, կարող են և չապահովել իրավական կարգավորման նպատակի իրականացումը: Օրինականության հիմքում պետք է դրված լինի ոչ թե ցանկացած օրենսդրություն, այլ այնպիսին, որը մարմնավորում է իրավական սկզբունքները, համամարդկային գաղափարներն ու արժեքները, մարդու պահանջունքներն ու շահերը, հասարակական առաջադիմության օբյեկտիվ միտումները»:<sup>1</sup> Դրան համապատասխան, ըստ Գ.Ս. Ղազինյանի, օրինականության առաջին առումը նրա իրավական բնույթն է, ինչից բխում է, որ օրենքները պետք է ճիշտ «արտահայտեն իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ, ժողովրդավարական պետության իրավական իդեալները: Այդ կերպ հասկացված օրինականությունը մի շարք կարևոր պահանջներ է ներկայացնում իրավունքի աղբյուրների համակարգին», մասնավորապես՝

1) օրենքների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը մարդու անօտարելի և անքակտելի իրավունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին,

2) իրավունքի աղբյուրների շրջանակի և աստիճանակարգության օրենսդրական ամրագրում,

3) նորմատիվ ակտի ընդունման օրինական ընթացակարգի պահպանում:<sup>2</sup>

Օրինականության իրավաբանական հայեցակարգերի շարքում աչքի է ընկնում Ն.Վ. Վիտրուկի մոտեցումը: Նա, քննադատելով օրինականության ձևական, նորմատիվային հայեցակարգերը, հետևողականորեն զարգացնում է օրինականության իրավաբանական հայեցակարգը: Նրա կարծիքով օրինականության համար էական

նշանակություն ունի բուն իրավական նորմերի (սահմանադրություն, օրենքներ, ենթաօրենսդրական՝ ներառյալ գերատեսչական ակտեր և այլն) բովանդակային բնութագիրը, դրանց արժեքաբանական գնահատականը: Օրինականության բովանդակությունը կազմում է ոչ թե օրենսդրության առկայությունը (նույնիսկ իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից կատարյալ), այլև այնպիսի օրենսդրությունը, որն ադեկվատ կերպով կենսագործում է իրավական սկզբունքները, համամարդկային իդեալները և արժեքները, մարդու պահանջունքներն ու շահերը, սոցիալական առաջադիմության օբյեկտիվ միտումները:<sup>1</sup> Այս մեկնակետից ելնելով՝ Ն.Վ. Վիտրուկն օրինականությունը բնորոշում է որպես «պետության օրենքներում, բուն օրենսդրության մեջ, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունում իրավունքի իրական արտահայտման գաղափար, պահանջ և համակարգ (ռեժիմ)»: Նրա կարծիքով օրինականությունն իրապես գործող իրավունքի համակարգ է: Որպես իրապես գործող իրավունքի համակարգ՝ օրինականությունն (իրավաօրինականությունը) իր բովանդակության մեջ ներառում է երեք բաղադրատարրեր՝

առաջին, իրավական օրենսդրություն, որի տակ Ն.Վ. Վիտրուկը հասկանում է, որ գործող օրենքներն ադեկվատ կերպով են արտահայտում իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ ժողովրդավարական հասարակության և իրավական պետության իրավական իդեալները: Այս իմաստով օրինականությունը ճիշտ կլինի բնորոշել «իրավաօրինականություն»,<sup>2</sup>

երկրորդ, սահմանադրության և այլ օրենքների լրիվ իրականացում, կենսագործում,

<sup>1</sup> Տե՛ս **Витрук Н.В.** Законность: понятие, защита и обеспечение. Конституционная законность и конституционное правосудие.- В кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. М., ИКД Зерцало-М, 2001, էջ 158:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 161:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 210:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 212:

երրորդ, սահմանադրության և այլ օրենքների գործողության իրավաբանական պաշտպանության արդյունավետ համակարգ: Իրավաբանական պաշտպանության այդ համակարգը ներառում է ինչպես օրենքների կատարման վրա պետական վերահսկողության և հսկողության արդյունավետ համակարգը, այնպես էլ քաղաքացիների և այլ անձանց կողմից իրենց հիմնական իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի անհատական պաշտպանության համակարգը:

Չետաքրքիր է, որ օրինականության պաշտպանության (պահպանության) համակարգը ներառում է իրավունքի և օրենքի խախտումների վերահանումը և՛ իրավա(օրինա)ստեղծագործության, և՛ իրավակիրառման մեջ, այդ խախտումների արագ կանխումը, իրավունքի և օրենքի գործողության պաշտպանության, իրավունքի և իրավակարգի վերականգնման միջոցները գործողության մեջ դնելը, իրավունքի և օրենքի խախտումների համար մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելը: Այսպիսով՝ Ն.Վ. Վիտրուկի մոտեցումն օրինականության տեսության հիմնախնդիրներին կառուցված է հետևողական իրավաբանական իրավահասկացողության վրա: Իրավաբանական մոտեցման դիրքերից ելնելով՝ բնորոշվում է ոչ միայն օրինականության հասկացությունը, այլև մեկնաբանվում են օրինականության տեսության մնացած հիմնախնդիրները: Արդյունքում նա ընդունում է «իրավաօրինականության» հասկացությունը՝ որպես օրինականության առաջին և պարտադիր բաղադրատարր: Որպես դրա հետևանք՝ Ն.Վ. Վիտրուկն օրինականության ապահովման կառուցակարգերի շարքում առանձնացնում է նաև իրավաօրինականության իրավաբանական երաշխիքները:<sup>1</sup> Ն.Վ. Վիտրուկի օրինականության հայեցակարգը կառուցված է նաև հետևողական համակարգային և համալիր մոտեցումների վրա:<sup>2</sup>

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ նույն տեղում, էջ 160-182:

<sup>2</sup> Օրինականության հիմնախնդիրների համակարգային և համալիր մոտեցումների մասին տե՛ս սույն աշխատանքի առաջին գլխի 2.6. պարագրաֆը:

Իրավական օրինականություն կատեգորիան և կառույցն իր բոլոր մանրամասնություններով տեսական մշակման փորձ արել է Ա.Ա. Չեչուլինան իր «Իրավական օրինականություն (համատեսական վերլուծություն)» թեկնածուական ատենախոսության մեջ:<sup>1</sup> Այս հեղինակը, դիտարկելով իրավական օրինականությունը որպես օրինականության նոր մակարդակ, քննարկման առարկա է դարձրել իրավական օրինականության հասկացությունը, հատկանիշները, երաշխիքները: Սկզբունքորեն ճիշտ հասկանալով իրավական օրինականության հիմնախնդիրը՝ Ա.Ա. Չեչուլինայի մոտեցմանը բնորոշ են նաև թերություններ, որոնք հանգում են հետևյալին: Նա իրավական օրինականությունը դիտարկել է որպես գաղափար, որն անհրաժեշտաբար բխում է իրավական պետության տեսությունից, և այդ հիմքով կառուցել է իրավական օրինականության իր հայեցակարգը: Սակայն սույն հեղինակը չի փորձել իրավական օրինականությունը դիտարկել իրավունքի համակարգային կապերում, չի բացահայտել նրա տեղն իրավական կարգավորման համակարգում և դրա բաղադրատարրերում: Ստացվում է, որ իրավական օրինականությունը՝ որպես հասկացություն և կառույց, դեռևս ունի լուծման կարիք զգացող հիմնախնդիրներ համակարգային և համալիր մեթոդների կիրառման միջոցով: Խնդիրն այն է, որ նախ՝ վեր հանվի իրավական օրինականության տեղն իրավաբանական հասկացությունների համակարգում, այնուհետև, կիրառելով համակարգային մոտեցումը, պարզվի նրա տեղն իրավական մետահամակարգերում, ինչպես նաև բուն իրավական օրինականության ներքին համակարգային բաղադրատարրերը:

Այսպիսով՝ օրինականության հասկացությունն անպայմանորեն պետք է լինի իրավաբանական, որը տրամաբանորեն հանգեցնում է իրավական օրինականության հասկացությանը և իրավական կառույցին: Այդ հասկացությունը ցուցադրում է իրավունքի և օրեն-

<sup>1</sup> Տե՛ս *Чечулина А.А.* Правовая законность: общетеоретический анализ. Дисс. канд. юрид. наук. УФА, 2004:



քի, իրավունքի և օրինականության միասնությունը, որն անխուսափելիորեն բխում է իրավական պետության անհատական-իրավական և նորմատիվ-իրավական հատկանիշներից: Իրավական օրինականության հասկացությունը թույլ է տալիս հաղթահարել օրինականության նորմատիվիստական հայեցակարգերի թերությունները և ստեղծել իրավական ժողովրդավարական պետությանն արժանի օրինականության լայն ու ճիշտ հիմքերի վրա դրված հայեցակարգ:

Ամփոփելով սույն գլխի մինչ այժմ կատարված եզրակացությունները՝ կարող ենք փաստել հետևյալը՝

1. օրինականությունն իրավունքի հատկանիշներով պայմանավորված իրավունքի ու նրա բոլոր համակարգային դրսևորումներին, դրանց բաղադրատարրերին բնորոշ հիմնարար իրավական սկզբունք է,

2. իրավունքի հատկանիշների փոխակերպումն օրինականության համընդհանուր իրավական սկզբունքի պայմանավորված է նրանով, որ իրավունքի ձևերի ստորակարգային համակարգում առաջին տեղում կանգնած է գերակայությամբ օժտված օրենքը, ինչի ուժով իրավունքի համապարտադիրությունը վերածվում է օրինականության պահանջի,

3. այդ պահանջի գլխավոր նշանակությունը հասարակական հարաբերությունների իրավաչափության ապահովումն է, իսկ օրինականության էությունն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի և նրա պաշտոնական ձևերի (օրենքների և այլն) բարեխիղճ, անշեղ, խստագույն իրականացումը, պահպանումը և կատարումն է,

4. օրինականությունը համընդհանուր, համապարտադիր, իմպերատիվ կազմակերպագործառնության սկզբունք է, որը որոշում է իրավունքի ձևավորման, զարգացման և գործողության գործընթացը,

5. իրավական պետությունում իրավական օրենքի գերակայության սկզբունքը, իրավահասկացության իրավաբանական վար-

կածի վրա կառուցված մեթոդաբանական մոտեցումն օրինականության համընդհանուր սկզբունքի առջև դնում է նոր խնդիր՝ միայն իրավունքին հաղորդել օրինական (պաշտոնական-իշխանական, համապարտադիր) ուժ և միաժամանակ, որպեսզի օրենքը միշտ և բոլոր դեպքերում և բոլոր իրավական տարածություններում լինի իրավական: Այդ խնդրի կենսագործման արդյունքում առաջ է գալիս նոր հասկացություն «իրավական օրինականություն»: Իրավական օրինականության սկզբունքի առաջին պահանջն իրավունքի արտացոլումն է օրենքում, իսկ այնուհետև իրավական որակներով օժտված օրենքի համապարտադիրությունից բխող ընդհանուր պահանջ՝ ուղղված յուրաքանչյուրին և բոլորին՝ անշեղ կենսագործելու այդ օրենքները (նաև այլ իրավական ձևերում ամրագրված կարգադրագրերը): Առաջին պահանջն ուղղված է պետությանը և նրա իշխանական ճյուղերին, երկրորդը՝ յուրաքանչյուր և բոլոր անհատներին:

Այդպիսով՝ իրավական օրինականությունը ենթադրում է օրինականության հասկացությունը և ներառում է նրա էական պահանջը՝ որպես իր մի մաս: Սովորական, ավանդական իմաստով օրինականության պահանջներին ավելանում է նոր պահանջ՝ պոզիտիվացնել, համապարտադիր դարձնել միայն իրավունքը և նրա էությունը, պահանջներն ու սկզբունքները, օրինակ՝ բնական իրավունքները, և արդյունքում պաշտոնական ձև տալ միայն իրավական օրենքին:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ**  
**ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅՈՆՆԵՐԸ**

**§ 1. Իրավական օրինականությունը որպես իրավական**  
**մետահամակարգերի բաղադրատարր**

Աշխատանքի այս գլխում մենք կփորձենք վեր հանել և հետազոտել իրավական օրինականության՝ որպես սկզբունքի տեղն ու դերն իրավական մետահամակարգերում, հատկապես իրավական կարգավորման համակարգում (կառուցակարգում): Դրա համար անհրաժեշտ է նախ կողմնորոշվել իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի՝ որպես համակարգի հասկացության, բաղադրատարրերի և փուլերի վերաբերյալ, այնուհետև պարզել և իմաստավորել իրավական օրինականության, այդ թվում օրինականության տեղը և դերն այդ կառուցակարգում, ինչպես նաև վերլուծել իրավական օրինականության՝ որպես համակարգի կառուցվածքային բնութագիրը և բաղադրատարրերը:

Իրավական օրինականությունն իրավունքի հատկանիշներով պայմանավորված, իրավունքի ու նրա բոլոր համակարգային դրսևորումներին, դրանց բաղադրատարրերին բնորոշ հիմնարար, համընդհանուր, համապարտադիր, իմպերատիվ կազմակերպագործառնության իրավական սկզբունք է, որի գլխավոր նշանակությունը հասարակական հարաբերությունների իրավաչափության ապահովումն է: Իրավական պետությունում իրավական օրինականության համընդհանուր սկզբունքի պահանջները կատարում են երկմիասնական գործառնություն՝

առաջին, պոզիտիվացնել, համապարտադիր դարձնել միայն իրավունքը, նրա պահանջներն ու սկզբունքները և արդյունքում պաշտոնական ձև տալ միայն իրավական օրենքին,

երկրորդ, բարեխիղճ, անշեղ, խստագույնս կենսագործել իրավունքը և նրա պաշտոնական ձևերում (օրենքներ և այլն) ամրագրված կարգադրագրերը:

Համակարգային մոտեցումը պահանջում է իրավական օրինականությունը որպես համակարգ դիտարկել ավելի լայն իրավական մետահամակարգերի շրջանակներում, դրանց բաղադրատարրերի հետ կապերում: Իրավունքը դիտարկվում է որպես հասարակական հարաբերությունների կարգավորման յուրահատուկ համակարգ, որին այլ հատկանիշների հետ միասին բնորոշ է նաև համակարգայնությունը:<sup>1</sup> Իրավունքը բարդ համակարգային կազմավորում է և որպես այդպիսին այն դիտարկվում է մի շարք իմաստներով:

Առաջին, «իրավունք» եզրույթն օգտագործում են բոլոր իրավական երևույթների համակարգը նշելու համար: Այս դեպքում «իրավունք» եզրույթը հոմանիշ է նեղ իմաստով «իրավական համակարգ» եզրույթին:<sup>2</sup>

Երկրորդ, իրավունքի համակարգային կապերը դիտարկվում են նաև «իրավունքի համակարգ» հասկացության միջոցով:

Երրորդ, իրավունքը որպես համակարգային երևույթ դիտարկվում է որպես օբյեկտիվ էության (օրինակ՝ բնական իրավունքի), պոզիտիվ իրավունքի և սուբյեկտիվ իրավունքի ամբողջություն:

Չորրորդ, իրավունքի ազգային իրավական համակարգերից զատ գոյություն ունի նաև վերազգային կամ միջազգային իրավունքը, որոնք երկուսն էլ որպես ինքնուրույն ենթահամակարգեր կազմում են մեկ միասնական ամբողջություն՝ մետահամակարգ:

<sup>1</sup> Տե՛ս **Տսակун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, էջ 276-278; **Леушин В.И., Перевалов В.Д.** Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 217-232; **Гойман В.И.** Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристы, 2005, էջ 133-134; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 16:

<sup>2</sup> Տե՛ս **Леушин В.И., Перевалов В.Д.** Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория государства и права. Под ред. **В.М. Корельского и В.Д. Перевалова.** М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 224:

Հինգերորդ, իրավունքը ներգործում է հասարակական հարաբերությունների վրա, կարգավորում դրանք: Արդյունքում իրավունքի տեսության մեջ մշակված է իրավական կարգավորման կառուցակարգ հասկացությունը՝ որպես իրավական կարգավորման իրավաբանական միջոցների համակցություն-համակարգ:<sup>1</sup>

Իրավական օրինականությունը, որը ենթադրում է նաև օրինականությունը, որպես իրավունքի համընդհանուր սկզբունք՝ դրսևորվում է իրավական բոլոր երևույթներում, իրավունքի համակարգային բոլոր կապերում: Հենց դրանով է պայմանավորված նրա համալիր և համընդհանուր բնույթը:

Իրավական մետահամակարգերը մեկն էլ իրավական կարգավորման կառուցակարգն է: Իրավական օրինականության տեղը և դերն իրավական երևույթների շարքում ամենից հստակ և ցայտուն արտահայտվում է իրավական կարգավորման կառուցակարգում այն դիտարկելիս, քանի որ այդ կառուցակարգն առավել մանրամասն է արտացոլում իրավունքի ձևավորման, իրավական կարգավորման, իրավունքի գործողության ողջ գործընթացը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում իրավական օրինականությունը դիտարկել այդ համակարգի ներհամակարգային կառուցվածքում ու կապերում: Սակայն մինչ այդ անհրաժեշտ է կողմնորոշվել, թե ինչ է իրավական կարգավորման կառուցակարգը որպես համակարգ: Այդ համակարգի հասկացության, բաղադրատարրերի և փուլերի շուրջ կողմնորոշումը մեզ հնարավորություն կտա անցնելու հաջորդ հետազոտական խնդրի կենսագործմանը՝ պարզել և իմաստավորել իրավական օրինականության, այդ թվում օրինականության տեղը և դերն այդ կառուցակարգում: Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգի զանազան հիմնախնդիրները պետության և իրավունքի տեսության մեջ սկսեցին ինտենսիվորեն մշակել 20-րդ դարի 60-ական թվական-

ներից:<sup>1</sup> Այդ ժամանակներից սկսած ձևավորվեց իրավական կարգավորման կառուցակարգի (մեխանիզմի) տեսությունը,<sup>2</sup> որն աստիճանաբար թափանցեց նաև ուսումնական գրականությունը:<sup>3</sup> Այս տե-

<sup>1</sup> Ամենամշանակալի ներդրումն այդ հիմնախնդրի մշակման գործում կատարել է Ս.Ս. Ալեքսեևը, որի „Механизм правового регулирования в социалистическом государстве“ (М., 1966) աշխատության մեջ նշվում է, որ «իրավական կարգավորման կառուցակարգ» հասկացությունը մշակվել է իրավական ձևի գործառնությունում, շարժման պահին արտացոլելու համար:

<sup>2</sup> Այդ ժամանակներից սկսած՝ իրավական կարգավորման տեսությունը զարգացավ վեց ուղղություններով: Առաջինն այդ տեսության մեջ օգտագործվող հասկացությունների և եզրույթների մշակումն էր, դրանց բովանդակության և ծավալի ճշգրտումը: Երկրորդն իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրերի համակարգի կառուցումն ու դրանց գործառնությունում առանձնահատկությունների հետազոտությունն էր: Երրորդն իրավական ազդեցության կառուցակարգի հասկացության և համակարգի առաջադրումն ու հետազոտությունն էր: Չորրորդը ճուղային և ինստիտուցիոնալ իրավական կարգավորման կառուցակարգերի հետազոտությունն էր (տե՛ս Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 307-309): Հինգերորդը դա իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրերի առավել լայն և հարուստ համակարգի մշակումն էր՝ դրա մեջ բացի իրավաբանական միջոցներից ներառելով նաև այլ բաղադրատարրեր (տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 380-404): Վեցերորդն իրավական կարգավորման կառուցակարգը սոցիոլոգիական դիրքերից իմաստավորելն էր՝ այն դիտարկելով սոցիալական կարգավորման համակարգի պրիզմայում (տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 91-100):

<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997; **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001; Теория государства и права. Под ред. М.М. Рассолова, В.О. Лучина, Б.С. Эбзеева. М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000; **Поляков А.В.** Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петербур. гос. ун-та, 2004; Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002; **Общая теория права и государства.** Под ред. В.В. Лазарева. М., Юрист, 2005; **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997; **Головистикова А.Н., Дмитриев Ю.А.** Проблемы теории государства и права. М., Изд-во Эксмо, 2005; Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юрист, 1999; **Лазарев В.В., Липень С.В.** Теория государства и права. 3-е изд., испр. и доп., М., Спарк, 2004:

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս ստորև:

սության շրջանակներում գիտնականներն իրավական համակարգը ներկայացնում են դիմամիկայի մեջ և սովորաբար նրա հետազոտության առարկայի մեջ ներառում են իրավական ներգործության հասկացության և ձևերի հիմնախնդիրները, իրավական կարգավորման առարկա և սահմաններ հասկացությունները և դրանց հիմնախնդիրները, իրավական կարգավորման կառուցակարգի՝ որպես համակարգի բաղադրատարրերի և գործառնությունների փուլերի հիմնախնդիրները, իրավական կարգավորման մեթոդների, եղանակների, տիպերի ու այլ հիմնահարցեր:

Մինչև մեր ատենախոսության հետազոտության բուն առարկային, այսինքն՝ իրավական օրինականության և իրավական կարգավորման կառուցակարգի հարաբերակցության հիմնախնդիրների հետազոտությանն անցնելը, փորձենք կանգ առնել իրավական կարգավորման կառուցակարգի տեսության երեք հիմնահարցերի պարզաբանման վրա՝ իրավական կարգավորման կառուցակարգի հասկացության բնորոշման, այդ համակարգում կառուցվածքային բաղադրատարրերի (էլեմենտների), ինչպես նաև գործառնությունների փուլերի: Այդ հիմնահարցերի շուրջ կողմնորոշվելը մեզ հնարավորություն կտա որոշելու իրավական օրինականության տեղն իրավական կարգավորման կառուցակարգում և լուծելու մինչ այժմ մեզ հուզող օրինականության տեսության հիմնահարցերը:

Իրավական կարգավորման կառուցակարգը բնորոշում են տարբեր կերպ: Ավանդական բնորոշման համաձայն՝ իրավական կարգավորման կառուցակարգն իրավական միջոցների համակցություն է: Այսպես՝ Վ.Բ. Իսակովն իրավական կարգավորման կառուցակարգը բնորոշում է որպես միասնության մեջ վերցրած իրավական միջոցների համակարգ, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների արդյունքային իրավական կարգավորումը:<sup>1</sup> Իրավական կարգավորման կառուցակարգը նույն

<sup>1</sup> Տե՛ս **Исаков В.Б.** Механизм правового регулирования.- В кн. Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, էջ 293:

կերպ են բնորոշում նաև Վ.Վ. Լազարևը և Ս.Վ. Լիպենը,<sup>1</sup> Ա.Ն. Գոլովիստիկովան և Յու.Ա. Դմիտրիևը,<sup>2</sup> Ռ.Կ. Ռուսինովը,<sup>3</sup> Ա.Ֆ. Չերդանցևը,<sup>4</sup> Ռ.Տ. Սուխանը:<sup>5</sup> Իրավական կարգավորման մեխանիզմն իրավական միջոցների համակցության միջոցով է բնորոշում նաև Վ.Ն. Խրոպանյուկը: Սակայն, ի տարբերություն այլ հեղինակների, վերջինս այդ բնորոշումը լրացնում է կարգավորման նպատակներով ու խնդիրներով: Ըստ նրա՝ «իրավական կարգավորման կառուցակարգն իրավական միջոցների համակարգ է, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումն իրավական պետության նպատակներին ու խնդիրներին համապատասխան»:<sup>6</sup>

Սակայն իրավական կարգավորման կառուցակարգի «ավանդական» բնորոշումները որոշակիորեն թերի են, քանի որ խարսխված են միայն հիմնախնդրի գործիքային կողմի վրա՝ մի կողմ թողնելով իրավական կարգավորման համակարգի մնացած բաղադրատարրերը:<sup>7</sup> Այս տեսանկյունից իրավունքի տեսության մեջ վերջին տարիներին մշակվել է իրավական կարգավորման կառուցակարգի հիմնահարցերի տեսական նոր մոդել, որի կողմնակիցներից Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Ա. Սապունը ելնում են այն մոտեցումից, որ չի կարելի իրավական կարգավորման մեխանիզմի կառուցվածքը հանգեցնել կարգավորիչ գործունեության իրավական միջոցների (գործիք-

<sup>1</sup> Տե՛ս **Лазарев В.В., Липень С.В.** Теория государства и права. 3-е изд., М., Спарк, 2004, էջ 439:

<sup>2</sup> Տե՛ս **Головистикова А.Н., Дмитриев Ю.А.** Проблемы теории государств и права. М., Изд-во Эксмо, 2005, էջ 579:

<sup>3</sup> Տե՛ս **Русинов Р.К.** Правовое регулирование и его механизм.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 269:

<sup>4</sup> Տե՛ս **Черданцев А.Ф.** Теория государства и права. М., 2001, էջ 350:

<sup>5</sup> Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 453:

<sup>6</sup> Տե՛ս **Хропанюк В.Н.** Теория государства и права. М., 1999, էջ 341-342:

<sup>7</sup> Այս տեսակետին է նաև Վ.Մ. Սիրիխը, որի կարծիքով «մեխանիզմի կառուցի ուսումնասիրությունը, նրա բաղադրամասերի մակարդակում համարվում է ոչ լրիվ» (տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом, „Юстицинформ“, 2001, էջ 83-85):

ների) պարզունակ համակցությամբ: Նրանց կարծիքով «ցանկացած մեխանիզմ գործիքային բաղադրատարրերի հետ միասին ներառում է սուբյեկտային կազմ, փոխկապեր և փոխգործողություններ, որոնք ապահովում են մեխանիզմի գործունեությունը, ինչպես նաև հարաբերություններ, որոնք ծագում են իրավական կարգադրագրերի պրակտիկ կենսագործման գործընթացում»:<sup>1</sup> Այդ հիմնավորմանը նշված հեղինակներն իրավական կարգավորման մեխանիզմի շրջանակներում պայմանականորեն առանձնացնում են հետևյալ կառուցվածքային բաղադրատարրերը՝

1) գործիքային կազմը՝ որպես իրավական միջոցների, մեթոդների և եղանակների համակցություն, որոնց օգնությամբ իրավական կարգավորումը կարող է իրականացվել,

2) ձևականացված ընթացակարգերը (տեխնոլոգիաները), որոնք ամրագրում են կարգավորիչ գործունեության պարամետրերը,

3) սուբյեկտային կազմը՝ որպես անհատական և կոլեկտիվ խմբային սուբյեկտների համակցություն, որոնք ընդգրկված են իրավական կարգավորման գործընթացում,

4) գործառության բաղադրիչը՝ որպես փոխադարձ կապեր և փոխգործողություններ, որոնք միավորում են իրավական կարգավորման կառուցակարգի ստատիկ բաղադրատարրերը, ինչպես նաև իրավահարաբերությունները՝ որպես մեխանիզմի գործողության դինամիկայի բնութագիր:<sup>2</sup>

<sup>1</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 401:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 401: Ըստ Վ.Մ. Սիրիխի՝ իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի բովանդակությունը կազմում են այն երևույթները և գործընթացները, որոնք ուղղակիորեն ներգործում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացի վրա, և որոնց անմիջական օբյեկտը կամ արդյունքն իրավաբանորեն նշանակալի որոշումներն են կամ գործողությունները: Այդ կառուցակարգի բաղադրատարրերն են համարվում՝ 1) սոցիալ-իրավական միջոցները, 2) սուբյեկտները, որոնք իրականացնում են գործունեություն՝ ուղղված հասարակական հարաբերությունների կարգավորմանը կամ իրավական նորմերի կենսագործմանը կոնկրետ հարաբերություններում, 3) իրավաբանորեն նշանակալի գործունեությունը, 4) իրավաբանորեն նշանակալի գործունեության արդյունքները (տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., 2001, էջ 92):

Այս մոտեցումը որպես առավել լրիվ և համակարգային մոտեցում աչքի է ընկնում իրավական կարգավորման մեխանիզմի կառուցվածքային բաղադրատարրերի վերաբերյալ այլ տեսաբանների մոտեցումներից: Դրանցից մեկի՝ Ս.Ս. Ալեքսեևի կարծիքով իրավական կարգավորման մեխանիզմի բաղադրատարր են համարվում իրավական նորմերը, իրավահարաբերությունները, սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների իրացման ակտերը, անհատական կարգադրագրերը, իրավունքի կիրառման ակտերը (որպես ֆակուլտատիվ բաղադրատարր):<sup>1</sup> Այս մոտեցմանը համապատասխան՝ իրավունքի տեսաբաններն առավել հաճախ իրավական կարգավորման մեխանիզմի բաղադրատարրեր են համարում նշված չորս միջոցները:<sup>2</sup> Հեղինակների մյուս մասն այդ չորս բաղադրատարրերին ավելացնում է որևէ մոր բաղադրատարր: Օրինակ՝ Ա.Վ. Մալկոն այդ շարքում թվարկում է նաև իրավաբանական փաստերը:<sup>3</sup> Իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրերի շրջանակի վերաբերյալ մյուս մոտեցումը հանգում է նրան, որ որպես այդպիսիք են համարվում իրավական նորմերը, նորմատիվ-իրավական ակտերը, իրավաբանական փաստերը, իրավահարաբերությունները, իրավունքի իրականացման ակտերը, իրավակիրառման ակտերը, իրավագիտակցությունը, օրինականության ռեժիմը:<sup>4</sup> Սակայն այս տեսակետը ևս մախորդների պես թերի է, քանի որ իրավական կարգավորման մեխանիզմի կառուցվածքը հանգեցնում է իրավական միջոցների (գործիքների) պարզունակ

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Теория права. 2-ое изд. М., 1995:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 775-779; **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 457; *Общая теория права и государства.* Под ред. В.В. Лазарева. М., Юристь, 2005, էջ 484-485:

<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристь, 1999, էջ 627:

<sup>4</sup> Տե՛ս **Русинов Р.К.** Правовое регулирование и его механизм.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 269:

համակցությանը, հաշվի չի առնում այդ մեխանիզմի գործողության այլ բաղադրատարրերը, հատկապես սուբյեկտային կազմը:

Այսպիսով՝ սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրերի հիմնահարցում ավանդական և ոչ ավանդական մոտեցումներից մեր հիմնախնդրի՝ իրավական օրինականության հայեցակարգի հիմնահարցերի լուծման համար նախընտրելի է ոչ ավանդական կամ լայն մոտեցումը, որն ավելի հարուստ և բազմատարր է ներկայացնում այդ կառուցակարգը, հետևաբար, հնարավորություն է տալիս առավել լրիվ ու ամբողջական վեր հանելու և ներկայացնելու այդ կառուցակարգում իրավական օրինականության տեղը և դերը, դրսևորման բոլոր կողմերը:

Սոցիալական-իրավական կարգավորման կառուցակարգը ներկայացնում է իրավական կարգավորման ստատիկ վիճակը՝ որպես բաղադրատարրերի ամբողջություն: Սակայն իրավական կարգավորման կառուցակարգն ունի իր դինամիկան՝ որպես կարգավորիչ գործընթաց: Իր դինամիկայի կամ գործողության մեջ սոցիալ-իրավական կարգավորումը ևս ներկայացնում է բաղադրատարրերի ամբողջություն, որոնք, ըստ Վ.Ս. Սիրիխի, «վերարտադրում են օրինաչափ կապերն իրավաստեղծագործության, իրավունքի իրականացման, պետական հարկադրանքի միջև»:<sup>1</sup> Այդ իմաստով ևս սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգն ունի գործառուծային կառուցվածք՝ կազմված որոշակի բաղադրատարրերից, որոնք ընդունված է համարել սոցիալ-իրավական կարգավորման փուլեր (և կամ էտապներ): Այդպիսով՝ սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգի գործառուծավորումն արտահայտում է իրավունքի գործողության գործընթացը, որը բաժանվում է փուլերի: Կարգավորման ամեն մի փուլին բնորոշ են նրա իրավաբանական միջոցները, որոնք և համակցության մեջ կազմում են սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգը: Իրավական կարգավոր-

<sup>1</sup> Տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 98:

ման կառուցակարգի փուլերի հարցը ևս իրավունքի տեսության վիճելի հարցերից է: Ա.Ա. Կոմարովն իրավական կարգավորման կառուցակարգը տրոհում է չորս փուլերի՝

1) իրավունքի նորմի հրապարակում և դրա ընդհանուր ներգործություն (հասարակական հարաբերությունների կարգավորում),

2) սուբյեկտիվ իրավունքների և սուբյեկտիվ պարտականությունների առաջացում,

3) սուբյեկտիվ իրավունքների և սուբյեկտիվ պարտականությունների իրականացում, դրանց կենսագործում հասարակական հարաբերությունների մասնակիցների կոնկրետ, փաստական վարքագծում,

4) իրավունքի կիրառում:<sup>1</sup>

Բացի քառափուլ բաժանման կողմնակիցներից կան նաև իրավական կարգավորման եռափուլ բաժանման կողմնակիցներ, ովքեր իրավական կարգավորման փուլեր են համարում հետևյալ փուլերը՝

ա) հասարակական հարաբերությունների կարգավորման, իրավունքի ձևավորման և ընդհանուր գործողության փուլ,

բ) իրավունքի նորմերի հասցեատերերի մոտ սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների առաջացման փուլ,

գ) իրավունքի սուբյեկտների վարքագծում սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների իրականացման փուլ:<sup>2</sup>

<sup>1</sup> Տե՛ս *Комаров С.А.* Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 384: Իրավական կարգավորման կառուցակարգի քառափուլ բաժանման կողմնակից է նաև Վ.Ն. Գոլովիստիկովան (տե՛ս *Головистикова А.Н., Дмитриев Ю.А.* Проблемы теории государства и права. М., Изд-во Эксмо, 2005, էջ 580-581):

<sup>2</sup> Տե՛ս *Лазарев В.В., Липень С.В.* Теория государства и права. 3-е изд., испр. и доп., М., Спарк, 2004, էջ 438-439; *Русинов Р.К.* Правовое регулирование и его механизм.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Первалова. М., Издательская группа ИНФРА. М-НОРМА, 1997, էջ 267-268; *Общая теория права и государства.* Под ред. В.В. Лазарева. М., Юристь, 2005, էջ 484:

Իրավական կարգավորման կառուցակարգի եռափուլ և քառափուլ բաժանման կողմնակիցների ընդհանուր մեթոդաբանական, պարադիգմալ մոտեցումն ըստ էության նույնն է: Միակ տարբերությունն իրավունքի իրականացման ընդհանուր փուլից իրավունքի կիրառման փուլի առանձնացումն է:

Իրավական կարգավորման կառուցակարգի գործառնափակման փուլերի բաժանման հարցում յուրահատուկ է Օ.Ֆ. Սկակունի մոտեցումը: Վերջինս իրավական կարգավորման գործընթացը բաժանում է պարզ և բարդ տեսակների:<sup>1</sup> Իրավական կարգավորման պարզ գործընթացը ենթադրում է միայն մեկ պետախիշտանական ակտ՝ նորմատիվ-իրավական: Այս դեպքում իրավունքների և պարտականությունների անհատականացումն իրականացնում են այն սուբյեկտները, որոնց հասցեագրված է այդ ակտը: Օ.Ֆ. Սկակունն այս դեպքի համար առանձնացրել է իրավունքի իրականացման անմիջական կառուցակարգը, երբ իրավունքի սուբյեկտներն առանց պետության միջամտության կենսագործում են իրենց իրավունքները և պարտականությունները: Դրան հակառակ՝ իրավական կարգավորման բարդ գործընթացն անցնում է չորս փուլերով՝

- ա) իրավաստեղծագործության կառուցակարգ,
- բ) իրավունքի նորմի իրավահարաբերության ձևով իրականացման կառուցակարգ,
- գ) իրավունքի կիրառման կառուցակարգ,
- դ) իրավունքի անարգել իրականացման կառուցակարգ, որը ենթադրում է պետաիրավական հարկադրանքի կիրառման և իրավաբանական պատասխանատվության կիրառման ընթացակարգերը:<sup>2</sup>

Իր տիպային մոտեցմամբ Օ.Ֆ. Սկակունի դիրքորոշումը չի տարբերվում մինչ այժմ քննարկված տեսաբանների դիրքորոշումներից և, ըստ էության, իրավական կարգավորման կառուցակարգը հանգեցնում է միայն իրավական միջոցների և ձևերի համակարգին:

<sup>1</sup> Տե՛ս **Скакун О.Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 780:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 782:

Իրավական կարգավորման սոցիալական մեխանիզմի գործառնափային (ֆունկցիոնալ) կառուցվածքի վերաբերյալ տեսական պատկերացումների մոդելներից աչքի է ընկնում Վ.Ս. Սիրիխի մոտեցումը, որն իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգը բաժանում է հինգ առանձին բաղադրատարրերի՝ ենթակառուցակարգերի:<sup>1</sup> Դրանք են՝

- 1) իրավունքի ձևավորման կառուցակարգը,
- 2) իրավաստեղծագործության սոցիալական կառուցակարգը,
- 3) իրավական տեղեկութավորման կառուցակարգը,
- 4) իրավունքի իրականացման սոցիալական կառուցակարգը (ներառյալ իրավակիրառումը),
- 5) սոցիալ-իրավական վերահսկողության կառուցակարգը:

Այսպիսով՝ իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի բաղադրատարրերի և փուլերի վերաբերյալ տեսական մոդելներից ամենաընդունելին Վ.Ս. Սիրիխի մոտեցումն է՝ որպես առավել ամբողջական և համակարգային, որի դեպքում գործողության ողջ շղթայից դուրս չեն մնում իրավական գործունեության ձևերից և ոչ մեկը: Հետևաբար, հենց այդ մոդելն էլ մենք հիմք կդարձնենք իրավական օրինականության տեսության հիմնահարցերի լուծման համար:

Իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրերի ճիշտ որոշման հարցը կարևոր նշանակություն ունի: Եթե համաձայնվենք այդ հիմնահարցի ավանդական կամ նեղ մոտեցման հետ, ըստ որի՝ իրավական կարգավորման կառուցակարգը բաղկացած է իրավունքի նորմից, իրավահարաբերությունից և իրավաիրացնող ակտերից, ապա իրավական կարգավորման վերաբերյալ պատկերացումները և, հետևաբար, դրանում իրավական օրինականության իմաստավորումը կդառնան ոչ ամբողջական և աղքատիկ: Առավել լայն մոտեցումն իրավական կարգավորման կառուցակար-

<sup>1</sup> Տե՛ս Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, էջ 98:

գին, դրանում շատ ավելի մեծ թվով տարրերի ներառումը հնարավորություն է տալիս ավելի ադեկվատ, ճիշտ և լայն պատկերացնելու իրավական կարգավորումը, հետևաբար, նաև ճիշտ իմաստավորելու իրավական օրինականության տեղը դրանում:

Այսպիսով՝ իրավական կարգավորման սոցիալական համակարգի առավել լրիվ և համակարգային մոդելը ենթադրում է, որ այդ կառուցակարգը բազմատարր համակարգ է, բաղկացած սոցիալ-իրավական միջոցներից, կառուցակարգի սուբյեկտներից, իրավաբանական նշանակալի գործունեությունից, այդ գործունեության արդյունքներից: Համակարգը ստատիկ չէ, այլ գործող, որն անցնում է հինգ փուլեր՝

- ա) իրավունքի ձևավորման,
- բ) իրավաստեղծագործության,
- գ) իրավական տեղեկութավորման,
- դ) իրավունքի իրականացման,
- ե) սոցիալ-իրավական վերահսկողության:

Իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի ամեն մի փուլն իր հերթին կազմում է ենթակառուցակարգ իրեն բնորոշ ստատիկ բաղադրատարրերով, իրավաբանական միջոցներով:

Կողմնորոշվելով իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի՝ որպես համակարգի հասկացության բաղադրատարրերի և փուլերի վերաբերյալ՝ մեզ մնում է պարզել և իմաստավորել իրավական օրինականության, այդ թվում օրինականության տեղը և դերն այդ կառուցակարգում: Այս վերջին հիմնահարցի վերաբերյալ իրավունքի տեսաբանների մոտեցումները շատ ընդհանուր են և անորոշ: Նախ ասենք, որ տեսաբանների մեծագույն մասն անտեսում է այդ հիմնահարցը:<sup>1</sup> Մյուսները որոշակիորեն անդրադառնում են

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 455-458; *Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 439-442; Скакун О.Ф.* Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, էջ 774 և այլն:

դրան՝ փորձելով իրավական կարգավորման կառուցակարգում որոշակի տեղ հատկացնել նաև օրինականությանը: Այդպիսի դիրքորոշումներից մեկը հանգում է նրան, որ օրինականության ռեժիմը և իրավագիտակցությունը համարվում են իրավական կարգավորման կառուցակարգի յուրահատուկ, այսպես կոչված, ոչ նյութական բաղադրատարրեր: «Սակայն դրանց ոչ նյութականությունը չի խանգարում, որպեսզի դրանք գործուն ազդեցություն ունենան իրավական կարգավորման ողջ գործընթացի վրա: Իրավագիտակցության մակարդակից և օրինականության ռեժիմի իրական լինելուց կախված է իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր բաղադրատարրերի արդյունավետ աշխատանքը»:<sup>1</sup>

Այսպիսով՝ իրավական կարգավորման կառուցակարգի տեսության մեջ օրինականության տեղի և դերի վերաբերյալ առկա տեսակետներից մեկն այն է, որ այն դիտարկվում է այդ կառուցակարգի յուրահատուկ բաղադրատարր, մնացած բաղադրատարրերի՝ իրավունքի նորմերի, իրավահարաբերությունների, իրավունքի կենսագործման ակտերի հետ միասին: Իրավական կարգավորման կառուցակարգում օրինականության՝ որպես բոլոր սուբյեկտների կողմից օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ճշգրիտ և անշեղ պահպանման պահանջի տեղի և դերի մասին երկրորդ մոտեցումը հանգում է նրան, որ օրինականությունը և իրավագիտակցությունը համարվում են ոչ թե իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարրեր, այլ գործոններ:<sup>2</sup> Այս մոտեցման կողմնակիցները, օրինականությունը համարելով իրավական կարգավորման կառուցակարգի գործոն, գտնում են, որ այն այդ կառուցակարգի «հիմնական, անպայման ատրիբուտն է, սակայն ոչ կարգավորման բաղադրատարրը: Առանց իրավագիտակցության և օրինականության

<sup>1</sup> Տե՛ս **Русинов Р.К.** Правовое регулирование и его механизм.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 270:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург, Деловая книга, 2002, էջ 153:



կառուցակարգի ցանկացած բաղադրատարր, ցանկացած փուլ ջարդված է, անադիվատ գործող, իրավական կարգավորման իսկական իմաստը խեղաթյուրող»:<sup>1</sup>

Իրավական կարգավորման կառուցակարգում օրինականության նշանակության դատողությունների հետ անպայմանորեն պետք է համաձայնվել: Սակայն համարել օրինականությունն այդ կառուցակարգի հասարակ գործոն չի կարելի: Գործոնը չի կարող լինել հիմնական, անպայման կարևորագույն ատրիբուտ: Բացի այդ իրավական կարգավորման կառուցակարգում օրինականության տեղի և դերի վերաբերյալ երկու մոտեցումներն էլ կառուցված են օրինականության, այլ ոչ թե իրավական օրինականության հայեցակարգի վրա:

Մենք արդեն հիմնավորել ենք, որ իրավական օրինականությունը, լինելով իրավունքի համընդհանուր կազմակերպական սկզբունք և ունենալով համապարտադիրություն, բարձրագույն իմպերատիվություն, որոշում է իրավունքի ձևավորման, զարգացման և գործողության գործընթացը: Հետևաբար, այն իրավական կարգավորման կառուցակարգում դրսևորվում է որպես նրա բաղադրատարր-սկզբունք, որը բնորոշ է նրա բոլոր բաղադրատարրերին, գործում է իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում նման բնույթի այլ սկզբունքների հետ համաքայլ:<sup>2</sup> Հենց դրանով է պայմանավորված իրավական օրինականության համալիր և բազմակողմ բնույթը, քանի որ իրավական կարգավորման կառուցակարգի ընդհանուր համակարգի ամեն մի փուլային ենթակառուցակարգում այն դրսևորվում է յուրօրինակ և կատարում է հատուկ գործառնություններ, մասնակից սուբյեկտների յուրաքանչյուր կարգավիճակային խմբին ներկայացնում է առանձնահատուկ պահանջներ:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Խոսքը գնում է համոզմունքի և հարկադրանքի զուգակցման, խթանման և սահմանափակման զուգակցման, իսկ դաշնային պետություններում՝ նաև ֆեդերալիզմի սկզբունքների մասին:

Նույն եզրահանգումը վերաբերում է նաև իրավագիտակցությանը: Ինչպես պարզեցինք վերևում իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարր են սուբյեկտները կամ մասնակիցները, բայց ոչ իրավագիտակցությունը: Հետևաբար, սխալ են և՛ այն տեսակետները, որոնք իրավագիտակցությունը համարում են իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրատարր,<sup>1</sup> և՛ այն տեսակետները, որոնք իրավագիտակցությունը համարում են իրավական կարգավորման կառուցակարգի գործոն:<sup>2</sup> Այսպիսով՝ իրավագիտակցությունն իրավական կարգավորման փուլերին մասնակցող սուբյեկտների հատկությունն է և, իհարկե, ուղեկցում է իրավական կարգավորման բոլոր փուլերը, քանի որ դրանց բնորոշ է իրավագիտակցության ինչ որ մակարդակ ունեցող սուբյեկտային որոշակի կազմ:

Եզրակացություն. Իրավական կարգավորման կառուցակարգում իրավական օրինականությունը դիտարկելիս առավել հստակ և ցայտուն է արտահայտվում նրա տեղը և դերն իրավական երևույթների շարքում, քանի որ այդ կառուցակարգն առավել մանրամասն է արտացոլում և՛ իրավունքի ձևավորման, և՛ իրավական կարգավորման, և՛ իրավունքի գործողության ողջ գործընթացը: Իրավական կարգավորման սոցիալական համակարգի առավել լրիվ և համակարգային մոդելը ենթադրում է, որ այդ կառուցակարգը բազմատարր համակարգ է, բաղկացած սոցիալ-իրավական միջոցներից, կառուցակարգի սուբյեկտներից, իրավաբանական նշանակալի գործունեությունից, այդ գործունեության արդյունքներից, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերութ-

<sup>1</sup> Տե՛ս *Лукашева Е.А.* Социалистическое правосознание и законность. М., Юридическая литература, 1973, էջ 17; *Русинов Р.К.* Правовое регулирование и его механизм.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 270:

<sup>2</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, էջ 153:

յունների կարգավորումն իրավական պետության նպատակներին ու խնդիրներին համապատասխան: Իրավական կարգավորման սոցիալական համակարգն իր գործառնութավորման գործընթացում անցնում է հինգ փուլեր՝

- 1) իրավունքի ձևավորման,
- 2) իրավաստեղծագործության,
- 3) իրավական տեղեկութավորման,
- 4) իրավունքի իրականացման,
- 5) սոցիալ-իրավական վերահսկողության:

Իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգի ամեն մի փուլն իր հերթին կազմում է ենթակառուցակարգ իրեն բնորոշ ստատիկ բաղադրատարրերով (սոցիալ-իրավական միջոցներ, կառուցակարգի սուբյեկտներ, իրավաբանական նշանակալի գործունեություն, այդ գործունեության արդյունքները):

Իրավական կարգավորման սոցիալական համակարգի՝ վերը բերված տեսական մոդելն առավել լրիվ, ամբողջական և հարուստ է ներկայացնում այդ կառուցակարգը, հետևաբար, հնարավորություն է տալիս առավել լրիվ ու ամբողջական, ադեկվատ ու ճիշտ վեր հանելու և ներկայացնելու այդ կառուցակարգում իրավական օրինականության տեղը և դերը, դրսևորման բոլոր կողմերը: Հետևաբար, հենց այդ մոդելն էլ մենք հիմք կդարձնենք իրավական օրինականության հայեցակարգի հիմնահարցերի լուծման համար:

Իրավական կարգավորման կառուցակարգում իրավական օրինականությունը հանդես է գալիս որպես նրա կազմակերպման և գործունեության սկզբունք, որը գործում է իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում նման բնույթի այլ սկզբունքների հետ համաքայլ: Հենց դրանով է պայմանավորված իրավական օրինականության համալիր և բազմակողմ բնույթը, քանի որ իրավական կարգավորման կառուցակարգի ընդհանուր համակարգի ամեն մի փուլային ենթակառուցակարգում այն դրսևորվում է յուրօրինակ և կատարում է հատուկ գործառնութներ:

## **§ 2. Իրավական օրինականության սկզբունքի գործողությունն իրավական կարգավորման փուլային համակարգում**

Դիտարկելով իրավական օրինականությունն իրավական մետահամակարգերից մեկի՝ իրավական կարգավորման կառուցակարգի ներհամակարգային կառուցվածքում ու կապերում՝ մենք պարզեցինք, որ իրավական կարգավորման սոցիալական համակարգի առավել լրիվ և համակարգային մոդելը ենթադրում է, որ այդ կառուցակարգը բազմատարր համակարգ է՝ բաղկացած սոցիալ-իրավական միջոցներից, կառուցակարգի սուբյեկտներից, իրավաբանական նշանակալի գործունեությունից, այդ գործունեության արդյունքներից, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումը՝ իրավական պետության նպատակներին ու խնդիրներին համապատասխան: Իրավական կարգավորման կառուցակարգում իրավական օրինականությունը հանդես է գալիս որպես նրա կազմակերպման և գործունեության սկզբունք, որը գործում է իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում՝ իրավունքի ձևավորման, իրավաստեղծագործության, իրավական տեղեկութավորման, իրավունքի իրականացման, սոցիալ-իրավական վերահսկողության, նման բնույթի այլ սկզբունքների հետ համաքայլ: Այդպիսի մեթոդաբանական մոտեցման դեպքում իրավական կարգավորման կառուցակարգը՝ որպես բարդ համակարգ, ըստ կառուցվածքային փուլերի՝ տրոհվում, բաժանվում է իրավունքի ձևավորման, իրավաստեղծագործության, իրավական տեղեկութավորման, իրավունքի իրականացման, սոցիալ-իրավական վերահսկողության ենթակառուցակարգերի: Յուրաքանչյուր ենթակառուցակարգ գործում է իրավական կարգավորման իր փուլում և բնութագրվում է յուրահատուկ, միայն իրեն բնորոշ իրավական միջոցներով: Սակայն իրավական կարգավորման կառուցակարգում բաղադրատարրի նշանակություն ունեն մաս իրավունքի սկզբունքները՝ որպես այդ համակարգի կազմավորման

և գործողության պարտադիր, իմպերատիվ, ղեկավար դրույթներ: Իրավական կարգավորման կառուցակարգում սկզբունքները համակարգակազմիչ նշանակություն ունեն: Դրանք իրենց բնույթով բաժանվում են երկու տեսակի՝ կազմակերպագործառույթայինի և բովանդակայինի: Ըստ Մ.Ի. Բայտինի՝ համաիրավական բովանդակային կամ բարոյաէթիկական սկզբունքները կազմում են իրավունքի բարոյահոգևոր հիմքերը և անմիջականորեն ներազդում են իրավունքի նորմատիվ բովանդակության վրա: Դրանք կազմում են բնական օրենքներ և խորհրդանշում են մարդու հիմնական և հիմնարար իրավունքները: Որպես այդպիսիք՝ Մ.Ի. Բայտինը դիտարկում է ազատությունը, հավասարությունը, կյանքի իրավունքը, մասնավոր և այլ ձևերի սեփականության իրավունքը, անվտանգությունը, արժանապատվությունը, արդարությունը, ընտանիքը, ժողովրդավարությունը, մարդը որպես բարձրագույն արժեք, մարդու իրավունքների պաշտպանությունը որպես պետության նպատակ և պարտականություն:<sup>1</sup>

Իրավական կարգավորման կառուցակարգում հիմնարար կազմակերպագործառույթային սկզբունքն իրավական օրինականության սկզբունքն է: Այսպիսի մեթոդաբանական հիմքերից ելնելով՝ փորձենք ներկայացնել իրավական օրինականության սկզբունքն իրավական կարգավորման (կամ սոցիալ-իրավական կարգավորման) կառուցակարգի գործողության փուլային համակարգում:

Իրավական կարգավորման կառուցակարգի առաջին երկու փուլերում՝ իրավունքի ձևավորման (կազմավորման) և իրավաստեղծագործության, տեղի է ունենում իրավական կարգավորման մեխանիզմի նորմատիվ իրավական հիմքի ձևավորում՝ ի դեմս զանազան իրավունքի աղբյուրների (նորմատիվ իրավական ակտեր, դատական նախադեպեր), որոնցում ամրագրվում են իրավունքի

<sup>1</sup> Տե՛ս *Байтин М.И.* Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, СГАП, 2001, էջ 125-133:

սուբյեկտների վարքագծի բովանդակությունը, դրա սահմանները, իրավունքների, պարտականությունների, լիազորությունների, պատասխանատվության առաջացման պայմանները: Այդպիսով՝ մեր իրավական համակարգում իրավական կարգավորման այս երկու փուլերի արդյունքում վեր են հանվում իրավական կարգավորման պահանջները, և որպես վերջնական արդյունք ընդունվում է իրավաբանական պաշտոնական փաստաթուղթ՝ նորմատիվ իրավական ակտ: Այս փուլերում գործող հիմնական սուբյեկտը պետությունն է՝ ի դեմս իր իրավասու իրավաստեղծ մարմինների: Սակայն այդ գործունեության սուբյեկտներ են համարվում նաև քաղաքացիները, կուսակցությունները, հասարակական միավորումները և, իհարկե, ժողովուրդը՝ հանրաքվեի դեպքում: Որպես գործունեության տեսակ՝ իրավաստեղծագործությունն իրականացվում է իրեն հատուկ սկզբունքների հիման վրա՝ գիտականություն, ժողովրդավարություն, հրապարակայնություն և այլն: Անշուշտ սկզբունքներից մեկն էլ համարում են օրինականությունը:<sup>2</sup> Օրինականության սկզբունքն իրավական կարգավորման այս փուլի համար սովորաբար դիտարկում են ձևական տեսանկյունից՝ այն հանգեցնելով ընթացակարգային պահանջների և ակտն ընդունող մարմինների իրավասության շրջանակներից դուրս չգալուն:<sup>2</sup> Սակայն իրավական օրինականության հայեցակարգը լրիվ այլ պահանջներ է ներկայացնում իրա-

<sup>1</sup> Իրավաստեղծագործության՝ որպես բարդ և բազմակողմանի սոցիալական երևույթի սկզբունքների համակարգում որպես կանոն ներառում են նաև գիտականության, ժողովրդավարության, համակարգվածության, հրապարակայնության, պրոֆեսիոնալիզմի, օրենքի աղեկատվությունը հասարակական կյանքի պայմաններին, հումանիզմի և բարոյականության, իրավաբանական կատարյալության սկզբունքները: (տե՛ս *Головистикова А.Н., Дмитриев Ю.А.* Проблемы теории государства и права. М., Издво Эксмо, 2005, էջ 453-470; Законодательная техника: Научно-практическое пособие. М., 2000, էջ 26-42; Ապիյան Ն.Ա., Սաֆարյան Գ.Յ., Չակոբյան Ջ.Յ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Երևան, 2001, էջ 217-236):

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ *Теория государства и права.* Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 295:

վական կարգավորման կառուցակարգի այս երկու փուլերին: Իրավաստեղծագործության նշանակությունը և իմաստը նրանում է, որ ընտրվեն իրավական կարգավորման այնպիսի տարբերակներ, որոնք առավել լրիվ չափով կհամապատասխանեն ժողովրդի և անհատի շահերին ու նպատակներին: Այսինքն՝ բացի նորմատիվ իրավական ակտերի ձևական լեգիտիմության խնդրից, իրավական օրինականությունն առաջ է քաշում նաև դրանց բովանդակային լեգիտիմության հիմնախնդիրը: Այդ պահանջների կենսագործման արդյունքում պոզիտիվացվում է իրավական բնույթ ունեցող օրենքը (նորմատիվ ակտը): Այդպիսով՝ իրավական օրինականության սկզբունքն իրավական կարգավորման այս փուլերում մասնակից սուբյեկտներին ներկայացնում է պահանջ՝ լեգալ ընթացակարգով պոզիտիվ իրավունքի վերածել միայն իրավունքը: Իրավաօրինականության այդ պահանջը վերածվում է պետության պարտականության՝ ճանաչել, պահպանել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքները: Այս առումով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ձևակերպումն ամրագրել է պետության միայն մեկ պարտականությունը՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, այնինչ՝ իրավաօրինականության դիրքերից պետությունը կրում է նաև ճանաչելու, պահպանելու, ապահովման պարտականությունները:

Ճանաչման, պահպանման, ապահովման, պաշտպանության՝ որպես պետության պարտականության դրսևորումների իրավաբանական բովանդակությունները տարբեր են: Ճանաչել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունն ընդունում է բնական իրավունքից բխող մարդու անօտարելի իրավունքները և դրանք համապարտադիր դարձնելու նպատակով՝ ամբողջ ծավալով ամրագրում է Սահմանադրությամբ և օրենքներով: Պահպանել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ գործողությունների կատարումից, որոնք կարող են խախտել մարդու ազատությունը: Քանի որ իրավունքները տրված են մարդուն ի ծնե, ապա դրանք չեն կարող օտարվել, սահմանա-

փակվել: Ապահովել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են անհատին տրամադրել որոշակի բարիքներ: Պետությունը պարտավոր է ձեռնարկել դրական, ակտիվ գործողություններ իրավունքների ապահովման, դրանք իրական և երաշխավորված դարձնելու համար: Պաշտպանել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա օրենսդիր, գործադիր և դատական մարմիններն իրականացնում են գործունեություն՝ ուղղված մարդու խախտված իրավունքները վերականգնելու, այդ խախտումները կասեցնելու, մարդու իրավունքները խախտած սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար:<sup>1</sup>

Իրավաստեղծագործության փուլում իրավական օրինականության սկզբունքի կենսագործման երաշխիքներ են իրավաստեղծագործության իրավական ընթացակարգի իրավական կարգավորումը, իրավական ձևերը, Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, մարդու և քաղաքացու իրավունքների ինստիտուցիոնալ համակարգը, իշխանությունների տարանջատումը, սահմանադրական և (կամ) այլ դատարաններում նորմատիվ ակտի իրավականության վիճարկման մարդու իրավունքը և այլն: Այդպիսով՝ պետության սահմանադրական պարտականությանը համապատասխանում է իրավունքի շահագրգիռ սուբյեկտների իրավական հնարավորությունը վիճարկելու նորմատիվ ակտերի իրավականությունն իրավաօրինականության պահանջների դիրքերից:

Իրավական կարգավորման մեխանիզմի հաջորդ փուլում՝ իրավական տեղեկութավորման, տեղի է ունենում ընդունված նորմատիվ իրավական ակտի հրապարակում:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը կարգավորում է իրավական կարգավորման կառուցակարգի այս փուլի ընթացակարգա-

<sup>1</sup> См. *Безуглов А.А., Солдатов С.А.* Конституционное право России. В 3-х томах, Т. 1, М., 2001, էջ 236-238; *Баглай М.Б., Габричидзе Б.Н.* Конституционное право Российской Федерации. М., Издател. группа ИНФРА.М-КОДЕКС, 1996, էջ 99-101:

յին հիմունքները, համաձայն որի՝ «օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո: Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո»: Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը մանրամասն կարգավորման է ենթարկում իրավական ակտերի, այդ թվում նորմատիվ իրավական ակտերի հրապարակման կարգը:<sup>1</sup>

Իրավական կարգավորման կառուցակարգում կարևոր տեղ է զբաղում իրավունքի կենսագործման, իրականացման փուլը, որն իր հերթին տրոհվում է երեք կառուցակարգերի՝ իրավունքի անմիջական կենսագործման, իրավունքի կիրառման, պետական հարկադրանքի կիրառման: Այս փուլում արդեն շեշտադրվում է իրավական օրինականության ձևական կողմը, այսինքն՝ բուն օրինականությունը՝ որպես խստագույն պահանջ ներկայացված այդ փուլում մասնակցող իրավունքի բոլոր սուբյեկտներին՝ օգտագործել, պահպանել, կատարել, գործող իրավունքի նորմերի կարգադրագրերը, պոզիտիվ իրավունքի և պետական հարկադրանքի կիրառումն իրականացնել իրավունքի նորմերին համապատասխան: Սակայն իրավական կարգավորման այս փուլում գործում է նաև իրավաօրինականության սկզբունքը, քանի որ իրավունքի սուբյեկտներն իրենց սահմանադրական իրավունքները և ազատությունները խախտող ակտերի հանդիպելուց կարող են գործի դնել դրանց բողոքարկման դատական և այլ ընթացակարգերը: Իրավական կարգավորման այս փուլում իրավաօրինականության սկզբունքը դառնում է միջոց-երաշխիք, որի օգնությամբ իրավունքի սուբյեկտ անհատները և նրանց միավորումները պաշտպանվում են իրենց իրավունքների և

<sup>1</sup> Տե՛ս Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը, ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 15(190) 21 մայիսի, 2002, Գլուխ 6, 46-67 հոդվածներ:

ազատությունների խախտումներից, անհրաժեշտության դեպքում կարող են պահանջել իրավական պարտականությունների կատարում այլ անհատներից, կազմակերպություններից, պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից: Այդպիսով՝ իրավական օրինականության սկզբունքը և դրա անշեղ կենսագործումն ապահովում են անհատի անվտանգությունը, պաշտպանում նրան հակահասարակական դրսևորումներից ու կամայականությունից: Իրավաօրինականությունը երաշխիք է մարդու և նրա իրավունքների կենսագործման համար: Պետությունը և նրա մարմիններն իրավական կարգավորման այս փուլում կրում են իրենց սահմանադրական պարտականությունը, որը բխում է իրավական օրինականության պահանջից՝ խստորեն գործել օրենքին համաձայն և օրենքի հիման վրա: Այս պարտականությանը համապատասխան՝ օրինականությանը հետևելը բացի քաղաքացիների պարտականությունից վերածվում է նաև սուբյեկտիվ իրավունքի՝ պետության, նրա մարմինների և այլ անձանց ու կազմակերպությունների հանդեպ:

Իրավագիտակցությունն իրավական կարգավորման փուլերին մասնակցող սուբյեկտների հատկությունն է, ուղեկցում է իրավական կարգավորման բոլոր փուլերը, քանի որ բոլոր փուլերին բնորոշ է սուբյեկտային որոշակի կազմ: Այդպիսով՝ իրավական օրինականությունն իրավական կարգավորման համակարգի կազմավորման և գործողության սկզբունք է, իսկ իրավագիտակցությունը և իրավական մշակույթը դրա արդյունավետ գործողությունն ապահովող գործոններ են: Եթե իրավական օրինականությունը պարտադիր պահանջ է և անպայմանորեն ենթադրվող, ապա իրավական կարգավորման կառուցակարգի սուբյեկտների իրավագիտակցության մակարդակը և իրավական մշակույթը ցանկալի և ոչ միշտ անհրաժեշտորեն ենթադրելի:

Վերջապես, իրավական օրինականության սկզբունքը պայմանավորում է իրավական կարգավորման կառուցակարգի վերջին փուլի՝ սոցիալ-իրավական վերահսկողության՝ որպես հասարա-

կության և պետության գործունեության հիմնական բովանդակությունը, քանի որ դա իրականացվում է իրավական օրինականության պաշտպանության նպատակով: Ըստ Վ.Մ. Սիրիխի՝ սոցիալ-իրավական վերահսկողության նպատակն իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման միջոցով գործող նորմերի անշեղ կատարման ապահովումն է, ինչպես նաև իրավախախտումներ կատարող անձանց վեր հանումն ու պատասխանատվության ենթարկումը:<sup>1</sup> Իրավական կարգավորման վերջին փուլի՝ սոցիալ-իրավական վերահսկողության ողջ իմաստն ու նշանակությունն իրավական օրինականության սկզբունքի տեսանկյունից վերահսկողական գործունեությունն է:

### **§ 3. Իրավական օրինականության որպես համակարգի կառուցվածք և բաղադրատարրերը**

Օրինականության համակարգային հայեցակարգերի քննարկումը մենք կատարել ենք սույն աշխատանքի առաջին գլխում: Հետազոտության այդ մասում մեր խնդիրն էր ցույց տալ, թե համակարգավերլուծության մեթոդն ինչ ուղղություններով է կիրառվել օրինականության տեսության հիմնախնդիրները հետազոտելիս: Այդ խնդրի լուծման գլխավոր եզրակացություններն ամփոփված են սույն աշխատանքի առաջին և երկրորդ գլուխներում: Աշխատանքի այս մասում մեր առջև կանգնած խնդիրն է ամփոփել օրինականությունը որպես համակարգ դիտարկած հետազոտողների մոտեցումները և դրանք համադրելով համակագերի տեսության հիմնադրույթների հետ՝ կառուցել իրավական օրինականության համակարգային հայեցակարգ, անշուշտ՝ օգտագործելով մինչ այժմ մեր կողմից իրականացրած հետազոտության արդյունքները: Այլ կերպ ասած, մեր խնդիրն այստեղ ավելի նեղ և հստակ է. այն է՝ իրավա-

<sup>1</sup> Стів Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, т.2 102:

կան օրինականությունը դիտարկել որպես համակարգային կազմավորում, վեր հանել դրա կառուցվածքային բնութագրերը և բաղադրատարրերը:

Համակարգային կարելի է անվանել օրինականության տեսության այն տարբերակները, որոնք օրինականությունը դիտարկում են համակարգային կազմավորում իրեն բնորոշ բաղադրատարրերով: Այդ տեսանկյունից համակարգային մեթոդի կիրառումն օրինականության հիմնախնդիրների հետազոտման համար նորությունն է, քանի որ օրինականության հիմնահարցերն ուսումնասիրած շատ հեղինակներ են դիմել դրան՝ օրինականությունը դիտարկելով համակարգային կազմավորում:

Օրինականության տեսության հիմնահարցերի հետազոտումն իրականացրած բոլոր տեսաբանների մոտեցումներն ամփոփելիս կարելի է դրանցում տարանջատել երկու սկզբունքային դիրքորոշումներ՝

առաջին, տեսաբաններ, որոնք օրինականությունը հատուկ դիտարկում են որպես համակարգային կազմավորում՝ վեր հանելով դրա ներհամակարգային կապերը և բաղադրատարրերը,

երկրորդ, տեսաբաններ, որոնց մոտեցումներն օրինականության նկատմամբ ավելի պարզ են, իսկ օրինականությունն ինքը հատուկ չի դիտարկված որպես համակարգ:

Սակայն այս հեղինակները, անկախ իրենց կամքից, օրինականությունն ի վերջո վերածում են համալիր (ինչ որ տեղ նաև համակարգային) կազմավորման, քանի որ օրինականության հիմնախնդիրները ներկայացվում են հետևյալ սխեմայով՝ օրինականության էությունը, բովանդակությունը, սկզբունքները և երաշխիքները: Արդյունքում ստացվում է, որ օրինականությունը որպես իրավական երևույթ ներքին կողմից իրենից ներկայացնում է թվարկված բաղադրատարրերի ամբողջություն:

Այսպես, օրինակ՝ Ա.Ս. Շաբուրովն օրինականությունը դիտարկում է համալիր բնույթ ունեցող երևույթ, որը հանդես է գալիս որպես

բովանդակության, պահանջների, սկզբունքների, երաշխիքների համակցություն:<sup>1</sup> Այդպիսի մոտեցում օրինականության հիմնասխեմայի մեկնաբանմանը որդեգրել են բազմաթիվ հեղինակներ:

Օրինականության ներքին կառուցվածքի մեկնաբանման՝ վերը թվարկված ավանդական մոտեցումներից բացի իրավաբանական գրականության մեջ կան նաև ատիպիկ, օրիգինալ մոտեցումներ, որոնք շեղվում են ավանդական սխեմաներից և օրինականության ներքին կառույցը ներկայացնում են լրիվ այլ կառուցվածքային բաղադրատարրերի միջոցով: Այդպիսին է, օրինակ՝ Պ.Ս. Ռաբինովիչի մոտեցումը: Նա, բանավիճելով օրինականության կառուցվածքը սկզբունքների և պահանջների բաղադրատարրային ստորակարգությամբ ներկայացնող հեղինակների, մասնավորապես Մ.Ն. Ալտշուլլերի հետ,<sup>2</sup> անարդար է համարում նրանց մոտեցումը: Ըստ Ռաբինովիչի՝ երբ օրինականությունը դիտարկվում է հասարակական հարաբերություններում իրապես կենսագործված երևույթ, ապա նրա կառուցվածքն իրավաբանորեն իրավաչափ հասարակական հարաբերությունների և դրանց բաղադրատարրերի կապի եղանակն է:<sup>3</sup> Օրինականության կառուցվածքի նման հասկացությունից ելնելով՝ Պ.Ս. Ռաբինովիչն օրինականության համակարգում տարբերում է օրինականության առարկայական կառուցվածքը, օրինականության սուբյեկտային կառուցվածքը, օրինականության իրավաբանական կառուցվածքը: Առարկայական կառուցվածքը ներա-

<sup>1</sup> Տե՛ս *Шабуров А.С.* Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 435-456:

<sup>2</sup> Ըստ Մ.Ն. Ալտշուլլերի՝ օրինականության կառուցվածքը բաղկացած է ստորակարգային բաղադրատարրերից, որոնցից «սկզբունքները վերին մակարդակն են, իսկ սոցիալիստական օրինականության պահանջները ստորին, երկրորդական բաղադրատարրը» (տե՛ս *Альтшуллер М.Н.* Системный подход к исследованию некоторых вопросов социалистической законности. „Труды Горьковской высшей школы МВД СССР“, вып 6. Горький, 1976, էջ 40-41):

<sup>3</sup> Տե՛ս *Рабинович П.М.* Проблемы теории законности развитого социализма. „Высшая школа“, Изд-во при Львова, умъте, 1979, էջ 64:

ռում է երեք գոտի՝ տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, սուբյեկտային կառուցվածքը՝ չորս գոտի՝ պետական մարմինների գործունեությունը, պետական կազմակերպությունների գործունեությունը, հասարակական կազմակերպությունների գործունեությունը, անհատների վարքագիծը: Սուբյեկտային ամեն մի գոտու համար գոյություն ունեն մանրամասեցման չափանիշներ, օրինակ՝ պետական մարմնի առաքելությունը, գործառույթները, կազմավորման կարգը, գործունեության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները և այլն: Իսկ անհատների համար այդպիսի չափանիշ են համարվում իրավական կարգավիճակը, իրավական մոդուսը, անհատի գոյության հատուկ-իրավական մակարդակները: Օրինականության իրավաբանական կառուցվածքը ներառում է երեք գոտի՝ իրավաբանական սուբյեկտիվ իրավունքների օգտագործում, իրավաբանական պարտականությունների կատարում, իրավաբանական արգելքների պահպանում: Օրինականության իրավաբանական կառուցվածքի գոտիների մանրամասնեցման չափանիշները համարվում են համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքները, իրավաբանական պարտականությունները, իրավաբանական արգելքները:<sup>1</sup>

Օրինականության նկատմամբ Պ.Ս. Ռաբինովիչի համակարգային մոտեցումը, իհարկե, գիտական հետաքրքրություն ներկայացնում է, սակայն մենք այն չենք դարձնի քննարկման առարկա, քանի որ այն չի կարող հիմք հանդիսանալ մեր հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար:

Օրինականության կառուցվածքը յուրահատուկ է պատկերացնում նաև Ս.Ա. Կոմարովը: Նա օրինականությունը բնորոշում է որպես հասարակության և պետության պահանջ՝ ուղղված յուրաքանչյուրին՝ ամենուր ճիշտ և անշեղ իրականացնելու իրավական նորմե-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 64-67:

րը:<sup>1</sup> Օրինականության բնույթն արտահայտվում է նրա հիմնական գաղափարներում (հատկություններում, գծերում), մասնավորապես, օրինականության համընդհանրությունը և միասնությունը, օրենքի գերակայությունը, օրինականության իրականացման անխուսափելիությունը, օրինականության և նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը, օրինականության և մշակութային անխախտության անխզելի կապը:<sup>2</sup> Ս.Ա. Կոմարովը բացի օրինականության հիմնական գաղափարներից օրինականության կառույցում առանձնացնում է նաև օրինականության երեք գործառույթներ: Դրանք են՝

ա) ժողովրդի պետական կամքի կենսագործումը կյանքում, իրավունքի իրականացման և օրինականության կապը,

բ) նպատակահարմար, արդյունավետ նորմեր ստեղծելու համար պայմանների ստեղծումը, օրինականության կապն իրավաստեղծագործության հետ,

գ) իրավական կարգավորման իրական լինելու ապահովումը, օրինականության կապն իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր բաղադրատարրերի հետ:<sup>3</sup>

Չետագոտողների մյուս խումբն օրինականությունը հատուկ դիտարկում է որպես համակարգային կազմավորում: Այսպես՝ Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Վ. Տալյանինը, օրինականությունը դիտարկելով որպես բարդ համակարգային հասկացություն, նրա տեսական մոդելը ներկայացնում են օրինականության սկզբունքների, պահանջների և երաշխիքների համակցության միջոցով:<sup>4</sup> Այս մոտեցումը տարբերվում է նախորդներից միայն նրանով, որ օրինականությունը դիտարկվում է որպես բարդ համակարգ: Մնացած հարցերում, այ-

<sup>1</sup> Տե՛ս *Комаров С.А.* Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 366:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 369:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 371:

<sup>4</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 369:

սինքն՝ համակարգի կառուցվածքային բնութագրի հարցում նման է այն տեսաբանների մոտեցմանը, ովքեր օրինականությունը չեն դիտարկում համակարգ, սակայն նրա կառույցը ներկայացնում են որպես սկզբունքների ամբողջություն: Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Վ. Տալյանինն օրինականության սկզբունք են դիտարկում դրա իրավական բնույթը, որը ենթադրում է իրավունքի ընդհանուր սկզբունքների և օրենսդրորեն ամրագրված իշխանական լիազորությունների անհակասականություն:<sup>1</sup> Սակայն իրավաբանական այս մոտեցումը չի զարգացվում, և արդյունքում մենք նրանց թվարկած օրինականության սկզբունքների, պահանջների, երաշխիքների շարքում չենք հայտնաբերում բուն իրավաօրինականությունը վերաբերվողները: Չետևաբար, օրինականության նրանց հայեցակարգը և կառույցն ավելի շատ նորմատիվիային է, քան իրավաբանական:

Ռ.Ա. Ռոմաշովը և Վ.Վ. Տալյանինն օրինականության սկզբունքներն են համարում օրինականության իրավական բնույթը, օրինականության միասնությունը, օրինականության համընդհանրությունը, օրինականության և նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը: Ինչպես տեսնում ենք, այդ սկզբունքների շարքում ուղղակի և հստակ չեն ամրագրված իրավաօրինականությանը վերաբերող սկզբունքները: Իսկ ինչ վերաբերում է օրինականության պահանջներին, ապա դրանք բնորոշելիս այս տեսաբաններն ուղղակի նշում են, որ օրինականությունը պետք է դիտարկել որպես պարտադիր իրավական վարքագծի ռեժիմ, որի հիմնական գործառույթը պոզիտիվ իրավունքի պահպանությունն է: Ակնհայտ է նման մոտեցման նորմատիվապոզիտիվիստական ուղղվածությունը, ինչը հաստատվում է նաև օրինականության պահանջների ենթահամակարգի կառուցվածքով, այն է՝ օրենքի գերակայություն, օրենքի առջև բոլորի հավասարություն, իրավական ակտերի անշեղ

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 406-407:



կատարում և պահպանում բոլորի կողմից, իրավախախտումների դեմ հետևողական պայքար և այլն:<sup>1</sup>

Օրինականությունը համակարգ դիտարկող տեսաբաններից է Ն.Վ. Վիտրուկը, որը, օրինականությունը դիտարկելով որպես իրապես գործող իրավունքի համակարգ, նրանում առանձնացնում է երեք բաղադրատարրեր, որոնք էլ կազմում են օրինականության (իրավաօրինականության) բովանդակությունը:<sup>2</sup> Այդպիսի համակարգային մոտեցման հիման վրա Ն.Վ. Վիտրուկն օրինականության բաղադրատարրեր է համարում՝

ա) իրավաօրինականությունը,

բ) օրենքների լրիվ իրականացումը (տարբեր ձևերով) պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման և հասարակական միավորումների պաշտոնատար անձանց գործողություններում,

գ) օրինականության պաշտպանության (պահպանության) և ապահովման արդյունավետ համակարգը:

Իրավաօրինականությունը, ըստ Ն.Վ. Վիտրուկի, նշանակում է, որ գործող օրենքներն ադեկվատ կերպով արտահայտում են իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ ժողովրդավարական հասարակության և իրավական պետության իդեալները: Գործնականում իրավաօրինականությունը նշանակում է սահմանադրության և այլ օրենքների համապատասխանությունը միջազգային իրավունքին, միջազգային չափանիշներին, մարդու անօտարելի և բնական իրավունքներին: Իրավունքի աղբյուրների համակարգում սահմանադրությունն ունի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 407-408:

<sup>2</sup> Տե՛ս **Վիտրուկ Հ.Վ.** Законность: понятие, защита и обеспечение. Конституционная законность и конституционное правосудие.- В кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. М., ИКД Зерцало-М, 2001, էջ 161; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 510:

բարձրագույն իրավաբանական ուժ: Օրինականության պաշտպանության համակարգը ներառում է ինչպես օրենքների գործողության նկատմամբ պետական վերահսկողության և հսկողության համակարգը, այնպես էլ անհատների և կազմակերպությունների կողմից անհատական պաշտպանության համակարգը:<sup>1</sup>

Հայ իրականության մեջ օրինականության տեսության հիմնախնդիրների հետազոտությանը համակարգային մոտեցման հիման վրա անդրադարձել է Գ.Ս. Ղազինյանը: Նա օրինականությունը՝ որպես բարդ և բազմակողմանի երևույթ, դիտարկում է համակարգային կազմավորում, որը ենթադրում է երեք բաղադրատարրեր՝

առաջին, օրենսդրության իրավական բնույթը,

երկրորդ, իրավաիրացման ընթացքում օրենքների պարտադիր և լրիվ կենսագործումը (օգտագործում, կատարում, պահպանում և կիրառում),

երրորդ, օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը:<sup>2</sup>

Ըստ Գ.Ս. Ղազինյանի՝ օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը միջոցների, հնարքների և պայմանների համակարգ է, որը կոչված է իրականում կենսագործելու օրինականության գաղափարներն ու հիմունքները և ներառում է ինչպես վերահսկողությունը և հսկողությունը քրեադատավարական իրավունքի աղբյուրների բովանդակության նկատմամբ իդեալական իրավունքին համապատասխանելու տեսանկյունից, այնպես էլ օրենքների գործողության նկատմամբ վերահսկողության և հսկողության, այ-

<sup>1</sup> Տե՛ս **Վիտրուկ Հ.Վ.** Законность: понятие, защита и обеспечение. Конституционная законность и конституционное правосудие.- В кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. М., ИКД Зерцало-М, 2001, էջ 161; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, էջ 510:

<sup>2</sup> Տե՛ս **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 212-214:

սինքն՝ իրավակիրառ գործունեության ոլորտում օրինականության պահպանության համակարգը:

Ա.Բ. Լիսյուտկինի կողմից մշակված օրինականության համակարգային հայեցակարգը, որը քննարկել ենք սույն աշխատանքի առաջին գլխում, օրինականությունը դիտարկում է համակարգային երևույթ և նրանում առանձնացնում է կառուցվածքային բաղադրատարրեր, բացահայտում վերջիններիս միջև առկա ներհամակարգային կապերն ու փոխապայմանավորվածությունները: Նրա մոտեցումը, ի համեմատ օրինականությունը որպես համակարգ ներկայացնող այլ հայեցակարգերի, աչքի է ընկնում իր ամբողջականությամբ և առավել մանրամասնեցվածությամբ օրինականության կառուցվածքային բաղադրատարրերի հարցում: Միաժամանակ, Ա.Բ. Լիսյուտկինի օրինականության հայեցակարգը համապատասխանում է արդի իրավաբանական իրավամտածողության պահանջներին և մերժում է նորմատիվիստական-պոզիտիվիստական մոտեցումներն օրինականության հիմնախնդիրների մեկնաբանման գործում: Սակայն օրինականության այս հայեցակարգի այդ հատկությունը չի հասցված մինչև վերջ և չի քննարկված համակարգային մոտեցման շրջանակներում: Այսպիսի եզրակացության համար հիմք է հանդիսանում «սոցիալական արդարության գաղափարի կենսագործումը» որպես օրենսդրության պահպանման և կատարման նպատակ դիտարկելը:<sup>1</sup> Բացի այդ, նա օրինականության սկզբունք է համարում մարդու և քաղաքացու իրավունքների երաշխավորվածությունը: Այս երկու հանգամանքներն անուղղակիորեն հիմք են տալիս պնդելու, որ օրենքները պետք է լինեն իրավական, իսկ արդյունքում նաև օրինականությունը ձեռք կբերի իրավական բնույթ: Այսպիսով՝ Ա.Բ. Լիսյուտկինի օրինականության հայեցակարգը թերի է նրանով, որ մինչև վերջ չի սինթեզվել օրինականությունը որպես համակարգ մոտեցումը և իրավական օրինականության գաղափար:

<sup>1</sup> Տե՛ս *Лисюткин А.Б.* Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристь, 1999, էջ 515:

րը: Արդյունքում նա օրինականության կենտրոնական բաղադրատարրը՝ նպատակը, մեկնաբանում է միայն որպես բոլոր անձանց կողմից գործող օրենսդրության խիստ և անշեղ պահպանում և կատարում:

Օրինականությունը որպես համակարգ է դիտարկում նաև Ռ.Տ. Մուխաևը:<sup>1</sup> Նա օրինականությունը բնորոշում է որպես հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ, հասարակական հարաբերությունների իրավաչափության կացություն՝ հիմնված իրավունքի և սոցիալական արդարության գերիշխանության վրա, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի անշեղ պահպանմամբ, օգտագործմամբ և կիրառմամբ: Այս կերպ հասկացված օրինականությունն ունի դրսևորման, իրականացման երեք ձև՝

առաջին, օրինականությունը որպես սոցիալական սուբյեկտների գործունեության սկզբունք,

երկրորդ, օրինականությունը որպես հասարակության պետական ղեկավարման մեթոդ,

երրորդ, օրինականությունը որպես հասարակության և պետության պահանջ՝ ճշգրիտ իրացնելու գործող օրենսդրությունը:

Օրինականության բովանդակությունն արտահայտում են նրա սկզբունքները, որոնք իրենց հերթին արտահայտվում են իրավունքի բոլոր սուբյեկտներին ներկայացվող պահանջների համակարգում: Օրինականության իրացման գրավականը դրա երաշխիքներն են:

Ռ.Տ. Մուխաևի մոտեցումն օրինականությունը որպես համակարգային կազմավորում դիտարկող այլ դիրքորոշումներից տարբերվում է նրանով, որ նա օրինականության համակարգի կառուցվածքային բաղադրատարր է համարում օրինականության գործառույթները, որոնք օրինականությունը կատարում է հասարակութ-

<sup>1</sup> Տե՛ս *Мухаев Р.Т.* Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 434-440:

յան մեջ և որոնք արտահայտում են օրինականության դերն ու նշանակությունը:<sup>1</sup> Նա օրինականությանը վերագրում է երեք գործառույթներ՝

ա) իրավական կարգավորման կառուցակարգի արդյունավետության ապահովում.

բ) հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմության նպատակներին, ազատության, հունանիզմի և արդարության գաղափարներին համապատասխանող օրենսդրության ստեղծման համար պայմանների ձևավորում.

գ) իրավունքների և ազատությունների անշեղ իրականացման պայմանների ստեղծում դրանց պաշտպանությունը երաշխավորող նյութական, կազմակերպական և իրավաբանական միջոցների սահմանման ճանապարհով:

Այսպիսով՝ Ռ.Տ. Մուխանն օրինականության գործառույթները ներկայացնում է առավել լայն հիմքերի վրա, և այդ տեսանկյունից նրա մատնանշած գործառույթները համահունչ են իրավական օրինականության հայեցակարգի հետ, քանի որ իրավական օրինականության սկզբունքի առաջին պահանջն իրավունքի և նրա պահանջների իրականացումն է պոզիտիվ իրավունքում: Այս տեսաբանի բացթողումը կարելի է համարել այն, որ նա, ըստ էության, կողմնակից լինելով իրավական օրինականության գաղափարին, օրինականության իր հայեցակարգը չի անվանում իրավական օրինականություն և արդյունքում նրա մոտ իրավական օրինականությունը չի տրոհվում երկու ենթահամակարգերի՝ իրավաօրինականություն և օրինականություն:

Օ.Ֆ. Սկակունն օրինականության իր հայեցակարգն ինքը չի ներկայացնում համակարգային: Այսինքն՝ նրա մոտ չկա հստակ մատնանշում, որ օրինականությունը համակարգային կազմավորում է, սակայն նրա մոտեցումն ունի առավելություններ օրինականությունը համակարգային կազմավորում դիտարկող այլ տեսա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 441:

բանների մոտեցումների հետ համեմատած: Նա, ինչպես և Ն.Վ. Վիտրուկը, Գ.Ս. Ղազինյանը, ընդունում են իրավական օրինականություն հասկացությունը: Ըստ նրա՝ օրինականությանը բնութագրական է երկու հատկանիշների միասնություն՝

ա) ներքին (ձևական)՝ որպես բուն օրինականություն,

բ) արտաքին (էական)՝ որպես իրավաօրինականություն:

Արդյունքում Օ.Ֆ. Սկակուննի օրինականության հայեցակարգը վերածվում է իրավաբանական-բովանդակային հայեցակարգի, և օրինականության սկզբունքները, պահանջներն ու երաշխիքները դիտարկվում ու կառուցվում են իրավաօրինականության և բուն օրինականության տարանջատման համատեքստում, ինչը հստակ չի արտահայտված օրինականության տեսության հիմնահարցերն իմաստավորած ոչ մի հեղինակի մոտ: Այսպիսով՝ իրավաբանական իրավահասկացության դիրքերից Օ.Ֆ. Սկակուննի օրինականության հայեցակարգն աչքի է ընկնում իր հետևողական իրավաբանական մոտեցմամբ: Սակայն կարծում ենք, որ այս հայեցակարգը պետք է լրացվի համակարգային մոտեցմամբ՝ օրինականությունը դիտարկելով համակարգ իրեն բնորոշ բաղադրատարրերով:

Ամփոփելով օրինականությունը համակարգ դիտարկող հայեցակարգերի քննարկումը՝ կարող ենք ասել, որ այդ հայեցակարգերն ակնհայտ առավելություն ունեն այն մոտեցումների նկատմամբ, որոնք օրինականությունը չեն դիտարկում համակարգ: Սակայն օրինականությունը որպես համակարգային կազմավորում դիտարկող հայեցակարգերը որոշակի վերակառուցման կարիք ունեն երկու ուղղությամբ՝

առաջին, իրավաբանական իրավահասկացության դիրքերից,

երկրորդ, համակարգերի տեսության մեջ մշակված համակարգի բնութագրի և կառուցվածքի դիրքերից:

Համակարգերի տեսության մեջ համակարգի կառույցը և գործառույթավորումը բնութագրելիս օգտագործում են հետևյալ հասկացությունները՝ բաղադրատարր, ենթահամակարգ, կառուցվածք,

կացություն, վարքագիծ, հավասարակշռություն, զարգացում, օրինաչափություններ և այլն:<sup>1</sup> Այսպիսով՝ իրավական օրինականությունը որպես համակարգ ներկայացնելիս ելակետային պետք է համարել համակարգերի տեսության մշակած հիմնադրույթները և հասկացությունները՝ կոնկրետացնելով դրանք օրինականության հիմնախնդիրների նկատմամբ:

Իրավական օրինականությունը՝ որպես իրավունքի և իրավական կարգավորման համակարգի համընդհանուր կազմակերպական գործառնության սկզբունք, հանդես է գալիս որպես համակարգ: Անշուշտ, ավելի ընդհանրացված իրավական մետահամակարգերում այն կատարում է ենթահամակարգի դեր: Սակայն ինքը, լինելով համակարգ, ունի համակարգին բնորոշ ներքին կառուցվածք: Այդ կառուցվածքում ըստ ստորակարգության (որոշակիորեն պայմանական) կարելի է առանձնացնել հետևյալ բաղադրատարրերը՝ իրավական օրինականության նպատակը, ենթահամակարգերը, ենթանպատակները և համապատասխանաբար ենթագործառնությունները, ամեն մի ենթահամակարգին բնորոշ ներքին կառուցվածքային բաղադրատարրերը (սկզբունքներ, պահանջներ) և իրավական օրինականության (իրավաօրինականության և օրինականության) նպատակների, սկզբունքների, պահանջների իրացման կառուցակարգը (կամ երաշխիքները):

Իրավական օրինականության նպատակը համահունչ է իրավունքի և իրավական կարգավորման նպատակներին, բխում է դրանցից, կոնկրետացնում այն: Որպես այդպիսին կարելի է համարել իրավունքի և նրա պահանջների կենսագործումը, իրականացումը հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծում: Այս ընդհանուր նպատակն իր հերթին տրոհվում է երկու ենթանպատակների (համապատասխանաբար ենթագործառնությունների), որովհետև իրավունքի՝ որպես օբյեկտիվ էության և հասարա-

<sup>1</sup> Стів Теория систем и методы системного анализа в управлении и связи. **В.Н. Волкова, Б.А. Воронков, А.А. Денисов** и др., М., Радио и связь, 1983, էջ 25-40:

կական հարաբերությունների մասնակիցների փաստական վարքագծի միջև կանգնած է պոզիտիվ իրավունքը կամ օրենսդրությունը: Այդպիսով՝ լայն իմաստով օրինականությունը որպես համակարգ տրոհված է երկու իրար հետ փոխկապված ենթահամակարգերի՝ իրավաօրինականության և բուն (կամ նեղ իմաստով) օրինականության:

Իրավաօրինականության՝ որպես ենթահամակարգի նպատակը միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվացումն է: Այդ նպատակը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավաստեղծ մարմիններին՝ պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները, պահանջները, սկզբունքները և ընդունել միայն իրավական բնույթ ունեցող նորմատիվ ակտեր: Այս ենթանպատակին համապատասխան՝ իրավաօրինականության ենթագործառնություն է ստեղծել պայմաններ հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմությանը, ազատության, արդարության և հումանիզմի գաղափարներին համապատասխանող պոզիտիվ իրավունքի կամ օրենսդրության ձևավորման համար: Իրավաօրինականությանը՝ որպես իրավական օրինականության ենթահամակարգին, բնորոշ են իր սկզբունքները, պահանջները և, իհարկե, իրավաօրինականության նպատակների (նաև դրանցով պայմանավորված սկզբունքների, պահանջների) իրականացման կառուցակարգը կամ այլ կերպ ասած իրավաօրինականության երաշխիքները:

Օրինականության ենթանպատակն արդեն իրավունքի իրականացման ոլորտում իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից գործող օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի բարեխիղճ և անշեղ պահպանումն ու կատարումն է: Այդ նպատակը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավունքի բոլոր սուբյեկտներին՝ անշեղ և խիստ կերպով կենսագործելու գործող պոզիտիվ իրավունքի բոլոր նորմերը, կարգադրագրերը: Այս ենթանպատակին համապատասխան՝ օրինականության գործառնություն է ապահովել

պայմաններ իրավական կարգավորման կառուցակարգի իրավա-  
չափ և արդյունավետ գործողության համար: Ինչպես և իրավաօրի-  
նականությունը, օրինականությունը ևս որպես ենթահամակարգ ու-  
նի իրեն հատուկ սկզբունքներ, պահանջներ և երաշխիքներ, որոնք  
կոչված են ապահովելու պոզիտիվ իրավունքի պահանջների կեն-  
սագործումը:

Այսպիսով՝ իրավական օրինականության համաիրավական և  
համընդհանուր սկզբունքի՝ որպես համակարգի առաջին ենթահա-  
մակարգը իրավաօրինականությունն է, իսկ վերջինիս կառուցված-  
քում առանձնանում են նրա սկզբունքները, դրանցով պայմանա-  
վորված իրավաօրինականության պահանջները և երաշխիքները:

Փորձենք որոշել իրավաօրինականության՝ որպես ենթահամա-  
կարգի սկզբունքների շրջանակը, այդ սկզբունքների և դրանցից  
բխող պահանջների հարաբերակցությունը, ինչպես նաև այս ենթա-  
համակարգի երաշխիքների հասկացությունը և շրջանակը:

Իրավաօրինականությունն իր ենթանպատակին, այն է՝ իրա-  
վունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվաց-  
մանը համապատասխան՝ ունի իր սկզբունքները: Իրավաօրինա-  
կանության սկզբունքները դրանք նրա հիմնական գաղափարները,  
ելակետային դրույթներն են, որոնք որոշում են իրավաօրինակա-  
նության բովանդակությունը:<sup>1</sup>

Իրավաօրինականության պահանջներն այն են, ինչը պահան-  
ջում է իրավաօրինականությունը, այսինքն՝ դրանք ընդհանուր կեր-  
պով ձևակերպված իրավական կարգադրագրեր են, որոնց պահ-  
պանումը, կատարումը երևույթը դարձնում է օրինական:<sup>2</sup>

<sup>1</sup> Օրինականության տեսությանը նվիրված իրավաբանական գրականու-  
թյան մեջ առկա են միայն օրինականության սկզբունքների և պահանջների  
բնորոշումները: Մեթոդաբանական տեսանկյունից դրանք ընդունելի են  
նաև իրավաօրինականության համար:

<sup>2</sup> Տե՛ս **Афанасьев В.С.** Законность и правопорядок. В кн. Общая теория  
права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юрист, 2005, էջ 314:

Իրավաօրինականության սկզբունքների և պահանջների հարա-  
բերակցության հարցում պետք է համաձայնվել Վ.Ս. Աֆանասևի այն  
մոտեցման հետ, որ իրավաօրինականության յուրաքանչյուր  
սկզբունք վերածվում է պահանջների համակցության: Ճիշտ է, նա  
այդ հանգամանքը հիմնավորում է օրինականության, այլ ոչ թե իրա-  
վաօրինականության հայեցակարգի համար, սակայն սկզբունքների  
և պահանջների հարաբերակցությունն ընդունելի է նաև իրավական  
օրինականության համար: Այդպիսով՝ ընդհանուր սկզբունքը վերած-  
վում է կոնկրետ իրավական պահանջների, նորմերի, ինչը «թույլ է  
տալիս որոշել այդ պահանջների հստակ շրջանակը, իրականացնել  
դրանց նորմատիվ ամրագրում և կոնկրետացում», որոնք լրացուցիչ  
երաշխիքներ են ստեղծում իրավաօրինականության համար:

Որպես իրավաօրինականության ամենից ընդհանուր  
սկզբունք՝ կարելի է համարել իրավունքի գերակայությունը: Այդ  
սկզբունքի էությունն կայանում է նրանում, որ հասարակական հա-  
րաբերությունների համընդհանուր կարգավորման պայմաններում  
օրենքները և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակ-  
տերը պետք է համապատասխանեն իրավունքի գաղափարին, օբ-  
յեկտիվ էությանը, «իրերի իրավական բնույթին»: Օրենքներում և  
այլ նորմատիվ ակտերում պետք է ամրագրվեն մարդասիրական,  
արդարացի, իրավական լուծումներ ու կարգադրագրեր: Միայն հա-  
սարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, հիմնական  
իրավական բովանդակային սկզբունքներին, ազատության, մար-  
դասիրության և արդարության գաղափարներին համապատասխա-  
նող օրենսդրությունն է ապահովում իրավական կարգավորման  
նպատակները: Իրավունքի գերակայության սկզբունքը «նոր աշ-  
խարհակարգի և արդի ժողովրդավարության սահմանադրական  
կարգերի հիմքն է: Նրա այլընտրանքն իրավազրկությունն է և սո-  
ցիալական քաոսը»:<sup>1</sup>

<sup>1</sup> Տե՛ս **Зорькин В.Д.** Верховенство права и конституционное  
правосудие.- В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-  
правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. Сост. В.Г.  
Графский. М., Норма, 2006, էջ 12:

Եվրոպայի խորհրդի կանոնադրության (Լոնդոն 1949թ.) 3-րդ - հոդվածն ամրագրում է հետևյալ սկզբունքային դրույթը. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ճանաչի իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, ըստ որի՝ յուրաքանչյուր անձ, ով գտնվում է նրա իրավագործության տակ, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից»: Այս դիրքորոշմանը համապատասխան՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոչված է ապահովելու հենց իրավունքի գերակայությունը: Նա իր գործունեության ընթացքում բազմիցս շեշտադրել է, որ օրինականության սկզբունքը չի ենթադրում միայն դրա ձևական մեկնաբանում: Դա, ըստ էության, նշանակում է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենքներին ներկայացվում է նաև բովանդակային որակական պահանջ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննած մի շարք գործերով դատարանն ընդգծել է, որ օրենքը պետք է բավարարի մի քանի պահանջների՝

առաջին, «օրենքը պետք է համապատասխանաբար հասանելի լինի՝ քաղաքացիները պետք է ունենան հնարավորություն ծավալված հանգամանգներում վկայակոչելու իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են տվյալ գործով,<sup>1</sup>

երկրորդ, նորմը չի կարելի դիտարկել օրենք, եթե այն ձևակերպված չէ հստակ, որպեսզի քաղաքացին կարողանա կարգավորել իր վարքագիծը:<sup>2</sup> Օրենքի այս հատկությունն անվանում են կանխատեսելիություն,<sup>3</sup>

<sup>1</sup> St'u Судебное решение по делу Санди таймс от 26 апреля 1979 г., Series A, N. 30, p. 33, para 47; Судебное решение по делу Мелоун от 2 августа 1984 г., Series A, N. 82, p. 31, para 66:

<sup>2</sup> St'u Судебное решение по делу Силвер и другие от 25 марта 1983 г., Series A, N. 61, p. 33, para 86-88:

<sup>3</sup> St'u **Гомьен Д., Харрис Д., Зваак Л.** Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М., Изд. МНИМП, 1998, էջ 273:

երրորդ, Կոնվենցիայի պահանջների բավարարման առումով օրենքը պետք է ունենա որոշակի որակներ: Այսպես՝ Մելուոնի գործով դատարանն ուղղակիորեն ընդգծել է, որ ներպետական օրենքը պետք է ունենա համապատասխան որակ, և օրինականությունը «վերաբերում է նաև օրենքի որակին, քանի որ պահանջում է նրանից համապատասխանել իրավունքի գերակայության սկզբունքին, ինչը հստակ նշված է Կոնվենցիայի նախաբանում... Այդպիսով՝ այն ենթադրում է, որ ... ներքին իրավունքում պետք է նախատեսված լինի իրավական պաշտպանության որոշակի աստիճան պետական մարմինների կամայական միջամտությունից»:<sup>1</sup>

Իրավունքի գերակայությունը որպես իրավաօրինականության սկզբունք իրավական կարգավորման առաջին երկու փուլերում՝ իրավունքի կազմավորման և իրավաստեղծագործության, վերածվում է երկու խումբ պահանջների՝

ա) իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայացվող պահանջներ,

բ) իրավաստեղծ գործունեության ընթացակարգին և ձևին ներկայացվող պահանջներ:

Այդ պահանջների մեծագույն մասն ունեն սահմանադրական կամ օրենսդրական ամրագրում: 2005թ. հանրաքվեի արդյունքում սահմանադրորեն արդեն ամրագրված իրավունքի (մարդու իրավունքների) գերակայության պահանջների համակարգը լրացվեց նոր, լրացուցիչ նորմերով: Արդյունքում իրավաստեղծագործության բովանդակությանը (նաև իրավակիրառմանը) ներկայացվող պահանջների համակարգը ստացավ հետևյալ պատկերը՝

1) Մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 1):

<sup>1</sup> St'u Судебное решение по делу Мелоун от 2 августа 1984г., Series A, N. 82, p. 32, para 67.

2) Մարդու ազատությունը, իրավահավասարությունը և արժանապատվությունը իրավական կարգավորման նպատակն են (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան):

3) Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, 1-ին մաս):

4) Մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է:<sup>1</sup>

5) Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, 3-րդ մաս):<sup>2</sup>

6) Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից (ՀՀ սահմանադրություն, հոդված 14):

<sup>1</sup> Մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք սկզբունքի կենսագործման հարցում մեր Սահմանադրությունն ունի էական բացթողում: (տես սույն գլխի 2-րդ պարագրաֆը):

<sup>2</sup> Մարդու իրավունքները որպես անմիջական գործող իրավունք սկզբունքն ունի երկու առում՝ միջազգային-իրավական և ներպետական-իրավական: Ընդ որում, երկուսն էլ ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Ժամանակակից պայմաններում միջազգային իրավունքի առաջնայնության սկզբունքի ուժով համաշխարհային հանրության կողմից ճանաչված մարդու իրավունքները, անկախ ներպետական օրենսդրության մեջ ամրագրվելուց, անմիջականորեն, ուղղակիորեն մտնում են ժողովրդավարական երկրների գործող իրավական համակարգերի մեջ և ունեն անմիջական իրավաբանական գործողություն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը (6 հ.): Միաժամանակ Սահմանադրությունը հռչակում է, որ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների ու ազատությունների բացառում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, 1-ին մաս):

7) Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև (ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1):

8) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ - միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները (ՀՀ Սահմանադրություն, հոդված 43, 2-րդ մաս):

9) Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ (ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, 1-ին մաս):

10) ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, 1-ին մաս):<sup>1</sup>

<sup>1</sup> Իրավունքի գերակայության երաշխիքը ՀՀ Սահմանադրությունն է՝ որպես յուրահատուկ զաղափարական կողմնորոշիչ, բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող օրենք: Սահմանադրությունը իրավաբանական հիմք է բոլոր տեսակի նորմատիվ իրավական ակտերի ստեղծման համար: Սակայն չպետք է ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ՝ ենթադրելով, որ «Սահմանադրությունը ինքնին հպարտ մեծության մեջ, առանց այլ օրենքների ընդունակ է լուծել հիմնարար կարգավորման խնդիրները: Շատ սահմանադրական նորմերի գործողությունը նպատակին է հասնում ընթացիկ օրենսդրության հետ համալիր, փոխկապակցված կերպով» (տես Конституция РФ: Научно-практические комментарии. М., 1997, էջ 28): Բայց մյուս կողմից վտանգ կա, որ Սահմանադրության նորմերը կտարալուծվեն ընթացիկ օրենքներում, քանի որ վերջիններս, չնայած Սահմանադրության առաջադիմական բովանդակությանը, մի շարք դեպքերում դրսևորում են սահմանադրական նորմերին անհամապատասխանության միտում: Ահա թե ինչու, կարևոր է սահմանադրական նորմերին, այդ թվում մարդու իրավունքներն ամրագրող, տալ անմիջական գործողություն: Սակայն ինչպես ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության գործողության տասերկու ամյա փորձը, Սահմանադրության անմիջական գործողությունը դեռևս մնում է որպես դրա չիրացված հնարավորություն: Այս խնդրում մենք համաձայն ենք այն իրավագետների հետ, ովքեր առաջարկում են «մշակել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության անմիջական գործողության իրավական կառուցակարգ և ներդնել այն իրավակիրառ գործունեության մեջ» (տես **Ղազինյան Գ.Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2001, էջ 181):

11) Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքների (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, 2-րդ մաս):<sup>1</sup>

12) Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, 5-րդ մաս):

13) Միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, 4-րդ մաս):

Իրավունքի գերակայության այս պահանջները կարելի է շարունակել, սակայն թվարկվածներն էլ բավարար են հասկանալու համար, որ դրանք կոչված են ապահովելու օրենքների և այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունն իրավունքին, համամարդկային իրավական բովանդակային սկզբունքներին, մարդու իրավունքներին և, իհարկե, Սահմանադրությանը՝ որպես ներպետական իրավունքի առաջին պոզիտիվ աղբյուրի: Թվարկված պահանջների մեջ գերակշռում էր մարդու իրավունքների գերակայությունը, սակայն հետևողական մոտեցման դեպքում դա նույն իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորումն է: Այստեղ միանշանակ պետք է համաձայնվել Վ.Ս. Ներսեսյանցի հետ, ըստ որի՝ «իրավունքը և մարդու իրավունքները ոչ թե տարբեր (իրենց էությամբ, գործառույթներով և նշանակությամբ) ֆենոմեններ են, որոնք ունեն իրարից անկախ կյանք, այլ սկզբունքորեն միևնույն կարգի և միևնույն տիպի երևույթներ են: Մարդու իրավունքներն ամեն մի իրավունքի անհրաժեշտ, անօտարելի, անխուսափելի բաղադրա-

<sup>1</sup> Սահմանադրական այս և մի շարք այլ դրույթներ նշանակում են, որ Սահմանադրությունն ի սկզբանե ճանաչվում է իրավական: Ուստի, այն օրենքների լեգիտիմության հենակետն է, իրավական և ոչ իրավական օրենքների տարբերակման իրավաբանական հիմքը և բարձրագույն երաշխիքը (տե՛ս **Лившиц Р.З.** О легитимности закона.- В брешуре: Теория права, новые идеи, вып. 4-ий, М., РАН, 1995, էջ 20):

տարրն են, իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորման յուրահատուկ ձևի և տիպի էության որոշակի (հենց սուբյեկտային-մարդկային) առումն են: Իրավունքն առանց մարդու իրավունքների ևս անհնարին է, ինչպես և մարդու իրավունքներն առանց իրավունքի, իրավունքից դուրս»:<sup>1</sup>

Գ.Գ. Հարությունյանը և Մ.Բ. Բազլայը ևս իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակությունն են համարում մարդու բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների գերակայությունը և անմիջական գործողությունը:<sup>2</sup> Ըստ այս հեղինակների՝ իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները և ազատությունները պետությունը ճանաչում է որպես բարձրագույն արժեք, ժողովուրդը և պետությունն իշխանությունն իրականացնելիս սահմանափակված են այդ իրավունքներով, որոնք համարվում են անմիջականորեն գործող և որոշում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործունեության իմաստը և բովանդակությունը: Իրավունքի գերակայության սկզբունքի կոչումը ոչ իրավական օրենքների ընդունման և գործողության բացառումն է:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրվեց մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք սկզբունքը և այն որպես բարոյական կատեգորիա վերածվեց իրավականի: Միաժամանակ այն կոնկրետացվեց, մանրամասնեցվեց՝ ի դեմս այդ «գերսկզբունքի» բովանդակային տարրերը հանդիսացող մի շարք այլ պատմականորեն ձևավորված, կատարելագործված սկզբունքների, որոնք մարդկային մշակույթի անբաժանելի մասն են, սակայն չէին ամրագրված 1995 թ. Սահմանադրության մեջ: Այդուհանդերձ, այդ բնույթի կոնկրետ պահանջների մի մասը չունի իրավական ամրագրում: Օրինակ՝ մարդու իրավունքները նրան պատկա-

<sup>1</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права. М., 1997, էջ 376:

<sup>2</sup> Տե՛ս **Арутюнян Г.Г., Баглай М.Б.** Конституционное право: Энциклопедический словарь. М., Норма, 2006, էջ 63:



նում են ի ծնե, հետևաբար դրանք բնական, անօտարելի և անքաբտելի են, մարդու իրավունքները կանխորոշում են օրենքների հմաստը և բովանդակությունը, գործադիր իշխանության ու տեղական ինքնակառավարման գործունեությունը և ապահովված են արդարադատությամբ, ՀՀ-ում երաշխավորվում է իրավունքի և իրավական օրենքների գերակայությունը: Տեղին է նշել, որ Եվրոպայի միության Սահմանադրության նախագծում հինգ տարբեր հոդվածներում օգտագործված է «իրավունքի գերակայություն» արտահայտությունը:<sup>1</sup> Այդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ եվրոպական քաղաքակրթությունն իրավունքի գերակայությունը համարում է համաեվրոպական համապարփակ արժեքներից մեկը:

Իրավունքի գերակայության սկզբունքից բխող և իրավաստեղծագործության ընթացակարգին ու ձևին ներկայացվող պահանջներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով: Վերջինս որպես իրավաստեղծ տեխնիկայի կանոններ կարագավորում է այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման կարգը, իրավական ակտերի նախագծերի փորձաքննության և պետական գրանցման հարբերությունները, օրենսդրական տեխնիկայի կանոնները և այլն:<sup>2</sup>

Ինչպես օրինականությունը, այնպես էլ իրավաստեղծությունն ունի իր երաշխիքները: Ըստ Ա.Բ. Լիսյուտկինի՝ օրինականության բոլոր բաղադրատարրերը, սկսած նպատակից մինչև իրավաբանական հիմքերը, շատ կարևոր համակարգային դեր են խաղում, սակայն բավարար չեն օրինականությունը կենսագործելու համար: Օրենքներն առանց իրացման կառուցակարգի, օրինականությունն առանց երաշխիքների նման են հռչակագրային կարգախոսի, դա-

<sup>1</sup> Տե՛ս THE EU CONSTITUTION. [www.euabc.com](http://www.euabc.com), էջ 9, 14, 47, 149, 150:

<sup>2</sup> Տե՛ս Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը, ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 15(190) 21 մայիսի, 2002, հոդվ. 344:

տարկ հնչյունի: Ուրեմն, օրինականության համակարգը և տեսական կառույցն անպայմանորեն պետք է ներառեն այդ միջոցների, հնարքների և պայմանների ամբողջությունը, իսկ օրինականության ամեն մի տեսություն պետք է մշակի այդ հիմնախնդիրը:<sup>1</sup> Դրանք շատ դեպքերում նույնն են երկուսի համար էլ, սակայն իրավաստեղծականության երաշխիքներն ուղղված են իրավական օրենքների և իրավական բնույթ ունեցող այլ նորմատիվ ակտերի ընդունմանը և դրանց գործողության մեջ մտնելուն, իսկ անհրաժեշտ դեպքերում նաև գործողության մեջ մտնելուց հետո դրանք անվավեր հայտարարելուն: Այդ երաշխիքները և իրավաստեղծականության իրացման կառուցակարգերը բազմազան են՝ սկսած քաղաքացիական հասարակության հայեցակարգից մինչև իրավական պետության տեսությունը<sup>2</sup> իր բոլոր ինստիտուցիոնալ հնարավորություններով՝ մասնավորապես ժողովրդաիշխանության սկզբունքը, պետական իշխանության լեգիտիմությունը, իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը, գործադիր իշխանության ենթաօրենսդրականությունը, սահմանադրական վերահսկողությունը, ընդհանուր դատական վերահսկողությունը, դատախազական գործունեությունը (որոշ երկրներում), իրավաստեղծ գործունեության ձևականացված և հստակ իրավական կարգավորումը, իրավախախտ օրենսդրության դեմ պայքարի միջազգային համընդհանուր և տարա-

<sup>1</sup> Տե՛ս **Лисюткин А.Б.** Законность и правопорядок. В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристы, 1999, էջ 514:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության հիմքում ընկած կարևորագույն հայեցակարգերից մեկն իրավական պետության տեսությունն է: Սահմանադրության մեջ իրենց նորմատիվ ամրագրումն են ստացել իրավունքի տեսության մեջ մշակված իրավական պետականության բոլոր երեք հիմնական բաղադրիչները՝ ա) հումանիտար-իրավական (մարդու և քաղաքացու բնական իրավունքներն ու ազատությունները, դրանց ճանաչումն ու պաշտպանությունը), բ) նորմատիվ-իրավական (գործող իրավունքի բոլոր ձևերին ներկայացվող պահանջները և դրանց սահմանադրական-իրավական բնույթը), գ) ինստիտուտային-իրավական՝ իշխանությունների տարանջատման և փոխգործողության համակարգը (տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права, М., 1997, էջ 372-373):

ծաշրջանային համակարգերը և այլն: Այդ երաշխիքներն իրենց գործողության ոլորտով կարող են լինել ընդհանուր, օրինակ՝ իշխանությունների բաժանունը կամ սահմանադրական վերահսկողությունը, և ճուղային: Օրինակ՝ քրեական դատավարության սահմանադրական և բուն քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված սկզբունքները կողմնորոշիչ և ղեկավար նշանակություն ունեն օրենսդիր մարմնի համար ավելի մասնավոր դատավարական նորմեր ստեղծելիս: Այդ երաշխիքների համակարգում գլխավոր դերակատարն անկախ դատական իշխանությունն է՝ որպես իրավական օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքի պահանջների կենսագործման գլխավոր երաշխավոր:<sup>1</sup> Այսպիսով՝ իրավաօրինականության, այսինքն՝ իրավական ակտերի իրավականության ապահովման կառուցակարգերից ամենագլխավորն անձանց իրավունքն է դատարանում բողոքարկելու բոլոր տեսակի իրավական ակտերը՝ անհատականները հայցային վարույթի կարգով, անհատականները և նորմատիվները հատուկ հայցային վարույթի կարգով և օրենքների սահմանադրականության ստուգումը սահմանադրական դատարանի միջոցով:

<sup>1</sup> Այդ տեսակետն է պաշտպանում նաև Գ.Գ. Հարությունյանը (տե՛ս **Հարությունյան Գ.Գ.** Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր.: Նժար, 2003, էջ 54):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օրինականության տեսության շրջանակներում առկա հայեցակարգերի դասակարգումները լրացնելով դասակարգման նոր չափանիշներով՝ հնարավոր է առանձնացնել օրինականության միակողմ և բազմակողմ, համակարգային և օրիգինալ հայեցակարգերը՝ ի լրումն ձևական-նորմատիվային, բովանդակային, գործառութային հայեցակարգերի: Օրինականության հայեցակարգերի տիպերի առանձնացումը որոշակիորեն պայմանական է: Դա նշանակում է, որ օրինականության հայեցակարգերի մեկ տիպում խմբավորված հայեցակարգերն իրենց բովանդակությամբ միասնական չեն, որովհետև, օրինակ՝ կարող է լինել օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված նորմատիվականության վրա և օրինականության համակարգային տեսություն՝ խարսխված իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգի վրա: Այս երկուսն իրար հակասող մոտեցումներ են: Ընդհանրությունը միայն օգտագործված մեթոդում է՝ օրինականությունը դիտարկել համակարգային երևույթ:

Օրինականության տեսության հայեցակարգային բազմազանությունը հաղթահարելու և այդ տեսության հիմնախնդիրները լուծելու ճանապարհը մեթոդական ճիշտ համալիրի ընտրությունն է: Օրինականությունն օբյեկտիվ բնույթի երևույթ է, սակայն ենթարկվում է սուբյեկտիվ հետազոտման և մեկնաբանման: Հետևաբար, օրինականության հայեցակարգերի բազմազանությունն ունի նաև սուբյեկտիվ բնույթի պատճառներ՝ պայմանավորված հետազոտողի անձնական որակներով ու նրա մեթոդական զինվածությամբ: Օրինականության տեսության հիմնահարցերի արդյունավետ լուծման համար անպայմանորեն անհրաժեշտ է իրավաբանական մոտեցման, որի ելակետային պահանջն իրավունքի և օրենքի տարանջատման գաղափարն է, համակարգային, բազմակողմանի-համալիր հետազոտման, կառուցվածքագործառութային մեթոդների համակցված, հետևողական ու լրիվ կիրառում:

Օրինականության դիտարկումն իրավական երևույթների և իրավագիտական հասկացությունների համակարգում հաստատում է, որ օրինականությունն իրավունքի մի շարք հատկանիշներով, հատկապես համապարտադիր նորմատիվայնությամբ և ձևային ուրոշակիությամբ պայմանավորված և իրավունքի ու նրա բոլոր համակարգային դրսևորումներին, դրանց բաղադրատարրերին բնորոշ հիմնարար իրավական սկզբունք է: Իրավունքի հատկանիշների այդպիսի տրանսֆորմացիան օրինականության իրավական սկզբունքի պայմանավորված է նրանով, որ իրավունքի ձևերի ստորակարգային համակարգում առաջին տեղում կանգնած է գերակայությամբ օժտված օրենքը, ինչի ուժով իրավունքի համապարտադիրությունը վերածվում է օրինականության պահանջի: Այդ պահանջի ունեցումն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի և նրա պաշտոնական ձևերի (օրենքների և այլն) բարեխիղճ, անշեղ, խստագույնս իրականացումը, պահպանումը, կատարումը և կիրառումն է, որն ապահովում է հասարակական հարաբերությունների իրավաչափությունը: Այսպիսով՝ օրինականությունը համապարտադիրություն, բարձրագույն իմպերատիվություն ունեցող, իրավունքի ձևավորման, զարգացման և գործողության գործընթացները որոշող համընդհանուր կազմակերպական իրավական սկզբունք է:

Իրավաբանական իրավահասկացության մեթոդաբանական դիրքերից օրինականություն հասկացությունը վերածվում է իրավական օրինականության: Հասարակության և պետության առջև կանգնած է երկմիասնական խնդիր՝ միայն իրավունքին հաղորդել օրինական ուժ, և միաժամանակ որպեսզի օրենքը միշտ, բոլոր դեպքերում և իրավական տարածություններում լինի իրավական: Այդ խնդրի կենսագործման արդյունքում առաջ է գալիս նոր հասկացություն՝ «իրավական օրինականություն», որի՝ որպես սկզբունքի առաջին պահանջն իրավունքի պոզիտիվացման գործընթացում իրավունքի արտացոլումն է նորմատիվ ձևերում, իսկ երկրորդը բխում է իրավական որակներով օժտված օրենքի համապարտադիր

րությունից և նշանակում է անշեղ կենսագործել նորմատիվ ձևերում ամրագրված կարգադրագրերը (օրինականություն ավանդական իմաստով): Առաջին պահանջն ուղղված է պետությանը և նրա իշխանության ճյուղերին, երկրորդը՝ յուրաքանչյուրին և բոլորին: Այդպիսով՝ իրավական օրինականությունը՝ որպես լայն հասկացություն, բացի իրավաօրինականությունից, ենթադրում է նաև օրինականություն հասկացությունը: Իրավական օրինականություն հասկացությունն անխուսափելիորեն բխում է իրավական պետության անհատական-իրավական և նորմատիվ-իրավական հատկանիշներից, թույլ է տալիս հաղթահարել օրինականության ձևական-նորմատիվային հայեցակարգերի թերությունները, կանխել դրաց վտանգավոր հասարակական հետևանքները:

Իրավական կարգավորման սոցիալական համակարգի ամբողջական և հարուստ տեսական մոդելը հնարավորություն է տալիս առավել լրիվ, ադեկվատ ու ճիշտ վեր հանելու և ներկայացնելու այդ կառուցակարգում իրավական օրինականության տեղն ու դերը, դրսևորման բոլոր կողմերը: Իրավական կարգավորման կառուցակարգն առավել մանրամասն է արտացոլում և՛ իրավունքի ձևավորման, և՛ իրավական կարգավորման, և՛ իրավունքի գործողության ողջ գործընթացը: Իրավական կարգավորման սոցիալական համակարգի առավել լրիվ և համակարգային մոդելը ենթադրում է, որ այդ կառուցակարգը բազմատարր համակարգ է՝ բաղկացած սոցիալ-իրավական միջոցներից, կառուցակարգի սուբյեկտներից, իրավաբանական նշանակալի գործունեությունից, այդ գործունեության արդյունքներից, որոնց օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումը՝ իրավական պետության նպատակներին ու խնդիրներին համապատասխան: Իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգը՝ որպես դինամիկ համակարգ, իր գործառնաբանական գործընթացում անցնում է հինգ փուլեր՝ իրավունքի ձևավորման, իրավաստեղծագործության, իրավական տեղեկութավորման, իրավունքի իրականացման, սոցիալ-իրավական վերահսկողության: Իրավական կարգավորման կառու-

ցակարգում իրավական օրինականությունը հանդես է գալիս որպես նրա կազմակերպման և գործառնությունից սկզբունք, որը գործում է իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում նման բնույթի այլ սկզբունքների հետ համաքայլ: Դրանով է պայմանավորված իրավական օրինականության համալիր և բազմակողմ բնույթը, քանի որ իրավական կարգավորման կառուցակարգի ընդհանուր համակարգի ամեն մի փուլային ենթակառուցակարգում այն դրսևորվում է յուրօրինակ և կատարում է հատուկ գործառնություններ:

Իրավական օրինականության հայեցակարգը, ի տարբերություն ձևական օրինականության հայեցակարգի, լրիվ այլ պահանջներ է ներկայացնում իրավական կարգավորման կառուցակարգի առաջին երկու փուլերին՝ իրավունքի ձևավորման և իրավաստեղծագործության: Բացի նորմատիվ իրավական ակտերի ձևական լեգիտիմության խնդրից, իրավաօրինականությունն առաջ է քաշում նաև դրանց բովանդակային լեգիտիմության հիմնախնդիրը: Իրավական օրինականության սկզբունքն իրավական կարգավորման այս փուլերում մասնակից սուբյեկտներին ներկայացնում է պահանջ՝ լեգալ ընթացակարգով պոզիտիվ իրավունքի վերածել միայն իրավունքը: Այդ պահանջը վերածվում է պետության պարտականության՝ ճանաչել, պահպանել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքները: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ձևակերպումն ամրագրել է պետության միայն մեկ պարտականությունը՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, այնինչ՝ իրավաօրինականության դիրքերից պետությունը կրում է նաև ճանաչելու, պահպանելու, ապահովման պարտականությունները:

Իրավական օրինականության սկզբունքը գործում է ոչ միայն իրավունքի ձևավորման և իրավաստեղծագործության փուլերում, այլև իրավունքի կենսագործման փուլում: Ճիշտ է, այս փուլում արդեն շեշտադրվում է ձևական օրինականությունը՝ որպես խստագույն պահանջ՝ ներկայացված այդ փուլին մասնակցող իրավունքի բոլոր սուբյեկտներին՝ կենսագործելու գործող իրավունքի նորմերի կարգադրագրերը, պոզիտիվ իրավունքի և պետական հարկադրանքի

քի կիրառումն իրականացնելու իրավունքի նորմերին համապատասխան: Սակայն իրավական կարգավորման այս փուլում իրավաօրինականության սկզբունքի գործողության արդյունքում իրավունքի սուբյեկտներն իրենց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները խախտող ակտերի հանդիպելուց կարող են գործի դնել դրանց սահմանադրականության, հակաիրավականության բողոքարկման դատական և այլ ընթացակարգերը: Իրավական կարգավորման այս փուլում իրավաօրինականության սկզբունքը դառնում է միջոց-երաշխիք, որի օգնությամբ իրավունքի սուբյեկտ անհատները և նրանց կազմավորումները պաշտպանվում են իրենց իրավունքներն ու ազատությունները խախտող նորմատիվ իրավական ակտերից:

Իրավական օրինականությունը՝ որպես իրավունքի և իրավական կարգավորման կառուցակարգի համընդհանուր կազմակերպական-գործառնության սկզբունք, համակարգային կազմավորում է: Ավելի ընդհանրացված իրավական մետահամակարգերում այն կատարում է ենթահամակարգի դեր, սակայն ինքը, լինելով համակարգ, ունի համակարգին բնորոշ ներքին կառուցվածք: Այդ կառուցվածքի ստորակարգային բաղադրատարրերն են իրավաօրինականության նպատակը, ենթահամակարգերը, ենթանպատակները և համապատասխանաբար ենթագործառնությունները, ամեն մի ենթահամակարգին բնորոշ ներքին կառուցվածքային բաղադրատարրերը (սկզբունքներ, պահանջներ) և օրինականության նպատակների, սկզբունքների, պահանջների իրացման կառուցակարգը (կամ երաշխիքները): Իրավաօրինականության նպատակը համահունչ է իրավունքի և իրավական կարգավորման նպատակներին, բխում է դրանցից, կոնկրետացնում այն: Որպես այդպիսին կարելի է համարել իրավունքի և նրա պահանջների կենսագործումը, իրականացումը հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծում: Այս ընդհանուր նպատակն իր հերթին տրոհվում է երկու ենթանպատակների (համապատասխանաբար ենթագործառնությունների), որովհետև իրավունքի՝ որպես օբյեկտիվ էության և հասարա-

կական հարաբերությունների մասնակիցների փաստական վարքագծի միջև կանգնած է պոզիտիվ իրավունքը կամ օրենսդրությունը: Այդպիսով՝ իրավական օրինականությունը՝ որպես համակարգ, տրոհվում է երկու իրար հետ փոխկապված ենթահամակարգերի՝ իրավաօրինականության և օրինականության: Իրավաօրինականության՝ որպես ենթահամակարգի նպատակը միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվացումն է: Այդ նպատակը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավաստեղծ մարմիններին՝ պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները, պահանջները, սկզբունքները և ընդունել միայն իրավական բնույթ ունեցող նորմատիվ ակտեր: Այս ենթանպատակին համապատասխան՝ իրավաօրինականության գործառույթն է պայմաններ ստեղծել հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմությանը, ազատության, արդարության և հումանիզմի գաղափարներին համապատասխանող պոզիտիվ իրավունքի կամ օրենսդրության ձևավորման համար: Իրավաօրինականությանը՝ որպես օրինականության ենթահամակարգին, բնորոշ են իր սկզբունքները, պահանջները և, իհարկե, իրավաօրինականության նպատակների իրականացման կառուցակարգը կամ իրավաօրինականության երաշխիքները: Իրավաօրինականության իրացման իրավաբանական կառուցակարգը կամ երաշխիքները միջոցների, հնարքների և պայմանների ամբողջություն են, որոնք կոչված են ապահովելու իրավական օրենքների և իրավական բնույթ ունեցող այլ նորմատիվ ակտերի ընդունումը և դրանց գործողության մեջ մտնելը, իսկ գործողության մեջ մտնելուց հետո անհրաժեշտ դեպքերում նաև դրանց գործողության կասեցումը, դրանց անվավեր հայտարարումը և վերացումը:

Իրավաօրինականությունն իր ենթանպատակին համապատասխան ունի իր սկզբունքը՝ իրավունքի գերակայությունը, որը վերածվում է կոնկրետ իրավական պահանջների, նորմերի: Իրավունքի գերակայությունը՝ որպես իրավաօրինականության սկզբունք, ի-

րավական կարգավորման առաջին երկու փուլերում՝ իրավունքի կազմավորման և իրավաստեղծագործության, վերածվում է երկու խումբ պահանջների՝ իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայացվող պահանջներ, իրավաստեղծ գործունեության ընթացակարգին և ձևին ներկայացվող պահանջներ:

Իրավունքի գերակայության սահմանադրական և այլ պահանջները կոչված են ապահովելու օրենքների և այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունն իրավունքին, համամարդկային իրավական բովանդակային սկզբունքներին, մարդու իրավունքներին և, իհարկե, Սահմանադրությանը՝ որպես ներպետական իրավունքի բարձրագույն ուժով օժտված և առաջին պոզիտիվ աղբյուրի: Այդ պահանջների մեջ գերակշռում էր մարդու իրավունքների գերակայությունը, սակայն հետևողական մոտեցման դեպքում դա նույն իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորումն է:

Իրավունքի գերակայության սկզբունքից բխող իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայացվող պահանջների մեծագույն մասն ունեն սահմանադրական կամ օրենսդրական ամրագրում: 2005թ. հանրաքվեի արդյունքում սահմանադրորեն արդեն ամրագրված իրավունքի (մարդու իրավունքների) գերակայության պահանջների համակարգը լրացվեց նոր, լրացուցիչ նորմերով, և արդյունքում իրավաստեղծագործության բովանդակությանը (նաև իրավակիրառմանը) ներկայացվող պահանջների համակարգը կատարելագործվեց: Այդուհանդերձ, այդ բնույթի կոնկրետ պահանջների մի մասը չունի իրավական ամրագրում: Օրինակ՝ մարդու իրավունքները նրան պատկանում են ի ծնե, դրանք բնական, անօտարելի և անքաքտելի են, մարդու իրավունքները կանխորոշում են օրենքների իմաստը և բովանդակությունը, գործադիր իշխանության ու տեղական ինքնակառավարման գործունեությունը և ապահովված են արդարադատությամբ, ՀՀ-ում երաշխավորված է իրավունքի և իրավական օրենքի գերակայությունը:

## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ**

### **1. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

#### **1.1. Հայերեն լեզվով գրականություն**

1. Ապիյան Ն.Ա., Պետրոսյան Ա.Հ., Իրավական պետություն և օրինականություն, 2-րդ հրատարակություն, լրացված և վերամշակված, Երևան, «Տիգրան մեծ» հրատ., 2001, 288 էջ:
2. Ապիյան Ն.Ա. և ուրիշներ, Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, ուս. ձեռնարկ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2001, 394 էջ:
3. Ապիյան Ն.Ա. և ուրիշներ, Իրավունքի տեսության հիմնահարցեր, ուս. ձեռնարկ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003, 325 էջ:
4. Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, «Գոշ» հրատարակչություն, Երևան, 1997, 433 էջ:
5. Հարությունյան Գ.Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, 72 էջ:
6. Ղազինյան Գ.Ս., Զրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, 432 էջ:
7. Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի, 2001, 300 էջ:

#### **1.2. Արևմտյան հեղինակների աշխատություններ անգլերեն և ռուսերեն լեզուներով**

1. Ademi G. Legal intimations - Michael Oakeshott and the rule of law // Wisconsin Law Review. -1993. թիվ 3, 839-896 էջեր:
2. Coats W. J. Michael Oakeshott as liberal theorist // Canadian Journal of Political Science - Revue Canadienne de Science Politique. - 1985. - Vol. 18. թիվ 4, 773-787 էջեր:
3. Бержель Ж. Общая теория права. М., 2000, 576 էջ:
4. Давид Р., Жоффре-Спинози К., Основные правовые системы современности. - М., 1996, 432 էջ:

5. Дайси А.В. Основы государственного права Англии. - СПб., 1907, 710 էջ:
6. Деннис Ллойд Идея права / Перевод с английского М.А. Юмашева, Ю.М. Юмашев, научный редактор Ю.М. Юмашев - М.: «Югона», 2002, 416 էջ:
7. Хайек Ф. Дорога к рабству // Вопросы философии. 1990, թիվ 11, 123-129 էջեր:
8. Шайо А. Самоограничение государственной власти (краткий курс конституционализма): Пер. с венгр. - М.: Юристь, 1999, 292 էջ:
9. Право и законность: Пер. с венгр., М.: Юрид. лит., 1987, 360 էջ:

#### **1.3. Ռուսերեն լեզվով գրականություն**

1. Александров Н.Г. Право и законность в период развернутого строительства коммунизма. М., 1961, Госюриздат, 271 էջ:
2. Александров Н.Г. Законность и правоотношение в советском обществе. М., Госюриздат, 1955, 176 էջ:
3. Алексеев С.С. Восхождение к праву. Поиски и решения. - М.: Издательство НОРМА. 2001, 752 էջ:
4. Алексеев С.С. Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования. - М.: Издательская группа НОРМА-ИНФРА\* М, 1998, 675 էջ:
5. Алексеев С.С. Государство и право. М., ТК Велби, Издательство Проспект, 2006, 152 էջ:
6. Алексеев С.С. Проблемы теории права. Курс лекций, Т. 1, Свердловск, 1972, 113-124 էջեր:
7. Алексеев С.С. Механизм правового регулирования в социалистическом государстве. М., 1966, Юридическая литература, 187 էջ:
8. Алексеев С.С. Социальная ценность права в советском обществе. - М., Юрид. Лит., 1971, 223 էջ:

9. Апиян Н., Товмасын М., Законность и правопорядок в правовом государстве, Ереван, изд. Аштарак, 2000, 236 тг:
10. Афанасьев В.С. Законность и правопорядок. В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, 575 тг:
11. Байтин М.И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). - Саратов: СГАП, 2001, 416 тг:
12. Байтин М.И. Сущность и типы государства // Теория государства и права. Саратов, 1995, 36-48 тгтг:
13. Баглай М.Б., Габричидзе Б.Н., Конституционное право Российской Федерации. М., Издател. группа ИНФРА-М-КОДЕКС, 1996, 512 тг:
14. Безуглов А.А., Солдатов С.А. Конституционное право России. В 3-х томах, Т. 1, М., 2001, 799 тг:
15. Братусь С.Н. Юридическая ответственность и законность: (Очерк теории). М., Городец-издат, 2001, 208 тг:
16. Боннер А.Т. Законность и справедливость в правоприменительной деятельности. М., Российское право, 1992, 320 тг:
17. Борисов В.В. О гарантиях законности // Вопросы теории государства и права: Новые идеи и подходы: Межвуз. сб. науч. тр. Саратов, 2000. ном. 2(11), 36-41 тгтг:
18. Борисов В.В. Правовой порядок развитого социализма. Вопросы теории. Саратов, Изд-во Саратовского ун-та, 1977, 408 тг:
19. Борисов В.В. Социалистическая законность и правопорядок советского общества. Саратов, Изд. Саратовского университета, 1962, 66 тг:
20. Берекашвили Л.Ш. Обеспечение прав человека и законности в деятельности правоохранительных органов: Учеб. пособие. М., 2001, 163 тг:
21. Богдановская И.Ю. Закон в английском праве. - М., 1988, 167 тг:

22. Бойков А.Д. Третья власть. - М., Издат. Юрлитинформ, 2002, 280 тг:
23. Васильев А.М. Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теорий права. М., Юрид. лит., 1976, 265 тг:
24. Вопленко Н.В. Социалистическая законность и применение права. Саратов, 1983, 185 тг:
25. Витрук Н.В. Законность: понятие, защита и обеспечение. Конституционная законность и конституционное правосудие. В кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. М., ИКД Зерцало-М, 2001, 528 тг:
26. Графский В.Г. Интегральная (общая, синтезирования) юриспруденция как теоретическое и практическое задание. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсисянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 140-166 тгтг:
27. Гранат Н.Л. Социалистическая законность в деятельности органов внутренних дел. - М., 1985 144 тг:
28. Глущенко В.В. Теория государства и права: системно-управленческий подход. г. Железнодорожный, Моск. обл., Крылья, 2000, 416 тг:
29. Глущенко В.В. Менеджмент: системные основы. г. Железнодорожный, Моск. обл., НПЦ Крылья, 1998, 224 тг:
30. Головкин А.А. Законность - универсальное явление в жизни человека // Право и демократия: Сб. науч. тр., Вып. 11. Минск, 2001, 17-29 тгтг:
31. Гойман В.И. Действие права (методологический анализ). М., Академия МВД РФ, 1992, 182 тг:
32. Гойман В.И. Право в системе нормативного регулирования. В кн. Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., 2005, Юристъ, 575 тг:
33. Головицкий А.Н., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права. М., Изд-во Эксмо, 2005, 832 тг:

34. Головистикова А.Н. Законность и правопорядок. В кн. Теория государства и права. Под ред. А.С. Пиголкина. М., Юрайт-Издат. 2006, 613 тг:
35. Дедков Л.Л. Обеспечение законности в общенародном государстве. Минск, 1980, 94 тг:
36. Еременко Ю.П. Советская Конституция и законность. Саратов, 1982, Изд. Саратовского университета, 162 тг:
37. Ефремов А.Ф. Принципы и гарантии законности. Самара, 1999, 147 тг:
38. Ефремов А.Ф. Принципы законности и проблемы их реализации. Тольятти, 2000, 298 тг:
39. Ефремов А.Ф. О проблемах соблюдения единства законности // Право и политика. 2002, рпц 2, 126-134 тгтр:
40. Жилинский С.Э. Роль КПСС в укреплении законности на современном этапе, М., Мысль, 1977, 215 тг:
41. Жилинский С.Э. Деятельность КПСС и Советского государства по укреплению социалистической законности. М., 1983, 223 тг:
42. Жеребкин В.Е. Логический анализ понятий права. Киев, 1976, Выща школа, 160 тг:
43. Законодательная техника: Научно-практическое пособие. М., Городец, 2000, 272 тг:
44. Зорькин В.Д. Верховенство права и конституционное правосудие. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсеянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 12-35 тгтр:
45. Зайцев И.М. Сущность хозяйственных споров. Саратов. 1974, Изд. Саратовского университета, 157 тг:
46. Зивс С.Л., Кризис законности в современных империалистических государствах. - М., 1958, 295 тг:
47. Имре Сабо, Социалистическое право; М., «Прогрес», 1964, 369 тг:
48. Исаев И.А. История государства и права России. М., Юристь, 1996, 544 тг:

49. Исаков В.Б. Механизм правового регулирования. В кн. Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, 480 тг:
50. Казимирчук В.П., Кудрявцев В.Н., Современная социология права, М., Юристь, 1995, 297 тг:
51. Козлихин И.Ю. Право, закон и власть в современной России. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсеянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 62-75 тгтр:
52. Комаров С.А. Общая теория государств и права. М., Юрайт, 1997, 416 тг:
53. Керимов Д.А. Обеспечение законности в СССР. М., Госюридат, 1956, 167 тг:
54. Керимов Д.А. Свобода, право и законность в социалистическом обществе. М., Госюриздат, 1960, 223 тг:
55. Керимов Д.А. Проблемы общей теории права и государства. М., В 3-х томах, Т. 1, Созология права, М., 2001, 266 тг:
56. Керимов Д.А. Законодательная техника. М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА-М), 2000, 127 тг:
57. Курицын В.М. Становление социалистической законности. М., 1983, 193 тг:
58. Корельский В.М., Демократия и дисциплина в развитом социалистическом обществе. М., Юрид. лит., 1977, 136 тг:
59. Лазарев В.В., Липень С.В. Теория государства и права. – 3-е изд., испр. и доп. – М.: Спарк, 2004, 528 тг:
60. Лапаева В.В. Российская юриспруденция в поисках нового типа правопонимания. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсеянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 35-62 тгтр:
61. Лазарев В.В. Истоки интегративного понимания права. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсеянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 122-140 тгтр:



62. Лазарев В.В. К теории законности // Актуальные проблемы теории права. - Уфа, 1995, 72-87 тўтр:
63. Лившиц Р.З. О легитимности закона. В брошюре: Теория права: новые идеи. М., РАН, 1995, рнқ. 4-рнқ, 18-26 тўтр:
64. Лившиц Р.З. Теория права. Учебник для студентов юридических высших учебных заведений. М., Изд. БЕК, 1994, 224 тў:
65. Лисюткин А.Б. Законность и правопорядок. В кн. Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристь, 1999, 672 тў:
66. Лейст О.Э. Сущность права. Проблемы теории и философии права. М., ИКД „Зерцало-М“, 2002, 288 тў:
67. Леушин В.И., Перевалов В.Д. Понятие, сущность и социальная ценность права. В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, 570 тў:
68. Лунев А.Е., Студенкин С.С. Ямпольская И.А. Социалистическая законность в советском государственном управлении. М., Юрид. издат., 1948, 136 тў:
69. Лукашева Е.А. Правосознание и укрепление законности в СССР. М., Госюриздат, 1957, 106 тў:
70. Лукашева Е.А. Социалистическое правосознание и - законность. М., Юридическая литература, 1973, 344 тў:
71. Ленинское учение о демократии и законности и его значение для современности. М., Мысль, 1973, 207 тў:
72. Лунев А.Е., Обеспечение законности в советском государственном управлении. М., Юридическая литература, 1963, 158 тў:
73. Малеин Н.С. О законности в условиях переходного периода // Теория права: Новые идеи. Вып. 4, М., 1995, 26-32 тўтр:
74. Марксистско-ленинская общая теория государства и права. Социалистическое право. М., 1973, Юрид. литература, 648 тў:

75. Марченко М.Н. Теория государства и права в вопросах и ответах. М., 2005, 240 тў:
76. Марченко М.Н. Теория государства и права. М., ТК Велби, Издательство Проспект, 2005, 640 тў:
77. Мухаев Р.Т. Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, 464 тў:
78. Мамут Л.С. Право никому не дается даром. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 75-86 тўтр:
79. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 416 тў:
80. Нерсесянц В.С. Юриспруденция. Введение в курс общей теории права и государства. М., Издательская группа НОРМА-ИНФРА.М, 1998, 288 тў:
81. Нерсесянц В.С. Общая теория права и государства. М., 1999, 552 тў:
82. Нерсесянц В.С. Философия права. М., Издательская группа ИНФРА.М-Норма, 1997, 652 тў:
83. Основы теории государства и права. Отв. ред. С.С. Алексеев, 2-ое издание, М., Юрид. литература, 1971, 408 тў:
84. Общая теория государства и права, т. 2. Общая теория права. Отв. ред. В.С. Петров, Л.С. Явич, Л., 1974, 416 тў:
85. Общая теория права и государства / Под ред. В.В. Лазарева. - М.: Изд-во Юрист, 1994, 360 тў:
86. Общая теория права. Под общ. ред. А.С. Пиголкина. М., Изд-во МГТУ им. Н.Э. Баумана, 1996, 384 тў:
87. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. М.Н. Марченко. Том 2. Теория права. М., Издательство „Зерцало“, 1998, 640 тў:
88. Правовая система социализма: понятие, структура, социальные связи. Кн.1/ Под ред. А.М. Васильева. М., Юрид. лит., 1986, 368 тў:

89. Протасов В.Н. Теория государств и права. Проблемы теории государства и права. М., Юрайт-М, 2001, 346 тг:
90. Птушенко А.В. Системная парадигма права. М., Московский издательский дом, 2004, 468 тг:
91. Проблемы общей теории права и государства. Под ред. В.С. Нерсесянца. М., Изд. группа НОРМА-ИНФРА.М, 1999, 832 тг:
92. Право и законность. Сборник: перевод с венгерского, М., Юрид. лит., 1987, 358 тг:
93. Правовые гарантии законности в СССР / Под. ред. М.С. Строговича, М., 1962, 475 тг:
94. Поляков А.В. Общая теория права. Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., Издательский дом С.-Петерб. гос. ун-та, 2004, 864 тг:
95. Поляков А.В. Российская теоретико-правовая мысль: опыт прошлого и перспективы на будущее. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 86-122 тг:
96. Привезенцев Н.И. Законность в российском обществе (история, теория, практика). - Санкт-Петербург, 1998, 174 тг:
97. Рабинович П.М. Упрочение законности – закономерность социализма. Львов, 1975, Выща школа, 260 тг:
98. Рабинович П.М. Проблемы теории законности развитого социализма. - Львов, 1979, 204 тг:
99. Р. Джонсон, Ф. Каст, Д. Розенцвейр. Системы и руководство. М., Сов. радио, 1971, 674 тг:
100. Ромашов Р.А., Шукшина Е.Г. Право как социальный регулятор. В кн. Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, 630 тг:
101. Русинов Р.К. Правовое регулирование и его механизм. В кн. Теория государства и права. Под ред. Н.И. В.М. Корельского

- и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, 570 тг:
102. Самощенко И.С. Охрана режима законности Советским государством. М., Госюриздат, 1960, 200 тг:
103. Строгович М.С. Социалистическая законность – незыблемый принцип нашей общественной жизни. М., Знание, 1969, 46 тг:
104. Строгович М.С. Основные вопросы советской социалистической законности. М., 1966, 252 тг:
105. Стручков Н.А. Советская исправительно-трудовая политика и ее роль в борьбе с преступностью. Саратов, Изд. саратовского университета, 1970, 271 тг:
106. Социалистическая законность и способы ее обеспечения. Под ред. Чхиквадзе В.М., М., Наука, 1968, 216 тг:
107. Социалистическая законность и применение права. Под ред. проф. М.И. Байтина, Саратов, 1983, 185 тг:
108. Скакун О.Ф. Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков: Эспада, 2005, 840 тг:
109. Социология права. Под ред. В.М. Сырых. М., Юридический Дом „Юстицинформ“, 2001, 480 тг:
110. Теория государства и права. Под ред. В.П. Малахова, В.Н. Казакова. М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2002, 576 тг:
111. Теория государства и права. Под ред А.Н. Денисова, Изд. московского университета, 1972, 531 тг:
112. Теория систем и методы системного анализа в управлении и связи. В.Н. Волкова, Б.А. Воронков, А.А. Денисов и др., М., Радио и связь, 1983, 248 тг:
113. Теория государства и права. Под ред. С.С. Алексеева. М., Юрид. лит., 1985, 480 тг:
114. Теория государства и права. Под ред. М.М. Рассолова, В.О. Лучина, Б.С. Эбзеева. М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000, 640 тг:

115. Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, 630 էջ:
116. Тихомиров Ю.А. Российское законодательство: проблемы и перспективы. - М.: 1995, 140 էջ:
117. Теория государства и права. Под ред. Г.Н. Манова. М., Изд. БЕК, 1995, 336 էջ:
118. Уголовно-процессуальное право Российской Федерации. Под ред. П.А. Лупинской. М., Юрист, 1999, 696 էջ:
119. Хропанюк В.Н. Теория государства и права: Учебное пособие для высших учебных заведений / Под ред. Профессора В.Г. Стрекозова. - М.: Издательство «Интерстиль», 2000, 377 էջ:
120. Честнов И.Л. Актуальные проблемы теории государства и права: Эпистемология государства и права. СПб., ИБЭСЭП, 3-нание, 2004, 63 էջ:
121. Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. Учеб. пособие для вузов. М., дело, 1997, 120 էջ:
122. Черданцев А.Ф. Теория государства и права. М., Юрайт-М, 2001, 432 էջ:
123. Чхиквадзе В.М. Вопросы социалистического права и законности в трудах В.И. Ленина. М., Юрид. лит., 1960, 342 էջ:
124. Чхиквадзе В.М. Государство, демократия, законность. М., Юрид. лит., 1967, 503 էջ:
125. Шабуров А.С. Законность и правопорядок. В кн. Теория государства и права. Под ред. Н.И. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, 570 էջ:
126. Шутько Д.В. Гражданское общество в правовом государстве: проблемы взаимных отношений. В кн. Наш трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсисянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, 166-175 էջեր:

## 2. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Бахрах Д.Н. Вопросы законности в государственном управлении // Правоведение. - 1996. – քիւ 3, 81-89 էջեր:
2. Ведяхин В.М., Ефремов А.Ф. Политические гарантии законности // Правоведение. 2000, քիւ 2, 59-72 էջեր:
3. Горшенев В.М. Теория социалистической законности в свете Конституции СССР 1977 г. // Советское государство и право. - 1979. – քիւ 11, 16-20 էջեր:
4. Гуцин И.Н. Такая у нас законность // Советская законность. 1990. ГЗн 1, 32-39 էջեր:
5. Кудрявцев В.Н. Законность: содержание и современное состояние // Журнал российского права. - 1998. – քիւ 1, 12-17 էջեր:
6. Кудрявцев В.Н. О правопонимании и законности // Государство и право. - 1994. – քիւ 3, 3-8 էջեր:
7. Лисюткин А.Б. К понятию законности // Правоведение. - 1993. – քիւ 5, 108-112 էջեր:
8. Мартемьянов В.В. Крах законности // Юридическая газета. - 1992. - քիւ 27-28, 21-24 էջեր:
9. Игнатенко Д.Д., Ромашов Р.А. Социалистическая законность. История государства и права, 1999, քիւ 1-2, 10-14 էջեր:
10. Нерсисянц В.С., Четвернин В.А., Основные концепции права и государства в современной России (По материалам «круглого стола» в Центре теории и истории права и государства ИГП - РАН) / Под ред. В.Г. Графского // Государство и право. - 2003. քիւ 5, 5-33 էջեր:
11. Павлов И., К вопросу о теории общенародной социалистической законности. // Социалистическая законность, 1962, քիւ 6, 14-15 էջեր:
12. Самощенко И.С. Ленинское учение о демократии и законности // Советское государство и право, 1971, քիւ 4, 3-8 էջեր:

13. Самигуллин В.К. Право и неправо // Государство и право. - 2002. - քիվ3, 5-8 էջեր:
14. Жишкевич В.И., Кучинский В.А. Обеспечение конституционной законности // Вестник Конституционного Суда Республики Беларусь. 2002, քիվ 1, 94-100 էջեր:
15. Павлов И., К вопросу о теории общенародной социалистической законности. // Социалистическая законность, 1962, քիվ 6, 14-15 էջեր:
16. Правовой режим законности: теория и история / Е.Г. Евдокимова, Р.А. Ромашов // Правоведение. 2001, քիվ 5, 261-271 էջեր:
17. Тихомиров Ю.А. Критерии законности правовых актов // Право и экономика. - 1997. – քիվ 19, 3-7 էջեր:

***Քոչարյան Սերգեյ Սևանի***

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՅԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սրբագրիչ՝ Կ. Կարապետյան  
Էջադրումը՝ Գ. Ազիզյան

Չափը 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթը օֆսեթ:  
12.5 տպագրական մանուլ:

Երևանի համալսարանի հրատարակչություն  
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1